



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԿԻՎՈՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԿԻՎԵԼԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ԱՐԱՄ ԲՈՍՅԱՆ



**Մ.Թ.Ա. ՎՄ ԴԱՐԻ**  
**ԽԵԹԱ-ՀԱՅԱՍՏԱԿԱՆ**  
**ՄԻԶՊԵՏԱԿԱՆ ԴԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ**

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

•  
ХЕТТСКИЕ КЛИНОПИСНЫЕ ИСТОЧНИКИ  
ОБ АРМЯНСКОМ НАГОРЬЕ

I

АРАМ КОСЯН

ХЕТТСКО-ХАЙАССКИЕ  
МЕЖГОСУДАРСТВЕННЫЕ ДОГОВОРА  
XIV ВЕКА ДО Н.Э.

ЕРЕВАН 2016

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

•  
CUNEIFORM HITTITE SOURCES  
ABOUT ARMENIAN HIGHLAND

I

ARAM KOSYAN

**THE XIV CENTURY B.C.  
INTERSTATE TREATIES BETWEEN  
THE HITTITE EMPIRE AND HAYASA**

YEREVAN 2016

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ  
ՎԵՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽԵԹԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ

I

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

Մ.Թ.Ա. XIV ԴԱՐԻ

ԽԵԹԱ-ՀԱՅԱՍՏԱԿԱՆ

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

55X405  
A



ԶԱՌԳԱԿ  
ՄԵԾԵՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆ 2016



ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

Ք 845

Գիրքը տպագրվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Քոսյան Արամ

Ք 845 Մ.Թ.Ա. XIV ԴԱՐԻ ԽԵԹԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱ-  
ԳՐԵՐԸ / Ա. Քոսյան.— Եր.: «Չանգակ» հրատ., 2016.— 176+32 էջ:

Աշխատությունը ներկայացնում է Հայաստանի հնագույն պատմության սկզբնաղ-  
բյուրների շարքում կարևորագույն նշանակություն ունեցող մ.թ.ա. II հազարամյակի  
խեթական սեպագրական տեքստերի գիտական հրատարակության առաջին մասը՝  
խեթական տեքստերի և Հայաստանի միջև կնքված երկու միջպետական պայմա-  
նագրերը:

Սույն ուսումնասիրությունը իրականացվել է ՀՀ Գիտության պետական կոմիտեի  
դրամաշնորհային ծրագրի շրջանակներում (13-6A389, 2013թ. հուլիս - 2015թ. հուլիս):

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-68-475-8

© Քոսյան Ա., 2016

© «Չանգակ-97» ՍՊԸ, 2016

Տպագրվել է ՀՀ Գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ .....	6
Տեքստերի կառուցվածքը և հրատարակությունները .....	8
Պայմանագրերի լիակատար տեքստային կազմը .....	11
Տեքստերի հնագրական-լեզվական առանձնահատկությունները .....	11
Գիտական տառադարձման սկզբունքները .....	13
Տեքստերի վերականգնման սկզբունքները .....	13
Աշխատության կառուցվածքը .....	14
<b>ԳԼՈՒԽ 1. ԽԵԹԱ-ԱՅԱՍՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ .....</b>	<b>16</b>
Սուպափյուլիոմաս I - Խուկկանա պայմանագիրը .....	16
Խուկկանայի պայմանագրի հավանական կցաբեկորները .....	51
Թուղխայիյաս III - Մարիյա + “Հայասայի ժողովուրդ” պայմանագիրը .....	59
<b>ԳԼՈՒԽ 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՔՍՏԵՐ .....</b>	<b>68</b>
Խաթթուսիյիս III-ի տեքստը Սուպափյուլիոմասի մասին .....	69
Առուվանդաս I-ի կամ Թուղխայիյաս III-ի նամակը .....	81
Մուրսիյիս II-ի տեքստըը Սուպափյուլիոմաս I-ի մղած պատերազմների մասին .	86
Մ.թ.ա. XIII դարի զուշակային տեքստ .....	105
<b>ԳԼՈՒԽ 3. ԽԵԹԱ-ԱՅԱՍՏԱԿԱՆ ՓՈԽՇԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b>	
Մ.թ.ա. XIV ԴԱՐՈՒՄ .....	108
Խեթական տեղությունը մ.թ.ա.XIV դարի կեսերին .....	108
Հայասան և Ազգին Թուղխայիյաս III-ի և Սուպափյուլիոմաս I-ի օրոք .....	116
Խեթական աղբյուրների տեղեկությունները Հայասայի վերաբերյալ .....	121
Խեթա-հայասական պայմանագրերի բնույթը և պատմական ետնախորըը .....	129
Հայասայի կառավարիչները .....	133
<b>ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....</b>	<b>147</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....</b>	<b>152</b>
<b>ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ .....</b>	<b>164</b>
<b>ՀԱԿԵԼՎԱԾ</b>	
Անձնանուններ և դիցանուններ .....	166
Տեղանուններ .....	168
<b>ՍԵՊԱԳԻՐ ՏԵՔՍՏԵՐԻ ԻՆՔՆԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....</b>	<b>173</b>

## ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհի վաղ հասարակությունների պատմության խնդիրների ուսումնասիրության համար առկա էին առաջավորասիական գրավոր աղբյուրների շարքում առաջնահերթ կշանակություն ունեն մ.թ.ա. II հազ. Փոքր Ասիայում գոյատևած խեթական տեղության արքունի դիվաններից հայտնաբերված սեպագրական տեքստերը:

Ղեռնս Առաջին աշխարհամարտի նախօրեին Կենտրոնական Փոքր Ասիայում, հետագայի Թուրքիայի Հանրապետության մայրաքաղաք Անկարայից 200 կմ արևելք՝ դեպի Չորում քաղաք տանող ճանապարհին ընկած Բողազքոյ կոչվող վայրում (ներկայումս վերանվանվել է Բողազքալե՝ Չորումի նահանգում) հայտնաբերված և հետագա պեղումների ընթացքում տարեցտարի ավելացող խեթական սեպագիր տեքստերի գերակշիռ մասը 1917թ. ի վեր հրատարակվում է Եվրոպայի մի շարք հայտնի գիտական կենտրոններում ի դեմս համապատասխան կորպուսների, ինչպես նաև առանձին ժողովածուներում՝ ինքնագիր եղանակով, գիտական տառադարձմամբ և թարգմանաբար<sup>1</sup>: Այսօր հայտնաբերված տեքստերի միայն չնչին մասն է մնում չհրատարակված: Տեքստերի ընդհանուր քանակը, ներառյալ դեռևս անհայտ պատկանելության կցաբեկորները, անցնում է 30.000-ից: Բեկորային վիճակում գտնվող տեքստերի միակցումը չափազանց բարդ խնդիր է՝ նախորդ դարասկզբի պեղումների ընթացքում թույլ տրված սխալների պատճառով: Պեղումների սկզբնական փուլում հաճախ հստակ չէր արձանագրվում հայտնաբերված ամբողջական կամ հատվածական վիճակում գտնվող սալիկի կոնկրետ տեղը պեղավայրի տարածքում, ինչը զգալիորեն կհեշտացնեք բազմաթիվ բեկորների վերածված սալիկի վերականգնումը<sup>2</sup>:

Սեպագիր տեքստերի ինքնագիր հրատարակությանը զուգահեռ Գերմանիայում, Իտալիայում, Բելգիայում և Ֆրանսիայում առկա են տեքստերի հրատարակության մի քանի շարքեր, որտեղ տեքստը ներկայացված է գիտական տառադարձմամբ, թարգմանությամբ, տեքստաբանական մեկնաբանություններով և լիակատար անվանացանկերով (բառապաշար և հատուկ անուններ)<sup>3</sup>: Այս աշխատանքը շարունակվում է, քանի որ դեռևս կան չհրատարակված, ճիշտ է, գերազանցապես փոքր բեկորների տեսքով տեքստերի հատվածներ:

Խեթական տեքստերը մեծաքանակ են և պարունակում են բազմաբնույթ տեղեկություններ Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների վերաբերյալ: Դրանք ընդգրկում են ռազմաքաղաքական և ծիսապաշտամունքային ոլորտները, ինչպես նաև կարևոր նյութեր են ամփոփում մեր տարածաշրջանի անվանաբանության

<sup>1</sup> KBo; KUB; HT; Weidner 1923; Foerer 1922-1926; ABoT; IBoT, CHS (խուրքիերեն տեքստերը): Beckman 1996; DBH.

<sup>2</sup> Այս խնդիր լուծմանը զգալիորեն կնպաստի խեթագետ Ս.Վոչակի նախնականությունը, ով առեղծվել է բոլոր հայտնաբերված տեքստերի գծապատկերային կորպուս, ինչպես նաև համապարփակ կատալոգ, որից պարզ է դառնում սեպագիր սալիկի բացակայող հատվածների հստակ տեղը (Kotak 1992; 1995; 1998; 1999; 2005):

<sup>3</sup> StBoT; TdH; EOTHEN.

(անձնանուններ, տեղանուններ, դիցանուններ) ուսումնասիրության համար: Վերոհիշյալ տեղեկությունները միաժամանակ արտակարգ կարևոր են հատկապես այն առումով, որ դրանցում վկայված անվանաբանական նյութերը գեղագանգապես եզակի աղբյուրներ են Հայկական լեոնաշխարհում նշված ժամանակաշրջանում տիրող քաղաքական իրավիճակի և բնակչության էթնոլեզվական պատկանելության խնդրի պարզաբանման համար: Առ այսօր հայագիտական հետազոտություններում խեթական աղբյուրների ընձեռած հնարավորությունները լիարժեք կերպով օգտագործված չեն<sup>4</sup>, ինչի պատճառը տեքստերի թերի, հատվածական ներգրավումն է հետազոտության ոլորտ: Հայագիտական ուսումնասիրություններում մեր մասնագետները հիմնականում քննարկել են խեթական տեքստերում վկայված խեթերենի բառաֆոնդի որոշակի քանակությամբ անձնանունների ու հասարակ անունների և հայերենում դրանց հնարավոր համարժեքների բացահայտման, տեղանունների տեղադրման և նմանատիպ խնդիրներ: Միայն առանձին հեղինակներ են փորձել մեր վաղ պատմության նպատակների տեսանկյունից իրականացնել խեթական տեքստերի լիարժեք հրատարակությունը<sup>5</sup>:

Խեթական աղբյուրների շարքում, անկասկած, հատուկ կարևորում են այն տեքստերը, որոնք ներկայացնում են արևելյում խեթական արքաների կազմակերպած արշավանքները, Հայկական լեոնաշխարհի պետականությունների հետ երանց կնքած պայմանագրերը (այդ թվում՝ այլ պետությունների հետ կնքված պայմանագրերը, որոնցում որոշակի տեղեկություններ կան մեր տարածաշրջանի վերաբերյալ), խեթական արքաների և տարբեր պաշտոնատար անձանց նամակագրությունը արևելյան շրջաններում ընթացող իրադարձությունների մասին: Այդ տեղեկությունները վերաբերում են Հայկական լեոնաշխարհի արևմտյան հատվածին՝ Բարձր Հայքին, Մոփքին և Ադձնիքին, ինչպես նաև Փոքր Հայքին, այսինքն խեթական քաղաքակրթական աշխարհի հետ Հայկական լեոնաշխարհի կոնտակտային գոտու ողջ երկայնքին:

<sup>4</sup> Հայ մասնագետները մեր հնագույն պատմության ուսումնասիրման նպատակով խեթական աղբյուրների տեղեկությունները սկսել են օգտագործվել դեռևս նախորդ դարի 20-ական թվականներից՝ խեթագիտության նախակարապետ Բ.Հրոզևու աշակերտ Ն.Մարտիրոսյանից սկսած (Մարտիրոսյան 1924; 1926; 1957; 1961; 1972): Հետագայում խեթական աղբյուրներին տարբեր առիթներով անդրադարձել են Ա.Սաֆրաստյանը (1929; 1947), Ա.Խաչատրյանը (1933), Զ.Տաշևանը (1934), Ն.Աղսնը (1946 [հայերեն հրատ.՝ 1972]), Գր.Ղափանցյանը (Կառատուն, 1931; 1936; 1944; 1946; 1948a; 1948b; 1956; 1975), Գ.Ջառուկյանը (1961; 1964; 1967; 1987; 1988; 1990), Վ.Խաչատրյանը (1963; 1964; 1966; 1971; 1972; 1976; 1980; 1998; 2013), Լ.Բարսեղյանը (1963a; 1963բ; 1964), Ն.Սկրստյանը (1969; 1970; 1974; 1976), Լ.Գովլովյովան (1978), Ա.Առաքելյանը (1975a; 1975b; 1978; 1983); Հ.Ավետիսյանը (1978; 1982; 1984; 1992; 1994; 1997; 2002), Ս.Ղևորոսյանը (1987; 2002; 2004; 2006), Ա.Քոստյանը (1984; 1988; 1993; 1994; 1997a; 1997բ; 1999; 2000; 2001; 2002; 2004a; 2004բ; 2004գ; 2006a, 2006b, 2008, 2009; 2011; 2013), Ա.Ղևորոսյանը (1997; 2002; 2004; 2006a; 2006բ; 2007a; 2007b), Գ.Վարդումյանը (1991), Հո.Հարությունյանը (1992a; 1992b), Ռ.Ղազարյանը (2005; 2007; 2009; 2013) Մ.Խանզադյանը, (2004; 2007); Հ.Նալպակյանը (2004; 2007; 2009; 2011; 2013):

<sup>5</sup> Այդպիսի աշխատությունների շարքին են պատկանում Վ.Խաչատրյանի, Ա.Քոստյանի, Ռ.Ղազարյանի և Մ.Խանզադյանի ուսումնասիրությունները (Ճապոնի 1966; 1971; 1998; Քոստյան 2001; 2002; 2004a; 2004բ; 2004գ; 2005; 2006a; 2006բ; Ղազարյան 2013, Խանզադյան 2004):



Սույն ուսումնասիրության իրականացման սկզբը դրվել էր դեռևս հեղինակային խմբի ղեկավարի արտերկրյա գիտահետազոտական աշխատանքի ընթացքում Կուրցբուրգի համալսարանի "Արևելյան բանասիրության ինստիտուտում" (Գերմանիա, 2000թ. նոյեմբեր - 2002թ. փետրվար) որպես "Ա. Ֆոն Հուսթոլդտի" հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի մրցանակակիր: Խեթա-հայաստան պայմանագրերի ուսումնասիրությունը հետագա ընթացք ստացավ ի դեմս ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի աշխատակիցներ պ.գ.թ. Ռ.Ղազարյանի և Մ.Խանգաղյանի, ովքեր իրենց զգալի ներդրումն ունեցան դրանց գիտական հրատարակության նախապատրաստման գործում: Աշխատության ձևավորումն իրականացրեց նույն բաժնի աշխատակից Ս.Մարտիրոսյանը:

2013թ. ՀՀ ԿԳ Գիտության պետական կոմիտեի կողմից ստացված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մեր հանրապետությունում առաջին անգամ իրականացվում է հնագույն Հայաստանի պատմության խնդիրների ուսումնասիրության համար կարևորագույն նշանակություն ունեցող խեթական աղբյուրներից երկուսի գիտական լիակատար հրատարակությունը:

#### Տեքստերի կառուցվածքը և հրատարակությունները

Խեթական քաղաքական բնույթի տեքստերի շարքում կարևոր նշանակություն ունեն Հայկական լեռնաշխարհի երկրների հետ խեթական արքաների կնքած պայմանագրերը կամ իրավական կարգավորման դրույթներ պարունակող այլ տեքստերը<sup>6</sup>, և առաջին հերթին մ.թ.ա. XIV դարի կեսերով թվագրվող երկու պայմանագրեր, որոնք կնքված են խեթական երկու արքաների՝ Թուդիալիյաս III-ի և Հայասայի կառավարիչ Մարիյասի և "Հայասայի ժողովրդի", ինչպես նաև Սուպպիլուլիումաս I-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև:

Խեթական արքաներ Թուդիալիյաս III-ի և Սուպպիլուլիումաս I-ի՝ Հայասայի հետ կնքված պայմանագրերը պահպանվել են տարբեր ժամանակներում կատարված երկու ինքնուրույն պատճենների տեսքով. պայմանագրերի բնագրերը մեզ չեն հասել:

"Սուպպիլուլիումաս I – Խուկկանա" պայմանագիրը պահպանվել է երկու պատճենների տեսքով, որոնք կրում են պայմանական A և B անվանումները: Սկզբնական շրջանում (KBo V-ի հրատարակման պահին) հայտնի էր միայն A տարբերակը: Պայմանագրի այլ տարբերակի գոյությունը (B) պարզ դարձավ 1926թ., երբ

<sup>6</sup> Այդպիսիներից գիտական շրջանակներին լավ հայտնի են KUB XXIII 72-ը (հրատարակությունները տես Sayce 1930: 5ff. (թարգմանաբար); Gurney 1948: 32ff. (թարգմանաբար); Hoffner 1976: 60ff. (1684/ս կցարևկողը); Խաչատրյան 1998: 87-93 (հատված.թարգման.): Koşyan 2006a: 72ff. (ամբողջական հրատարակություն); KUB XXVI 39-ը (հրատ. Forrer 1931: 6f.; Haas 1985b: 24; Manassero 1956: 102 [վերջինը՝ թարգմանաբար]); Քայան 2005 (լիակատար հրատ.): KBo IV 14 (հրատ. Stefanini 1965): Բացի վերոնիշյալ պայմանագրերից, ակոյա է Հայասան հիշատակող պայմանագրի նս մի բեկոր (KBo XVI 45), որը պետք է թվագրվի, ըստ սեպագիր նշանների հնագրական և լեզվաոճական չափանիշների, մ.թ.ա. XV դարով (Ս.Կոշակը կարծում է, որ տեքստը կազմված է "հին խեթական" շրջանում, այն է՝ ամենուրեղ մ.թ.ա. XV դ. առաջին կեսին [Kosak 2005 II: 172], քանի որ այստեղ հանդիպող որոշ արտահայտություններ բնորոշ են խեթական արքա Տելեպիուսի տեքստերին):

Ա.Գյոթթցեն հրատարակեց KUB XIV 6 բեկորը: Ավելի ուշ նա հրատարակեց B-ի այլ բեկորներ ևս (KUB XIX 24; KUB XXIII 73; KUB XXVI 37): Երկու տարբերակները էականորեն լրացվեցին 1970թ., երբ Շ.Օտտենը հրատարակեց KBo XIX-ը: Վերջին տարիներին ի հայտ եկան B տարբերակին պատկանող որոշ նոր կցաբեկորներ<sup>7</sup>:

A տարբերակը կազմված է Մուպպիլուլիումաս I-ի որդի Մուրսիլիս II-ի օրոք, հնարավոր է, նրա կառավարման վերջին շրջանում, ինչի մասին ակնարկում են դրանում օգտագործված սեպանշանների՝ մ.թ.ա. XIII դարին բնորոշ առանձնահատկությունները: Այն բաղկացած է երեք սյունակներից (երկու դիմային, մեկ հակառակ)՝ գրված համեմատաբար կարճ տողերով (յուրաքանչյուրում մտավորապես 20 նշան, որոշ տողերում՝ 10-12): Այս նույն աղյուսակի չորրորդ սյունակում ներկայացված է "Թուդիալիյաս III - Մարիյա + 'Հայասայի ժողովուրդ" պայմանագիրը՝ նույնպես ուշ շրջանի պատճեն: Դատելով սեպանշանների տեսից, B-ն կազմված է A-ից ավելի վաղ, թերևս, հենց Մուպպիլուլիումաս I-ի օրոք, կամ Մուրսիլիս II-ի կառավարման շրջանում: Այն բաղկացած է երկու աղյուսակներից (յուրաքանչյուրը՝ մեկական սյունակով՝ երկու դիմային, երկու հակառակ), գրված համեմատաբար երկար տողերով (մինչև 25-30 նշան): Պահպանվել է երկրորդ աղյուսակի դիմային կողմի զգալի մասը և հակառակ կողմը (երկուսն էլ՝ վնասված):

Ըստ հաշվարկների<sup>8</sup>, A-ի առաջին երեք սյունակները միասին պետք է բաղկացած լինեին շուրջ 280 տողից, այդ թվում նաև՝ կորսված տողերը (մեկ սյունակում՝ շուրջ 92 տող): B-ում առկա է երկրորդ աղյուսակի հակառակ կողմը՝ 59 տող (որոնցից վերջին չորսը A-ում չեն եղել, տես ստորև) և դիմային կողմի 42 տող, այսինքն, ենթադրելի շուրջ 60 տողերից բացակայում է մտավորապես 18 տող:

Եթե B-ի առկա և կորսված առաջին աղյուսակի տողերը գումարվեն, ապա այն պիտի բաղկացած լիներ շուրջ 255 տողից (առաջին աղյուսակ = 135 + երկրորդ = 120, միասին՝ 255): A-ի և B-ի միջև տողաքանակի տարբերությունը B-ի տողերի երկարության արդյունքն է (տես վերև):

Առ այսօր անբացատրելի է մնում B-ի վերջին չորս տողերի խնդիրը: Դրանց նախորդող տողը համապատասխանում է A-ի վերջին՝ 86-րդ տողին, որից հետո A-ում առկա է տեքստի ավարտը նշող երկու անջատիչ գիծ: Այնուհետև, արդեն չորրորդ սյունակի սկզբում, կորսված 16-18 տողերից հետո գալիս է ավելի վաղ շրջանով թվագրվող Մարիյայի պայմանագիրը: Բոկ B-ում տեքստը շարունակվում է ևս չորս տող, որից հետո այն ավարտվում է տողաճշգրտիչով:

Դատելով B-ի այս հավելյալ տողերում պահպանված բառերից, այստեղ դեռևս շարունակվում է "Մուպպիլուլիումաս I – Խուկկանա" պայմանագիրը<sup>9</sup>: Հավանաբար, ինչ-ինչ պատճառներով, այս տողերը չեն ներառվել A տարբերակ: Հնարավոր է երկու բացատրություն՝ 1) A-ն կազմելիս նպատակահարմար չեն գտել ներառելու այս հատվածը, 2) պայմանագրի բնօրինակը, որից տարբեր ժամանակներում պատճենվել

<sup>7</sup> KBo LIII 309 (նույնացումը՝ Akdoğan 2009), KBo LIV 12 (նույնացումը՝ Lorenz 2011: 278):

<sup>8</sup> Carruba 1988: 64f.

<sup>9</sup> Օրինակ, B 57: para piyandu (հրամ. եղան. եզ. II դեմք) "տուր", B 58: ԿՄՄ<sup>2</sup> mahhan "եզր Անը (այսինքն արքան)"; այդ պահանջները սկսվում են A 81-ից (տարածքային խնդիրներ և փախտականների վերադարձ):

են Ա-ն և Բ-ն, այս հատվածում վնասված է եղել և հնարավոր չի եղել վերականգնելու, այդ իսկ պատճառով բաց է թողնվել: Այս երկրորդ բացատրությունը առավել հավանական է, եթե նկատի ունենանք, որ Ա-ի կազմման ժամանակ զրիչն իրոք նման խնդրի է բախվել (այդ մասին տես ստորև):

Պայմանագրերը գիտական տառադարձմամբ, թարգմանությամբ և տեքստաբանական մեկնաբանություններով առաջինը հրատարակել է գերմանացի խոշոր սեպագրագետ Յ.Ֆրիդրիխը՝ 1930թ.<sup>10</sup>: Անցած տասնամյակներում իտալական տեքստը համալրվել է նոր կցաբեկորներով, որոնք լրացնում են դրա որոշ հատվածներ: Մի շարք կցաբեկորներ հրատարակվել են այլ մասնագետների կողմից<sup>11</sup>: Լշերը նաև, որ որոշ փոքր կցաբեկորներ, որոնք առայժմ հրատարակվել են միայն ինքնագիր եղանակով, առ այսօր դեռևս մնում են առկախ, քանի որ պարզ չէ դրանց հստակ տեղը մայր տեքստում<sup>12</sup>: Տեքստի անզլերեն և գերմաներեն թարգմանությունները հրատարակվել են Գ.Բեքմանի և Յ.Բլիսկերի կողմից<sup>13</sup>:

Տեքստի առաջին հրատարակությունից հետո ի հայտ են եկել զգալի քանակությամբ նոր կցաբեկորներ, որոնք էականորեն լրացնում են տեքստի որոշ հատվածներ: Տեքստային նյութի թարմացումը հետևյալ տեսքն ունի.

### Յ.Ֆրիդրիխ (1931)

### Նոր տեքստեր

A KBo V 3 + KBo V 12

KBo XIX 43 + KUB XXVI 38 +  
KBo XIX 43a + KUB XI 35  
+ KUB XXIII 73, KBo XIX 35\*\*

B KUB XIX 24 + KUB XIV 6  
KUB XXIII 74

KBo XIX 44 + KBo XIX 44b +  
KBo XIX 44a + KBo XXII 40 +  
KUB XXVI 37\* + KBo LIII 309<sup>14</sup> + KBo LIV  
12

KBo XIX 35\*\*

\* Այս տեքստը ներառում է KUB XXIII 73-ը, որը մինչ այդ ինքնագիր եղանակով հրատարակվել էր որպես առանձին բեկոր:

\*\*Աս կատալոզային տեքստ է, որտեղ, ի թիվս այլ պայմանագրերի, հիշատակվում է իտալական պայմանագրի առկայությունը Քաթոնասի արքայական պալատի արխիվում: Փաստացի, այս տեքստը պայմանագրի մասը չի կազմում: Բացի վերոհիշյալ տեքստերից, ըստ հրատարակիչների, պայմանագրերի մաս կարող էին կազմել նաև այլ

<sup>10</sup> Friedrich 1930 II: 101ff.

<sup>11</sup> Otten 1972: 102ff.; Akdoğan 2009: 75ff.

<sup>12</sup> Արքայի բեկորներից են KBo L-ում ինքնագիր եղանակով հրատարակված NN.104 և 120-ը:

<sup>13</sup> Beckman 1996: N.1, 22ff.; Klinger 2005: 106ff.

<sup>14</sup> Վերջին բեկորը հանդիսանում է KUB XIX 24-ի ուղղակի կցաբեկորը (տես Akdoğan 2009):

բեկորներ<sup>15</sup>: Դրանց մեծ մասը ժամանակի ընթացքում դուրս հանվեց շրջանառությունից<sup>16</sup>:

### Պայմանագրերի լիակատար տեքստային կազմը

#### “Սուպպիլուլիումաս I – Խուկկանա”

KBo V 3 (Bo 2020)  
 KBo V 12 (Bo 2020a)  
 KBo XIX 43 (471/u+8/v+1190/v)  
 KBo XIX 44 (214/u+403/u+559/u+560/u  
 +561/u+1476/u+1736/u)  
 KBo XIX 44 Դլ (561/u = KBo XIX 44)  
 KBo XIX 44a (560/u - KBo XIX 44)  
 KBo XIX 44b (1709/u+69/w)  
 KBo XXII 40 (Bo 69/305)<sup>17</sup>  
 KUB XIV 6 (Bo 2293)  
 KUB XIX 24 (Bo 2851)  
 KUB XXIII 73 (= KUB XXVI 37)  
 KUB XXIII 74 (Bo 8396)  
 KUB XXVI 37 (Bo 8670)  
 KUB XXVI 38 (Bo 3856)  
 KUB XL 35 (Bo 6521)  
 KBo LIII 309 (1815/u)  
 KBo LIV 12 (26/v)

#### “Թուդխալիյաս III – Մարիյա”

KBo V 3 (Bo 2020)  
 KBo V 12 (Bo 2020a)  
 KBo XIX 43a (455/u)

### Տեքստերի հնագրական-լեզվական առանձնահատկությունները

Պայմանագրերի լեզվի հեյուկաբանական և շարահյուսական, ինչպես նաև հնագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք իրենցից ներկայացնում են “հին խեթերենից” “նոր խեթերենին” անցման շրջանին բնորոշ վիճակ<sup>18</sup>, որը պայմանականորեն ստացել է “միջին խեթերեն” անվանումը<sup>19</sup>: Միջին խեթերենով

<sup>15</sup> Դրանք են՝ KUB XXVI 39, KUB XL 41 (Klengel KUB XL: V. ըստ նրա, նման է ԴԿ I 37ff.-ին), KBo XIX 42 (Otten, KBo XIX: V. ըստ նրա, նման է § 28-ին), KBo XIX 56 (Otten, KBo XIX: V. նման է § 8-ին) - KBo XIX 57 Otten, KBo XIX: V. նման է § 3ff.-ին:

<sup>16</sup> Այդ մասին տես ստորև սույն գլխում:

<sup>17</sup> Գիտական տառադարձումը Otten-Rüster 1972: 102f.; Groddek 2008: 43ff.

<sup>18</sup> Neu 1979: 82: Նրա կարծիքով, Խուկկանայի պայմանագիրը պիտի բվագրել “միջին խեթերենի” ավարտական փուլով, քանի որ այստեղ արդեն առկա են “նոր խեթերենի” զգալի տարրեր (Neu 1979: 83):

<sup>19</sup> Այս տերմինի փոխարեն Ա.Կամմենհուբերն առաջարկում էր “վաղ նոր խեթերեն” („Frühjungthetisch“) կամ “արխայիկ նոր խեթերեն” („Archaischjungthetisch“)(Kammenhuber, 1969: 281):

զրված տեքստերը թվագրվում են Թուղխալիյաս II-ից մինչև Սուպալիլուլիումաս I-ի կառավարման շրջանի առաջին մասով, այսինքն, մ.թ.ա.XVդ. վերջերից մինչև 1340-1330-ական թվականները<sup>20</sup>: Պայմանագրի թվագրման առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ, ըստ Հ.Օտտենի, դրա լեզվաճական առանձնահատկությունները լավ զուգահեռներ ունեն «Մադդուվատտասի մեղանչանքը» անվանումը կրող պայմանագրի հետ, որը թվագրվում է մ.թ.ա. XV դարի երկրորդ կեսով (Թուղխալիյաս II-ի շրջանը)<sup>21</sup>:

Լեզվի զարգացումը և, համապատասխանաբար, նաև գրչության ասպարեզում առկա փոփոխությունները պարզորոշ նկատելի են «Սուպալիլուլիումաս I – Խուկկանա» պայմանագրի երկու տարբերակների համեմատության ընթացքում<sup>22</sup>:

A	B
tuqqari	duggari
tatti	datti
watqahhut	watqahhut
pahšantaru	pahšandaru
i-e-mi	i-ya-mi
i-e-ši	i-ya-ši
pa-i-ši	pa-a-i-ši

B-ի բառածները հատուկ են Թուղխալիյաս II-ի և հատկապես Առուվանդաս I-ի կառավարման շրջանի տեքստերին («Մադդուվատտասի մեղանչանքը», «Պախխուվացի Միտան» և այլն), այնինչ A-ի բառածները լայն կիրառություն են ստանում սկսած Մուրսիլիս II-ից: Լույս միտումը առկա է առանձին սեպանշանների հարցում.

A	B	
tar -	նոր	հին
ak -	հին	հին
ik -	նոր/հին	հին
qa -	նոր/հին	նոր/հին
uk -	նոր	նոր
az -	նոր	նոր
URU-	նոր	հին
li -	նոր/հին	հին
šar -	նոր	հին

<sup>20</sup> «Միջին խեթերենով» զրված տեքստերի թվագրումը խեթական պետության պատմության ներկայիս ժամանակագրման լույսի տակ (Boese-Wilhelm 1987: 19ff.; Bryce 1989: 19ff.), պիտի իջեցվի առնվազն 30-40 տարի: Է.Լոյի, Ֆ.Հոուլինք տեև Կատի և այլոց մոտ այս փուլը թվագրվում էր մ.թ.ա. 1450-1380թթ.:

<sup>21</sup> Otten 1969: 30.

<sup>22</sup> Neu 1979: 68ff.

### Գիտական տառադարձման սկզբունքները

Տեքստի գիտական տառադարձումը հենվում է Է.Նոյի և Ք.Ռյուստերի կողմից մշակված սկզբունքների վրա<sup>23</sup>։ Հարկ է նշել, որ այդ սկզբունքները դեռևս պայմանականության որոշակի տոկոս են պարունակում, հատկապես Ce/i + V տիպի սեպանշանների հանդիպավայրի հարցում։

Ըստ հեղինակների, Ce/i տիպի սեպանշաններում ձայնավորի ընտրությունը պայմանավորվում է հաջորդող ձայնավոր սեպանշանի որակով։ Այսպես, pi-e-ն պիտի տառադարձել p*é*-e, li-e-ն՝ le-e և այլն։

Հաջորդը VC տիպի փակ վանկային սեպանշանների տառադարձումն է Առաջարկվում է սրանց ձայնավորի ազատ ընտրություն, ինչպես Ce/i-ի համար. օր., te-ik-ku-սա...-ը պիտի տառադարձել te-ek-ku-սա..., ne-it-ta-ն՝ ne-et-ta և այլն։

Այս սկզբունքները վերաբերում են e և i ձայնավորներին, որոնց արտացոլումը խեթական տեքստերում հստակ չէ և շատ հաճախ սակա են զուգահեռ գրելվածներ։ VC+CV տիպի սեպանշանների հանդիպավայրում առաջին վանկի բաղաձայնը առաջարկվում է տառադարձել երկրորդի բաղաձայնի որակով. օր., ut-ta(-a)-ar = ud-da(-a)-ar, am-mu-uk-ga/qa = am-mu-uq-qa/ug-ga։

Պայմանագրերի տեքստերը արքունի գրիչը, ինչպես ընդունված է խեթական սեպագրական գրչության մեջ, տարանջատել է աղյուսակի ողջ լայնությամբ անցնող գծերով՝ այս էղանակով կատարելով թեմատիկ բաժանում։ Իր հերթին Պայմանագրերի հրատարակիչ Յ.Ֆրիդրիխը յուրաքանչյուր այդպիսի պարբերություն համարակալել է։ Մենք պահպանել ենք թե մեկը, թե մյուսը։

Այն դեպքերում, երբ սեպագիր աղյուսակի վերին մասը չի պահպանվել, տողերի համարակալման ժամանակ հերթական համարից հետո տողավերնում դրվում է ստորակետ, ինչը նշանակում է, որ սույն համարը պայմանական է նույնը եսև "Սուպալիլուիումաս I - Խուկկանա" պայմանագրի պարագրաֆների դեպքում։

### Տեքստերի վերականգնման սկզբունքները

Սեպագրագիտության, և, մասնավորապես խեթագիտության մեջ արձանագրությունների տեքստերի վերականգնման սկզբունքները հանգում են հետևյալին։ Առանձին բացառություններով, տեքստերի գերակշիռ մասը գրված է կավե աղյուսակների վրա, որոնք գրվելուց հետո թրծվել են՝ վնասվածքներից խուսափելու նպատակով։ Տարբեր պատճառներով (կտրվածքներ ինչպես հնագույն ժամանակներում, այնպես էլ հնագիտական պեղումների ընթացքում, հրդեհ և այլն) այդ աղյուսակները, որպես կանոն, պահպանվել են բազմաթիվ բեկորների տեսքով։ Առաջին պեղումների ժամանակ այդ բեկորների հարաբերակցությունը, այն է՝ պատկանելությունը այս կամ այն տեքստին լեզվի անհայտ լինելու պատճառով։ Միայն 1920-ական թվականներից ի վեր և հատկապես վերջին տասնամյակներում սկսվեց տարբեր թանգարաններում և մասնավոր հավաքածուներում գտնվող տեքստերի բեկորների միավորումը գիտական սկզբունքների հիման վրա։ Դրա համար որպես չափանիշներ

<sup>23</sup> Rüster - Neu 1989.

են ծառայում բեկորների կալի բաղադրությունը, զույնը, որակը, օգտագործված սեպանշանների հնագրական և լեզվաոճական չափանիշները, նաև հայտնաբերման ճշգրիտ վայրը (իրավագիտուն ենթադրվում է, որ տեքստի կոտրված բեկորները չէին կարող միմյանցից հեռու ընկած լինել): Աերկայումս այս աշխատանքները շարունակվում են, սակայն բավական մեծ քանակությամբ խոշոր և փոքր բեկորներ (հրատարակված կամ չհրատարակված) դեռևս հնարավոր չէ նույնացնել հայտնի տեքստերի հետ:

Ինչ վերաբերում է սույն աշխատության առարկա հանդիսացող Պայմանագրերին, ապա դրանք հայտնաբերվել են խեթական մայրաքաղաք Խաթթուսասի պեղումների սկզբնական փուլում, երբ դեռևս վերոհիշյալ բնույթի չափանիշներ չէին կիրառվում: Բացի այդ, տեքստի հայտնաբերման կոնկրետ տեղը պարզվեց միայն տասնամյակներ անց շնորհիվ դրա այն կցաբեկորների, որոնք հայտնի դարձան արդեն սիստեմատիկ պեղումների ընթացքում: Ակտի առնելով բեկորների նույնացման համար անհրաժեշտ քանգարանային տևական աշխատանքի անհնարիությունը, աշխատության մեջ տեղ գտած երկու պայմանագրերը, ինչպես նաև մյուս բոլոր տեքստերը ներկայացվում են հիմք ընդունելով տարբեր հեղինակների կողմից դրանց առ այսօր իրականացված գիտական հրատարակությունները: Ըստ այդմ տեքստերի վնասված հատվածների վերականգնումները գերազանցապես համապատասխանում են սույն ուսումնասիրությունների արդյունքներին: Սակայն, դրա հետ միաժամանակ, զգալի քանակությամբ մասնավոր վերականգնումներ են տեղ գտել մեր ուսումնասիրության առարկա տեքստերի գիտական տառադարձման և թարգմանությունների մեջ, որոնք հենվում են ենթատեքստի տված հնարավորությունների վրա:

Բացի այդ, նկատի առնելով խեթական տեքստերի վաղ շրջանի հրատարակություններում տեղ գտած որոշ թերացումները (վատ պահպանված առանձին նշանների և նշանախմբերի կամայական կամ կասկածելի վերականգնումները), սույն աշխատության մեջ հաշվի են առնված նաև արդեն Գերմանիայից Թուրքիայի թանգարաններ տեղափոխված տեքստերի բնագրերի՝ մեր եվրոպացի գործընկերների կողմից իրականացված վերականգնումները<sup>24</sup>:

### Աշխատության կառուցվածքը

Աերկա ուսումնասիրությունը ներառում է խեթա-հայասական երկու պայմանագրերի գիտական հրատարակությունը (գիտական տառադարձում, տեքստաբանական մեկնաբանություններ և թարգմանություն), նաև քննարկվող ժամանակաշրջանին վերաբերող այն խեթական տեքստերը, որոնք էական նպաստ կարող են բերել պայմանագրերի առավել համապարփակ ընկալմանը: Աշխատության վերջին գլուխը ներկայացնում է մ.թ.ա. XIV դարում Արևելյան Փոքր Ասիայում և

<sup>24</sup> Մեր խորին շնորհակալություն ենք հայտնում, մասնավորապես, արդի խեթագիտության առաջատար ներկայացուցիչներից մեկին՝ պրոֆ. Գերետտ Վիլհելմին (Գյուրցբուրգի համալսարան, Գերմանիա), ով մեզ է արամադրել իր գնումների արդյունքները, ինչպես նաև պրոֆեսոր Գեբրիել Մյուլլերին (Գիտության և գրականության համալսարան, Մայնց՝ Գերմանիա), ով մեզ պարբերաբար տեղեկացնում էր Պայմանագրերի ճշգրտված կցաբեկորների հայտնաբերման մասին:

Հայկական լեռնաշխարհի արևմուտքում տիրող քաղաքական իրավիճակի մանրագնին քննությունը: Վերջինս ներառում է Խեթական տերության քաղաքական պատմությունը և նրա ձևոճարկումները հատկապես արևելքում՝ մեր տարածաշրջանի կտրվածքով, խեթա-հայասական փոխհարաբերությունները, ինչպես նաև Հայասայի արքաների վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը:

Ուսումնասիրության մեջ ներառված չեն Հայասային ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող որոշ տեքստեր՝ աշխատությունը չձանրաբեռնելու նպատակով: Դրանք առանձին ուսումնասիրության առարկա կհանդիսանան հետագայում:

Աշխատության վերջում տրվող հավելվածներում տեղ են գտել Պայմանագրերի և դրանց առնչվող խեթական սեպագիր տեքստերի ինքնագիր հրատարակությունները, ինչպես նաև հատուկ ատունների (անձնանուններ, տեղանուններ և դիցանուններ) լիակատար ցանկերը:

#### Պայմանական նշաններ

- |       |   |  |
|-------|---|--|
| [ ]   | - | կորսված կամ ջնջված հատված:                 |
| **    | - | մասնակիորեն վնասված դժվարընթեռնելի հատված: |
| < >   | - | գրչի կողմից բաց թողնված բառ կամ նշան:      |
| << >> | - | գրչի կողմից գրված ավելորդ նշան:            |



## ԳԼՈՒԽ 1

## ԽԵԹԱ-ՀԱՅԱՍՏԱԿԱՆ ԳԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

## ՍՈՒՊԳԻՆՈՒԼԻՈՒՄԱՍ I – ԽՈՒԿԿԱՆԱ ԳԱՅՄԱՆԱԳՐԻՐԸ

## ՄՌԱՄՆԱԿԱՆ ՏԵԹՍ (A+B)

## ԴԿ

I	1-59	=	KBo V 3 I
	57-62	=	KBo V 3 I + KBo XIX 43 I
II	1-59	=	KBo V 3 II + Bo 8138 <sup>25</sup>
	50-64	=	KBo V 3 I + KBo XIX 43 II <sup>26</sup>
	60-69	=	KBo V 3 I + KBo XIX 43 II + KBo XIX 44 ԴԿ (B) + KBo LIII 309 (B) <sup>27</sup>
	70-72	=	KBo V 3 II + KBo LIII 309
	73-82	=	KBo V 3 II + KUB XXVI 37 (B) <sup>28</sup> + KBo XIX 44a(B) + KBo LIII 309
	83-95	=	KBo V 3 + KUB XXVI 38 + KUB XXVI 37 (B)

## ՀԿ

III	1'-20' <sup>29</sup>	=	KBo V 3 + KUB XXVI 38 ՀԿ III
	8'-15'	=	KBo V 3 KUB XXVI 38 + KUB XXIII 73(B)
	16'-22'	=	KBo V 3 + KBo V 12 + KUB XXVI 38
	10'-22'	=	+ KBo XIX 44b, 4'-14' (B)
	16'-34'	=	KBo V 3 + KBo V 12 + KBo XIX 43a
	27'-34'	=	KBo V 3 + KBo V 12 + KBo XIX 43a
	26'-86'	=	KBo V 3 + KBo XIX 44 ՀԿ (B)
	32'-73'	=	KBo V 3 + KBo XIX 44 ՀԿ (B) + KUB XIX 24(B)
	48'-62'	=	KBo V 3 + KUB XL 35 + KBo XIX 44 ՀԿ (B) + KUB XIX 24 ՀԿ (B) + KBo LIV 12
	63'-77'	=	KBo V 3 + KUB XL 35

<sup>25</sup> Bo 8138 կցարեկորը (նախկինում այն նշվում էր որպես CTH 470 – Koşak 2005.I: 210) դեռևս հրատարակված չէ (պայմանագրի տեքստում բեկորի տեղի մասին տեղեկատվությունը ըստ Գ.Վիլիսկի): Այն լրացնում է ԴԿ II 49-59-րդ տողերը:

<sup>26</sup> KBo XIX 43-ը ծածկում է ԴԿ II 50-64-րդ տողերի բացակայող մասերը:

<sup>27</sup> Այս բեկորը սկսվում է ԴԿ II 60-րդ տողից և շարունակվում է § 20-ում և § 21-ում:

<sup>28</sup> A-ի III սյունակից առաջին պսակատում է 5-6 տող. պայմանական առաջին տողից հետո KUB XXVI 38-ում առկա է պարագրաֆի բաժանման զիծը, որը հավելյալ տողեր է ներառում:

<sup>29</sup> ՀԿ III-ի մասը կազմող KUB XXVI 38 I-ում պահպանվել են ԴԿ II-ի վերջին տողերից երկուսի ավարտական երեք նշաններ:

66'-79'	=	KBo V 3 + KBo XXII 40 <sup>90</sup>
68'-86'	=	KBo V 3 + KBo XIX 44 2 <sup>4</sup> (B) + KUB XIV 6 (B = KBo XIX 44b, 39-54)
Կռլոֆոն	=	KBo XIX 44 (B)

### Տեքստի բեկորների ինվենտարային կազմը

KBo V 3 = Bo 2020

KBo V 12 = Bo 2020a

KBo XIX 43 = 471/u + 8/v + 1190/v

KBo XIX 43a = 455/u

KBo XIX 44 = 214/u + 403/u + 559/u + 560/u + 561/u + 1476/u + 1736/v

KBo XIX 44a = 560/u

KBo XIX 44b = 1709/u

KBo XXII 40 = Bo 69/305

KBo LIII 309 = 1815/u

KBo LIV 12 = 26/v

KUB XIV 6 = Bo 2293

KUB XL 35 = Bo 6521

KUB XIX 24 = Bo 2851

KUB XXIII 73 = Bo 3552

KUB XXVI 37 = Bo 8670

KUB XXVI 38 = Bo 3856

Չնայած պայմանագրի երկու տարբերակները կազմված են տարբեր ժամանակներում և արտագրված են տարբեր գրիչների կողմից, այնուամենայնիվ դրանք, առանձին բառերի զրոյության մեջ առկա տարբերությունների կողքին հիմնականում նույնական են: Այդ իսկ պատճառով նպատակահարմար ենք գտել զիտական տառադարձման մեջ երկու տարբերակները ներկայացնել զուգահեռ:

Բացի միասնական տեքստի մասերը կազմող կցաբեկորներից, ինքնագիր էղանակով հրատարակված խեթական տեքստերի շարքում, ըստ դրանց հրատարակիչների, կան որոշ բեկորներ, որոնք, հաշվի առնելով ձեռագիրը և հանդիպող արտահայտությունները, կարող էին այս պայմանագրի մասերը կազմել: Սակայն ներկայումս դրանց ճշգրիտ տեղը պայմանագրի կազմում պարզ չէ, այդ իսկ պատճառով մենք այդ բեկորները ներկայացրել ենք առանձին՝ սույն գլխի վերջում:

### Պարագրաֆների բաժանումը

Պայմանագրի տեքստը գրիչի կողմից բաժանված է թեմատիկ պարագրաֆների՝ տողն ընդգրկող ուղիղ գծով: Յ. Ֆրիդրիխի հրատարակության մեջ այդ բաժանումը

<sup>90</sup> Այս տեքստը KBo XIX 44 2<sup>4</sup> III-ի կցաբեկորն է:



պահպանված է: Նոր տեքստերի առկայությանը այդ բաժանումը փոփոխություններ է կրել: փակագծերում նշված են համապատասխան պարագրաֆները ըստ Յ. Ֆրիդրիխի:

A		B
§ 1 (1)	-	I 1-5
§ 2 (2)	-	I 6-11
§ 3 (3)	-	I 12-21
§ 4 (4)	-	I 22-30
§ 5 (5)	-	I 31-34
§ 6 (6)	-	I 35-40
§ 7 (7)	-	I 41-47
§ 8 (8)	-	I 48-62
§ 9 (9)	-	I-ի վերջ - II 1
§ 10 (10)	-	II 2-9
§ 11 (11)	-	II 10-13
§ 12 (12)	-	II 14-21
§ 13 (13)	-	II 22-25
§ 14 (14)	-	II 26-31
§ 15 (15)	-	II 32-38
§ 16 (16)	-	II 39-44
§ 17 (17)	-	II 45-51
§ 18 (18)	-	II 52-59
§ 19 (19)	-	II 60-69
§ 20 (20)	-	II 70-72
§ 21 (21)	-	II 73-82
§ 22 (24) <sup>31</sup>	-	II 83-87
§ 23 (25) <sup>32</sup>	-	II 88-91
§ 24 (-) <sup>33</sup>	-	II 92-95 (B) +
-		--- ?-1 <sup>34</sup>
§ 25 (-)	-	III 2'-12'
		↔ III 1-10?
		-
		↔ III 1'-7'
		↔ III 8'-12'
		↔ III 13'-16'
		↔ III 17'-20(+)
		↔ III 4"-5" (KBo XIX 44b)
		↔ 1'-5'

<sup>31</sup> A-ի II սյունակի 83-րդ տողից հետո կորած մասը Յ. Ֆրիդրիխը պայմանականորեն նշում էր որպես § 22, իսկ § 21-ի վերջին երկու տողերը (6'-7') § 23: Սակայն հավելվածում, հենվելով KUB XXVI 37-ի վրա, նա ներկայացրել է պարագրաֆների այլընտրական բաժանում, որը համապատասխանում է ներկայիս բաժանմանը: A տարբերակում § 22-ին համապատասխանող հատվածը փաստացի կորսված է. այստեղ պահպանվել է միայն երկու տողերից մեկի վերջին նշանի ալարտական մասը և § 22:

<sup>32</sup> A տարբերակի այս պարագրաֆը, որը նշված է որպես 88-91-րդ տողեր, իսպառ կորսված է:

<sup>33</sup> A տարբերակի այս պարագրաֆից պահպանվել են միայն մեկ տողի միջնամասի երկու անընթեռնելի նշաններ:

<sup>34</sup> A տարբերակի պայմանական առաջին տողը, որից հետո պարագրաֆի բաժանման գիծ կա, կարող է լինել B-ի III սյունակի՝ որպես § 24 դիտվող պարագրաֆի վերջը:

§ 26 (26)	-	III 13'-17'	↔ III 6"-10" (KBo XIX 44b) ↔ 6'-8' (KUB XXIII 74)
§ 27 (27)	-	III 18'-22'	↔ III 11"-14" (KBo XIX 44b) <sup>35</sup>
§ 28 (28)	-	III 23'-39'	↔ III 14"-15" (KBo XIX 44b) ↔ IV 1-13 (KBo XIX 44 2 <sup>1</sup> )
-			↔ IV 14-22
§ 29 (29)	-	III 40'-49'	↔ IV 23-30
§ 30 (30)	-	III 50'-58'	↔ IV 31-38 <sup>36</sup>
§ 31 (31)	-	III 59'-67'	↔ IV 38-43
§ 32 (32)	-	III 68'-73'	↔ IV 44-52
§ 33 (33)	-	III 74'-83'	↔ IV 53-55 <sup>37</sup>
§ 34 (34)	-	III 84'-86'	↔ IV 56-57
§ 35 (-)	-	-	
Կոլոնն			

---

<sup>35</sup> A տարբերակի § 28-ի համապատասխանող մասը B-ում ավարտվում է տողի միջնամասում՝ առանց պարագրաֆի անջատիչի:

<sup>36</sup> Պարագրաֆն ավարտվում է տողի միջնամասում, որի պատճառով անջատիչ չկա:

<sup>37</sup> A-ն և B-ն այս հատվածում միմյանց տողացի համապատասխանում են, սակայն A-ում բաժանման գիծը դրված է 83-րդ տողից հետո, իսկ B-ում՝ եւ 2 տող հետո. վերջին երկու տողերը A-ում չկան:

## ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱՂԱԴՐՁՈՒՄ

## ԴԿ I

## § 1

- 1) [U]M-MA<sup>4</sup>UTU<sup>10</sup> \*Šu-up-pi-lu-li-u-ma LUGAL KUR<sup>10</sup>Ha-at-ti
  - 2) ka-a-ša tu-uk \*Hu-uq-qa-na-a-an ap-pi-iz-zi-in \*UR.GE<sup>9</sup>-an
  - 3) ša-ra-a da-a-ah-hu-un nu-ut-ta SIG<sup>9</sup>-in i-'ya-nu'-un
  - 4) \*nu-ut'-tāk-kán<sup>10</sup>Ha-at-tu-ši A-NA LÚ<sup>10</sup>MS<sup>10</sup>Ha-ya-ša-ya aš-šu-'li iš'-tar-na
  - 5) te-ek-ku-uš-ša-nu-nu-un nu-ut-ta am-'me-el NIN<sup>9</sup>- YA AŠ-ŠUM DAM<sup>10</sup>AD-DIN
- 

## § 2

- 6) nu-ut-ta KUR<sup>10</sup>Ha-at-ti hu-u-ma-an-za KUR<sup>10</sup>[Ha-y]a-ša KUR.KUR<sup>10</sup>ya
  - 7) hu-u-ma-an-te-eš a-ra-ah-zé-né-eš an-tu-re-[e-e]š ar-ha iš-ta-ma-aš-'šir'
  - 8) \*nu'-za zi-ik \*Hu-uq-qa-na-a-aš<sup>4</sup>UTU<sup>10</sup>-'pát AŠ-ŠUM BE-LU-TIM ša-a-'ak'
  - 9) DUMU-YA-ya ku-in<sup>4</sup>UTU<sup>10</sup> te-mi ku-u-un-wa-za hu-u-ma-an-za ša-a-ak-du
  - 10) na-an-kán iš-tar-na te-'ek'-ku-uš-ša-mi nu-za zi-iq-qa \*Hu-uq-qa-na-a-aš
  - 11) a-pu-u-un ša-a-a[k]
- 

## § 3

- 12) nam-ma-ma ku-i-e-eš am-me-el DUMU<sup>10</sup>MS. YA ŠEŠ<sup>10</sup>MS.ŠU am-me-el-la ŠEŠ<sup>10</sup>MS-[YA]
  - 13) na-aš-za aš-šu-li AŠ-ŠUM ŠEŠ<sup>10</sup>MS. Ū AŠ-ŠUM<sup>10</sup>TAP-PU-UT{TIM}
  - 14) 'ša-a-ak' nam-ma-ma-za da-ma-in BE-LAM ku-i-e-ša-aš ku-iš [UN-aš]
  - 15) A-NA<sup>4</sup>UTU<sup>10</sup> EGIR-an ar-ha le-e ku-in-ki ša-a-ak-ti<sup>4</sup>UTU<sup>10</sup>-'i[n-pát]
  - 16) ša-a-ak pa-ah-ši-ya-an<sup>4</sup>UTU<sup>10</sup> nu<sup>4</sup>UTU<sup>10</sup> ma-ah-ha-an tu-uk \*Hu-uq-qa-[na]-'a-an'
  - 17) [SIG<sup>9</sup>-in] i-ya-nu-un zi-ga ma-a-an \*Hu-uq-<qa>-na-a-aš<sup>4</sup>UTU<sup>10</sup> 'zi-la'-ti-ya
  - 18) [I-NA EGI]R UD<sup>10</sup>MS aš-šu-li Ū-UL pa-ah-ha-aš-ti nu-ut-ta ma-a-an
  - 19) 'tu-el ma'-ah-ha-an SAG.DU-KA na-ak-ki-iš nu-ut-ta <ma>> ma-a-an
  - 20) SAG.DU<sup>4</sup>UTU<sup>10</sup> QA-TAM-MA Ū-UL na-ak-ki-iš pí-ra-an-na-[a]t-ta
  - 21) ŠA<sup>4</sup>UTU<sup>10</sup> Ū-UL wa-ah-nu-an har-zi
- 

## § 4

- 22) nu-za ma-a-an tu-'el' ma-ah-ha-an A-NA SAG.DU-KA ZI-KA Ū A-NA RA-MA-NI-KA
  - 23) ge-en-zu har-ši ŠU<sup>10</sup>MS-a-uš-za a-ra-ah-za-an-da har-ši nu ma-a-an A-NA SAG.DU<sup>4</sup>UTU<sup>10</sup>
  - 24) ZI<sup>4</sup>UTU<sup>10</sup> RA-MA-A-AN<sup>4</sup>UTU<sup>10</sup> ge-em-zu QA-TAM-MA Ū-UL har-ši
  - 25) ŠU<sup>10</sup>MS. KA'-ya-'mu' a-ra-ah-za-an-da QA-TAM-MA Ū-UL har-ši
  - 26) pí-ra-an-na-at-ta ŠA<sup>4</sup>UTU<sup>10</sup> Ū-UL wa-ah-nu-wa-an har-zi
  - 27) na-aš-ma-kán ma-a-an<sup>4</sup>UTU<sup>10</sup> ku-e-da-ni an-da i-da-a-lu iš-ta-ma-aš-ti
  - 28) na-at-mu-kán ma-a-an ša-an-na-at-ti na-at-mu Ū-UL me-ma-at-ti
  - 29) a-pu-u-un-na-mu an-tu-uh-ša-an Ū-UL te-ek-ku-uš-ša-nu-ši
  - 30) na-an an-da im-ma mu-un-na-a-ši
-

**ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ԴԿ I**

**§ 1**

- 1) Այսպես (առում է) Արևս՝ Մուպպիլուլիումասը, Խաթթիի արքան:
  - 2) Տես, քեզ՝ Խուկկանայիդ, շարքային հերոսիդ
  - 3) Ես բարձրացրեցի և քեզ ազնվական դարձրեցի:
  - 4) Խաթթուսասում քեզ հայասացիների շարքում բարի կամքով
  - 5) Ընտրեցի և քրոջս քեզ կամովին կնության տվեցի:
- 

**§ 2**

- 6) Քո մասին ողջ Խաթթի երկիրը, [Հայ]ասա երկիրը և երկրները
  - 7) բոլոր՝ „հարեան“ ու „ներքին“, լսեցին:
  - 8) Դու՝ Խուկկանա, միայն Արևիս կամովին պիտի ճանաչես որպես տեր:
  - 9) Եվ որդուս, ում Արևս կասեմ՝ \*Բոլորդ սրան պիտի ճանաչեք\*:
  - 10) Եվ նրան կընտրեմ, դու, Խուկկանա,
  - 11) նրան ճանաչիր:
- 

**§ 3**

- 12) Իսկ այնուհետև, իմ որդիներին՝ նրա եղբայրներին և [իմ] եղբայրներին
  - 13) հանուն եղբայրության և հանուն ընկերության կամովին
  - 14) ճանաչիր: Բայց հետո ուրիշ տիրոջ, [ով] էլ որ լինի,
  - 15) Արևիս էտևում չճանաչես: [Միայն] Արևիս
  - 16) ճանաչիր (և) Արևիս պաշտպանիր: Եվ քանի որ Արևս քեզ՝ Խուկկա[նա]յիդ,
  - 17) [ազնվական] դարձրեցի, եթե դու, Խուկկանա, Արևիս ապագայում,
  - 18) [ին]տագա օրեր[ում], չպաշտպանես, և եթե քեզ (համար)
  - 19) ինչպես քո անձն է կարևոր, եթե քեզ (համար)
  - 20) անձն Արևի նմանապես կարևոր (չլինի), քեզ (համար) հոգսն
  - 21) Արևիս չչքջես:
- 

**§ 4**

- 22) Եվ եթե, ինչպես քո անձը, հոգին և մարմինն էս
  - 23) փայվայում, ձեռքերդ շուրջբոլորդ պահում, և եթե Արևիս անձը,
  - 24) Արևիս հոգին (և) Արևիս մարմինը նմանապես չպահես,
  - 25) և քո ձեռքերով շուրջբոլորս չպահես,
  - 26) քեզ (համար) հոգսն Արևիս չչքջես:
  - 27) Կամ եթե Արևիս մասին մի տեղ չարը լսես,
  - 28) և եթե դա ինձնից թարցնես և այդ մասին ինձ չասես,
  - 29) այդ մարդուն ինձ ցույց չտաս,
  - 30) և նույնիսկ լսես:
-

## § 5

- 31) nu zi-ik \*Hu-uq-qa-na-a-aš<sup>4</sup>UTU<sup>5</sup>-pát aš-šu-li pa-ah-ši EGIR-pa-an-na  
 32) A-NA<sup>4</sup>UTU<sup>5</sup>-pát ar-hu-ut nam-ma-ma-za da-ma-a-in le-e ku-in-ki  
 33) ša-a-ak-ti nu-ut-ta<sup>4</sup>UTU<sup>5</sup>-ya aš-šu-li pa-ah-ha-aš-hi kat-ta-ma-at-ta  
 34) DUMU<sup>MES</sup>.KA pa-ah-ha-aš-hi kat-ta-ma tu-el DUMU<sup>MES</sup>.K[A] am-me-el DUMU-YA pa-ah-ša-ri
- 

## § 6

- 35) 'nu' m[a-a-a]n 'SIGs-in ku'-wa-pi 'iš-ša'-at-ti nu<sup>4</sup>[UTU]<sup>5</sup> aš-šu-li pa-ah-ha-aš-ti  
 36) [nu]-ut-ta<sup>4</sup>UTU<sup>5</sup> kat-ta-ya A-[NA DUMU]<sup>MES</sup>.KA 'SILIM'.BI i-ya-mi  
 37) nu am-me-el DUMU-YA DUMU<sup>MES</sup>.KA-ya kat-ta aš-šu-li pa-ah-ša-ri<sup>4</sup>UTU<sup>5</sup>-ma  
 38) tu-uk pa-ah-ha-aš-hi nu-ut-ta ka-a-ša ke-e ud-da-a-ar ŠA-PA[L] NI-IŠ DINGIR<sup>LIM</sup>  
 39) 'te'-eh-hu-un nu ka-a-ša ke-e-da-ni 'ud-da-ni'-i LI-IM DINGIR<sup>MES</sup>  
 40) tu-'li'-ya hal-zi-ú-en
- 

## § 7

- 41) <sup>4</sup>UTU ŠA-ME-E<sup>4</sup>UTU<sup>URU</sup>A-ri-in-na<sup>4</sup>U ŠA-ME-E<sup>4</sup>ISKUR<sup>URU</sup>Ha-at-ti  
 42) <sup>4</sup>ISKUR<sup>URU</sup>Ha-la-ap<sup>4</sup>ISKUR<sup>URU</sup>PÚ'-na<sup>4</sup>ISKUR<sup>URU</sup>Zi-ip'-pa-la-an-da  
 43) <sup>4</sup>ISKUR<sup>URU</sup>Ša-pi-nu-wa<sup>4</sup>ISKUR<sup>URU</sup>Ne-ri-'ik'<sup>4</sup>ISKUR<sup>URU</sup>[Hi-i]š-ša-aš-ha-pa<sup>4</sup>U<sup>URU</sup>Ša-ah-'pi'-na  
 44) <sup>4</sup>U 'KARAS'<sup>4</sup>U KILLAM<sup>4</sup>U<sup>URU</sup>U-[da]<sup>4</sup>U<sup>URU</sup>[Ki-iz-z]u-wa-at-na  
 45) <sup>4</sup>U<sup>URU</sup>Pit-te-ya-ri-ik<sup>4</sup>U<sup>URU</sup>Ša-m[u-ha]<sup>4</sup>U<sup>URU</sup>Ša-r]i-iš-ša<sup>4</sup>U<sup>URU</sup>Hur-ma  
 46) <sup>4</sup>U<sup>URU</sup>Li-ih-zi-na<sup>4</sup>U<sup>URU</sup>D[Uš<sup>4</sup>U<sup>URU</sup>Iš-hu-pi-it-t]a<sup>4</sup>U<sup>URU</sup>Hu-ul-la-aš-ša  
 47) <sup>4</sup>Hé-pát<sup>URU</sup>U-da<sup>4</sup>Hé'-pát<sup>URU</sup>Ki-'iz'-zu-[wa-at]-na
- 

## § 8

- 48) <sup>4</sup>LAMMA<sup>4</sup>LAMMA<sup>URU</sup>Ha-at-ti<sup>4</sup>Zi-it-ha-ri-ya-a[š]<sup>4</sup>Kar-zi-iš  
 49) <sup>4</sup>Ha-pa-an-da-li-ya-aš<sup>4</sup>LAMMA<sup>URU</sup>Ga'-ra-ah-na<sup>4</sup>LA[MMA LÍ]L<sup>4</sup>LAMMA<sup>KUS</sup>kur-ša-aš  
 50) <sup>4</sup>A-a-aš<sup>4</sup>IŠTAR<sup>4</sup>IŠTAR LÍL<sup>4</sup>IŠTAR<sup>URU</sup>Ni-nu-wa<sup>4</sup>[IŠTAR<sup>URU</sup>]Ha-'at'-ta-ri-na  
 51) <sup>4</sup>IŠTAR MUNUS.LUGAL ŠA-ME-E<sup>4</sup>Ni-na-at-ta-aš<sup>4</sup>[Ku-li-i]t-t[a]-'aš'<sup>4</sup>ZA.BA<sup>4</sup>.BA<sup>4</sup>  
 52) <sup>4</sup>ZA.BA<sup>4</sup>.BA<sup>4</sup>U<sup>URU</sup>EI-la-ya<sup>4</sup>ZA.BA<sup>4</sup>.BA<sup>4</sup>U<sup>URU</sup>A[r-zi-ya DIN]GIR<sup>MES</sup>KARAS  
 53) hu-u-ma-an-te-[eš]<sup>4</sup>MARDUK<sup>4</sup>AL-LA-TUM ták-na-a-[aš<sup>4</sup>UTU-uš<sup>URU</sup>]U<sup>URU</sup>Hu-pi-iš-na-aš  
 54) <sup>4</sup>Hu-wa-aš-ša-an-na-aš<sup>URU</sup>Ša-mu-ha-aš<sup>4</sup>A-a-[pa-ra-aš<sup>URU</sup>Hur-ma-aš]<sup>URU</sup>Ha-an-ti-ta-aš-šu-uš  
 55) <sup>URU</sup>An-ku-wa-aš<sup>4</sup>Ka-tah-ha-aš<sup>URU</sup>Ta-hur-p[a-aš<sup>4</sup>Ma-am-ma-aš<sup>U</sup>]Ka-ta-pa-aš MUNUS.LUGAL-aš  
 56) <sup>URU</sup>Du'-un'-na'-aš<sup>4</sup>Hal-la-ra-aš DINGIR<sup>MES</sup>lu-[la-ah-he-e-eš DINGIR<sup>MES</sup>ha-pi]-re-e-eš  
 57) DINGIR<sup>MES</sup>ŠA<sup>URU</sup>Ha-at-ti hu-u-ma-an-te-eš DI[NGIR<sup>MES</sup>LÚ<sup>MES</sup>DINGIR<sup>MES</sup>MUNUS<sup>MES</sup>DINGIR<sup>MES</sup>]KUR-e-aš  
 58) DINGIR<sup>MES</sup>ŠA-ME-E DINGIR<sup>MES</sup>ER-SE-TIM HUR.SAG<sup>MES</sup>[D<sup>MES</sup>PÚ<sup>MES</sup>UR-PÁ<sup>MES</sup>]ne-

**§ 5**

- 31) Դու՝ Խուկկանա, Արևիս կամովին պաշտպանիր, և մեզքին  
 32) Արևի կանգնիր: Այսուհետև ուրիշ ոչ մեկին  
 33) չճանաչես: Եվ Արևս քեզ կամովին կպաշտպանեմ, հետո  
 34) քո որդիներին կպաշտպանեմ, իսկ հետո քո որդիներին իմ որդին կպաշտպանի:
- 

**§ 6**

- 35) Եվ ե[թ]ե դու միշտ քեզ լավ պահես, և Ա[րևի]ս կամովին պաշտպանես,  
 36) ապա հետո քո [որ]դիներին [հա]խդեալ ես [բա]րեհաճ կլինեմ,  
 37) և իմ որդին քո որդիներին կամովին կպաշտպանի, և Արևս  
 38) քեզ կպաշտպանեմ: Տես, քեզ (համար) այս բանը եղբման տակ  
 39) ես դրեցի և այս գործի համար 1000 աստվածների  
 40) խորհրդի կանչեցինք:
- 

**§ 7**

- 41) „Երկնքի“ Արևի աստվածը, Արիևնայի Արևի աստվածուհին, „Երկնքի“ Ամպրոպի  
 աստվածը, Խաթթիի Ամպրոպի աստվածը,  
 42) Հալեպի Ամպրոպի աստվածը, Արիևնայի Ամպրոպի աստվածը, Ց[ի]պպալանդայի  
 Ամպրոպի աստվածը,  
 43) Սապիխուվայի Ամպրոպի աստվածը, Ներիկի Ամպրոպի աստվածը,  
 [Խի]սապխապայի Ամպրոպի աստվածը, Սախպիևայի Ամպրոպի աստվածը,  
 44) „Ջորքի“ Ամպրոպի աստվածը, շուկայի Ամպրոպի աստվածը, Ուդայի Ամպրոպի  
 աստվածը, [Կիցց]ուվատևայի Ամպրոպի աստվածը,  
 45) Պիտտեյարիկի Ամպրոպի աստվածը, Սա[մու]խայի Ամպրոպի աստվածը,  
 Սա[րի]սասայի Ամպրոպի աստվածը, Խուրմայի Ամպրոպի աստվածը,  
 46) Լիխցիևայի Ամպրոպի աստվածը, „Ավերակ քաղաքի“ Ամպրոպի աստվածը,  
 [Բս]խուպիտայի Ամպրոպի աստվածը, Խուլլասասայի Ամպրոպի աստվածը,  
 47) Խերատը, Ուդայի Խերատը, Կիցցու[վատ]ևայի Խերատը:
- 

**§ 8**

- 48) Պահապան աստվածը, Խաթթիի Պահապան աստվածը, Ցիտխարիյասը, Կարցիսը,  
 49) Խապանդալիյասը, Գարախևայի Պահապան աստվածը, [„Դաշտի“] Պահապան  
 աստվածը, „որսապարկի“ Պահապան աստվածը,  
 50) Էան, Իշտարը, „Դաշտի“ Իշտարը, Կիևլեի Իշտարը, Ռատտարիևայի [Իշտարը],  
 51) „Երկնքի թագուհի“ Իշտարը, Լիևատտասը, [Կուլի]տտասը, Ջարաբան,  
 52) Էլլայայի Ջարաբան, Ա[րծի]յայի Ջարաբան, „Ջորքի“ [աստ]վածները  
 53) բոլոր, Մարդուկը, Ալլատումը, „Երկր[ի]“ Արևի աստվածը, Խուպիևնայի  
 54) Խուվասանևասը, Սամուխայի Ա[վար]ասը, Խուրմայի Խանտիտաստուսը,  
 55) Անկուվայի Կատախիտասը, Տախուրպ[այի] Մամմասը, „Կատասայի թագուհին“,  
 56) Դուևնայի Խալլարասը, „Լե[ոնե]րի“ աստվածները, իսպալիթուների աստվածները,  
 57) Խաթթիի բոլոր աստվածները, Երկրի [.....]  
 58) „Երկնքի“ աստվածները, „Երկրի“ աստվածները, Լեոն[երը], գեոները, աղբյուրները,



- 'pi'-[i]š  
 59) 'te'-e-kán šal-li-iš a-a-ru-na-aš na-a[*t* ku-ut-ru-e-eš a-ša-an-du .....]-ya  
 60) [.....]-ya  
 61) [.....]-at-ti  
 62) [.....]x

Մյուսակի վերջը բացակայում է:

## ԴԿ II

### § 9

- 1) [na]-an-mu' *U-UL* m[e]-'ma-at-ti na-an an-da im'-m[a mu-un-na-a-ši]

### § 10

- 2) na-aš-ma a-pé-e-da-ni im-ma EGIR-an ti-ya-ši A-NA <sup>4</sup>UTU<sup>10</sup>[*š*-ma]  
 3) a-wa-an ar-ha ti-ya-ši nu ma-a-an ki-iš-ša-an ut-tar i-e-[*ši*]  
 4) nu-ut-ta ke-e *NI-IŠ* DINGIR<sup>10</sup> le-e da-li-ya-an-zi nu-ut-[*ta*]  
 5) a-pu-u-un-na an-tu-uh-ša-an le-e da-li-ya-an-z[*i*]  
 6) zi-ik ku-e-da-ni EGIR-an ti-ya-ši nu a-pu-u-un-na har-ni-in-ká[n-du]  
 7) nu-uš-ma-aš ki-i ut-tar *NI-IŠ* DINGIR<sup>10</sup> EGIR-an le-e tar-na-an-z[*i*]  
 8) nu-uš-ma-at-[*ša*] le-e a-a-ra i-en-zi nu-uš-ma-aš ták-ša-an  
 9) har-ni-in-kán-du <sup>4</sup>UTU<sup>10</sup>-ma-aš-ša-an ZI-[*aš*] ar-nu-an-du

### § 11

- 10) ma-a-an zi-ik-ma <sup>4</sup>Hu-uq-qa-na-a-aš <sup>4</sup>UTU<sup>10</sup>-pát pa-ah-ha-aš-ti  
 11) EGIR-an-na A-NA <sup>4</sup>UTU<sup>10</sup>-pát ar-ta-ti nu-ut-ta ke-e-ma *NI-IŠ* DINGIR<sup>10</sup>  
 12) aš-šu-li pa-ah-ša-an-'da'-ru na-aš-ta A-NA QA-AT <sup>4</sup>UTU<sup>10</sup> an-da  
 13) a-aš-šu lu-ú-lu uš-ki

### § 12

- 14) [nu ma-a-an] <sup>4</sup>UTU<sup>10</sup>-kán ku-wa-pí A-NA KARÁŠ an-da nu ma-a-an A-NA  
 15) [.....] wa-ar-ri za-ah-hi-ya pa-a-i-mi zi-ga-mu kat-ti-mi  
 16) [la-ah-hi-ya-ši] na-aš-ma A-NA KUR <sup>10</sup>KÚR-ma na-aš-ma A-NA URU <sup>10</sup>KÚR'  
 17) [la-ah-hi-ya-nu] zi-ga-mu-za kat-ta-an nu-mu-za ma-a-an a-pí-ya-[*y*]a  
 18) [<sup>10</sup>a-ú-ri-ya-la-aš] <sup>10</sup>uš-ki-iš-ga-tal-la-aš nu-za-an ma-a-an  
 19) A-NA <sup>4</sup>UTU<sup>10</sup> še-er SAG.DU-KA-pát še-er a-ut-ti nu ma-a-an ki-i[š-ša]-an  
 20) [.....] me-mi-iš-ki-ši ku-it-wa ku-ít nu-wa-ra-at A-[NA <sup>4</sup>Hu]-uq-qa-na-a  
 21) e-eš-du A-NA <sup>4</sup>UTU<sup>10</sup>-ma-wa hu-u-ma-an SIG5-in 'e'-eš-du

### § 13

- 22) nu-mu-uš-ša-an hu-u-ma-an-da-az pa-ah-ši nu ku-iš A-NA <sup>4</sup>UTU<sup>10</sup>] i-da-a-lu-uš

ամպեր]ը, երկինքը,

59) երկիրը, մեծ ծովը: Եվ (սրանք վկաներ պիտի լինեն .....):

60) .....

61) .....

62) .....

## ԴԿ II

### § 9

1) Եվ երա մասին ինձ չասես և նույնիսկ լռես),

---

### § 10

2) կամ նույնիսկ երա մոտ գնաս, [իսկ] Արևին

3) լքես: Եթե դու այդպիսի բան ան[ես],

4) Այս երդման աստվածները քեզ հանգիստ չեն թողնի, և [քո պատճառով]

5) այդ մարդուն էլ հանգիստ չեն թողնի,

6) ում մոտ դու կգնաս: Եվ երան էլ կոչեչաց[ենն]:

7) Եվ քեզ այս բանի համար երդման աստվածները հետո բաց չեն թողնի,

8) կրանք քեզ համար դա ճիշտ չեն համարի, միասին քեզ

9) կոչեչացնեն և Արևիս կամքը կկատարեն:

---

### § 11

10) Իսկ եթե դու՝ Խուկկանա, միայն Արևիս պաշտպանես

11) և միայն Արևիս մեջքին կանգնես, ապա քեզ այս երդման աստվածները

12) կամովին կպաշտպանեն և Արևիս ձեռքում

13) դու լավ ապահովություն կտեսնես:

---

### § 12

14) [Եվ եթե], երբ Արևս զորքի հետ եմ և եթե

15) [.....] օգնության գնամ, դու ինձ հետ միասին

16) [կարշավես]: Իսկ եթե դեպի թշնամական երկիր կամ թշնամական քաղաք

17) [ես արշավեմ], դու ինձ հետ, ինձ համար այնտեղ

18) սահմանային պահակ (կլինես): Եթե դու

19) Արևիս (նայես) ինչպես քո անձին ես նայում և եթե այ[ս]պես

20) [.....] խոսես. "Ինչ որ (պատահում է), [Խուկկանայ]ին]

21) թող պատահի, իսկ Արևին թող միայն բարին լինի":

---

### § 13

22) Ինձ բոլորից պաշտպանիր: Ով Արևիս հանդեպ չար է,

- 23) tu-uq-qa a-pa-a-aš i-da-a-lu-uš 'e'-eš-du  
44: <sup>MULIS</sup>anninniyamiš «գարմուռի» = \*anni- «մայր» + nani(ya)- «եղբայր» + -mi- = «մորեղբոր ժառանգ»<sup>65</sup>:

46: Գրված է «Խաթթուսաում», սակայն գրիչը նկատի ունի «Խաթթին»: Տեքստերում նման գրությունը հաճախակի է հանդիպում: Վերականգնված է ըստ Գ.Վիլիելմի բանավոր հաղորդման՝ բնագրի հետ համադրման արդյունքում: Յ.Ֆրիդրիխն առաջարկում էր հետևյալ վերականգնումը՝ a-ki-[pa nu-uš-š]a-an: pa նշանի առկայությունը կասկածելի է կարող է լինել ևս *ma* (B տարբերակում pa-ի վերականգնումը ըստ Ռ.Ակրոդանի, ով կրկնում է Յ.Ֆրիդրիխին):

47: *dampur* ածական անվան թարգմանությունը հենվում է KBo I 30 I 8-9-ի վրա, որտեղ այն համապատասխանում է արքայդուռի *keppo*-ին («ծուռ [երկնային լուսատուների] դիրքի հիման վրա կատարվող գուշակություններում»); ցածրորակ: թերի, թերաթեք<sup>66</sup>): Առաջարկվել է այն համեմատել սերբերեն *топь* և ռուսերեն *рысь* բառերի հետ<sup>67</sup> և այդ հիման վրա թխեցնել հնդեվր. \**tomp*-u- հիմքից<sup>68</sup>: Վերոհիշյալ հիմքից հայերենում ունենք «դմբ» բառը:

<sup>65</sup> Puhvel 1984: 71f.

<sup>66</sup> Տե՛ս Puhvel 1975: 59ff.; Յ.Ֆիլչերը այս թարգմանության ավելացնում է նաև «բարբարոսական» իմաստը (Tischler 2001: 163): Այս բառաձևը հնդեվրոպական տարբեր լեզուներում (հունարեն, անգլերեն և այլն) առկա համապատասխանություններում ունի «կոշտ, կոպիտ, անառաշ» իմաստային երանգները:

<sup>67</sup> Popko 1974: 182.

<sup>68</sup> Kloekhorst 2008: 826.

В տարբերակում առկա է *za-ah-ha-an* (*zahh-* բայի դերբայը), այնինչ *A* տարբերակում՝ *za-[ah-ha-an]* *ša*. վերջինս նշանը, թերևս, գրչի սխալն է, ինչպես ենթադրում էր դեռ Յ. Ֆրիդրիխը<sup>59</sup>:

48': Յ.Ֆրիդրիխը տողասկզբում առկա վնասված մասում առաջարկում էր ընթերցել *ŠEŠ-ŠU* «նրա եղբայրը», սակայն Գ.Վիլհելմը, բնագրի հետ համադրման արդյունքում որոշակի կասկածներով հնարավոր է համարում այստեղ տեսնել *DAM-ŠU* «նրա կինը»:

48'-62': KUB XL 35-ի օգնությամբ Ռ. Վերները վերականգնել է 49, 55-57-րդ տողերը<sup>60</sup>, մնացածը մերն է:

60': *ma-a-na<-aš* բառի վերջին նշանը գրչի սխալն է, որ նշում էր Յ. Ֆրիդրիխը:

61f': *Faunaghi*՝ «նրա մոտով չքայլես», «նրան չմոտենաս», «նրա հետ չխոսես»:

67': *mekki* «շատ» և *arum(m)a* «արտակարգ» (մակբայ) բառերը սովորաբար միասին չեն կիրառվում:

68'-69': *A* տարբերակն ավելի ճշգրիտ է արտահայտում նախադասության անդամների միջև կապը՝ *apaš-n-kán anda auš-zi* «և (= Մարիյասը) նրան նայեց»: *B* տարբերակում՝ *apaš-kán ...* «և ... նայեց»: Պայմանագրի այս հատվածը, որտեղ հիշատակվում է Հայասայի նախորդ արքայի՝ Մարիյայի սպանությունը *Խաթթուսասում*, նրա հետ կնքված պայմանագրի հրատարակիչ Յ.Ֆրիդրիխը հավանաբար էր հավատ ընծայելու նման հանցանքի՝ իրականությանը համապատասխանելուն, ինչպես դա ներկայացված է պայմանագրում (պալատական կնոջ վրա նայելը): Եւ նույնիսկ օրինակներ է բերում պատմական ավելի ուշ շրջաններում վկայված ազգագրական նյութերից<sup>61</sup>: Սակայն ներկայումս մասնագետները թերահավատորեն են վերաբերվում նման հանցանքի վարկածին, այն համարելով «պալատական անեկդոտ»: Օրինակ, Պ.Դարդանոն գտնում է, որ հայասական արքայի սպանության հիմնավորումը ձևական է, որի նպատակն էր պայմանագրում արժարժվող հարցին (Խուկկանայի՝ Հայասայում իր տոհմակից կանանց հետ լրույրեր և եղբայրների կանայք) սեռական հարաբերություններ չունենալ) էլ ավելի մեծ արտահայտչականություն հաղորդելը<sup>62</sup>: Զբացառելով այս մեկնաբանությունը, նշենք, որ այդպիսի մոտեցումը խնդրին թվում է բավական պարզունակ: Մենք իրականում տեղյակ չենք, թե ինչ կարող էր տեղի ունենալ *Խաթթուսասում* Մարիյայի սպանության նախօրեին: Ինչու բացառել, որ պալատական արարողակարգի լուրջ խախտումը կարող էր խեղճական արքայի գայլույթի պատճառ դառնալ:

72': Յ.Ֆրիդրիխի հրատարակչության ժամանակ դեռևս հայտնի չէր KUB XL 35 կցաբեկորը և նա կորսված մասում թերահավատորեն առաջարկում էր վերականգնել

<sup>59</sup> Friedrich 1930: 153.

<sup>60</sup> Werner 1960: 382.

<sup>61</sup> Այսպես, արևմտյան Աֆրիկայում, ականասոսի վկայությամբ, երբ Աշևոսիի քաղաքի 3000 կանայք անցում էին փողոցով, բոլորը դեմքերը շրջում էին կամ փռվում իրենց ճանապարհը, որպեսզի չտեսնեն նրանց: Լույնպիսի սովորույթ է արձանագրված «Հազար ու մի գիշերվա» շարքի պատմվածքներից մեկում. քաղաքի փողոցներով արքայադուստրերի անցնելու պահին բոլոր քաղաքացիները ձևի էին իջնում և գլուխները հպում գետնին, նրանց չտեսնելու համար (Friedrich 1930: 159):

<sup>62</sup> Dardano 2007: 8f.

[ku-e-da-ni ud-da-ni-ya]: Սակայն կցաբեկորը թույլ տվեց վերականգնել [tu-u-wa-za u-wa-an-tu-ya]: Սակայն այստեղ էլ ծագում է մի նոր խնդիր, այն է՝ A տարբերակում երկրորդ բառի նախավերջին նշանի (tu) դիմաց B տարբերակում առկա է na նշանը: սwanna բառը au(š)- „տեսնել“ բայի անորոշ եղանակի նորմալ ձևն է: Եթե A տարբերակում tu նշանը գրչի վրիպումը չէ, ապա դժվար է բացատրել դրա առկայությունը: Է.Նոյն առաջարկում էր սwantu-ն դիտել որպես u- հիմքով բառաձևի տրական հոլովաձև, ինչը մի քիչ տարօրինակ է<sup>63</sup>:

73: antuhš-ի դիմաց, B տարբերակումում առկա է LÜ<sup>63a</sup>:

75: A և B տարբերակներում փոքր տարբերություն կա. A-ում՝ <sup>URU</sup>Ha-at-tu-ši-y[a]-ma U-UL [a-a-ra] „Բոլ Նաթթուսասում [ընդունված] չէ“, B-ում՝ <sup>URU</sup>Ha-at-tu-ši-ya-at U-UL a-[a-ra] „Նաթթուսասում այդ ընդունված] չէ“:

76: A տարբերակի տողասկզբում ka- „այդ“ դերանվան եզրացառ.հոլովաձևի (kez „այդտեղից, այդ պատճառով“) վերականգնումը ըստ Ռ.Ալդոդանի կողմից հրատարակված B տարբերակի (Յ.Ֆրիդրիխն առաջարկում էր man „երե“):

77: Ազգի երկրատուներ տարբեր տեքստերում գրության տարբերակներ ունի: Յ. Ֆրիդրիխը առաջարկում էր az նշանից հետո առկա ուղղահայաց սեպը (diš) վերընթերցել zi: KUB XIV 6,9-ի տողասկզբում, կորսված մասից հետո, պահպանվել է ինչ-որ նշանի աջ մասը՝ երկու հորիզոնական սեպեր, որոնք հասվում են մեկ ուղղահայացով: Դա համապատասխանում է Ազգիի գրության վերջին նշանին, որը պիտի գրված լիներ az կամ za նշաններից մեկով (եզրացառ.հոլ.): Սակայն վերոհիշյալ նշաններից ոչ մեկը այդպիսի ավարտ չունի: Հնարավոր է ենթադրել, որ տուժած նշանը ma-ի մասն է, և այդ դեպքում առաջարկելի է [<sup>URU</sup>Az-ya-za-ma] վերականգնումը:

78: karu-ն բառացի նշանակում է „առաջ, նախկինում“:

80: ANA „Mariya-kán DUMU.MUNUS-KA“ „Մարիայի մուտ եղած դստերը“:

81: ŠEŠ „եղբայր“ բառի փոխարեն B տարբերակում առկա է LÜ „մարդ“ բառը:

84: Տողավերջում Յ. Ֆրիդրիխը առաջարկում էր [-kán], որը B տարբերակում չկա: պետք է վերականգնել A-NA ZAG<sup>64</sup>, ինչպես B տարբերակում է:

84-86: Հայաստյում գտնվող խեթական բնակչության խնդիրը պարզ չէ: Ինչու պետք է խեթական բնակչությունը ապաստան գտներ ոչ բարեկամական հարաբերություններ ունեցող երկրում: Թերևս, իրավացի են այն ուսումնասիրողները, ովքեր Նաթթից Հայաստ փախած բնակչությանը համարում են նախկինում Հայաստացի խեթական տարածք բերված հայաստացիներ<sup>64</sup>: Միևնույն բնույթի տեղեկություն է պահպանել Մուպպիլուլիումասի գործունեությունը նկարագրող մի տեքստ, որտեղ խոսվում է Իսուվայում և Հայաստյում ապաստան գտած խեթական բնակչության մասին<sup>65</sup>:

### ՌՈՒԿՎԱՆԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԿՑԱԲԵԿՈՐՆԵՐԸ

Երկու պայմանագրերի հայտնի դառնալուց ի վեր խեթական տեքստերի նոր Հարբերի հրատարակիչները նշել են մի շարք փոքր բեկորներ, որոնք կարող էին այս

<sup>63</sup> Neu 1999: 66ff.

<sup>64</sup> Օրինակ, Kawanago 1948: 34: Այդ մասին հանգամանորեն տես Գլուխ 3:

<sup>65</sup> Տես Գլուխ 2. “Դիպված 25”:

պայմանագրերի մասերը կազմել: Դրանց ստույգ տեղը դժվար է որոշել այն պատճառով, որ հնարավոր չէ այդ բնկորները ուղղակիորեն կցել տեքստի որևէ հատվածին: Սա հատկապես բարդ է մայր տեքստի այն հատվածների պարագայում, երբ մասնագետները ստիպված են կողմնորոշվել այս բնկորների վրա պահպանված առանձին արտահայտությունների, հնագրական և կավի գույնի ու որակի չափանիշներով:

Ստորև կներկայացնենք այն բոլոր բնկորները, որոնց պատկանելությունը քննարկվող պայմանագրերին ենթադրվում է սակայն առ այսօր մնում է անկախ:

#### KBol 120 (= 613/a)

Շատ հրատարակչի<sup>66</sup>, կարող է տեղադրվել KBol V 3-ի ԴԿ II-ի 70-րդ տողից սկսած: Այն իրենից ներկայացնում է աղյուսակի միջնամասի 8 տողից բաղկացած մի բնկոր, որի առաջին երեք տողերից պահպանվել է շուրջ 6, իսկ վերջին մասում՝ երկու-երեք սեպանշան: Երրորդ տողից հետո առկա է տողանջատիչ, ինչը վկայում է այն մասին, որ այս բնկորը երկու տարբեր թեմաների սահմանային գոտում է գտնվում: Բնականաբար, կապակցված թարգմանությունը հնարավոր չէ: Չնայած խիստ պակասավոր բնույթին, այս բնկորը, ամենայն հավանականությամբ, կարող է պատկանել Խուկկանայի պայմանագրին:

#### ԳԻՏԱԿԱՆ ՏԱՈՍԴԱՐՉՈՒՄ

- 1') [.....]x ka-a-ša li-i(n).....  
 2') [.....]x-ri ku-it še-ek-k[u-e-ni  
 3') [.....]še-ek-kán-zi nu-ut-x[.....

- 4') [.....]x ŠA ʾUTU<sup>67</sup> x[.....  
 5') [...  
 .....u)t? LÚ<sup>mes</sup> TAP-PI-x[.....  
 6') [.....n]u-ud-du-za gi-[im-zu ....  
 7') [.....-e]ʾ?-du pa-ah-š[? .....  
 8') [.....]x-ya-m(u) .....  
 9') [.....]x[.....

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1': Պահպանված առաջին տողում ka-a-ša li-i(n) .....] բառերը („Šeu/ահա, պայմանագիրը/երդումը“) իրոք հիշեցնում է պայմանագրին հատուկ շարադրանքի ոճը:

2'-3': šakk- „գիտնեսալ, իմանալ“ բայի վերջավորությունը բացակայում է սակայն թերի պահպանված առաջին նշանը ավելի նման է ku-ի, քան te-ի, ինչը թույլ է տալիս

<sup>66</sup> KBol I (Miller 2006): IX.

վերականգնելու *še-ek-k[u-e-ni]* ձևը (տարբերակը՝ *šekkuwaweni*, ներկա ժամանակի հոգնակի I դեմք):

5: Այստեղ առկա է աքքադերեն *tappā* բառը (ընկեր, ուղեկից<sup>65</sup>):

7: *paḥši-* բայաձևը շատ է հիշեցնում Խուկկանայի պայմանագրում հաճախ կրկնվող ներատեքստերը:

#### KUB XL 41 (Bo 7795 Bo 866+1877/u)

Ըստ KUB XL-ի հրատարակիչ Լ.Քլենգելի, այս բեկորը պետք է կազմեր Խուկկանայի պայմանագրի մասը, քանի որ շատ նման է ԴԿ I 37H-ին<sup>66</sup>: Հետագայում Օ.Կարրուբան առաջարկեց այն միացնել KUB XXVI 39-ին<sup>68</sup>։ Վերջինս, ըստ նրա, Մուրսիլիս II-ի և Հայասայի կառավարիչ Աննիայի միջև կնքված պայմանագիրն է: Սակայն ավելի ուշ այս առաջարկը մերժվեց, քանի որ KUB XL 41-ի սեպանշանները տարբերվում են KUB XXVI 39-ից (վերջինիս սեպանշանները բնորոշ են մ.թ.ա. XIV դարի գրչությանը) և այն հատակ մ.թ.ա. XIII դարի տեքստ է<sup>69</sup>: Ներկայումս ավելի հավանական է թվում KUB XL 41-ին Bo 1877+ բեկորի (KUB XXVIII 90 = CTH 647.7) կցման հնարավորությունը<sup>70</sup>:

#### ԳՐԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՉՈՒՄ

1') [.....]-ma-x[.....

2') [.....]-tu KUR<sup>URU</sup>[.....

3') <sup>4</sup>UTU<sup>URU</sup> pa-a[h-ha-aš-ti//šī ... <sup>4</sup>UTU<sup>URU</sup>-ma]

4') tu-uk-ma-ká[n pa-ah-ha-aš-hi .?]

5') nu ka-a-aš-ma [ku-e-da-ni ud-da-ni-i *LI-IM DINGIR*<sup>MES</sup>]

6') tu-li-ya [hal-zi-u-en]

7') <sup>4</sup>UTU ŠA-ME-E [<sup>4</sup>UTU<sup>URU</sup>A-ri-in-na ...

8') <sup>10</sup>Še-e-ri [<sup>4</sup>Hur-ri.....

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս բեկորը մասն է պայմանագրերի աստվածային վկաների ցանկի: 3'-6'-րդ տողերը համեմատելի են Խուկկանայի պայմանագրի 37-40-րդ տողերի հետ, իսկ 7'-8'-ը ցանկի սկիզբն է: Սակայն այն ոչ մի կերպ համատեղելի չէ Խուկկանայի պայմանագրի համապատասխան մասի հետ:

Եթե ենթադրենք, որ 4'-6'-րդ տողերը նույնիսկ համընկնում են Խուկկանայի I 38-40-ի հետ (չհաշված որոշ անհամապատասխանություններ), ապա 1'-3'-րդ տողերը ուղղակի չեն համատեղվում: Օր., 2'-ում վկայված KUR URU[.....]:

<sup>65</sup> KUB XL (Klengel): V.

<sup>66</sup> Carruba 1988: 70.

<sup>68</sup> Kopak 2005.1: 32, Anm.578.

<sup>70</sup> Idem.

Եթե այս բեկորը պատկանել է պայմանագրին, ապա առնվազն ոչ դրա A տարբերակին (B տարբերակի համապատասխան մասը չի պահպանվել):

Այս բեկորի հրատարակությունից հետո առաջարկվեց դրա պատկանելությունը Մուրսիլիս II-ի և Միրա-Կուվալիյայի արքա Կուպանտա-Կուրունտայի միջև կնքված պայմանագրին<sup>71</sup>:

#### KBo XIX 42 (= 1878/u)

Ն.Օտտենի կարծիքով, այս բեկորը նման է պայմանագրի A տարբերակի շ՛հ III 23'-ին (և B տարբերակի համապատասխան մասին [KBo XIX 44b, 14']<sup>72</sup>): Ն.Օտտենի առաջարկի հիմքում ընկած է *garata* բառի առկայությունը (և ներքին մաս: ներքին օրգաններ: հոգի: բնություն: բնույթ: արգանդ\* = շումերագիր ŠÁ)<sup>73</sup>: Այս բառը սովորաբար ավելի ուշ շրջանի տեքստերում (մ.թ.ա. XIII դար) կիրառվում է շումերագիր գրությամբ:

Պահպանված բեկորը կարող էր ներկայացնել ըստ հրատարակչի, աղյուսակի հակառակ կողմը:

#### ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՉՈՒՄ

##### Շ՛հ?

1') [.....]-ru A-NA? [.....

2') [.....] tu-el ga-ra-ta [.....

3') [... wa-a]l-hu-wa-an-zi na-a-i [.....

4') [.....]x an-tu-uh-ša-an [.....

5') [..... ha-a]t-ra-a-i [?]

6') [..... is-ta-m]a-aš-tén nu-mu-uš-ša-an a-pé-e-d[a-ni .....]

7') [.....]x-aš-ma-za EGIR-an pa-ah-ša-nu-wa-a[n(-).....]

8') [.....]-KA pa-ah-ha-aš-nu-an har-ak [.....

9') [... a-pé-e-da-ni la]m-ni hu-u-da-ak a-ar-hu-u[t]

10') [.....]x-ti

11') [..... pa?-r]a?-a le-e ku-wa-at-qa [.....]

12') [.....]le-e ku-it-ki e-ep-ti [?.]

13') [..... iš-t]a-ma-aš-ki-ti nu-mu-uš-ša-an [.....]

14') [..... ki-i]t-ta-ru

15') [..... a-p)é-el A-BU-ŠU ŠEŠ<sup>MS</sup>-ŠU [.....]

<sup>71</sup> Այս բեկորի տեղը պայմանագրի տեքստում տես Beckman 1996: 173:

<sup>72</sup> KBo XIX (Otten): V.

<sup>73</sup> Այս բառի վկայությունների և ծագման համար տես Puhvel 1997: 75ff.:

16) [.....DUM]U<sup>9485</sup>-SU pa-an-kur ha-aš-ša [ha-an-za-aš-ša ]

17) [.....]x še-er ku-it-k[i.....

18) [.....]x ki [...] x[.....

19) [.....]x [.....

Սա միանշանակ ոչ-պարիտետային պայմանագրի մաս պետք է լինի և իրոք շատ է հիշեցնում Խուկկանայի պայմանագրի տարբեր հատվածներ: Տարաբաժանումը վեց թեմատիկ պարագրաֆների արդեն իսկ վկայում է այդ մասին: Մակայն ՀՕտտենի առաջարկը հանդիպում է լուրջ բարդության, այն է՝ քննարկվող բեկորի վրա եղած տեքստի տարաբաժանումը վեց թեմատիկ պարագրաֆների, այն դեպքում երբ Խուկկանայի պայմանագրի համապատասխան մասում նման տարաբաժանում չկա:

Այնուամենայնիվ, երկու տեքստերի միջև նմանությունները շատ են, ընդ որում որևէ այլ պայմանագրի հետ այդքան նմանություններ վկայված չեն:

#### KBa XIX 56 (791/v)

Հնարավոր պատկանելությունը Խուկկանայի պայմանագրին ըստ հրատարակիչ ՀՕտտենի: Ըստ նրա, այս բեկորը նման է պայմանագրի § 8-ին<sup>94</sup>:

#### ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱՐԱՐՇՈՒՄ

1) [.....<sup>94</sup>Kar-z]i-iš [.....2) [.....]x <sup>94</sup>Ka-ra-a[h-na .....]3) [.....<sup>94</sup>LAMMA <sup>94</sup>kur-ša-aš .....]

4) [.....]x[u]n x[.....]

5) [.....]xx[.....]

6) [.....]x[.....]

Անկասկած, այս բեկորը պայմանագրերին կցված աստվածային վկաների ցանկ է ներկայացնում:

Բեկորի վրա պահպանված նշանների խիստ փոքր քանակը թույլ չի տալիս հստակ պատկերացում կազմելու դրա պատկանելության հարցում: Երկրորդ տողում առկա քաղաքի անվան սկիզբը հուշում է, որ, հնարավոր է, այստեղ կարելի է վերականգնել <sup>94</sup>Ka-ra-a[h-na ...]: Պայմանագրի ԴԿ I-ում առկա է Կարախնա քաղաքի պահապան աստվածությունը, որին հետևում է „Դաշտերի պահապան“ աստվածությունը, այնուհետև՝ „Որսորդական պալուսակի պահապան աստվածությունը“ (<sup>94</sup>LAMMA <sup>94</sup>Ga-ra-ah-na <sup>94</sup>LAMMA [LIL] <sup>94</sup>LAMMA <sup>94</sup>kur-ša-aš): Մակայն Z-րդ տողում Կարախնա քաղաքի դետերմինատիվին նախորդող վնասված սեպանշանը և հաջորդ տողում KUS դետերմինատիվին նախորդող սեպանշանը տարբեր են, ինչը կարող է վկայել, որ, ի

<sup>94</sup> KBa XIX: V.



տարբերություն Խուկկանայի պայմանագրի 49-րդ տողի, այստեղ վկայված պետք է լիներ “Պահապան աստվածությունից” տարբեր դիցանուն: Բացի այդ, Կարախնայի աստվածությունը Պայմանագրում հաջորդում է ընդամենը մեկ աստվածություն (*LAMMA [LÍL]*), որը զրված է երեք սեպանշաններով, այնինչ KBo XIX 56-ում 2<sup>-</sup>րդ տողի վերնում և հաջորդ տողի սկզբում ենթադրելի է ավելի մեծ տարածք: Մակայն նույնիսկ այդ դեպքում KBo XIX 56-ը պարտադիր չէ առնչել Խուկկանայի պայմանագրին, քանի որ պայմանագրերին վկա աստվածների ցանկը սովորաբար հանդես է գալիս որոշակի, կանոնավորված հաջորդականությամբ և, հնարավոր է, սա մեկ այլ պայմանագրի մասը կարող էր կազմել:

### KBo XIX 57 (259/w)

Հ.Օտտենի կարծիքով, այս բեկորը հիշեցնում է պայմանագրի § 3ff.-ը<sup>75</sup>:

#### ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՉՈՒՄ

1') [.....

2') [.....]x-ki-ma [.....

3') [.....]x ŠU<sup>MS</sup>-uš a-ra-[ah-za-an-da har-si

4') [.....]U-U]L har-si nu-mu ma/ku-[.....

5') [.....]x ŠA.PAL NI-IS [DINGIR<sup>LM</sup> .....

6') [te-eh-hu-un .....

Այս բեկորի վրա առկա են պայմանագրերում բազմիցս վկայված մի շարք տրաֆարետային արտահայտություններ, որոնց օգնությամբ կարելի է առաջարկել որոշ վերականգնումներ:

3': Վերականգնումը ըստ պայմանագրի 23-րդ տողի: Խուկկանայի պայմանագրի համապատասխան տողում առկա է մի փոքր այլ տարբերակ (*ŠU<sup>MS</sup>-uš-za a-ra-ah-za-an-da har-si*): KBo XIX 57-ի տարբերությունը այն է, որ այս տողից առաջ առկա է պարագրաֆների անջատիչ, որը Խուկկանայի պայմանագրում դրված է սրան նախորդող տողից առաջ:

5'-6': Վերականգնումը ըստ Պայմանագրի 38-39-րդ տողերում առկա տրաֆարետային արտահայտության, որը Խուկկանայի պայմանագրում այսպիսին է՝ *ke-e ud-da-a-ar ŠA.PAL NI-IS DINGIR<sup>LM</sup>*: Մեր բեկորի վրա, սակայն, *ŠA.PAL* բառին նախորդող թերի պահպանված նշանը *saddar-* (զրվում է նաև խուլ բաղաձայնով՝ *uttar*) բառի վերջին սեպանշանը չէ: Դատելով պահպանված սեպերից, սա միևնույն բառի շումերագիրն է՝ *INIM* (տեքստերում զրվում է նաև *INIM-tar*):

Հաշվի առնելով բեկորի վերաբերյալ վերոհիշյալը, կարելի է արձանագրել, որ եթե

<sup>75</sup> KBo XIX: V.

սա իրոք կապված է Խուկկանայի պայմանագրի հետ, ապա, այնուամենայնիվ, տեքստի կցաբեկորը չէ: Հնարավոր է, մենք գործ ունենք պայմանագրի ինչ-որ տարբերակի հետ: Համենայնդեպս, այդ ենթադրելի տարբերակը Պայմանագրի B տարբերակը չէ, քանի որ KBo XIX 57-ի սեպանշանները գրված են մ.թ.ա. XIII դարին հատուկ գրությամբ, իսկ B-ն հնագրական հիմքի վրա թվագրվում է մ.թ.ա. XIV դարով (տես սույն աշխատության Աերածությունը):

**ՅՈՒՂԻՍԱԿՆԱՍ III – ՄԱՐԻՅԱ + “ՀԱՅԱՍՏԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐ” ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ**

Պայմանագրի հրատարակումից հետո (1930թ) մասնագետները չեն անդրադարձել բնագրի վերականգնմանը, որի պատճառը կցարեկորների բացակայությունն է: Քանի որ տրաֆարետային արտահայտությունները և բառակապակցությունները տեքստից տեքստ հաճախակի տարբերվում են, այդ իսկ պատճառով նպատակահարմար չէ վնասված հատվածներում առաջարկելու որևէ վերականգնում, չնայած ենթատեքստից հնարավոր է ենթադրել, թե խոսքը ինչի մասին է:

Տեքստում չի պահպանվել դրա կերտանը վկա աստվածների ցուցակը, եթե, իհարկե, այդպիսին եղել է: Այս վաղ փուլի տեքստերում դրանք կամ բացակայում են<sup>76</sup> կամ դրվում են պայմանագրերի սկզբնական մասում<sup>77</sup>: Այդպես է, օրինակ, կասկական տարբեր քաղաքների հետ Առևտրականության I-ի կերպած պայմանագիրը<sup>78</sup>, որտեղ այդ ցուցակը հայտնվում է տեքստի միջնամասից առաջ: Միայն հետագայում, Մուրսիլիս II-ից է ձևավորվում պայմանագրերի ստանդարտ կառուցվածքը:

**Տեքստ (A+B)**

1'-16'	-	KBo V 12
17'-19'	-	KBo V 12 + KBo V 3
20'-59'	-	KBo V 3

**Պարագրաֆների բաժանումը**

§ x-1'	-	-----
§ 1' -	1'-3'.	
§ 2' -	4'-7'.	
§ 3' -	8'-11'.	
§ 4' -	12'-15'.	
§ 5' -	16'-25'.	
§ 6' -	26'-33'.	
§ 7' -	34'-40'.	
§ 8' -	41'-44'.	
§ 9' -	45'-46'.	
§ 10' -	47'-49'.	
§ 11' -	50'-59'.	

<sup>76</sup> Օրինակ, ինքական արքա Ֆիդանուսա II-ի և Կիցցուվատուայի արքա Պիլլիայի, ինքական անանուն արքայի (հնարավոր է, Ռուցցիյաս II-ի [ըստ Հ.Քլենգելի՝ Klengel 1999: 98]) և Կիցցուվատուայի արքա Պաղդատիշուի միջև կնքված պայմանագրերում (KUB XXXVI 108 – CTH 25, հրատ.,՝ Otten 1951; KUB XXXIV 1 + KBo XXVIII 105a+105b – CTH 26, հրատ.,՝ Meyer 1953: 108ff.; Beckman 1996: 11f.):

<sup>77</sup> Տես “Մուսպիլիուիումաս – իունկանա” պայմանագիրը:

<sup>78</sup> CTH 137.1 (հրատ.,՝ Von Schuler 1965: 134ff.).

## ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒՄ

## § 1'

- 1') [.....-z]i [.....]  
 2') [.....]ŠEŠ<sup>MS</sup>. YA NIN<sup>MS</sup>. YA a-ša-an-zi x[.....]  
 3') [.....] pi-ih-hi
- 

## § 2'

- 4') [nu KUR<sup>URU</sup>Ha-ya-š]a-ma-mu KUR-e nu-uš-ma-aš-za ka-a-ša  
 5') [<sup>4</sup>UTU<sup>Š</sup>]i-in-ga-nu-nu-un nu-mu ma-a-an aš-šu-li  
 6') [pa-ah-ha-aš-te-ni n]u-mu-uš-ša-an SAG.DU<sup>MS</sup>. KU-NU A-NA SAG.DU- YA  
 7') [kat-ta-an ar-h]a ki-id-du-ma-ti
- 

## § 3'

- 8') [ma-a-an-ma <sup>4</sup>UTU<sup>Š</sup>] I-NA EGIR UD<sup>ŠR</sup> aš-šu-li <sup>4</sup>UL  
 9') [pa-ah-ha-aš-te-ni] DUMU<sup>MS</sup>. YA DUMU.DUMU<sup>MS</sup>. YA ha-aš-šu-uš  
 10') [ha-an-za-aš-šu-uš <sup>4</sup>UL pa-ah-h]a-aš-te-ni  
 11') [KUR<sup>URU</sup>Ha-at-t]i <sup>4</sup>UL pa-ah-ha-aš-te-ni
- 

## § 4'

- 12') [ma-a-an-ma <sup>4</sup>UTU<sup>Š</sup> (ku-wa-pi-ik-ki) i]m-ma ku-wa-pi-ik-ki  
 13') [.....] nu-mu me-na-ah-ha-an-da  
 14') [..... i-da]-a-lu ták-ke-eš-te-ni  
 15') [.....i-da-a-lu] ták-ke-eš-te-ni
- 

## § 5'

- 16') [nu-mu/<sup>4</sup>UTU<sup>Š</sup> me-na-a]h-ha-an-da i-da-a-lu  
 17') š[a-an-h]a-an-zi  
 18') š[a-..... ku-iš im-ma ku-iš an-tu]-wa-ah-h[a]-aš  
 19') ma-a-n[a-aš ..... ma-a-na-aš] <sup>10</sup>ŠU.GÁL HAL-{ZLU}GAL  
 20') ŠEŠ LU[GAL ma-a-na-aš .....] ma-a-na-aš  
 21') ÉRIN<sup>MS</sup> [ANŠU.KUR.RA<sup>MS</sup> ma-a-na-a]š ĪR GÊME<sup>UM</sup>  
 22') ku-e-[eš-qa ma-a-na-aš ..... ku-iš-]ki ma-a-na-as ÉRIN<sup>MS</sup>  
 23') ku-iš-[ki ma-a-na-aš ..... ku-iš-k]i ma-a-na-at KUR-e  
 24') ku-it-k[i ma-a-na-aš .....] ma-a-na-aš ku-iš  
 25') im-m[a ku-iš] an-tu-wa-ah-ha-aš
-

## ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

## § 1'

1) .....

2) [.....] իմ եղբայրներն (ու) քույրերը կլինեն: ...[.....

3) [.....] ես կտամ:

## § 2'

4) [Իսկ Հայաստանի իմ երկիրն է, և ձեզ, ահա,

5) [Արևս, երգվեցրի: Եթե ինձ բարեկամաբար

6) [պաշտպանեք], և ձեր զլուխներն իմ գլխին

7) [դ]րեք:

## § 3'

8) [Իսկ եթե Արևիս] ապագայում բարեկամաբար

9) [չպաշտպանեք], իմ որդիներին, թոռներին (և) հետագա

10) [սերունդներին չպաշտպանեք,

11) [Խաթթի երկիրը չպաշտպանեք:

## § 4'

12) [Իսկ եթե Արևիս (որտեղ) էլ ո]ր լինի

13) [.....] իմ դեմ

14) [..... չ]արության համար միավորվեք:

15) [..... չար] ության համար միավորվեք:

## § 5'

16) [Եթե իմ/Արևիս դ]եմ չարություն

17) ձ[բազ]րեք,

18) [..... ու]լ էլ որ ես լի]նի,

19) [..... թե] հրամանատար (կամ) բեր[դա]լպահ

20) արքայի եղբ[այր թե .....], թե

21) հետևակային, [թե կառավար], ստրուկ թե ստրկուհի,

22) [..... թե .....], գինձոր

23) [..... թե .....], լինի դա երկիր

24) [թե .....], ուլ էլ

25) որ [եա] լինի:

## § 6'

- 26') šu-ma-a-[aš-ma ma-a-an ha-at-ra-a-mi nu-mu ]Š-TU ÉRIN<sup>MES</sup> ANŠU.KUR.RA<sup>MIA</sup>  
 27') hu-u-da-a-ak Ú-UL e-er-te-ni nu-za-an pa-ra-a] im-ma ša-me-nu-ut-te-ni  
 28') ma-a[h-h]a-an-ma-w[a ..... EG]IR-an-da pa-a-i-u-wa-ni  
 29') na-aš-ma-wa pa-a-i-wa-a-n[i(?) .....]x šu-me-eš  
 30') [LÚ]<sup>MES</sup><sup>URU</sup>Ha-ya-ša LÚ<sup>URU</sup>KÚ.BABBAR-ti [pa-ra-a hu]-u-ít-ti-ya-az-zi  
 31') nu am-mu-uk a-wa-an ar-ha ti-ya-at-te-ni [nu] a-pé-[e-da]-ni EGIR-an  
 32') ti-ya-at-te-ni nu ku-iš a-pa-a-at ut-tar i-ya-az-zi na-an-kán ke-e[[-aš]]  
 33') [NI-IŠ] DINGIR<sup>MES</sup> QA-DU DAM<sup>MES</sup>.KU-NU DUMU<sup>MES</sup>.KU-NU É<sup>MES</sup>.KU-NU KUR-  
 KU-NU KUR-KU-NU har-ni-in-kán-du
- 

## § 7'

- 34') nu-[uš-m]a-aš-ma ku-it im-ma ku-it ha-at-ra-a-mi šu-me-e-ša-mu  
 35') ma-a-an Ú-UL iš-ta-ma-aš-kat-te-ni na-aš-ma-aš-ma-aš A-NA ÉRIN<sup>MES</sup>  
 ANŠU.KUR.RA<sup>MIA</sup>  
 36') ku-wa-pí ha-at-ra-a-mi nu-mu-uš-ša-an ma-a-an hu-u-da-a-ak  
 37') Ú-UL e-er-te-ni na-aš-ma-mu ta-ma-iš-ma ku-iš-ki<sup>LÚ</sup>KÜR  
 38') za-ah-hi-ya ú-iz-zi šu-ma-a-aš-ša ha-at-ra-a-mi nu-[mu-uš]-ša-an  
 39') ma-a-[an w]a-ar-ri lam-mar Ú-UL e-er-te-ni nu-za-an p[a-ra-a]  
 40') im-[ma] ša-mi-nu-ut-[te]-ni
- 

## § 8'

- 41') nu-mu m[a-a]-an I-NA EGIR.UD.KAM šu-me-eš LÚ<sup>MES</sup><sup>URU</sup>Ha-ya-ša aš-š[u-l]i  
 42') pa-ah-ha-aš-[t]e-ni am-mu-ga šu-me-eš LÚ<sup>MES</sup><sup>URU</sup>Ha-ya-ša \*Ma-ri-ya-an  
 43') LÚ<sup>MES</sup> ga-e-ni-eš ŠA KUR<sup>URU</sup>Ha-ya-ša aš-š[u-li] pa-ah-ha-aš-hi  
 44') KUR<sup>URU</sup>Ha-ya-ša-ya aš-š[u-li] pa-ah-ha-aš-hi
- 

## § 9'

- 45') nu ma-a-an šu-me-eš SIG<sub>5</sub>-in iš-ša-at-te-ni nu<sup>4</sup>UTU<sup>ŠL</sup>-in  
 46') KUR<sup>URU</sup>Ha-at-ti-ya aš-š[u-li] pa-ah-ha-aš-te-ni<sup>4</sup>UTU<sup>ŠL</sup>-ya-aš-ma-aš SIG<sub>5</sub>-in iš-ša-ah-h[i]
- 

## § 10'

- 47') ma-a-an šu-me-eš-ma ku-wa-at-qa i-da-a-lu i-ya-at-te-ni  
 48') nu-uš-ma-aš<sup>4</sup>UTU<sup>ŠL</sup>-ya i-da-la-u-wa-ah-mi nu-za<sup>4</sup>UTU<sup>ŠL</sup> a-pé-e-ez  
 49') li-in-ki-ya-az A-NA PA-NI DINGIR<sup>MES</sup> par-ku-iš e-eš-li-it
- 

## § 11'

- 50') nu-uš-ma-aš ka-a-ša ke-e k(u-e u)d-da-a-ar ŠA-PAL NI-IŠ DINGIR<sup>LIM</sup>

- § 6'
- 26') [Իսկ եթե ես] ձեզ գրեմ և ինձ մոտ] հետևակով (և) մարտակառքերով  
 27') [տեղևուտեղը չգաք և նրան] նույնիսկ թաքցնեք (ասելով):  
 28') «Իսկ երբ [.....հե]տո գեանք,  
 29') կամ գեանք [.....] դուք,  
 30') հայասա[ցի]ներդ, Խաթթիի մարդուն նախընտրեք,  
 31') և ինձ լքեք, (և) ն[ր]ա մոտ  
 32') գեաք: Ով այդ բանն անի, նրան այս  
 33') [երդման] աստվածները՝ ձեր կանանց, որդիների, տների (և) երկրի հետ միասին  
 թող ոչնչացնեն:
- 

- § 7'
- 34') Իսկ (եթե) [ձե]զ ինչ-որ բան գրեմ, (և) դուք ինձ  
 35') եթե չլսեք, կամ ձեզ հետևակի (և) մարտակառքերի համար  
 36') երբ գրեմ և դուք ինձ մոտ տեղևուտեղը  
 37') չգաք, կամ իմ դեմ որևէ թշնամի  
 38') մարտի գա, և ձեզ գրեմ ու դուք ինձ  
 39') եթե [ե օ]գնության չգաք, և նրան  
 40') նույն[իսկ] թաքց[ն]եք:
- 

- § 8'
- 41') Եթե ինձ ապագայում դուք՝ հայասա[ցի]ներդ, բարեկամաբար  
 42') պաշտպա[ն]եք, ես ձեզ՝ հայասացիներին, Մարիյային  
 43') (և) Հայասայի տոհմակիցներին բարեկամաբար կպաշտպանեմ,  
 44') և Հայասան էլ բարեկամաբար կպաշտպանեմ:
- 

- § 9'
- 45') Եթե դուք (ձեզ) լավ պահեք, Արևիս  
 46') և Խաթթին բարեկամաբար պաշտպանեք, Արևս էլ ձեզ լավ կվերաբերվեմ:
- 

- § 10'
- 47') Իսկ եթե դուք չար բան անեք,  
 48') Արևս էլ ձեզ չարությամբ կվերաբերվեմ, և թող ես, Արևս, այս  
 49') պայմանագրից՝ աստվածների առջև (կերված - Ա.Ք.) ազատ կլինեմ:
- 

- § 11'
- 50') Ձեզ համար, ահա, այս խոսքերը երդման տակ

- 51) te-eh-hu-un na-at ma-a-an [šu-me-eš LÚ<sup>MES</sup>URU<sup>H</sup>]a-ya-ša \*Ma-ri-ya-aš-ša  
 52) Ú-UL pa-ah-ha-aš-te-ni nu-uš-ma-[aš ke-e] NI-İŠ DINGIR<sup>URU</sup> šu-me-en-za-an  
 53) SAG.DU<sup>MES</sup>.KU-NU DAM<sup>MES</sup>.KU-NU DUMU<sup>MES</sup>.K[U-NU ŠEŠ<sup>MES</sup>]<sup>MES</sup>.KU-NU NIN<sup>MES</sup>.KU-  
 NU  
 54) MĀŠ<sup>URU</sup>.KU-NU É<sup>MES</sup>.KU-NU A.ŠĀ<sup>URU</sup>.KU-NU U[RU.DIDLĪ<sup>URU</sup>.KU-N]U  
 G<sup>URU</sup>SAR.GEŠTIN.KU-NU  
 55) KISLAH<sup>URU</sup>.KU-NU GUD<sup>URU</sup>.KU-NU UDU<sup>URU</sup>.KU-NU [QA-DU MIM-MU-KU-NU-ya]  
 56) kat-ta-an ar-ha <har-ni-in-kán-du> da-an-ku-wa-ya-az-ma-aš-k[án ták-n]a-az  
 57) še-er ar-ha ni-ni-in-kán-du nu-uš-ša-an a[m-mu-uk]  
 58) A-NA LÚ<sup>MES</sup> KUR<sup>URU</sup> Ha-ya-ša \*Ma-ri-ya <KUR><sup>URU</sup> Ha-ya-ša-y[a]  
 59) i-da-a-lu Ú-UL tag-ga-aš-[hi]
-



- 51) ևս դրեցի: Եթև (դուք՝ հ)այասացի[ներ] և Մարիյա, դրանք  
 52) չպաշտպանեք, ձեզ [այս] երդման աստվածները ձեր  
 53) անձերը, ձեր կանանց, որդի[ներ], եղբայր[ներ], քույրերի,  
 54) ընտանիքների, տների, դաշտերի, ք[աղաքներ]ի, խաղողի այգիների,  
 55) կալատեղերի, կովերի, ոչխարների [և գույքի հետ միասին]  
 56) թող <ոչնչացնեն>, խավար [անդրաշխարհից  
 57) թող ձեզ բարձրացնեն: Ե[ս] ձեզ՝  
 58) հայասացի-ներին>, Մարիյային և Հայասային  
 59) չեմ վնաս[ի]:

---

Վերջ

## ՍԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

\*Տեքստը զգալիորեն տուժած է պահպանված մասի 1'-3'-րդ տողերում, այնուհետև՝ 4'-28'-ում առկա մասնակի վնասվածքները վերականգնելի են այլ տեքստերի համադրմամբ: Վերականգնումների գերակշիռ մասը պատկանում է Յ.Ֆրիդրիխին:

Տեքստի մի շարք հատվածներում առկա են բառաձևերի սխալ գրություններ, բացթողումներ և իմաստային անհամապատասխանություններ (օրինակ, 32'-33', 56'):

4': Վնասված մասում Հայաստայի վերականգնումը ըստ ենթատեքստի:

4'-5': Այստեղ առկա է այլ տեքստերում վկայված արտահայտություն և վնասված մասում \**UTU<sup>2</sup>*-ից բացի, ուրիշ ոչինչ սպասելի չէ. տես, օր., nu-uš-ma-aš-[za k]a-a-ša \**UTU<sup>2</sup>* li-in-ga-nu-nu-un (KUB XXVI 29+KUB XXXI 55 Vs.7f. [Ստեռնվանդաս I]):

7': Նախորդ տողում սկսված նախադասությունը տրաֆարետ է: ki- „դնել“ բայի հետ կիրառվող նախդիրներից միայն kattan arha-ն է սպասելի, քանի որ վնասված մասից հետո պահպանվել է ha եղանի վերջը: Իմաստն այն է, որ հայասացիները խեթական արքայի հետ պետք է միասնական լինեն:

8'-11': Սա տրաֆարետ է, սակայն տեքստերում կարող է արտահայտվել ընդարձակ և համատար տարբերակներով:

9'-10': Վերականգնումը Յ. Ֆրիդրիխինն է:

12': Վերականգնումը Յ. Ֆրիդրիխինն է:

16'-25': Այստեղ թվարկվում են այն անձինք, ովքեր ապագայում կարող են դրժել երդումը: Հարկ է նշել, որ տեքստերում նմանատիպ ցուցակները հաճախ տարբերվում են, ինչը թույլ չի տալիս որևէ վերականգնում առաջարկելու: Թերևս, հաջորդ երեք անձանց սոցիալական բարձր կարգավիճակը հուշում է, որ ցուցակը պիտի սկսվեր LUGAL „արքա“ բառով (տես 19'-րդ տողի վնասվածքը):

19'-27': Վերականգնումները Յ. Ֆրիդրիխինն են:

19': <sup>10</sup>*SU.GAL* “հրամանատար” և *HAL-ZI LU* <sup>11</sup>*GAL* “շրջանի կամ ամրոցի տիրակալ” տերմինները, ըստ Յ.Ֆրիդրիխի, վկայված են միայն այս տեքստում<sup>10</sup>: Սակայն հետազայում հայտնաբերվեց մի նոր տեքստ, որտեղ կրկին հիշատակվում է այս տերմինը: Վերջինիս ենթատեքստը այնքան էլ պարզ չէ, որպեսզի հստակ թարգմանություն առաջարկվի: Սրանցից երկրորդի առաջին բաղադրիչը խեթերենում աքքադերենից կատարված փոխառություն է (աքքադ. haša- „ամրոց”)<sup>11</sup>: Մենք այն թարգմանել ենք „ամրոցի տիրակալ”, քանի որ խոսքը, ամենայն հավանականությամբ, ամրոցի կայազորի հրամանատարի մասին է, ի տարբերություն առաջին տերմինի, որը նշում է զործող բանակի (հետևակային) զորամասի հրամանատարին<sup>12</sup>:

21': [*ANSU.KUR.RA*]<sup>12</sup> վերականգնման հարցում Յ.Ֆրիդրիխը վստահ չէ:

32'-33': Այստեղ նախադասության մեջ առկա է իմաստային կազուս („բող երդման աստվածները երան ձեր կանանց, երեխաների, տների, երկրի հետ միասին ոչնչացնեն”): Տվյալ ենթատեքստում սպասելի էր *-ŠU* „երա” դերանվան կիրառությունը

<sup>10</sup> Friedrich 1930: 162.

<sup>11</sup> Friedrich 1991: 49.

<sup>12</sup> Խեթական բանակի հրամանատարական կազմի այս երկու խմբերի մասին տես Beal 1992: 451f.: Ռ.Բիլը այստեղ սխալմամբ Մարիթայի պայմանագիրը ամուլում է Թուրկանայի պայմանագրին:

-KUNU „ձեր“ դերանվան փոխարեն, ինչը նկատվել է<sup>82</sup>: Տեքստի վերջում աստվածային պատժին վերաբերող համանման ենթատեքստում էնկլիտիկ դերանունը ճիշտ է կիրառված (51-57):

48'-49': Այս հատվածի իմաստը հետևյալն է. եթե հայասացիները խախտեն պայմանագիրը, ապա խեթական արքան իրեն ազատ կհամարի ևույնպես խախտելու պայմանագիրը և պատժելու նրանց:

56': Այս տողում գրչի կողմից բայը բաց է թողնված: Յ.Ֆրիդրիխն առաջարկում էր վերականգնել *harganu-* բայը „ոչնչացնել, ավերել“ (*harganuwandu*)<sup>83</sup>: Մենք գերադասել ենք, հետևելով Յ.Պուհվելին<sup>84</sup>, վերականգնել միևնույն բայի պատճառական ձևը (*harnink* „ստիպել վերանայ, անհետանայ, ոչնչանալ“)<sup>85</sup>:

56'-57': “Խավար անդրաշխարհից բարձրացնել” արտահայտությունը պետք է մեկնաբանել այսպես՝ “գերեզմանից հանել”, այն է՝ հանգիստ չթողնել նաև մահվանից հետո:

58': LÜ „մարդ“ բառի հոգնակիակերտ ցուցիչը բացակայում է:

57'-59': Տեքստի ավարտական տողերում անցումը անեծքի բանաձևից դեպի խեթական արքայի հնարավոր գործողությունը հարթ չէ: Երդումը դրժելու հետևանքով աստվածային պատիժը նշելուց հետո անմիջապես ասվում է, որ խեթական արքան չի պատժի հայասացիներին, Մարիյային և Հայասային: Այստեղ սպասելի էր նմանատիպ ենթատեքստերից հայտնի որևէ արտահայտություն, օրինակ, Խուկկանայի պայմանագրի մի շարք հատվածներ (ԴԿ I 31-34, 35-38 և այլն):

<sup>82</sup> Puhvel 1991: 165.

<sup>83</sup> Լույս բայաձևն է վերականգնված նաև Reichardt 1998: 25 n.3-ում այն պատճառաբանությամբ, որ *harnink*- բայի հետ կիրառվում է միայն *arha* նախդիրը, բայց ոչ *kattan arha*-ն:

<sup>84</sup> Puhvel 1991: 165.

<sup>85</sup> Այս երկու բայաձևերի վկայությունները և լեզվական քննությունը տես Puhvel 1991: 161ff.:

## ԳԼՈՒԽ 2

## ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՔՍՏԵՐ

Խաթրիի և Հայասայի միջև կնքված պայմանագրերի ժամանակաշրջանի պատմական համատեքստի պարզաբանման համար կարևոր նշանակություն ունեն մի շարք խեթական տեքստեր, որոնք կազմվել են մ.թ.ա. XIV-XIII դարերի ընթացքում: Դրանք ընդգրկում են Առնուվանդաս I-ի (հնարավոր է՝ Թուղխալիյաս III-ի), Մուրսիլիս II-ի և Խաթրուսիլիս III-ի կատարման շրջանները: Ստորև այս գլխում ներկայացվում են այդ տեքստերը ըստ դրանցում արձանագրված իրադարձությունների ժամանակագրական հաջորդականության: Բացառությամբ վերջին տեքստի (KUB XVIII 2), մյուսները ներկայացվում են ամբողջությամբ, ինչը թույլ կտա լիարժեք պատկերացում կազմելու իրադարձությունների մասին<sup>86</sup>: Հաշվի առնելով այդ տեքստի մեծ ծավալը, մենք դրանից միայն առանձին հատվածներ կհղենք այս կամ այն կոնկրետ խնդրի պարզաբանման համար<sup>87</sup>:

Ահա այդ տեքստերի ցանկը.

- |   |   |   |
|---|---|---|
| 1) KUB XXIII 72+ (= CTH 146)  | - | Առնուվանդաս I                           |
| 2) Maşat Höyük 96 <sup>88</sup>   | - | Առնուվանդաս I<br>կամ<br>Թուղխալիյաս III |
| 3) KBo VI 28+ KUB XXVI 48 <sup>89</sup> (= CTH 88)                            | - | Թուղխալիյաս III                         |
| 4) KUB XIX 11 ԴԿ I <sup>90</sup> (= CTH 40 IID = „Դիպված“ 10)                 | - | Թուղխալիյաս III                         |
| 5) KUB XIX 11 ԷԿ IV+ <sup>91</sup> (= CTH 40 IIE = „Դիպված“ 13)               | - | Թուղխալիյաս III                         |
| 6) KBo XIV 14 <sup>92</sup> (=CTH 40.V = „Դիպված“ 40)                         | - | Թուղխալիյաս III                         |
| 7) KUB XXXIV 23 + KUB XL 10 <sup>93</sup> (= CTH 40.III = „Դիպված 25“)        | - | Մուպպիլուլիումաս I                      |
| 8) KBo XIV 13 <sup>94</sup> (= CTH 40.V = „Դիպված 39“)                        | - | Մուպպիլուլիումաս I                      |
| 9) KUB XVIII 2 <sup>95</sup> (= CTH 569) - Խաթրուսիլիս III կամ Թուղխալիյաս IV |   |   |

<sup>86</sup> Այն մասնագիտական հարատարակություններում սովորաբար անվանում են «արձանագրություն» („protocol“), հրատարակությունը տես Sayce 1930: 5ff. (թարգմանաբար); Gurney 1948: 32ff. (թարգմանաբար); Hoffner 1976: 60ff. (1684/ս կցարեկորը); Խաչատրյան 1998: 87-93 (հատված.թարգման); Kosyan 2006a: 72ff. (ամբողջական հրատարակություն); Քոչյան 2001: 233-245 (պատմական նոտախորհի համար):

<sup>87</sup> KUB XXIII 72+–ը առանձին հիմնավոր հետազոտության առարկա կլինի մեր հետագա ուսումնասիրությունների ընթացքում:

<sup>88</sup> Alp 1991: 298ff.

<sup>89</sup> Տեքստի մեզ հետաքրքրող հատվածի՝ Forrer 1926: 35f.; Goetze 1940: 21ff.; Cornelius 1958: 237ff.:

<sup>90</sup> Մուպպիլուլիումասի գործունեությանը նվիրված՝ Մուրսիլիս II-ի տեքստերից է (= „Դիպված 10“ Güterbock 1956: 62f.; Forrer 1926: Nr.35f.):

<sup>91</sup> = „Դիպված 13“ (Güterbock 1956: 65f.):

<sup>92</sup> = „Դիպված 40“ (Güterbock 1956: 114):

<sup>93</sup> = „Դիպված 25“ (Güterbock 1956: 83f.):

<sup>94</sup> = „Դիպված 39“ (Güterbock 1956: 113):

ԽԱՅԹՈՒՄԻԼԻՍ III-Ի ՏԵՔՄՏՍԿ ՍՈՒՊՊՈԼՈՒԼՈՒՄԱՍ I-Ի ՄԱՍԻՆ

Այս տեքստը Խաթթուսիլիս III-ի հռչակագիրն է՝ փոքրասիական դիցարանի հնդեվրոպական ծագման առաջատար աստվածություններից Պիրվային նվիրված *Խենկուր* անվանումը կրող սրբավայրը<sup>96</sup>, դրան պատկանող բնակչությանը, հարկերից ազատելու մասին<sup>97</sup>: Պիրվան կարևոր դերակատարում ունեւ Փոքր Ասիայում դեռևս կապադովկիական դարաշրջանից (մ.թ.ա. XIX-XVIII դդ.), հանդիսանալով Քանես քաղաքի աստվածություններից մեկը<sup>98</sup>:

KBo VI 28 + KUB XXVI 48-ը մեկ աղյուսակից բաղկացած երկկողմ գրությամբ տեքստ է, որի մի մասը (ԴԿ 25-ից հետո, 2Կ 1-21, 32-39) լուրջ վնասված տեսքով է պահպանվել: Նույն տեքստի մասը կազմող երկու բեկորների (A և B) տեղը առայժմ հնարավոր չէ պարզել:

Հռչակագիրը սկսվում է պատմական ներածականով (ԴԿ և 2Կ 11), որտեղ ներկայացվում է արքայի նախորդների օրոք Խաթթիում տիրող ծանր իրավիճակը (քոլոր կողմերից թշնամիների հարձակումները, երկրի մեծ մասի կորուստը և Սուպպիլիուլիումաս I-ի կողմից Նեֆալկան պետության տարածքի վերանվաճումը, նաև իր հոր՝ Մուրսիլիս II-ի գործունեությունը (այս հատվածը խիստ վնասված է)): Տեքստի հաջորդ մասը (2Կ 18-ից հետո) արդեն վերաբերում է Խաթթուսիլիսի գործունեությանը և մասնավորապես Պիրվա աստծուն նվիրված *Խենկուր* սրբավայրին:

<sup>96</sup> Հատվածական հրատարակությունը՝ Klinger 1998: 106f.

<sup>97</sup> Սրբավայրը կոչվում է <sup>96</sup>hekur "ծայռափոր սրբավայր: միջնաբերդ" (Puhvel 1991: 287): Տեքստը չի նշում, թե Պիրվային նվիրված կոնկրետ որ սրբավայրի մասին է խոսքը: Պիրվային նվիրված տաճար կար նաև Հայկական լեռնաշխարհի արևմուտքում: Մասնավորապես, մի տեքստում (KUB LV 1 ԴԿ II 9 – տեքստի համապատասխան հատվածը տես Քոչյան 2002բ: 233), կազմված մ.թ.ա. XIII դարում, հիշատակվում է Կումմախայում գտնվող "Պիրվա աստծո *Խենկուր* տաճարի պալատը" (É.GAL hekur Firwa)(Յ.Պուլիվեյի կարծիքով, այն պետք է թարգմանել որպես "Պիրվայի ծայռափոր պալատ" - Puhvel 1991: 288): Կումմախյան նույնական է հայկական աղբյուրների <sup>98</sup>Կումմախ-Անիին (արտահայտված տեսակետների համար տես Քոչյան 2004ա: 65-66):

<sup>98</sup> CTH 88 : Տեքստն առ այսօր հրատարակվել է միայն հատվածաբար (Forrer 1926: 35f. (ԴԿ 6-18): Bilabel 1927: 307f. (ԴԿ 6-25, տառադարձում): Goetze 1940: 21-23 (ԴԿ 6-15): Cornelius 1958: 237f. (ԴԿ 6-18): Kitchen 1962: 51 (ԴԿ 6-25, տառադարձում): Heinhöhl - Kraemer, 1977: 40f. (ԴԿ 6-9, 16-18): Imparati 1977: 39-46 (2Կ 18-31, 39-42): Սույն աշխատության մեջ այս տեքստը առաջին անգամ ներկայացվում է ամբողջությամբ:

<sup>99</sup> Պիրվայի անվան և գործառույթների մասին տես Otten 1952-1953; Haas 1994: 412ff.; տեքստային վկայությունները՝ Van Gessel 1998:I: 356ff.: Պիրվան փոքրասիական պատկերազրույթյան մեջ հանդես է գալիս որպես հեծյալ աստվածություն, իսկ նրա անունը ստուգաբանվում է խեթ. Peruna- "ծայռ" բառի հիման վրա: hekur բառը խեթերենում սեմական փոխառություն է (տվելի ճշգրիտ՝ շումերերեն e.kur "լեռնային տուն" բառի արքայերեն փոխառությունից)(Puhvel 1991: 289):

## ԳՐՏԱԿԱՆ ՏԱՌԱՂԱՐՉՈՒՄ

ԴԿ

- 1) *UM-MA* ta-ba-ar-na <sup>u</sup>Ha-a[t]-tu-ši-li LUGAL.GAL LUGAL KUR <sup>u</sup>Ha-at-ti UR.SAG  
 2) *NA-RA-AM* <sup>u</sup>UTU <sup>u</sup>A-ri-i[n-na] <sup>u</sup>U <sup>u</sup>Ne-ri-ik <sup>u</sup>IŠTAR <sup>u</sup>Ša-mu-ha  
 3) DUMU <sup>u</sup>Mur-ši-li LUGAL.GAL LU[GAL KUR <sup>u</sup>H]a-at-ti UR.SAG DUMU.DUMU-ŠU  
 ŠA <sup>u</sup>Šu-up-pi-lu-li-u-ma LUGAL.GAL  
 4) LUGAL KUR <sup>u</sup>Ha-at-ti UR.[SAG ... DU]MU.DUMU-ŠU ŠA <sup>u</sup>Ha-at-tu-ši-li LUGAL.GAL  
 ŠA LUGAL <sup>u</sup>Ku-uš-šar  
 5) <sup>u</sup>Ši-u-ni-it k[a-né-eš-ša-a]n-da-aš NUMUN-aš
- 

- 6) ka-ru-ú KUR.KUR<sup>MEŠ</sup> <sup>u</sup>Ha-at-ti [IŠ-TU <sup>u</sup>KÖR ar-ha har-ga-nu-wa-an e-eš-ta e-di-iz ku-  
 i[t-ma?]  
 7) nu <sup>u</sup>KÜR <sup>u</sup>Ga-aš-ga-aš u-it nu [KUR].KUR<sup>MEŠ</sup> <sup>u</sup>Ha-at-ti har-ga-nu-ut nu-za <sup>u</sup>Ne-na-  
 aš-ša-an ZAG-an  
 8) i-ya-at e-di-iz-ma IŠ-TI[U KU]R <sup>u</sup>ŠAP-LI-TI <sup>u</sup>KÜR <sup>u</sup>Ar-za-u-wa-aš u-it nu a-pa-a-aš-  
 ša  
 9) KUR.KUR<sup>MEŠ</sup> Ha-at-ti har-ga-nu-ut nu-z[a <sup>u</sup>T]u-u-wa-nu-an <sup>u</sup>U-da-an-na ZAG-an i-  
 ya-at
- 

- 10) e-di-iz-ma <sup>u</sup>KÖR <sup>u</sup>A-ra-u-un-n[a-aš u-i]t nu KUR <sup>u</sup>Ga-aš-ši-ya hu-u-ma-an har-ga-  
 nu-ut
- 

- 11) e-di-iz-ma <sup>u</sup>KÜR <sup>u</sup>Az-zi u-i[t nu KUR.KUR<sup>MEŠ</sup> UGU<sup>77</sup> hu-u-ma-an-da h[ar-g]a-nu-ut  
 12) nu-za <sup>u</sup>Ša-mu-ha-an ZAG-an i-ya-a[t <sup>u</sup>KÖR <sup>u</sup>I-šu-wa-aš-ma u-it [nu <sup>u</sup>]Te-ga-ra-  
 ma har-ga-nu-ut
- 

- 13) e-di-iz-ma <sup>u</sup>KÜR <sup>u</sup>Ar-ma-ta-na-aš [u-it] nu a-pa-a-aš-ša KUR.KU[R<sup>MEŠ</sup>U] <sup>u</sup>Ha-at-ti  
 har-ga-nu-ut  
 14) nu-za <sup>u</sup>Ki-iz-zu-wa-at-na-an URU-an [ZAG-an i-ya-a]t [U<sup>78</sup>Ha-at-t]u-ša-aš-ša URU-aš  
 ar-ha  
 15) wa-ar-nu-wa-an-za e-eš-ta nu-kán [.....]-ta-aš <sup>u</sup>he-eš-ti-ya iš-pár-za-an e-eš-t[a]
- 

- 16) [m]a-ab-ha-an-ma-kán A-BA A-BI-YA <sup>u</sup>Š(u-up-pi-lu-li-u-ma(-aš) LUGAL.GA]L  
 UR.SAG ša-ra-a iš-pár-za-aš-ta  
 17) [nu]-za-kán A-NA <sup>u</sup>ŠU.A LUGAL<sup>[77-78]</sup> e-š[a-at na-aš <sup>u</sup>KÜR<sup>MEŠ</sup>] IŠ-TU KUR.KUR <sup>u</sup>Ha-  
 at-ti ar-ha

**ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ԴԿ**

- 1) Այսպես է ասում թաբարևա Նաթթուսիլիսը, Նաթթիի մեծ արքան, հերոսը,
- 2) Արի[նևա] քաղաքի Արևի աստվածուհու, Ներիկ քաղաքի Ամպլոսպի աստծո և Մամուխա քաղաքի Իշտար աստվածուհու սիրելին,
- 3) մեծ արքա Մուրսիլիսի՝ Նաթթիի ար[քայի], հերոսի որդին, թողը մեծ արքա Մուպպիլուլիումասի,
- 4) Նաթթիի արքայի, հեր[ոսի], մեծ արքա Նաթթուսիլիսի՝ Կուսսարի արքայի հետևորդը,
- 5) աստվածների կողմից ճ[անաչ]ված ժառանգը:
- 6) Նախկինում Նաթթի երկրները թշնամիներից նվաճվեցին:
- 7) Կասկական թշնամին նկավ Նաթթի երկրները նվաճեց և իրեն Նենասա քաղաքը սահման
- 8) դարձրեց: Մտորին երկր[ի] կողմից Արցավայի թշնամին նկավ և նա էլ
- 9) Նաթթի երկրները նվաճեց և [S]ուվանուվան ու Ուդան իրեն սահման դարձրեց:

10) Հեովից Արավանևա[յի] թշնամին նկ[ավ] և ողջ Գասսիյա երկիրը նվաճեց:

- 11) Հեովից Ազգիի թշնամին նկավ[վ] և ողջ Վերին [երկրև]երը ն[վա]ճեց
- 12) և իրեն Մամուխա քաղաքը սահման դարձրե[ց]: Բսկ Իսուվա [թշնամին] նկավ [և] թեզարամա [երկիրը] նվաճեց:

- 13) Հեովից Արմատանայի թշնամին [եկավ] և նա էլ Նաթթի երկրներ[ը] նվաճեց,
- 14) և իրեն Կիցցուվատեա քաղաքը [սահման դարձրև]ց: [Նաթ]թուսաս քաղաքն էլ
- 15) հրդեհվեց: Եվ [միայն] [.....] խնստին փրկվե[ց]:

- 16) Երբ հորս հայրը՝ Մուպպիլուլիումասը, մեծ արքայն, հերոսը, հայտնվեց
- 17) [և] թագավորության գահին նստ[եց, նա թշնամիներին] Նաթթի երկրներից

18) [i-y]a-at nu KUR<sup>URU</sup>Ha-at-ti da-an-[na-at-ta EGI]R-pa a-še-ša-nu-ut

---

19) [nu-za] pa-it nu KUR.KUR<sup>MES</sup>Hur-ri h[u-u-ma-an-te-eš tar-ah-ta KUR<sup>U</sup>]Kar-ga-miš-ša-an *IS-BAT*

20) [I-NA (KUR)<sup>U</sup>]Kar-ga-miš-ša [Pi-ya-aš-ši-li-in LUGAL]-an-ni ti-it-ta-nu-ut

21) [nu I-NA<sup>URU</sup>Hal-pa<sup>UT</sup>]e-li-p[i-nu-un LUGAL-an-ni t]i-it-ta-nu-ut pa-ra-a-ma-aš pa-it

22) [.....<sup>URU</sup>Nu-haš-{-..... (KUR.)KUR<sup>MES</sup>]A-mur-ri ZAG-an i-ya-at

23) [.....]-da-ri-x [.....]-ta nu-uš-ši-kán

24) [.....]x-za-ya x[.....] KUR<sup>URU</sup>A-mur-ri

25) [..... KUR.]KUR<sup>MES</sup> A-mur-ri [.....] xxxxxx

---

26) nu K[UR]<sup>URU</sup>Ha-at-ti [.....]

27) hu-u-ma-a[n-t]a tar-ah-t[a .....

28) na-at-za-kán pí-[.....]

---

29) nu KUR.KUR<sup>MES</sup>URUHa-at-[-ti .....

30) me-ek-ki da-ri-y[a- .....

31) ták-ša-an ták-ša-an [.....]

32) nu-kán ki-iš-ša-[an .....

33) A-NA x[.....]

---

## 24

1) KUR<sup>URU</sup>[.....]

2) nam-[-ma .....

3) na-x[.....]

4) ta-[.....]

5) A-NA na-[.....]

---

6) nu-za-kán A-BU-YA [.....]

7) EGIR-an da-a-aš?-ta? [.....]

8) pa-it \*Šu-[u]p-pi-lu-li-u-[-ma .....

9) ku-it EGIR-an da-a-aš nu A-N[A?.....]

10) *Ū-UL* ki-ša-at A-NA KUR.KUR<sup>MES</sup> .....

11) nu-kán A-BU-YA-ya A-NA a-[.....]

---

12) ma-a-an-za-kán u-uq-qa A-NA x[.....]

13) A-NA A-BI A-BI-[-Y]A še-er [.....]

14) EGIR-an *Ū-UL* k[u-it/š]-ki x[.....]

15) nu-kán *IS-TUÉ*. [LUGAL ..... k]u-it-ki x[.....]



18) [վտա]րեց: Եվ Խաթթիի դատ(արկ հողերը կրկի)ն բնակեցրեց:

---

- 19) [Եվ] եա գնաց ու բ[ուր] Խուրրի երկրները [գրավեց և], Կարգամիս վերցրեց:  
 20) Կարգամիս քաղաք[ում] էլ [Պիյասսիլիին թագավոր]ության հաստատեց:  
 21) [Եվ Խալպա քաղաքում S]ելիսկ[ի]նուին թագավորության հյաստատեց, իսկ հետո  
 վերադարձավ:  
 22) [...] Նուխաշ[շե քաղաքը ...] Ամուրբուն սահման դարձրեց:  
 23) ..... և նրան  
 24) ..... Ամուրբուն երկիրը  
 25) ... Ամուրբուն երկիրը
- 

- 26) Եվ Խաթթի եր[կիրը] .....  
 27) ամբողջությամբ գրավե[ց] ..  
 28) Եվ այն [.....]
- 

- 29) Եվ Խաթթի[ի] երկրները [.....]  
 30) շատ դիմե[ց] .....  
 31) միասին [.....]  
 32) Եվ այսպե[ս] .....  
 33) .....

**ՀԳ**

- 1) [.....] երկիրը  
 2) հե[տո] .....  
 3) .....  
 4) .....  
 5) .....
- 

- 6) Եվ հայրս [.....]  
 7) հետ ... [.....]  
 8) գնաց: Սուպպիլուլիու[մասը] .....  
 9) որ եա ետ վերցրեց եվ [.....]  
 10) չդարձավ, դեպի [.....][երկր]ներ .....  
 11) Եվ հայրս դեպի [.....]
- 

- 12) Երբ ես .... [.....]  
 13) պապ[ի]ս [.....]  
 14) ոչ մ[եկը/ոչիե] [.....]  
 15) Եվ [արքայական?] պալատից? [.....]

- 16) kap-pu-u-wa-an-te-eš [.....]x<sup>MES</sup> [..... ke?] -e-ez ku-it tar-ah-hi-iš-ki-mi  
 17) nu NAM.RA<sup>MES</sup> ku-e u-i-[d]a-a-mi nu-kán x[.....]x IŠ-TU.NAM.RA<sup>MES</sup> an-da šar-  
 ni-ke-eš-ki-mi

- 18) URU.KÚ.BABBAR-ši-ma Ê.GAL te-pa-u-e-eš-ta na-at [.....n]u ku-iš ú-i-z-zi  
 DUMU-YA DUMU.DUMU-YA  
 19) URU.KÚ.BABBAR-ši LUGAL-uš ki-ša nu A-NA<sup>NA</sup>hé-[kur Pi-ir-wa(-) .....z]a? pé-e-da-i  
 na-aš-ta [.....]x  
 20) le-e ku-it-ki da-a-i ma-a-an-na<sup>NA</sup>h[é-kur Pi-ir-wa(-) a-ši-wa]-an-te-eš-zi na-a[t .....]  
 21) šar-ni-in-ki-iš-ki-id-du

- 22) NA<sup>4</sup>[hé-ku]r Pi-ir-wa-ma-kán a-ra-u-wa-ah-hu-un na-[at ša-ah-ha-ni] lu-uz-zi ŠA  
 UD.KAM<sup>M</sup> har-šu-wa-an-zi  
 23) te-[ri]-ip-pu-u-wa-an-zi G<sup>2</sup>ŠÁ.KAL G<sup>2</sup>BU-BU-TI [G<sup>2</sup>wa-ar-ša-am-ma?] ŠE IN-NU-DA  
 HU-UT-TU-UL-LI  
 24) A-NA Ê ŠA LÚ<sup>MES</sup> MÁŠ.GAL URU<sup>2</sup>ku-ut-ri EL-[KI EN] KUR<sup>2</sup>[EL-KI] EN MAD-GAL-TI  
 EL-KI MAŠKIM URU<sup>2</sup>  
 25) ANŠE.KUR.RA<sup>MES</sup> u-e-ha-an-na-aš le-e ku-iš-ki pí-ra-an EGIR-pa [pa-iz-z]i A-NA NA-  
 RA-RI LÚ<sup>2</sup>KÚR-ma-at i-[ya-at-t]a-ru  
 26) ma-a-an LÚ<sup>MES</sup> NA-RA>-RI a-ša-an-du-la-an-zi a-pu-u-uš-ma [ar]-ha tar-na-an-du I-NA  
 KARÁŠ-[ma-aš-ma-a]š  
 27) u-e-du-ma-aš KIN le-e e-eš-zi da-pí-za-kán a-ra-w[a-a-ah]-hu-un na-at a-ra-u-e-eš a-ša-  
 [an-d]u

- 28) A-WA-AT ta-ba-ar-na<sup>2</sup>Ha-at-tu-ši-DINGIR[<sup>100</sup>] LUGAL.GAL Ú<sup>2</sup>Pu-du-he-pa  
 MU[NUS.]LUGAL.GAL MUNUS.LUGAL URU.KÚ.BABBAR-ti  
 29) ŠA LA-A NA-A-DI-YA-AM ŠA LA-A ŠE-[BI]-RI-IM ku-iš-ma-an hu-u[l]-la-i ma-a-na-  
 aš BE-LU ma-a-na-aš DUMU.LU[GAL]  
 30) ma-a-na-aš EN G<sup>2</sup>ŠÚ.A ma-a-na-aš ku-iš i[m-m]a ku-iš UN-aš nu LÚ<sup>MES</sup>NA<sup>4</sup>hé-kur Pi-ir-  
 wa 'ki-da-aš ša-ah-ha-na-aš'  
 31) lu-uz-[z]i-ya-aš ti-it-ta-nu-zi na-a[š-...-t]a<sup>4</sup>U ŠA-ME-E<sup>4</sup>UTU URU<sup>2</sup>A-ri-in-na [.....  
 32) <sup>4</sup>U URU<sup>2</sup>H[a]-at-ti<sup>4</sup>Še-ri<sup>4</sup>Hur-ri<sup>4</sup>U [URU<sup>2</sup>...]x<sup>4</sup>U URU<sup>2</sup>Pit-ti-ya-ri-ik [<sup>4</sup>U] URU<sup>2</sup>Ne-ri-ik<sup>4</sup>U URU<sup>2</sup>Du<sup>4</sup>  
 33) <sup>4</sup>U URU<sup>2</sup>H[a-l]a-ap<sup>4</sup>U URU<sup>2</sup>Li-ih-zi-n[a<sup>4</sup>U URU<sup>2</sup>Š]a-mu-ha<sup>4</sup>U URU<sup>2</sup>Hur-ma<sup>4</sup>U URU<sup>2</sup>Š]a-ri-iš-ša<sup>4</sup>U  
 KARÁŠ  
 34) <sup>4</sup>U URU<sup>2</sup>Ša-pí-nu-wa<sup>4</sup>U URU<sup>2</sup>Hi-iš-ša-[aš-ha-pa<sup>4</sup>LAMMA URU.KÚ.BABBAR]-ti<sup>4</sup>Zi-it-ha-ri-ya  
 [<sup>4</sup>Kar-z]i<sup>4</sup>Ha-pa-an-ta-li-ya

- 16) հաշվված [.....]-եր(ը) [.....], որոնց եւ միշտ/շարունակաբար եվաճում էի:  
 17) Եվ վերաբնակիչները, ում եւ բերում էի այստեղ: Եվ [.....] վերաբնակիչներին եւ փոխհատուցում էի:
- 

- 18) Իսկ Խաթթուսասի (արքայական) պալատը փոքրացել էր եւ այն [.....]: Եվ ով (հետագայում) կգա՝ որդիս, թոռս,  
 19) (եւ) Խաթթուսասի արքա կդառնա, [Պիրվա աստծո] խեկուր տաճար]ին [.....] տեղաշարժի եւ նա այն [.....]  
 20) ոչինչ չդնի, եւ էթե Պիրվայի [խ]եկուր տաճարը [աղբատ]անա, նա դրա դ[իմաց]  
 21) թող փոխհատուցի:
- 

- 22) Պիրվայի [խեկուր] տաճարը եւ ազատեցի: Եվ սախխանի եւ լուցցիի համար կամ ամենօրյա վարուցանքի,  
 23) անասնակերի, սայլանիվի փայտի, [վառելափայտի?], հացահատիկի, հարդի, բրդի կծիկի,  
 24) մարդկանց տանից այծ (կամ) ոչխար հողատերը, սահմանային կառավարիչը, քաղաքի կառավարիչը,  
 25) (կամ) հեծյալ շրջիկ պահակախումբը, ոչ ոք այն թող [չվերցնի], որպես օգնական ուժ օտար երկրների դեմ թող գ[ն]ան:  
 26) Եթե օգնական զինվորները ծառայում են կայագործում, ապա նրանք (իշխանությունները - Ա.Ք.) նրանց թող ազատեն (պարտավորություններից - Ա.Ք.), իսկ ռազմական ճամբարում  
 27) շինարարական ձեւ չկատարեն, այդ բոլորից եւ նրանց ազ[ա]տեցի: Նրանք թող ազա[տ] լինեն:
- 

- 28) Խոսքը թափարնա Խաթթուսիվիսի, մեծ արքայի եւ Պուրուխեպայի՝ մեծ թա[գ]ուհու, Խաթթիի թագուհու:  
 29) չպետք է արհամարհվի (ե) ջնջվի, իսկ ով կհակադրվի, լինի նա տեր (ազնվական - Ա.Ք.) թե արքայազն,  
 30) „աթոռի/զահի տեր“, ինչպիսի մարդ էլ որ լինի: Եթե նա Պիրվայի խեկուրի մարդկանց վրա սախխան  
 31) եւ լուցցի սահմանի, երկնքի Ամպրոպի աստվածը, Արիսնայի Արևի աստվածուհին [.....]  
 32) Խաթթիի Ամպրոպի աստվածը, Շերին, Խուրրին, [.....] քաղաքի Ամպրոպի աստվածը, Պիտտիյարիկի Ամպրոպի աստվածը, Ներիկի [Ամպրոպի աստվածը], „ավերված բլրի“ Ամպրոպի աստվածը,  
 33) Խալպայի Ամպրոպի աստվածը, Լիխցինայի Ամպրոպի աստվածը, [Մ]ամուխայի [Ամպրոպի աստվածը], Խուրմայի Ամպրոպի աստվածը, [Մ]արիսայի [Ամպրոպի աստվածը], գորքի Ամպրոպի աստվածը,  
 34) Սապիեուվայի Ամպրոպի աստվածը, Խիսա[ախիսպայի] Ամպրոպի աստվածը, [Խաթթիի] Հովանավոր աստվածը], Տիտխարիյան, [Կարցի]և, Խապանտուլիյան,

- 35) <sup>4</sup>LAMMA <sup>URU</sup>G[a-ra-ah-na] <sup>4</sup>[LAMMA <sup>KU</sup>kur-la-aš <sup>4</sup>]AL-LA-TUM <sup>4</sup>E-a <sup>4</sup>[DAM.KI.NA]  
<sup>4</sup>Hé-pát MUNUS.LUGAL ŠA-ME-E
- 36) <sup>4</sup>IŠTAR <sup>4</sup>IŠTAR LÍL <sup>4</sup>IŠTAR <sup>URU</sup>Ni/e-nu-wa <sup>4</sup>IŠTAR <sup>URU</sup>H]a-at-ta-ri-na <sup>4</sup>Ni-na-at-ta <sup>4</sup>Ku-  
 [li-it-ta .....]
- 37) <sup>4</sup>Iš-ha-ra-a[š <sup>4</sup>ZA.BA<sub>6</sub>.BA<sub>6</sub> <sup>4</sup>]ZA.BA<sub>6</sub>.BA<sub>6</sub> <sup>URU</sup>KÛ.BABBAR-ti <sup>4</sup>ZA.BA<sub>6</sub>.BA<sub>6</sub> <sup>URU</sup>El-l[a-ya  
<sup>URU</sup>Ar]zi-ya
- 38) <sup>4</sup>Ya-ar-ri [<sup>URU</sup>Hur-ma-aš <sup>4</sup>Ha-an-ti]-ta-aš-šu <sup>URU</sup>Ša-mu-ha-aš <sup>4</sup>A-ba-ri <sup>URU</sup>A-[an-ku-wa-aš  
<sup>4</sup>Ka/ha-t]ah-hi
- 39) <sup>URU</sup>Ka-ta-pa-aš MUNUS.L[UGAL <sup>URU</sup>Ta-hur-pa-aš <sup>4</sup>(Am-)m]a-am-ma <sup>URU</sup>Du-un-na-aš  
 Hal-la-ri <sup>URU</sup>Hu-pé-eš-na-a[š <sup>4</sup>GAZ.]BA.A.A DINGIR<sup>MES</sup> LÛ<sup>MES</sup>
- 40) DINGIR<sup>MES</sup> MUNUS<sup>MES</sup> ŠA <sup>URU</sup>Ha-at-t[i .....]-za ku-iš ke-e tup-pí-ya-aš ud-da-a-ar EGIR-  
 pa hu-ul-[li-iz-zi] ke-e-da-aš
- 41) A-NA LI-IM DINGIR<sup>MES</sup> EN DI-NI-ŠU[e]-eš-du na-an-kán IN.ZI NUMUN-an-na da-an-  
 ku-wa-ya-za ták-na-za har-ga-nu-wa-an-du
- 42) A-NA <sup>4</sup>U-ma-aš GU<sub>6</sub>.MAH e-eš-du na-an pár-še-eš-ki-id-du

- 35) Կ(արախնայի) հովանավոր աստվածը, [որսապարկի հովանավոր աստվածը], Ալլատումը, Էան, (Դամկինան),
- 36) Իշտարը, [ղաշտերի] Իշտարը, Լինկեի Իշտարը, Խատտարինայի [Իշտարը], Լինատտան, Կուլիտտան),
- 37) Իսխարան, [Ջաբբան], Խաթթիի Ջաբբան, Էլլ(այայի) Ջաբբան, [Ար]ցիդայի
- 38) Յարրին, [Խուրմայի Խանտի]տասսուն, Սամուխայի Աբարան, Ա[նկուվայի Կատ]ախխան,
- 39) Կատապայի Քագուհին, Տախուրպայի Ամմամման, Դունեայի Խալլարան, Խուպենեայի Գագրան, արական սեռի աստվածները,
- 40) իզական սեռի աստվածները Խաթթիի [.....] ով այս արձանագրության խոսքը ոչեչ[ացնի], նրան
- 41) հազար աստվածները նրա IN? անձը/հոգին, սերունդն էլ անդրաշխարհից (բառացի՝ «խավար հողից» – Ա.Ք.) ոչեչացնեն:
- 42) Թող նա Ամպրոպի աստծո ցույ դառնա (և) նա (Ամպրոպի աստվածը - Ա.Ք.) նրան մշտապես հեծնի:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԴԿ

4-5: Արբայի ծագումնաբանության մեջ Կուսսարի արքա Խաթթուսիլի առեչության կիրառվում է DUMU.DUMU “թոռ” գաղափարագիրը, որը թարգմանել ենք “հետևորդ” (վերջինս այդ իմաստով հայտնի է նաև այլ տեքստերից), չնայած այդպիսի իմաստ ունի նաև NUMUN-*aš* գաղափարագրի տակ թարգմանված “warwalan- “հետևորդ, սերունդ” բառը<sup>99</sup>:

6: Ա.Գյոթցեն տողավերջի պահպանված երկու նշանների, նաև վնասված փոքր հատվածում ենթադրվող մեկ նշանի համար դժվարանում էր առաջարկել որևէ մեկնաբանություն<sup>100</sup>: Ֆ.Կոռնելիուսը վերոհիշյալ սեպախումբը տառադարձում էր *e-di-iz-ma-d[ša ...]*: Այստեղ առաջարկելի է նաև *ku-i[(-ma)]*:

15: *ḥešta-/hešta-* բառով նշվում է հետմահու տաճարային համալիրը<sup>101</sup>:

16: “Խուրրի երկրների” դեմ Սուպպիլուլիումաս I-ի մղած պատերազմների մասին պատմող այս հատվածը պահպանվել է Խաթթուսիլիս III-ի մեկ այլ տեքստում (KUB XIX 9): Այստեղ նշվում է Սուպպիլուլիումաս I-ի պատերազմների տևողության երկու թվական՝ 20 տարի (I 8) և 6 տարի (I 21): Ա.Գյոթցեի կարծիքով<sup>102</sup>, 20 տարին վերաբերում է KBo VI 28 ԴԿ 6-15-ում հիշատակվող իրադարձություններին: Սուպպիլուլիումասից այդքան ժամանակ է պահանջվել վերանվաճելու համար պետության կորցրած տարածքները:

17: Ա.Գյոթցեն տողի սկզբում վերականգնում է *m[a-an]-za-kán*<sup>103</sup>, սակայն *ma* նշանի որևէ հետք կամ տեղ ինքնագրում չկա: Նույն տողի երկրորդ լակունայում առաջարկում է *[na-aš LU<sup>MES</sup> KÜR<sup>MES</sup>]*, այսքան նշանի համար տեղը բավարար է, սակայն դժվար է ընտրել *LU<sup>MES</sup>*-ի և *KÜR<sup>MES</sup>*-ի միջև:

18: Հաջորդ լակունայում դեռևս Ա.Գյոթցեն առաջարկում էր *da-an-[na-at-ta]* “դատարկ” բառը<sup>104</sup>: Նրա կարծիքով, տեքստի այս հատվածում խոսքը պատերազմների ժամանակ բնակաբափ եղած շրջանների վերաբնակեցման մասին է, մանավանդ որ նախադասության մեջ կառավարող բայը պատճառական ձև ունի: Սակայն ավելի ուշ Ս.Հայնեհոլդ-Կրամերը, առանց որևէ պատճառաբանության, առաջարկեց *da-an-[ku-in-te-kán]-ը*<sup>105</sup> (“խավար/սև հող”), ինչը բավական տարօրինակ իմաստ կարող է հաղորդել նախադասությանը, քանի որ խեթական տեքստերում այդպես է կոչվում “անդրաշխարհը”: Տողի սկզբի վնասված մասում *iya-* բայի վերականգնումը ըստ

<sup>99</sup> Tischler 2001: 197. Տեքստի սկզբում Խաթթուսիլիսի ծագումնաբանության հետ կապված խնդիրների քննարկումը տես Klinger 1988: 34f.

<sup>100</sup> Goetze 1940: 27.

<sup>101</sup> Վկայությունների և բառի ծագման համար տես Puhvel 1991: 319ff.

<sup>102</sup> Götze 1931: 117f.

<sup>103</sup> Götze 1925: 105.

<sup>104</sup> Götze 1925: 105.

<sup>105</sup> Heinhold-Krahmer 1977: 41.

U-Նայնիդ-Գրամերի<sup>106</sup>, որի փոխարեն նախկինում ընդունված էր ընթերցել *awa*<sup>107</sup>:

19: Առաջին վնասված հատվածում [ոս-za] վերականգնումը մերն է, իսկ երկրորդում *tar-ah-ta awa*- քայի վերականգնումը ըստ Հ.Քլենգելի<sup>108</sup>:

20: Պիլասսիլիի անվան խորրիերեն ձևը առկա է Ռ.Բիլի մոտ<sup>109</sup>: Հ.Քլենգելի և մեր վերականգնումը հենվում է նույն իրադարձության մասին պատմող KUB XIX 9 I 19-ում <sup>109</sup>“Piyasili գրության վրա:

22: Նկատի առնելով այս երկրանվան գրության երկու ձևերը մեր տեքստում (KUR <sup>107</sup>A-mur-ri - ԴԿ 24 և [KUR.]KUR<sup>105</sup>A-mur-ri - ԴԿ 25), հակված ենք վերականգնելու երկուսից մեկը:

30: *dariya*- քայը սովորաբար թարգմանվում է „դիմել, կոչել (աստծուն)“<sup>110</sup>: դատելով մեր ենթատեքստից („շատ“ բառի առկայությունից), արքան շարունակաբար դիմել էր աստվածներին:

## 24

7: *da-a-aš?-ta?* Բայաձևի երկու սեպանշանների կասկածելի ընթերցումը թույլ չի տալիս որևէ մեկնաբանություն առաջարկել:

16-17: Այս վնասված հատվածում խոսվում է արքայի կողմից ինչ-որ երկրի նկատմամբ տարած հաղթանակի և այնտեղից տեղահանված բնակչության մասին:

18-20: Այստեղ խոսվում է ապագայում արքայի հետևորդների կողմից Պիրվային եվիրված *խեկուր* անվանումը կրող տաճարում գտնվող ինչ-որ պաշտամունքային օբյեկտի (անվանումը ամբողջությամբ վնասված է) հնարավոր տեղահանման մասին: Մա փաստացի տեքստի վերջում առկա անեծքի բանաձի համարժեքն է, որտեղ արքան զոռուշացնում է իր հետևորդներին տաճարին վնաս չհասցնել:

18: Խաթրուսասի արքայական պալատի “փոքրացումը”, թերևս, եպատակահարմար է ընկալել որպես դրա մասնակի ավերման մասին ակնարկ:

19: Նկատի ունի տաճարի ավերումը:

22-27: Վերականգնումները ըստ Ա.Գյոթցեի և Ֆ.Իմպարատիի<sup>111</sup>: Դատելով ենթատեքստից, 22-րդ տողի վերջում որևէ սեպանշան չպետք է լիներ:

22: Թվարկվող հարկադիր աշխատանքի այս տեսակը բնորոշող *luzzi* բառը<sup>112</sup> հայագիտության մեջ առաջարկվել է համադրել հայերեն *լուծ* բառի հետ<sup>113</sup>, չնայած

<sup>106</sup> Heinhold-Krahmer 1977: 41.

<sup>107</sup> Götze, 1925: 105; նաև Bilabel 1927: 307 Anm.3.

<sup>108</sup> Klengel 1978: 105.

<sup>109</sup> Beal 1992: 322 n.1230.

<sup>110</sup> Tischler 1993: 171ff.

<sup>111</sup> Götze 1930: 54 և Imparati 1977: 39ff.

<sup>112</sup> Puhvel 2001: 130f. (“հարկադիր աշխատանք, հասարակական պարտավորություն”).

<sup>113</sup> Մկրտչյան 1970: 59-61: Հեղինակի կարծիքով, քանի որ խեթերենում առկա է “լուծ” իմաստով ազելի կիրառական *yuga* բառը (*luzzi*-ն կիրառվում է մեկ կոնկրետ իմաստով՝ որպես հարկադիր աշխատանքի տեսակ), ապա *luzzi*-ն կարող էր փոխառված լինել խեթերենում մեկ այլ լեզվից: Այս առնչությամբ անհրաժեշտ է արձանագրել, որ էթե իրոք խեթերենում այս բառը օտար առնչություն է, ապա այն հայերենում կարող էր հայտնվել հենց խեթերենից, ինչպես փոխառություն է, ապա այն հայերենում կարող էր հայտնվել հենց խեթերենից, ինչպես հայերենում առկա մեծ քանակությամբ խեթերեն բառաձևերը (վերջիններիս համար տես

վերջինիս համար համեմատական հնդեվրոպաբանության ներկայացուցիչները (օտար և հայ) որպես աղբյուր նշում են վերականգնվող հնդեվրոպական "yugo-m- հիմք"<sup>114</sup>: Գ.Ջահուկյանը, սակայն, իրավացիորեն կասկած է հայտնում խեթերեն և դրա ենթադրյալ հայերեն բառերի միջև կապի առնչությամբ: Նրա կարծիքով, մի կողմից խեթերեն բառի հնդեվրոպական ծագումն ակնհայտ է, սակայն մյուս կողմից խեթերեն բառի իմաստը շատ նեղ է<sup>115</sup>: Իրոք, խեթերեն այս բառի հիմքից որևէ այլ բառաձևեր վկայված չեն: Iuzzi-ն կիրառվում է միայն "հարկադիր աշխատանքի" իմաստով և այդպիսով մշակութային տերմինի տպավորություն է ստեղծվում, ինչը թույլ է տալիս ենթադրելու դրա փոխառյալ բնույթը: Sahhan բառի ճշգրիտ իմաստը այնքան էլ հստակ չէ. թերևս, այն կարելի է թարգմանել որպես վարձակալությամբ մշակման տրված հողատարածք:

24: "Ոչխար" թարգմանությունը պայմանական է: Այստեղ առկա է <sup>100</sup>kutri գրությունը, որը հայտնի է բացի այս տեքստից, միայն KBo VI 29 2'4 III 20-ում: Հնարավոր է, այստեղ նշվում է ոչխարի ինչ-որ տեսակ:

26: Չնայած առաջին վնասված հատվածը փոքր չէ, սակայն, բացի ar նշանից, այլ նշաններ դժվար է ենթադրել: Երկրորդ վնասված հատվածի վերականգնումը ըստ Ֆ.Իմպարատիի<sup>116</sup>: "Կայազորի օգնական զինվորներ" բառակապակցությունը նշում է Խաթթիից կախյալ երկրներից հավաքագրված օտարերկրացի զինվորներին:

26-27: Բառացի ասվում է հետևյալը. "Ռագմական ճամբարում երանց համար թող շինարարական աշխատանք չլինի":

30: Տողավերջի վնասված մասի վերականգնումը ըստ Ֆ.Իմպարատիի<sup>117</sup>: <sup>66</sup>SU.A տերմինը սովորաբար մեկնաբանվում է որպես „արոտ, գահ“, ինչը սույն տեքստում, EN-ի համակցությամբ, թերևս, պետք է նշանակեր „պաշտոնյա, աստիճանավոր“:

32-35: Ամպլոռայի աստվածների ցանկի վերականգնումը ըստ կցաբեկոր KUB XXVI 48-ի (տես նաև Դ.Յոշիդայի մոտ<sup>118</sup>):

35: Խուկկանայի պայմանագրի համապատասխան տեղում, Կարախեսա բաղաբի հովանավոր աստվածությունից հետո, հիշատակվում է ևս մեկ հովանավոր աստվածություն՝ <sup>4</sup>LAMMA [LIL]: <sup>4</sup>E-a-ից հետո <sup>4</sup>[DAM.KI.NA]-ի վերականգնումը ըստ որոշ պայմանագրերում այս նույն տեղում սույն աստվածության հիշատակության:

36: <sup>4</sup>[<sup>1</sup>STAR LIL <sup>4</sup>ISTAR <sup>100</sup>Ne/i-nu-wa?] վերականգնումը ըստ Դ.Յոշիդայի<sup>119</sup>:

37: [<sup>2</sup>A.BA.A.BA.] և [<sup>100</sup>Ar]-ը ըստ Դ.Յոշիդայի<sup>120</sup>:

38-39: Վերականգնումները ըստ պայմանագրերի կնքմանը վկա աստվածների ցանկերի՝ Hantitašsu, Abara, "Կատապայի թագուհի": (A)m(m)amma-ն և Խուպեսնայի

Kanawatun 1957:331-408; Ջահուկյան 1967: 57-74; 1970: 123-162; 1987: 320; Greppin 1978: 115ff. և այլն):

<sup>114</sup> Հարցի քննարկումը տես Մկրտչյան 1970:

<sup>115</sup> Ջահուկյան 1987: 320:

<sup>116</sup> Imparati 1977: 40.

<sup>117</sup> Imparati 1977: 46.

<sup>118</sup> Yoshida 1996: 27f.

<sup>119</sup> Yoshida 1996: 29.

<sup>120</sup> Yoshida 1996: 29.



Նալլարան հանդիպում են միևնույն հերթականությամբ (Մուվատալլիս II-ի և Վիլուսայի արքա Ալաբասեդուսի միջև կնքված պայմանագրում): “Բրոնզե տախտակում” Նալլարայի և “GAZ.BA.A.A-ի հերթականությունը փոխված է<sup>121</sup>:

38: [U<sup>18</sup>Hur-ma-aš]-ը ըստ Դ.Յոշիդայի<sup>122</sup>:

41: Այս տողում առկա է այլ տեքստերում այլևս չվկայված երկու սեպանշանից բաղկացած IN.ZI գրությունը (տառադարձումը ըստ Ֆ.Իմպարատիի<sup>123</sup>. վերջինս այն չի քարզմանել): Դատելով ենթատեքստից, IN.ZI NUMUN-ը (եզ. հայց.հոլ.) պետք է բնութագրեր արձանագրությանը վնաս հասցեող անձին: Եթե IN.ZI-ն տարանջատենք, ապա կստանանք ZI „հոգի, էություն” և NUMUN „սերունդ” և այդ դեպքում անբացատրելի կմնա IN կշանը որը խեթական տեքստերում ինքնուրույն չի օգտագործվում որպես գաղափարագիր<sup>124</sup>: Հնարավոր է նաև մեկ այլ բացատրություն, այն է՝ այստեղ գործ ունենք ռեբուսային գրության հետ (in-zi = innara), ինչը դժվար է հիմնավորել: Վերոհիշյալ նկատառումներից ելնելով, այս հատվածի համապատասխան մասը թողել ենք առանց մեկնաբանության:

## ԱՌՆՈՒՎԱՆՂԱՍ Ի-Ի ԿԱՍ ԹՈՒՂՆԱԼՅԱՍ III-Ի ՆԱՄԱԿԸ

### ՄԱԵՍՏՅՈՅՈՒՔ 96

Այս տեքստը մեկն է 1970-ականների սկզբին խեթական Տապիզգա քաղաքից (ներկայումս Մաշատիյուք վայրը, Ջիլե քաղաքից 30 կմ. հարավ-արևմուտք)<sup>125</sup> հայտնաբերված արխիվի նամակներից, որոնք ներկայացնում են խեթական արքայի նամակագրությունը Տապիզգայում գտնվող տարբեր պաշտոնատար անձանց հետ: Ստորև ներկայացվող նամակը բացակայում էր արխիվի առաջին հրատարակության մեջ զգալի վնասվածքների, ինչպես նաև նամակագրի և հասցեատիրոջ անունների անողորջության պատճառով: Լամակում, ըստ դրան անդրադարձած մասնագետների կարծիքի, հիշատակվում են Հայասայի դեմ մոտ ապագայում ձեռնարկվելիք ռազմական գործողությունները<sup>126</sup>, ինչի մասին վկայում են Նաթրիի տարբեր շրջաններում գորահավաքի անցկացման մանրամասները<sup>127</sup>:

Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ տեքստի պահպանված մասում ռազմական արշավանքը բնորոշող որևէ բառ չի կիրառվում<sup>128</sup>: Թերևս, արշավանք ենթադրելու

<sup>121</sup> Otten 1988: 26 (IV սյունակի առաջին տողը):

<sup>122</sup> Yoshida 1996: 29.

<sup>123</sup> Imparati 1977: 47 n.96.

<sup>124</sup> Rüster und Neu 1989: Nr.354.

<sup>125</sup> Մաշատիյուքի նույնացումը խեթական աղբյուրների Տապիզգա քաղաքի հետ պատկանում է արխիվի հրատարակիչ Ս.Ալֆին (Alp 1980: 58f.):

<sup>126</sup> Beal 1992: 88; Houwink ten Cate 1998: 52; Քոսյան 2001: 237-239 և այլն:

<sup>127</sup> Հրատ. Alp 1991: 298ff.; նաև Քոսյան 2001:

<sup>128</sup> Համապատասխան հատվածին, որից կարելի է ենթադրել ռազմական արշավանքի անկարկ. կարելի է միևնույն հաջողությամբ այլ մեկնաբանություն տալ (narkkan pedi handanteš ašandu):

համար հիմնական փաստարկ է դիտվում տեքստում ստորև ներկայացվող երկրների և քաղաքների ցանկը (17-21'), որտեղից նախատեսվում էր զորաջոկատներ հավաքագրել և որոնց շարքում Հայասան չի հիշատակվում: Նշենք, որ այդ տողերի սկզբնական մասում կան կորսված հատվածներ, որտեղ Հայասան կարող էր հիշատակված լինել: Արդյոք Նամակում Հայասան նույնպես հանդես չի գալիս որպես զորահավաքի անցկացման տարածք<sup>129</sup>: Ի դեպ, խեթական երկու տեքստեր ուղղակիորեն հիշատակում են խեթական տերության ազդեցության ծայր արևելյան գոտում, որտեղ ենթադրվում է Հայասան, զորաջոկատների հավաքագրումը<sup>130</sup>: Քանի դեռ վերոհիշյալ խնդիրը պարզ չէ, այստեղ և ստորև կշարունակենք հետևել մասնագիտական գրականության մեջ առաջ քաշված տեսակետին:

Նամակի տեքստը գրված է մեկ աղյուսակի երկու կողմերի վրա: Դիմային կողմից ըստ էության ոչինչ չի պահպանվել (ընդամենը յոթ տողերի վերջնամասը), ինչը թույլ կտար պատկերացում կազմելու Հայասանի դեմ ռազմական պատրաստությունների պատճառները: Ի տարբերություն ԴԿ-ի, ՀԿ-ից պահպանվել է 27 տող (այս կողմի սկիզբը նույնպես կորսված է հրդեհի պատճառով), սակայն թույլ է տալիս քիչ թե շատ կապակցված տեղեկատվություն ստանալ:

<sup>129</sup> Այդպես էինք ենթադրել մեր նախորդ աշխատություններից մեկում (Քոսյան 2001: 237):

<sup>130</sup> KUB XXVI 62 (հրատ.՝ Von Schuler 1965: 142ff.; Քոսյան 2004q: 472-476) և IBoT I 36 (հրատ.՝ Güterbock and Den Heut 1991; համապատասխան հատվածը՝ Քոսյան 2002q: 229):

## ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՉՈՒՄ

## ՂԿ

- 1') [.....-r]a?
- 2') [.....e]-eš-tu
- 3') [.....-a]n
- 4') [.....]-an-zi
- 5') [.....]ša-ra-a tar-na
- 6') [.....] x še-er
- 7') [.....]-te

## ՉԿ

- 1') [.....] x x [.....]
- 2') [.....] x x n[u] SI[Gs-i]n ŠEŠ<sup>m</sup>Ta-pa-li-ya
- 3') [pa-ra-a ne-e]h-hu-un nu a-pé-e-da-ni KUR-e a-pa-a-aš
- 4') [.....] x ša-ra-a I-NA KUR.UGU i-it
- 5') [a-pí-i]d-[d]a-n[i] ud-da-ni-i EGIR-an ti-ya
- 6') [.....] x-ni ú-[w]a-ši nu-ut-ta ku-e ku-e wa-aš-túl x-x [...]
- 7') [.....] x x KUR-[y]a-[a]z a[n]-da II-ŠU/III-ŠU
- 8') [.....] p[í]r?-e? [...] x <sup>CO</sup>TUKUL [K]UR-ya-az
- 9') [pa-ra-a pí-hu-te-š]i
- 10') [.....] x [k]i-[i]t pa-an-d[a]-la-az-pát EGIR-an ti-ya
- 11') [.....] x x k[i]-i]t pa-an-ta-la-za-pát
- 12') [..... a-ša-a]n-du ú-wa-ši I-NA KUR<sup>URU</sup>Ha-a-ya-š[a]
- 13') [pa-a-i-š]i n[a-a]t-kán pé-e-di ha-an-da-a-an-te-eš
- 14') [a-ša-an-du .....-a]t-ta ú-iz-zi EG[IR?] <sup>4</sup>UTU<sup>Š</sup>
- 15') [ti-ya-az-zi] [n]u-[z]a ú-wa-ši ÉRIN<sup>MES,ŠA</sup> ni-ni-in-ku-wa-an-z[i]
- 16') [pa-a-i-š]i
- 17') [ÉRIN<sup>MES</sup> KUR.KU]R<sup>MES</sup> KUR.UGU<sup>TM</sup> KUR<sup>URU</sup>š-hu-pí-it-ta
- 18') [... KUR<sup>HUR,Š</sup>AGŠa-ka[d]-du-nu-wa KUR<sup>URU</sup>Ša-na-hu-it-t[a]
- 19') [.....] x KUR<sup>[U]</sup>Tu-u-pa-az-zi-ya
- 20') [KUR<sup>URU</sup>La-h]u-u-wa-za-an-ti-ya KUR<sup>URU</sup>I-šu-wa
- 21') [.....] x-ya [k]u-[i]t ku-it ŠA KUR.UGU<sup>TM</sup>
- 22') [ÉRI]N<sup>MES,ŠA</sup> na-aš hu-u-ma-an-du-uš ni-ni-i[k]
- 23') [...] x [K]UR.[K]UR<sup>ŠA</sup> wa-a-tar-na-ah im-ma
- 24') [...] x u-wa-mi <sup>4</sup>UTU<sup>Š</sup> ha-at-ra-a-mi
- 25') [...n]i?-ni?-i[k?]-zi QA-TAM-MA e-ep-š
- 26') [.....] x na-[aš-t]a an-tu-uh-šu-uš
- 27') [.....p]a-r[a]-a ne-[eh-hi]

## ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԴԿ

- 1) .....
- 2) [.....ե]ղիք.
- 3) .....
- 4) [.....] (թող) նրանք [.....]-են.
- 5) [.....] թող վեր
- 6) [.....] վեր
- 7) .....

## ԸԿ

- 1) .....
- 2) [.....] Այ[ծմ] (ամեն ինչ) լա[վ] է: Տապալիյայի եղբորը ես
- 3) [այնտեղ ուղարկեցի]: Եվ այդ երկիր նա
- 4) [զնաց(?): .....] Դու գնա Վերին երկիր.
- 5) [այդ բանը նրանց առջև դիր:
- 6) [.....] դու կ[զ]աս: Եվ ինչ էլ որ լինի, մեղքը քեզ [.....]
- 7) [.....] է[ր]կրում երկու անգամ, երեք անգամ
- 8) [.....] երկրից գնեք
- 9) [կբերե]ս:
- 10) [.....ա]յդ պահից օգնիր:
- 11) [.....ա]յդ պահից
- 12) դու պիտի լի]նես: Դու կգաս: Հայաս[ա]
- 13) [դու կգնաս]: Ե[վ դ]ու (այդ) տեղը կարգի
- 14) [կբերես: ..... Եվ] դու կգաս (ու) Արևի ետ[ևում]
- 15) [կկանգնես]: Դու կգնաս՝ զորքեր հավաքելու
- 16) [կգնաս]:
- 17) [Երկրն]երի զորքերը՝ Վերին երկրի, Իսխուպիտտա երկրի.
- 18) Սակադդունուվա [լեո]ան. Սանախուխտտ[ա] երկրի.
- 19) [.....երկրի], Տուպացցիյա երկրի.
- 20) [Լախ]ուվացանտիյա [երկրի], Իսուվա երկրի.
- 21) [.....]: Եվ ինչ(պիսիք) որ կան, Վերին երկրի
- 22) [ջոկատ]ները, բոլորը հավաքի[ր]:
- 23) [.....] հետո հանձնարարիք է[րկր]ներին
- 24) [.....] ես կգամ: Ես՝ Արես, կգրեմ:
- 25) [.....] ես [կ]իսավ[քի]: Դու նույնպես հավաքիք(?):
- 26) [.....] Եվ մարդիկ
- 27) [.....] ես կուղարկեմ]:

ՍԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

24

1'-3': Այս երեք տողերի իմաստը հետևյալն է: Խեթական արքան Տապիզգայում գտնվող իր հասցեատիրոջը (ամենայն հավանականությամբ՝ շրջանի կառավարիչը կամ այստեղ տեղակայված զորամիավորման հրամանատարը) տեղեկացնում է «Տապալիյայի եղբորը» տրված հանձնարարության մասին: Հաջորդ երկու տողերում (4-5) *iya-* «գնալ» և *tai-* «դնել» բայերի հրամայական եղանակի եզակի II դեմքով կիրառությունը կարելի է մեկնաբանել երկակի. ա) այստեղ խեթական արքան վերաշարադրում է «Տապալիյայի եղբորը» տրված հանձնարարությունը կամ բ) ուղղակի դիմում է հենց հասցեատիրոջը: Ամենայն հավանականությամբ, խոսքը «Տապալիյայի եղբոր» մասին է:

5': Բառացի՝ «Նրանց) տակ այդ բանը դիր» (այսինքն՝ «Նրանց հանձնարարիր»):

6': Այստեղ արքան Վերին երկրում անցկացվելիք զորահավաքի հաջող անցկացման պատասխանատվությունը դնում է հասցեատիրոջ (կամ «Տապալիյայի եղբոր») վրա:

24'-25': *ninink-* «շարժման մեջ դնել, հավաք(ագր)ել» բայի կիրառությունը ներկա ժամանակի եզակի III դեմքով, որին հետևում է *ep-* «անել» (բառացի՝ «բռնել») բայը՝ եզակի II դեմքով, կարող է վկայել այն մասին, որ արքայի հանձնարարությունը պիտի իրականացնել ոչ միայն հասցեատերը: Այստեղ կարելի է առաջարկել հետևյալ մեկնաբանությունը. եթե արքան զրի, ապա ինչպես նա (երրորդ անձը, ում անունը չի պահպանվել) է անելու, նույն կերպ պետք է վարվի նաև հասցեատերը: Հնարավոր է այդ անանուն անձը, ով կատարելու էր արքայի հրամանը, հենց «Տապալիյայի եղբայրն» է:

**ՄՈՌԻՍԻԱՍ II-Ի ՏԵՔՍՏԵՐԸ ՍՈՒՊՊՈԼՈՒՌՆԱՍԻ ՄՂԱԾ  
ՊԱՏԵՐԱԶՄԵՐԻ ՄԱՍԻՆ**

Սուպպիլուլիումաս I-ի վարած պատերազմների մասին պահպանված խեթական տեքստերի գերակշիռ մասը կազմվել է նրա որդի և հաջորդ Մուրսիլիս II-ի օրոք, որոնք մասնագիտական գրականության մեջ ստացել են "Սուպպիլուլիումասի զործունեությունը" անվանումը (ստորև տեքստում՝ "ՄԳ")<sup>121</sup>: Տեքստերի այս ընդարձակ խումբը, որը պահպանվել է մի քանի խմբագրություններով, հրատարակչի կողմից բաժանվել է առանձին դրվագների (նա դրանք անվանում էր "Fragment"), որոնցից յուրաքանչյուրում ներկայացված են մեկ կամ միմյանց հետ ժամանակագրորեն փոխկապակցված արշավանքներ: Մենք այդ դրվագներն անվանում ենք "Դիպվածներ"<sup>122</sup>:

Վերոհիշյալ տեքստերում շարադրանքը սկսվում է Սուպպիլուլիումաս I-ի հոր՝ Քուլիալիյաս III-ի կառավարման տարիներից: Ընդ որում այստեղ չեն հիշատակվում Քուլիալիյասի կառավարման սկզբում տեղի ունեցած իրադարձությունները, որոնց մասին պահպանվել են տեղեկություններ ինչպես Մուրսիլիս II-ի այլ տեքստերից (տես ստորև՝ Գլուխ 3), այնպես էլ դրանցից մի քանի տասնամյակ անց կազմված Խաթթուսիլիս III-ի մի տեքստից<sup>123</sup>: "ՄԳ"-ում իրադարձությունները սկսվում են այն պահից, երբ Խեթական տերության տարածքի մի զգալի մասը, մայրաքաղաք Խաթթուսասով հանդերձ, դուրս էր եկել Քուլիալիյասի վերահսկողությունից և խեթական արքունիքը ժամանակավորապես իր նստավայր էր դարձրել Սամուխա քաղաքը (հավանաբար, Հալիս գետի վերին հոսանքների շրջանում): Արքան ժամանակ առ ժամանակ կրկնվող հիվանդության պատճառով ի վիճակի չէր մասնակցելու խեթական զորքի արշավանքներին և այդ պարտականությունները կատարում էր նրա որդին՝ գահակից և թագաժառանգ Սուպպիլուլիումասը:

Քուլիալիյասի և թագաժառանգ Սուպպիլուլիումասի համատեղ ռազմական ձեռնարկումների մասին հիշատակությունները տեքստերում ավարտվում են "ՄԳ"-ի առաջին մի քանի "Դիպվածներից" հետո, ինչը վկայում է նրա մահվան մասին: Այնուհետև սկսվում են Սուպպիլուլիումասի միանձնյա կառավարման շրջանի իրադարձությունները: Սուպպիլուլիումասի զործունեությունը, ըստ Մուրսիլիսի տեքստերի, ավարտվում է նրա սիրիական պատերազմներով, որոնց արդյունքում խեթերը նվաճեցին Հյուսիսային Սիրիան, մինչ այդ պարտության մատնելով պատմական այս փուլում իրենց հիմնական հակառակորդ Միտտանիին: Այս իրադարձություններից քիչ անց Սուպպիլուլիումասը և նրան փոխարինած ավագ որդին՝ Առուվանդաս II-ը, զոհ գնացին Փոքր Ասիայում սկսված համաճարակին: Ի դեպ, հենց այդ համաճարակը և Խեթական տերության համար դրա աղետալի հետևանքներն էին պատճառը, որ ավագ եղբորը գահին հաջորդած Մուրսիլիս II-ը ձեռնարկեց հոր կառավարման շրջանի իրադարձությունների ուսումնասիրությունը.

<sup>121</sup> CTH 40, հրատ.՝ Güterbock 1956.

<sup>122</sup> "Դիպվածներ" տերմինը մերն է:

<sup>123</sup> Տես վերը՝ KBo VI 28 + KUB XXVI 48:

փորձելով պարզել, թե ինչն էր պատճառը, որ աստվածները պատժեցին Նաթթի երկրին:

“ՄԳ”-ի կազմում ներառված դրվագների միայն մի մասն է քիչ թե շատ հստակ թվագրվում, սյուսների տեղայնացումը գերազանցապես հենվում է դրանցում ներկայացվող իրադարձությունների միջև ենթադրվող տրամաբանական փոխկապակցվածության վրա: Ընդհանրապես չթվագրվող “Դիպվածների” շարքում են նաև ստորև ներկայացվող հ.39 և հ.40 “Դիպվածները”:

## ԴԻՊԿԱՍ 10

(BoTU 34 + Bo 6456 = KUB XIX 11 I)

## ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՉՈՒՄ

- 1') x-x[.....  
 2) ma-ah-ha-a[n-m]a A-BU-YA i-y[a-.....  
 3) nu nam-ma <sup>10</sup>KUR <sup>URU</sup>Ha-ya-ša I-N[A KUR ..... Ū-UL]  
 4) u-e-mi-ya-zi nu A-BU-YA A-NA <sup>10</sup>KUR [<sup>URU</sup>Ha-ya-ša EGIR-an-da]  
 5) i-ya-at-ta-at na-an-ša-an nam-ma Ū-U[L u-e-mi-ya-zi]  
 6) nu <sup>10</sup>KUR <sup>URU</sup>Ga-aš-ga pa-a-an-ku-un ÉRIN<sup>MES</sup> ŠU-TI I-NA [ŠĀ.KUR<sup>17</sup>]  
 7) IK-ŠU-UD nu-uš-ši DINGIR<sup>MES</sup> kat-ta-an ti-i-e-er [<sup>4</sup>UTU <sup>URU</sup>PŪ-na]  
 8) <sup>4</sup>U <sup>URU</sup>Ha-at-ti <sup>4</sup>U KARAS<sup>4</sup> IŠTAR LİL nu <sup>10</sup>KUR]  
 9) pa-an-ga-ri-it BA.ŪŠ <sup>10</sup>MESŠU.DIB-an-na me-(ek-ki-in IŠ-BAT]  
 10) na-an EGIR-pa I-NA <sup>URU</sup>Ša-mu-ha u-wa-te-[et]
- 
- 11) nam-ma-kán A-{BU-YA <sup>URU</sup>Ša-mu-ha]-az ar-ha pa-it nu [KUR ?]  
 12) ku-it [I]Š-TU <sup>10</sup>KUR-{Š}U(?) har-ga-an e-eš-ta nu p[a-an-ku-uš(7)]  
 13) ŠA <sup>10</sup>KUR a-pi-ya ar-ta-at [...x[.....]x[.....  
 14) <sup>10</sup>MESŠIPA.UDU-ya an-da wa-ar-ri-i-.....  
 15) še-e-na-ah-ha da-iš nu <sup>URU</sup>Ga-a[š-ga-.....  
 16) nu NA-RA-A-RU ku-iš u-it [.....  
 17) [nu] ÉRIN<sup>M</sup>[T]Š Ga-aš-ga-aš ÉRIN<sup>MES</sup> N[A-RA-RI-ya pa-an-ga-ri-it BA.ŪŠ]  
 18) [<sup>10</sup>MESŠU.DIB-an-ma ku-i]n.....
- 
- 19) [ŠA(?) KUR] <sup>URU</sup>UGU<sup>12</sup>-ya [.....  
 20) .....  
 21) .....  
 22-36) կորսված է  
 37) x[.....  
 38) nu[.....  
 39) .....  
 40) .....  
 41) nu[.....  
 42) I-N[A.....  
 43) <sup>URU</sup>[.....
- 
- 44) nu m[a-ah-ha-an(?) .....  
 45) .....  
 46) .....



## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1) .....
- 2) [Բ]այց երբ հայրս գն[աց],
- 3) կրկին Հայասայի թշնամուն [երկր]ում
- 4) նա չհանդիպեց: Եվ հայրս [Հայասայի] թշնամու [ետևից]
- 5) գնաց: (Բայց) նրան կրկին չհանդիպեց:
- 6) Եվ կասկական թշնամուն՝ բոլոր (միացյալ) զորքին [երկրում]
- 7) նա հանդիպեց: Եվ աստվածները նրան ընդատաջ էկան՝ [Արիևնա քաղաքի Արևի աստվածուհին],
- 8) Խաթթիի Ամպրոպի աստվածը, Ջորքի Ամպրոպի աստվածը, Մարտադաշտի Իշտարը: Եվ թ[շնամին]
- 9) Բազմությամբ սպանվեց: Նաև մե[ծաքանակ] զերիներ [ևս վերցրեց]
- 10) և նրանց էտ՝ Սամուխա քաղաք բերե[ց]:
- 11) Կրկին հ[այրս Սամուխա]յից գնաց: Եվ [երկրում (?)],
- 12) որը [ի]ր(?) թշնամուց ավերված էր, բ[ոլոր]
- 13) թշնամիներն այնտեղ կանգնած էին: [Նույնիսկ .....] ]
- 14) հովիվներն էին օգնու[թյան եկել]: Եվ հայրս]
- 15) թակարդ դրեց և կա[սկերին հաղթեց]:
- 17) [Եվ] կասկերի զորքը [ու] օ[գնական] զորքը [բազմությամբ սպանվեց(?):
- 18) Իսկ զերվածները, ու[մ] նա վերցրեց, անհաշիվ էին(?):
- 
- 19) Վերին երկրի [.....]
- 20-46) .....

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 3<sup>1</sup>-5<sup>1</sup>: Վերականգնումը ըստ Հ.Գ.Գյուտերբոկի<sup>134</sup>:
- 11<sup>1</sup>: Վերականգնումը ըստ Հ.Գ.Գյուտերբոկի<sup>135</sup>:
- 12<sup>1</sup>: *kuir IS-TU*<sup>130</sup>*KUR-SU* - նկատի ունի այդ երկրի թշնամիներին:
- 13<sup>1</sup>: Վերականգնումը ըստ ենթատեսքատի, այն հենվում է „հովիվներ“ բառին կցված -  
 րա շարկապի վրա, որը ենթադրում է օգնական զորքի նս մեկ կատեգորիա:
- 14<sup>1</sup>ff: Վերականգնումը ըստ Հ.Գ.Գյուտերբոկի<sup>136</sup>:

<sup>134</sup> Güterbock 1956: 62.

<sup>135</sup> Güterbock 1956: 63.

<sup>136</sup> Güterbock 1956: 63.

## ԴՌԳՎԱԾ 13

(KUB XIX 11 24 IV + KUB XIX 10 ԴԿ I 7-19 + KUB XIX 10 ԴԿ I 20-22 +  
KUB XIX 11 ԴԿ IV 29-44)

## ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴՆԱԴՐՈՒՄ

## 24 IV

- 1) e-né-eš-ša-an iš-d[a-ma-aš-ta ...  
2) kat-ta-an IŠ-BAT [ ]

- 3) nu pa-it A-NA PA-NI x[.....  
4) še-e-na-ah-ha da-iš nu x[...  
5) a-ar-aš-ki-it na-an-kan [...  
6) 9 ÉRIN<sup>MES</sup>ŠU-T<sup>PIA</sup> ta-ru-up-pi[-ir ...  
7) pé-e har-ta na-at-ši-kan [...  
8) nu-za ku-iš-ša a-pé-el I-NA [URU-ŠU ar-ha pa-it(7)]  
9) ma-ah-ha-an-ma-kán A-BU-YA pa-an-x[...  
10) <sup>10</sup>KÜR <sup>URU</sup>Ga-aš-ga-ma-za na-ah-ša-ri[-ya-at-ta-at]  
11) nu-uš-ma-aš<sup>GID</sup>TUKUL<sup>PIA</sup> nam-ma kat-ta [d]a-a-ir

- 12) KUR-e-ma hu-u-ma-an ku-it IŠ-TU<sup>10</sup>KÜR [dan-n]a-at-ta-ah-ha-an  
13) e-eš-ta nu-kán am-me-el A-BU-YA ku-[it dan-n]a-at-ti  
14) URU-ri EGIR-an AN.ZA.GÀR u-e-te-et n[u-kán an]-tu-uh-ša-tar  
15) ku-in-na a-pé-el A-NA URU-ŠU EGIR-pa pé-e-hu-te-et  
16) [n]u-za an-tu-uh-ša-an-na-aš URU.DIDL<sup>PIA</sup> EGIR-pa e-ep-pir

## KUB XIX 10 ԴԿ I 7-19

- 17) [a]m-me-el-ma A-BI A-BI-YA ha-ad-du-li-iš-ta nam-ma  
18) na-aš IŠ-TU KUR <sup>URU</sup>UGU<sup>PIA</sup> kat-ta u-it nu KUR <sup>URU</sup>Ma-a-ša-aš  
19) ku-it ÉRIN<sup>MES</sup> KUR <sup>URU</sup>Kam-ma-la-aš-ša KUR <sup>URU</sup>IP<sup>S</sup>G  
20) Ú KUR <sup>URU</sup>Ka-aš-ši-ya GUL-an-né-eš-ki-it nu A-BI A-BI-Y[A]  
21) a-pé-e-da-aš wa-al-ah-hu-u-wa-an-zi i-ya-at-ta-at  
22) A-BU-YA-ya A-NA A-BI A-BI-YA la-ah-hi GAM-an-pát i-ya-a[t-ta-at]  
23) nu A-NA A-BI A-BI-YA DINGIR<sup>MES</sup> pé-ra-an hu-u-i-e-er  
24) nu pa-it (A-NA) KUR <sup>URU</sup>Ma-a-aš-ša <sup>URU</sup>Kam-ma-la-ya har-ni-ik[-ta]  
25) nu ku-it-ma-an A-BI A-BI-YA I-NA KUR <sup>URU</sup>Kam-ma-al-la [e-eš-ta]  
26) A-BU-YA-ya-aš-ši kat-ta-an e-eš-ta EGIR-az-ma-za <sup>10</sup>KÜR  
27) <sup>URU</sup>Ga-aš-ga-aš <sup>GID</sup>TUKUL da-a-an nam-ma ša-ra-a da-a-aš  
28) nu-kán A-BU-YA ku-e-da-aš A-NA URU.DIDL<sup>PIA</sup> dan-na-at-ta-aš EGIR-an

## ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

## 24 IV

1) այդ մասին լսեց .....

2) նա մտահոգվեց [.....

3) Նա գնաց [թշնամու] դեմ

4) թակարդ դրեց: Եվ [թշնամին (որ)?]

5) եկավ, նա նրան [.....]

6) 9 ցեղային զորք հավաքեց: ..... որ]

7) պահեց, նա նրան(ից) [.....]

8) և ամեն ոք իր [քաղաքը գնաց]:

9) Իսկ երբ հայրս [եկավ իր] ուժ[ով],

10) կասկական թշնամին վախեց[ավ],

11) և նա (նրանք) զենքերը վայր դրեց[ին]: ?

12) Քանի որ ողջ երկիրը, որ թշնամուց [ամայացած]

13) էր, հայրս [ամայի]

14) քաղաքների հետևում ամբոթյուններ կառուցեց և [բնակչությունը]

15) ամեն մեկին իր քաղաքը էտ [լրեց]:

16) և բնակչությունը քաղաքներում կրկին բնակեցրեց:

## KUB XIX 10 ԴԿ I 7-19

17) Իսկ պապս կրկին առողջացավ

18) և Վերին երկրից ներքև եկավ: Քանի որ Մասայի

19) զորքը և Կամմալայի (զորքը) խուլանա գետի երկրի

20) և Կասսիայի վրա էին հարձակվում, պապ[ս]

21) նրանց վրա հարձակվելու գնաց:

22) Եվ հայրս պապիս հետ արշավանքի գնաց:

23) Եվ աստվածները պապիս ընդատաջ եկան:

24) Նա գնաց (և) Մասան ու Կամմալան ոչնչացրեց:

25) Երբ որ պապս Կամմալայում [էր],

26) հայրս էլ նրա հետ էր: Իսկ հետոից թշնամին

27) կասկական կրկին զենք բարձրացրեց.

28) և ամայի քաղաքները, որոնց [հետևում] հայրս

29) [A]N.ZA.GĀR u-e-te-et na-aš<sup>URU</sup>KŪR da-a-an nam-ma har-ni-ik[-ta]

KUB XIX 10 𐎶𐎵 I 20-22 + KUB XIX 11 𐎶𐎵 IV 29-44

- 30) ma-ah-ha-an-ma A-BI A-BI-YA IŠ-TU KUR <sup>URU</sup>Ma-a-aš-ša EGIR[-pa u-it]  
 31) nu <sup>KUR</sup>Kat-ha-ri-ya-aš<sup>URU</sup>Ga-az-za-pa-aš-ša ku-i-e-eš [...x[...]]  
 32) har-ni-in-ki-iš-ki-ir a-aš-šu-wa-az-ma-at IŠ-TU KŪ.BABBAR KŪ[.GI]  
 33) Ū-NU-UT UD.KA.BAR-ya hu-u-ma-an-da-az-zi-y[a ÉRIN<sup>MES</sup> <sup>URU</sup>Ga-aš-g[a-aš(?)]]  
 34) píd-da-a-ir nu A-BI A-BI-YA a-pé-e-da-aš [A-NA UR]U.DIDL<sup>IA</sup>  
 35) wa-al-hu-wa-an-zi pa-it [nu] A-NA A-BI [A-BI-Y]A DINGIR<sup>MES</sup> pí-ra-an  
 36) hu-u-i-e-er nu <sup>URU</sup>Kat-ha-ri-y[a-an] <sup>URU</sup>Ga-a[z-za]-pa-an-na har-ni-ik[-ta]  
 37) na-aš ar-ha wa-ar-nu-ut A-NA <sup>URU</sup>[Kat-ha]-ri-y[a-y]a ku-iš  
 38) ÉRIN<sup>MES</sup> <sup>URU</sup>Ga-aš-ga-aš hu-u-ma-an-za wa-a[r-r]i p[a]-an-za e-eš-ta  
 39) nu A-NA A-BI A-BI-YA DINGIR<sup>MES</sup> pí-ra-an [hu-u-i-e-e]r nu ÉRIN<sup>MES</sup> <sup>URU</sup>Ga-aš-g[a-an]  
 40) hu-ul-li-it nu ÉRIN<sup>MES</sup> <sup>URU</sup>Ga-aš-ga-as x[...p]a-an-ga-ri-it BA.ŪŠ

- 
- 41) ma-ah-ha-an-ma A-BI A-BI-YA a-pé-ez EGIR[-pa u]-it  
 42) na-aš I-NA KUR <sup>URU</sup>Ha-ya-ša pa-it A-BU-YA[-ya-aš-ši ka]t-ta-an-pát e-[-eš-ta]  
 43) nu ma-ah-ha-an A-BI A-BI-YA I-NA KUR <sup>URU</sup>Ha[-ya-ša a]-ar[-aš(?)]]  
 44) nu-uš-ši \*Kar(?) -an-ni-iš LUGAL KUR <sup>URU</sup>Ha-ya-ša [...  
 45) [ŠA-PA]L(?) <sup>URU</sup>Kum-ma-ha za-ah-hi-y[a ...

\*Այստեղ տեքստը կորսված է:

29) ամբուրյուններ էր կառուցել, թշնամին դրանք կրկին ոչնչացրեց):

---

**KUB XIX 10 ԴԿ I 20-22 + KUB XIX 11 ԴԿ IV 29-44**

- 30) Իսկ երբ պապա Մա(սա)յից ետ եկավ],  
 31) Կատխարիյա և Գազգապա երկրները, որո[նք թաղաքները?]  
 32) ոչնչացնում էին, դրանց բարիքները՝ արծաթ, ոսկի  
 33) և բրոնզե անոթները և ամեն ինչ կասկ[ական գորքերը]  
 34) վերցրեցին: Եվ պապա այդ [քա]ղաքների վրա  
 35) հարձակվելու գնաց: [Եվ] աստվածները պապիս ընդատաջ  
 36) եկան: Կատխարիյ[ան] և Գա[զգա]պան նա ոչնչացր[եց]  
 37) և հրդեհեց: Եվ [Կատխա]րիյ[ա]յին  
 38) օգնութ[յա]ն էին եկել բոլոր կասկական գորքերը:  
 39) Եվ աստվածները պապիս ընդատաջ [եկա]ն: Կասկ[կան] գորքերը  
 40) նա ջարդեց և կասկական գորքերը [.?. ք]ազմությամբ սպանվեցին:
- 

- 41) Իսկ երբ պապա այնտեղից ե[տ է]կավ,  
 42) նա Հայասա գնաց: Հայրս [է] նրա հ]ետ է[ր]:  
 43) Եվ երբ պապա Հա[յասա] հ]աս[ավ],  
 44) նրա դեմ Կարաննիսը՝ Հայասայի արքան, [.....]  
 45) Կուսմախայի [տա]կ մարտի [.....]

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

“Դիպվածը” կազմված է երեք տեքստերից (տարբերակներից)՝ 1) A = KUB XIX 11 IV (= 1-16, 29-44), 2) KBo XXII 12 (= 17-23), 3) B = KUB XIX 10 I (= 7-19) և IV (= Կոլոֆոն 1-3), որոնց միջև որոշ գրաֆիկ տարբերություններ կան: Պարագրաֆի բաժանման գծերը՝ ըստ KUB XIX 11-ի, KUB XIX 10-ում բաժանում չկա:

3: Վնասված հատվածում վերականգնումը մերն է:

4: 2.Գյուտեբրոկի մոտ առկա է «թակարդ դեկլո», որ սխալ է եույն արտահայտությունը «Դիպված» 10, 15-ում ճիշտ է թարգմանված:

4f.: Վերականգնումը ըստ 2.Գ.Գյուտեբրոկի<sup>127</sup>:

6f.: *pe harra* «ևս պահեց (պահում էր)» արտահայտությունը ենթադրում է նախորդ տողի վնասված մասում հիշատակվող գործողություն, որը շարունակվում է 7-րդ տողի կորսված հատվածում: 2.Գ.Գյուտեբրոկի թարգմանությունը պայմանական է՝ «ևս նրանից [վերցրեց]»: Երկու դեպքում էլ պարզ չէ, թե III դեմքով գործող անձն ով է (դրանցից անվազն մեկը Մուպպիլուլիումասն է):

15: KUB XIX 10 I 5-ում URU-ŠU-ի փոխարեն՝ URU<sup>128</sup>.ŠU:

16: 1) KUB XIX 10 I 6-ում՝ [a]n-tu-uh-ša-an-na-an-za և URU<sup>128</sup>.ŠU-NU:

17: KBo XXII 12, 17-ում՝ ha-at-tu-{li-iš-ta}:

18f.: Բառացի՝ «Մասսա երկրի զորքը և Կամմալա երկրի (զորքը)»:

20: KBo XXII 12, 17-ում GUL-an-né-éš-ki-it-ը գրված է ամբողջությամբ հեյյուեաբար՝ wa-al-hu-wa-a[n-né-éš-ki-it]: Բայի շարունակական ձևը (-š-ki-) վկայում է, որ խոսքը Մասայի և Կամմալայի կողմից Խուլանա երկրի և Կասսիայի տարածքի պարբերական ասպատակությունների մասին է:

21: *apedaš-ը* *apaš* դերանվան եզտրականի հոլովածն է, սակայն թարգմանել ենք «նրան», քանի որ հիշատակվող թշնամիները երկուսն են:

23: *piran huwa-* «առաջ վազել» - տրաֆարետային արտահայտություն է՝ «օգնել» նշանակությամբ:

24: 1) A-NA գրությունն ավելորդ է այն գրչի սխալն է<sup>129</sup>, 2) KUB XIX 11 IV 23-ում գրված է [<sup>128</sup>K]am-ma-a-la-ya: Տեքստում առկա է «Մասսա երկիրը և Կամմալան», որ կարող է ակնարկել դրանց՝ մեկ երկիր լինելու մասին. սակայն 8-9-ում և 25-ում Կամմալան նույնպես գրված է KUR -դետերմինատիվով:

26: KUB XIX 10 I 16-ում առկա է սխալ գրելված՝ A-BU-YA-aš-ši:

28: KUB XIX 11 IV 27-ում գրված է ta-an-na-at-ta-aš և պարզ չէ արդյոք «դատարկված քաղաքներն» են ոչնչացվել, թե «ամբողջությունները»:

30: KUB XIX 10 I 16-ում՝ [GI]M-an-ma:

31: 1) KUB XIX 10 I 21-ում՝ KUR <sup>128</sup>Kat-ha-ri-ya-aš, 2) 22-ում՝ <sup>128</sup>Ga-az-pa-aš-ša, 3) Տողավերջի լակոնայում է.Տոտերը, հազիվ տեսանելի և մասնակիորեն պահպանված նշանը ընթերցում էր URU և վերականգնում URU.DIDL<sup>128</sup>A (երա մոտ՝ URU. hal(hia)<sup>129</sup>:

<sup>127</sup> Güterbock 1956: 65.

<sup>128</sup> Güterbock 1956: 65.

<sup>129</sup> Forrer 1926: Nr.35, 63.

44: Կարաննիս ընթերցումը Է.Ֆորրերինն է<sup>140</sup>։ Հ.Գ.Գյուտերբոկը նշում էր «La-a-an-ni-  
 օ՛մ ընթերցման հնարավորությունը»։

45: Աղյուսակի պահպանված մասի ավարտական երեք տողերից պարզ չէ, արդյոք  
 Կումմախան գտնվել է Հայաստանի տարածքում, թե այն վերջինիս սահմանն էր։

<sup>140</sup> Forrer 1926: Nr.34, 62.



















1.6. KBo V 3 74 II 43-64



1.7. KBo V 3 74 II 76-83, <4 III 1-27




18. KBo V 3 C4 III 28-49




19. KBo V 3 <4 III 50-71





1.10. KBo V 12 III 1-19



1.10. KBo XIX 42



1.11. KBo XIX 43



1.11. KBo XIX 43a


246, = 246 + 200  
 = 246, = 246, = 492  
 = 7344



11. 11. 11. 11.




1.13. KBo 44 74




1.13. KBo 44a



1.13. KBo 44b



1.14. KBo XXII 40



1.14. KUB XL 35




1.15. KUB XIV 6




1.16. KUB XIX 24






1.17. KBo LIII 309



1.17. KBo LIV 12








1.21. KUB XL 41




1.21. KUB HT 85


2. Թուղխալիանարիայի պայմանագիր



2.1. KBo V 3 ՀԿ IV 1-24




2.2. KBo V 3 C4 IV 5-12



2.3. KBo V 3 C4 IV 25-43

### 3. Uyl inpuuntp



3.1. KBo VI 28 24 11-19




Fragment A

Fragment B

3.2. KBo VI 28 𒄣 1-20-33, KBo VI 28 𒄣 1-6, KUB XXVI 48



3.3. Դիպված 10 – KUB XIX 11 ԴԿ I



3.4. Դիպլոմ 13 – KUB XIX 10 Դ4 17-22




3.5. Դիպլոմ 13 - KUB XIX II ԴԿ IV 1-34



3.6. Դիպված 13 – KUB XIX 11 ԴԿ IV 29-44



3.7. Դիպված 40 – KBo XIV 13



3.8. Դիպված 40 – KBo XIV 14



3.9. Դիպլոմ 25 - KUB XXXIV 23

ገብግህሀሀ 25  
(KUB XXXIV 23)

## I

- 1') [.....] A-NA ÉRIN<sup>M[ES]</sup> ...  
 2') [.....LÚ<sup>M[ES]</sup> URU<sup>U</sup>Hu-u-u[l(?)...  
 3') [.....par-r]a-an-ta pa-a-a[n-te-eš ...  
 4') [.....w]a-al-ha-né-eš-kir [...  
 5') [... ku-e-da-ni-i]k-ki ha-ap-pí-ni UR[U(?)...  
 6') [... LÚ<sup>MES</sup> URU<sup>H</sup>]a-at-ti ar-ha da-a-aš na-an[?] x x  
 7') [.....] A-BÍ-ŠU-NU AMA-ŠU-NU ŠEŠ<sup>MES</sup>.ŠU-NU  
 8') [....] iš [.....] a-pé-el at-ti an-ni <sup>h</sup>hi-lam-ni-ya  
 9') [....<sup>LI.MES</sup>h]a-lu-ga-ta[l-le-eš .....]-kán ku-i-e-eš pá-r-ra-an-ta  
 10') na-aš QA-DU NAM.RA<sup>MES</sup> GUD UDU ar-nu-ut  
 11') [na-aš ar-ha] u-wa-te-et nu-za ku-iš-ša  
 12') a-pé-el A-ŠAR-ŠU EG[IR-pa e-e]p-ta LÚ<sup>MES</sup> URU<sup>I</sup>I-šu-wa-ma(-kán) ku-i-e-eš  
 13') an-na-al-li-iš e-šir nu-uš-ma-aš pé-e-da-an-ti  
 14') har-kir Ú-UL ku-in-[ki ar-ha da-a-a]š NAM.RA<sup>MES</sup> URU<sup>H</sup>Ha-at-ti-ma-aš-ma-aš  
 15') ku-in ú-da-an har-k[ir] nu-uš-ma-ša-an-kán ar-ha da-a-aš  
 16') na-an EGIR-pa [A-BÍ-ŠU-NU AMA-ŠU-NU(?)] ŠEŠ<sup>MES</sup>.ŠU-NU tar-na-aš  
 17') nu NAM.RA<sup>MES</sup> [URU<sup>H</sup>Ha-at-tu-ši ar-ha u]-wa-te-et  
 18') [.....] e-eš-ta A-BU-YA-ma-za  
 19') [..... me-n]a-ah-ha-an-da kat-ta-wa-tar kat-ta  
 20') [..... KUR <sup>U</sup>]Zu-uh-ha-pa pa-it na-an ar-ha  
 21') [.....-z]a a-ra-ah-za-an-da e-eš-ta  
 22') [..... ar-ha wa-ar-nu]-ut URU<sup>H</sup>Zu-uh-ha-pa-an-ma-kán  
 23') [hu-u-ma-an-da-an ar-h]a wa-ar-nu-ut NAM.RA<sup>MES</sup>-ma-kán  
 24') [..... I-N]A URU<sup>H</sup>Ha-ya-ša i-ya-at-ta-at  
 25') [.....]x-at na-an IŠ-[T]U<sup>UR.SAG</sup>La-ha-a  
 26') [.....]-ir  
 27') [.....] ku-it I-NA KUR URU<sup>I</sup>I-šu-wa  
 28') [.....Š]A KUR URU<sup>H</sup>Ha-at-ti-ya-at  
 29') [.....] ku-e-da-ni-ik-ki ku-it-ki  
 30') [.....g]i-im-ma-an-ti pa-it-pát  
 31') [.....]x-še-ni wa-al-ah-ta nu-za NAM.RA<sup>MES</sup>  
 32') [GUD UDU U-NU-UT(?) UD.K]A.BAR-ya ku-it KARAS  
 33') [I-NA KUR URU<sup>H</sup>.....(?)x EGIR-an-pát tar-na-aš  
 34') [nu a-pé-e U-NU-UT UD.KA.BA]R(?) a-pé-ez u-da-aš  
 35') [.....] u-it nu I-NA KUR URU<sup>I</sup>I-šu-w]a  
 36') [..... KUR <sup>U</sup>]I-šu-wa ku-it [...  
 37') [.....] ANŠU.KUR.RA<sup>M[ES]</sup> ...  
 38') [.....]x[...]



## ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

- I
- 1) [.....] դեպի ջոկատներ[իս .....
  - 2) [.....] Խուլ- [.....] քաղաքի (ժողովուրդը .....
  - 3) [.....] գնացին [.....]
  - 4) [.....] նրանք [ի]արվածում էին [.....]
  - 5) [.....] մ[ի] հարուստ քաղաք[ի]ում .....
  - 6) [... Խ]աթթիի (մարդկանց/բնակիչներին) նա տարավ և նրանց [...]
  - 7) [.....] իրենց հայրերին, մայրերին (և) եղբայրներին
  - 8) [.....] իր հորը, մորը և *խիլամմարին*
  - 9) [.....] ուրբեր գնացել էին դեպի [.....]
  - 10) [.....] Նա վերցրեց [.....] վերաբնակիչներին, կովերը (և) ոչխարները
  - 11) [և նրանց] բերեց [.....] և յուրաքանչյուրը
  - 12) [վերցրեց (կամ բռնեց) [.....]: Բսկ Բսուվայի բնակիչները, ուրբեր
  - 13) արդեն այնտեղ էին, նրանք իրենց տեղում
  - 14) մնացին, ոչ մեկը չտարվեց: Բայց Խաթթիի վերաբնակիչները,
  - 15) ուրբեր ետ էին բերվելու, նա նրանց վերադարձրեց:
  - 16) Եվ իրենց [հայրերին, մայրերին (և)] եղբայրներին նա հանձնեց:
  - 17) Եվ վերաբնակիչներին նա [ Խաթթուսաս վե]րադարձրեց:
  - 18) [.....] նա [.....]-եց: Բայց հայրս
  - 19) [.....]-ի դեմ վրեժ
  - 20) [.....] նա Օուխասպա [երկիր] գնաց և այն
  - 21) [իրդեհեց]: (Ինչ որ) կար (քաղաքի) շրջակայքում,
  - 22) նա [իրդեհեց]: Եվ Օուխասպա քաղաքը
  - 23) [ամբողջությամբ] նա իրդեհեց: Բայց վերաբնակիչները
  - 24) [.....] Հայաստ գնաց
  - 25) [.....]-աց(ին) և նրանք Լախա լեռից/լեռներից
  - 26) [.....]-եցին:
  - 27) [.....] որ Բսուվայում էր [.....]
  - 28) [.....] նրանք պատկանում են Խաթթիին:
  - 29) [.....] ինչ-որ բան ինչ-որ մեկին
  - 30) [.....] Նույնիսկ ձմռանը նա գնաց
  - 31) [և .....]-seni [քաղաքին] հարվածեց: Եվ վերաբնակիչներին,
  - 32) [կովեր, ոչխարներ (և) բրոնզե] [անոթներ?] որ զորքը
  - 33) [... X երկրում] իր ետևում բողն էլ էր,
  - 34) [այդ բրոնզ]ե անոթները այնտեղից բերեց:
  - 35) [.....] նա եկավ և Բ[սուվ]այում
  - 36) [.....] որ Բսուվայում [.....]
  - 37) [.....] մարտակառք[եր ...]
  - 38) .....

## ՄԱՆՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

“Այս դիպվածը բաղկացած է երկու բեկորներից՝ 1) A = KUB XXXIV 23 I (38 տող) և 2) B = KUB XL 8 (9 տող): Վերջինս պատկանում է „ՍԳ“-ի այլ տարբերակի, քանի որ տողացի չի համապատասխանում KUB XXXIV I 23-ին (մասնակիորեն համընկնում են 8-17-րդ տողերը): Տարբեր են նաև որոշ բառերի գրվածները: Միասնական տեքստի վերականգնման համար հիմք ենք ընդունել ավելի ընդարձակ KUB XXXIV 23 I-ը<sup>141</sup>: Աղյուսակի սկզբում պակասում են անհայտ քանակությամբ տողեր:

2': MES հոգևակիակերտ ցուցից առաջ LÚ „մարդ, ժողովուրդ“ նշանակող նշանի վերականգնումը մերն է (տեքստի հրատարակության մեջ վերականգնումը չի հիշատակվում, չնայած քարգմանության մեջ 2-Գյուտեբրոկը նշում է համապատասխան քարգմանությունը՝ „ժողովուրդ“), ինչը թույլ է տալիս այս վնասված հատվածում առաջարկելու հետևյալ ընթերցումը՝ „Յուլ[-] քաղաքի մարդիկ/բնակիչները“: Սակայն, թերևս, հնարավոր է նաև [... LÚ.KÜR]<sup>142</sup>, որի դեպքում կստացվի „Յուլ[.....] քաղաքի թշնամիները“:

2'-5': Տեքստի այս հատվածում, չնայած էական վնասվածքների առկայությանը, ակնհայտորեն շարադրված են հակառակորդի ձեռնարկումները: Արդյոք նրանք Յուլ[....] պակասավոր տեսքով պահպանված քաղաքի բնակիչներն են, պարզ չէ՝ թշնամական ուժերի գործողությունների շարադրանքը որպես պատասխան քայլերի պատճառի ներկայացում հատուկ է խեթական տեքստերին: Տես, օրինակ, KUB XXIII 72+-ի մի հատվածը, որտեղ հիշատակվում են անհնազանդ Պախխուվայի (թերևս, Բյուրակնի լեռների շրջանում<sup>143</sup>) բնակիչների ավարառուական հարձակումները Իսուվայի և Տիամիյայի վրա:

## ԴԿ I

30) [.....] EGIJR-an ša-ra-a zi-ik-ki-it nu KUR URU<sup>144</sup>Ti-šu-wa

31) [.....] an-da pa-a-an]-za nu-kán pa-a-ir ŠA KUR URU<sup>145</sup>Kum-ma-a-ha URU.DIDL<sup>146</sup>A ku-e-nir

32) [.....]-ta Ú LÚ<sup>147</sup>MES URU<sup>148</sup>Ti-im-mi-ya

6': Առաջին վնասված հատվածում LÚ<sup>149</sup>MES “մարդիկ/ժողովուրդ” վերականգնումը լիովին համահունչ է տեքստում հիշատակվող հետագա իրադարձություններին, որտեղ խոսվում է Իսուվայում գտնվող խեթական բնակչությանը վերադարձնելու մասին:

8': Կilammar “ղարպատվ շինություն, պորտիկ”<sup>149</sup> բառի առկայությունը այս ենթատեքստում, “հայր” և “մայր” բառերի հետ միասին պետք է ընկալել հետևյալ կերպարան Իսուվայում գտնվող խեթական բնակիչներին վերադարձրել էր իրենց ծնողներին, այն է՝ իրենց տան դուռը:

8'Է: B տարբերակի առաջին երկու տողերում պահպանված նշանները չեն համընկնում տարբերակի համապատասխան տողերի բառերին: Հետևյալ հատվածը

<sup>141</sup> Հակառակը՝ Klengel 1968: 67:

<sup>142</sup> Այս տեղանվան հնարավոր տեղադրության վերաբերյալ կարծիքների տեսությունը տես Քոչյան 2004ա: 76:

<sup>143</sup> Puhvel 1991: 308ff.

պիտի մտնի A տարբերակի վնասված հատված.

1') [.....] is [.....]

2') [.....]ha-lu-ga x[.....]

Քերևս, երկրորդ տողում պիտի լինի [LÚ<sup>3025</sup>]ha-lu-ga-ta[1-le-eš?]<sup>144</sup>:

10': 1) B տարբերակի տողասկզբի նշանները նման են na-aš-ի:

2) B տարբերակում ռազմավարին (NAM.RA GUD UDU) նախորդում է QA-DU, «հետ» բառը, որը, դատելով A տարբերակի վնասվածքից հետո պահպանված ուղղահայաց երկար սեւայից, գրված է ավելի կիրասական՝ QA-DU ձևով:

3) B տարբերակում GUD-ը և UDU-ն գրված են HLA-ով:

NAM.RA շումերագիր բառը (խեթ. arnuwala- «վերցված; վերաբնակիչ»՝ arnu- «շարժել, տեղափոխել, վերաբնակեցնել» բայից) խեթերենում սովորաբար կիրառվում է բռնի կերպով մի վայրից մեկ ուրիշ վայր վերաբնակեցված անձանց նշելու համար<sup>145</sup>: Տվյալ դեպքում պարզ չէ թե ինչու Իսուվայում գտնվող խեթահպատակ բնակիչները կարող էին այդպես կոչվել, եթե նկատի առնենք Սուսպլիուլիումսա I-ի և Միտտանիի արքա Շատտիվազայի միջև կնքված պայմանագրում պահպանված տեղեկությունը այն մասին, որ Խաթթիի կազմում գտնվող շրջանների բնակիչները գեացել էին Իսուվա, այսինքն, նրանք իրենց կամրով էին հեռացել (այդ մասին տես ստորև Գլուխ 3): Հատկանշական է, որ սույն տեքստի՝ Իսուվային վերաբերող հատվածում թերևս հնարավոր է ենթադրել, որ խեթական արքայի կողմից ետ վերադարձված NAM.RA-ներին կարելի է որակել որպես «գերեվարվածներ», սակայն այնուհետև, Օուլխապայում ասպատանած NAM.RA-ներին անդրադառնալիս տեքստում նշվում է, որ վերջիններս այնտեղից փախել էին Հայասա: Նշանակում է, նրանք ցանկություն չեն ունեցել ետ վերադառնալ: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև էական վնասվածքների պատճառով խուճկական արշավների դրդապատճառների մեջ խորամուխ ցլիներու հետևանքով, NAM.RA-ն թարգմանել ենք որպես «վերաբնակիչ»:

11': Վնասված հատվածում պիտի վերականգնել [na-aš ar-ha], որը նախորդ նախադասության arnu- բայը կկապի սա-ով կառավարվող նախադասությանը: A և B տարբերակների վնասված հատվածները շատ նշանների առկայություն չեն նկատարում, չնայած նման ենթատեքստերում սովորաբար առկա է <sup>146</sup>Hattuš և <sup>147</sup>Hatti):

12': Վնասված հատվածը լրանում է B տարբերակում պահպանված apel A-SAR-ŠU EG[IR-pa]-ով<sup>148</sup>: A տարբերակում տողավերջում առկա է <sup>149</sup>U-šu-wa-ma, իսկ B-ում՝ <sup>150</sup>U-šu-wa-ma-kán: Մեր տեքստում ku-i-e-eš-ը վերականգնված է ըստ B տարբերակի:

12'-15': Այս տողերում պահպանված տեղեկատվությունը բավական խճճված է՝ Կարելի է միայն ենթադրել, որ խուճկացիները այնքան էլ զոհ չեն եղել խեթական

<sup>144</sup> Klengel 1968: 67.

<sup>145</sup> Puhvel 1984: 166f. Ի տարբերություն միջազգային սեպագրական տեքստերի, որտեղ NAM.RA-ն կիրառվում է ռազմավարի ցանկացած կատեգորիայի առնչությամբ (մարդիկ, անասուններ, անշունչ առարկաներ), խեթերենում այն բացառապես օգտագործվում է նշելու համար մարդկանց: Ընդ որում ոչ թե մարտադաշտում վերցված ռազմագերիների, այլ խաղաղ Թաղաքացիական բնակչության:

<sup>146</sup> ep-ի վերականգնումը՝ Güterbock, 1956: 83:

արքայի գործողություններից, թերևս, կապված գերվարված խեթական բնակչության հետ միասին ռազմավարի ձեռքբերումից: Հնարավոր է, խեթերը Իսուվայից տարել էին ավելի շատ նյութական բարիքներ, քան ունեին գերվարվածները:

13': A տարբերակում առկա է *pe-e-da-an-ti*, իսկ B-ում վերջին՝ տուժած նշանը կարող է լինել *pa-ti*<sup>167</sup>: Հ.Քլենգելը այս բառաձևը դիտում է որպես *pedanti* (եզ. տրակ.-տեղ. հուլով) և թարգմանում այսպես. «Նրանք (խուվացիները - Ա.Ք.) իրենց տեղը բռնեցին (- «գնացին»)»<sup>168</sup>:

14': 1) Վնասված հատվածը՝ ըստ B տարբերակի: A տարբերակի վնասված հատվածից հետո թերի պահպանված նշանը («UQ-ում՝ *ir*») B տարբերակում նույնպես կորսված բայի վերջը պիտի լինի (*ar-ha da-*)<sup>169</sup>:

2) B տարբերակում՝ <sup>100</sup>GIDRU-ti (*x+7*): Հ.Քլենգելը GIDRU գաղափարագիրն ընթերցում է հեյտունաբար (<sup>100</sup>Hat-ti), որն այսօր չի ընդունվում:

15': Վնասված հատվածը՝ ըստ B տարբերակի:

16': Վնասված հատվածը՝ ըստ B տարբերակի: A տարբերակի կորսված մասին հաջորդում է զգալի քերված հատված, որտեղ ուրվագծվում են որոշ նշանների վերին մասերը. միայն վերջինն նշանն է հստակ չա: B տարբերակում առկա է *na-an EGIR-pa[.....] ŠEŠ-ŠU-NU tar-na-aš* (8'-9'): Փանի որ կառավարող բայը համընկնում է, ապա, թերևս, միջանկյալ մասն էլ պիտի համընկնի: Հ.Գյուտերբլիցը A տարբերակում հարցակառույ վերականգնում էր *LI-IM NUMUN-ya*: B տարբերակի առաջին վնասված հատվածի վերականգնումը ըստ Հ.Քլենգելի՝ A տարբերակի 7-րդ տողի նմանությամբ: Իսկ A 16'-ի տողասկզբում նա, վնասվածքից հետո առկա *ia* նշանը համարում է ինչ-որ պաշտոն նշանակող բառի ավարտական նշան, որը նախորդող *U* շաղկապով պիտի կապվի դրանց հետ: Հնարավոր է, A և B տարբերակներում այս հատվածը տարբերվում է:

17': Վնասված մասի վերականգնումը ըստ B 9'-ի:

16'-18': Այս խիստ վնասված տողերը կրկին վերաբերում են արքայի ձեռնարկումներին Իսուվայում: 18'-րդ տողի վերջից սկսվում է խեթական արքայի ձեռնարկումների հաջորդ փուլը, սակայն արդեն այլ հակառակորդի դեմ: «Վրեժ» բառի առկայությունը և հաջորդող տողերում դեպի Հայաստ կազմակերպված արշավանքը վկայում է այն մասին, որ Խաթթիի գլխավոր հակառակորդը արևելքում ոչ թե Իսուվան էր, այլ հենց Հայաստան: Տեքստը ոչինչ չի հաղորդում վրեժխնդրության պատճառի մասին:

23'-26': Այս տողերում ներկայացված է խեթական զորքի հետագա արշավանքը դեպի Մուխխապա քաղաքի երկիր, որը, ամենայն հավանականությամբ, Իսուվայից արևելք պետք է գտնվեր<sup>170</sup>: Մուխխապայում խեթախապատակ բնակչության

<sup>167</sup> Klengel 1968: 67.

<sup>168</sup> Klengel 1968: 69.

<sup>169</sup> Klengel 1968: 67.

<sup>170</sup> Առաջարկվել է Մուխխապայի համադրությունը ասորեստանյան աղբյուրների *Suhmu*, խեթական տեքստերի *Zuhma* երկրի հետ (Goetze 1940: 47 n.181; Дзяконов 1988: 74; Խաչատրյան 1998: 42 (տես նաև RGTC VI.1: 516 և Քոսյան 2004a: 104): Վ.Խաչատրյանի կարծիքով Մուխխապան կարելի է համարել հայկ. աղբյուրների Մյանխատ լեռների հետ (= Բյուրակնի

ներկայությունը և այդ քաղաքի ու դրա շրջակայքի նկատմամբ իրականացված գործողությունը կարող է վկայել այն մասին, որ այս տարածքը ծաթթիի հանդեպ թշնամական դիրքորոշում ուներ, բացի այդ այստեղ էր հանգրվանել ծաթթիից փախած բնակչությունը: NAMRA քառի կիրառությունը այս ենթատեսքում իրոք թույլ է տալիս ենթադրելու, որ դրանք ոչ թե գերեզմանավանդ մարդիկ էին, այլ իրենց կամրով խեթական տիրույթներից փախած անձինք, ովքեր խեթական գործի արշավանքի սպառնալիքի տակ հեռացել էին դեպի Հայասա: Վնասված 25'-26'-րդ տողերը թույլ չեն տալիս հասկանալու, թե իրոք ինչ էր տեղի ունեցել այդ բնակչության հետ Օուխխապայից հեռանալուց հետո: Արդյոք խեթերը երանց ետ էին վերադարձրել Լախա լեռան շրջանից, թե կրանց հաջողվել էր հասնել Հայասա: Համենայնդեպս, տեսքում Հայասան այլևս չի հիշատակվում, այլ կրկին շարադրված են Բուուվային և մեկ այլ երկրին առնչվող իրադարձություններ: Չնայած, հնարավոր է, որ Հայասան հիշատակվեր հաջորդող վնասված տողերում:

30'-31': Պարզ չէ այստեղ հիշատակվող երկրի խնդիրը: Որ դա Բուուվան չէ, կասկածից վեր է: Երկրանվան գրության վերջին երկու նշանների հիման վրա ՀԳյուտերրոկը ենթադրում էր, որ այստեղ ավարտական i-ն կարող է լինել տեղանվան սրական հուլովաձևի վերջավորությունը: [.....]-eni վերջավորությունը հիշեցնում է Ասորեստանի արքա Թիզլաթապալասար I-ի հյուսիսային արշավանքների ընթացքում հիշատակվող մի շարք նախորդան երկրների անվանումները: Տուցակի 23 երկրներից 10-ի անվանումներն ավարտվում են -ni-ով (Unzamuni, Pilakinni, Aturgini, Kulibarzini, Sinibirmi, Abaeni, Adaeni, Kirini, Abarsuni, Daieni):<sup>151</sup> Սրանցից Adurgini-ն վկայված է նաև Թուլուլթի-Լինուրտա I-ի մոտ որպես Նախիի երկրներից մեկը<sup>152</sup>: Նշենք նաև մինևույն տեղանվանակերտ վերջածանցի առկայությունը Աշտարեկվալայի տեսքում հիշատակվող Ուրուատրիի մի շարք երկրների անվան մեջ՝ Aparuni, [Zi]quni, [.....]-ni<sup>153</sup>: Վերոհիշյալ երկրները մասնագետների մեծ մասի կողմից տեղադրվում են Վանա լճի և Եփրատի վերին հոսանքների միջև ընկած շրջանում<sup>154</sup>, ինչը համահունչ է Բուուվայի մերձակցությամբ խեթական գործի գործողությունների ենթատեսքին:

32'-34': Այս երեք տողերի վնասված մասերի վերականգնումը պատկանում է ՀԳյուտերրոկին ինչպես ենթատեսքի, այնպես էլ նմանատիպ խեթական տեսքների հետ համադրման հիման վրա:

[Եռներ՝ ծալատրյան 1998: 58]:

<sup>151</sup> Grayson 1991: 21.

<sup>152</sup> Grayson 1987: 292.

<sup>153</sup> Weidner 1930-1931: 83.

<sup>154</sup> Ուրուատրիի հստակ տեղադրությունը ներկայումս վերջնականապես պարզված չէ: Ամուսամենայնիվ, առկա աղբյուրները թույլ են տալիս այն մոտավորապես տեղադրելու Վանա լճի և Եփրատի միջև, ներառյալ ավելի հարավ ընկած շրջանները (առաջարկված կարծիքների համար տես Weidner 1930-31: 83 Anm.46; Арыткони 1965: 13ca.): Այսպիսի տեղադրությունը կարծես ամրապնդվում է մ.թ.ա. XIII դարի խեթական մի գուշակային տեքստի սովալներով (KUB XLIX 11, մասնակի հրատարակությունը տես Kosyan 2011):

ԴԻՊԿԱՍ 39  
(KBo XIV 13)

\*Աղյուսակի սկզբում պակասում են անհայտ քանակությամբ տողեր:

III

1') [.....-z]i

2') [.....]

3') [.....] *Ú-UL*

4') [.....-p]a-ku-ul-la

5') [..... DU]MU.LUGAL

6') [.....-pa-k]u-ul-la-az kat-ta

7') [..... K]UR <sup>URU</sup>Ha-ya-ša

8') [.....nu-us?] -ši LÚ<sup>ME5</sup> GAL<sup>7IM</sup>

9') [.....] u-wa-te-er

10') [.....] x e-šir

11') [.....] -ir

12') [..... LUGAL <sup>URU</sup>Ha] -at-ti *BE-LÍ-N[Í]*

13') [.....] nu KUR <sup>URU</sup>Ha-ya[-ša]

14') [.....] ku-i-e-eš

15') [.....] -ma-ša-aš-kán

16') [.....] x u-wa-te-[er]

17') [..... x L]Í-IM 1 ME 40[+...]

18') [.....-?] <sup>IM</sup>

19') [.....] x ar-ha

20') [.....-n]u-ut

21') [.....] -ta x[...]

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1') .....  
 2') .....  
 3') .....  
 4') [.....-պ]ակույլա քաղաքը  
 5') [.....ար]քայազնը  
 6') [.....-պակ]ույլա քաղաքից  
 7') [.....] Հայասան  
 8') [.....Եվ կրան] «մեծերը»  
 9') [.....] նա բերեցին:  
 10') [.....նրանք .....] էին:  
 11') [.....նրանք .....]-եցին:  
 12') [..... «Ով, Խա]թթիի [արքա], մե[ր] տեր,  
 13') [.....] Եվ Հայա[սան]  
 14') [.....] որոնք  
 15') [.....] xxx  
 16') [.....]x բերե[ց(ին)]:  
 17') [.....1]140[.....]  
 18') .....  
 19') .....  
 20') [.....]-եց:  
 21') .....

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

\*Այս և հաջորդ տեքստը („Ղիպված 40“) նկարագրում են Հայաստանի դեմ արշավանքը: Այստեղ հիշատակվում է [...-պակ]ույլա քաղաքից Հայաստան ինչ-որ մեկի (ար]քայազն? – Ա.Ք.) գնալը: Այնուհետև՝ հայաստացիների կողմից խեթերին տրված ինչ-որ բան. 114[...]  
 Թվականի առկայությունը, թերևս, վերաբերում է NAM.RA-ներին (վերաբնակիչներ կամ վիսվորներ), որ բերել էին «մեծերը»:

3': Տեղանվան պահպանված մասը համադրելի չէ խեթական տեղանուններից որևէ մեկի հետ: Թերևս, գտնվել է Հայաստանում:

8'-12': ոս-սձ-ձի վերականգնումը 8'-ում մերն է: Նկարագրվում է LÚ<sup>mes</sup> GAL<sup>rim</sup>-ի (հոգնակի թվով) գործողությունը, որոնք խեթական արքային ինչ-որ բան են բերում, դիմելով նրան «մեր տեր» ձևով: Թերևս, սրանք Հայաստանի ազազներն են. հմմտ. LÚ<sup>mes</sup> ŠU.GI «ավագները» KUB XXIII 72+-ում:

16'f.: 114[x] թվականով նշվածը, հարվանաբար, Խաթթիից փախած վերաբնակիչների մասին է:

ԴԻՊՎԱՍ 40  
(KBo XIV 14)

- 1) [.....]x x x x [.....]  
 2) [.....]x-da-aš  
 3) [.....]-mé-e-er  
 4) [.....<sup>10</sup>KÚR URUHa-ya-š]a hu-ul-li-[ya-at]  
 5) [.....<sup>10</sup>KÚR URUHa-ya]-ša pa-an-ga-r[i-it BA.ÚŠ]

- 
- 6) [.....] KUR URUHa-ya-ša[...?]  
 7) [..... I-N]A KUR UGU<sup>27</sup> URU[.....]  
 8) [.....]x-in-ma-za

ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1) .....  
 2) .....  
 3) [.....նրանք .....]-եցին:  
 4) [.....Հայաս]այի [թշնամուն նա] սպան[եց]:  
 5) [.....Հայա]սայի [թշնամին] բազմությամբ [սպանվեց]:  
 6) [.....] Հայասա [.....]  
 7) [.....Վերին երկրում [.....]քաղաքը  
 8) [.....] xxx

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

„Դիպված 40“-ը հիշատակում է բուն պատերազմը Հայասայի դեմ: Հ.Գ.Գյուտտերբոկի կարծիքով<sup>105</sup>, այն կարող է „Դիպված 13“-ի կորած մասի հատվածը լինել: Կորսված հատվածների վերականգնման հնարավորությունները նվազագույն են:

7: Հայասայի ատկությամբ Վերին երկրի հիշատակությունը կրկին հավաստում է որ այս երկուսը հարևաններ էին, տես վերը „Դիպված 10“ (Հայասայի և Վերին երկրի համատեղ հիշատակությունը):

<sup>105</sup> Güterbock 1956: 66, n.38.



## Մ.Թ.Ա. XIII ԴԱՐԻ ԳՈՒՇԱԿԱՅԻՆ ՏԵՔՍ

Այս տեքստը պատկանում է մ.թ.ա.XIIIդ. կազմված զգալի քանակությամբ նման տեքստերի թվին (զերագանցապես Թուրխալիյաս IV-ի շրջանը, չնայած հնարավոր է նաև նրա նախորդ Խաթթուսիլիս III-ի կառավարումը), որոնց նպատակն էր նպաստել արքայական իշխանության անարատությանը և սրբազորմանը<sup>156</sup>։ Դրանցում ներկայացված են բացառապես մ.թ.ա.XIV-XIIIդդ. ապրած հայտնի քաղաքական գործիչները (հիմնականում՝ արքայատոհմի անդամներ)<sup>157</sup>, որոնք ժամանակին ներգրավված են եղել զանազան դավադրություններում (դավադրության մասնակիցներ կամ զոհեր)։ Գուշակային հարցման նպատակը հետևյալն էր՝ արքայատոհմի ներսում ընթացած պայքարին զոհ գնացածների հոգիներին խաղաղություն պարգևել և հակադիր խմբավորումներին հաշտեցնել։

Այստեղ հիշատակվում է «ազգեցի Խուկկանան»։ Տեքստն իրենից ներկայացնում է գուշակային հարցում երկու խնդիրների վերաբերյալ՝ 1) արդյոք Խուկկանան հավատարիմ կմնա արքային, 2) եթե Ազգին այժմ արքայի դաշնակիցն է, ապա արդյոք ապագայում էլ կդաշնակցի արքայի սերունդների հետ։

Այս ընդարձակ տեքստը պատկանում է այսպես կոչված համադրական գուշակային հարցումների շարքին, որտեղ ներկայացված են տարբեր բնույթի գուշակային գործողություններ։ Ստորև, Խուկկանային վերաբերող հարցման մեջ ներկայացված է կենդանիների ներքին օրգանների հետազոտության (KUS «միս; կենդանու մարմին») հիման վրա հարցման եղանակը, որի պրակտիկան իր տերմինաբանությամբ հանդերձ փոխառվել է Միջագետքից՝ խուրրիների միջնորդավորմամբ<sup>158</sup>։

<sup>156</sup> CTH 569 (փոխկապակցված տեքստերի այս խմբի հրատարակությունը և ուսումնասիրությունը՝ Hout van den 1998).

<sup>157</sup> Դրանք են՝ Մուպալիուլիումասի վերջին կինը բաբելոնյան արքայազուտար «տավանանան» (Ամմիննայա(7) – Hout van den 1998: 44), Մուրսիլիս II-ի վերջին կինը՝ Դանուխեպան, արքա Ուրիսի-Թեշուրը, Հալեպի արքա Խալպացիտին, Մուպալիուլիումասի եղբոր որդին՝ Արմա-Քարխունտասը և այլք։

<sup>158</sup> Խեթական տեքստերում նշանակալից տոկոս կազմող գուշակային հարցումների և դրանց տեխնոլոգիայի շուրջ տես Beal 2002: 57ff.: Հենց դրանով էլ բացատրվում է գուշակային տերմինների մեծ մասի խուրրիական ծագումը։

## KUB XVIII 2

- 10) ma-a-an-ma-mu-kán <sup>u</sup>Hu-uq-qa-na-aš LÚ <sup>u</sup>Az-zi  
 11) A-NA <sup>u</sup>UTU<sup>u</sup> EGIR-an ar-ha <sup>u</sup>UL ne-ya-ri  
 12) nu IGI-zi SU<sup>MES</sup> SIG<sub>5</sub>-ru EGIR-ma NU.SIG<sub>5</sub>-du  
 13) IGI-zi TE<sup>MES</sup> ni-eš-kán ZAG-aš! KA<sup>x</sup>U-i NU.SIG<sub>5</sub>  
 14) EGIR SU<sup>MES</sup> ni šì ki GÚB-za RA<sup>B</sup> zi GAR-ri  
 15) 12 ŠÀ DIR SIG<sub>5</sub> EGIR TE<sup>MES</sup> <sup>u</sup>ŠÚ.A-hi GÚB-an NU.SIG<sub>5</sub>  
 16) ma-a-an KUR <sup>u</sup>Az-zi <sup>u</sup>UTU<sup>u</sup> e-ep-zi  
 17) zi-la-du-wa-at NUMUN <sup>u</sup>UTU<sup>u</sup> MUNUS.LUGAL e-ep-zi  
 18) nu IGI-zi TE<sup>MES</sup> SIG<sub>5</sub>-ru EGIR-ma NU.SI[G<sub>5</sub>-d]u  
 19) IGI-zi TE<sup>MES</sup> ni šì ki KASKAL GÚB-za RA<sup>B</sup>  
 20) zi GAR-ri 12 ŠÀ DIR SIG<sub>5</sub>  
 21) EGIR TE<sup>MES</sup> a-ga-ta-hi-iš NU.SIG<sub>5</sub>

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

- 10) „Իսկ արդյոք խուկկանան՝ ազգեցին,
- 11) Հետո Արևիցս չի շրջվի“:
- 12) Առաջին փորոտիքը թող բարենպաստ լինի, այնուհետև՝ բարենպաստ չլինի:
- 13) Առաջին փորոտիքը՝ *nipasuri*-ները ձախ կողմում են:
- 14) Հաջորդ փորոտիքը՝ *ni(pasuri)*-ն *si(intahi)*-ն (և) *k(eldi)*-ն վնասված է, *zi(zahi)*-ն ընկած է այնտեղ:
- 15) 12 օղակներ, բարենպաստ է, հաջորդ փորոտիքը՝ գահը ձախ կողմում է՝ բարենպաստ չէ:
- 16) „Արդյոք Ազգի երկիրը Արևիս կպահի (հավատարիմ կլինի) - ԱՔ.)
- 17) Ապագայում Արևիս (և) թագուհու սերնդին նա կպահի“:
- 18) Առաջին փորոտիքը թող բարենպաստ լինի, այնուհետև՝ թող բարենպաստ չլինի]:
- 19) Առաջին փորոտիքը՝ *ni(pasuri)*-ն *si(intahi)*-ն (և) *k(eldi)* ճանապարհը ձախ կողմից վնասված է:
- 20) *zi(zahi)* ընկած է այնտեղ, 12 օղակներ, բարենպաստ է:
- 21) Հաջորդ փորոտիքը՝ *agatahi*-ը բարենպաստ չէ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեքստում առկա են մեծաքանակ գուշակային ոլորտին պատկանող տերմիններ, որոնց ոչ միայն իմաստը, այլև լեզվական պատկանելությունը առայժմ պարզ չէ: Թերևս, դրանք, դատելով որոշ բառերի վերլուծությունից, ինչպես նաև արտաքին տեսքից, կարող էին խուրրիներն լինել<sup>199</sup>: Այդ բառերը ներկայացված են համառոտագիր եղանակով, այն է՝ գրված են բառերի առաջին վանկերը, օրինակ, *ni* = *nipasuri*, *si* = *siintahi* և այլն:

<sup>199</sup> Գուշակային տերմտերի մասնագիտական բառապաշարի մասին տես Laroche 1952: 19ff.:

## ԳԼՈՒԽ 3

ԽԵԹԱ-ՀԱՅԱՍՏԱԿԱՆ ՓՈՒՀԱՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
Մ.Թ.Ա. XIV ԴԱՐՈՒՄ

Սուպպիլուլիումաս I-ի և Հայասայի արքա Խուկկանայի, ինչպես նաև Թուդխալիյաս III-ի և Մարիյայի միջև կնքված պայմանագրերի լիարժեք պատմագիտական իմաստավորումը կախված է մ.թ.ա. II հազարամյակի կեսերին Առաջավոր Ասիայի մի կարևոր տարածաշրջանում տեղ գտած մի շարք քաղաքական իրադարձությունների պարզաբանումից, այն է՝ մ.թ.ա. XIV-XIII դարերում 1) Խեթական տերությունում առկա քաղաքական գործընթացները, 2) վերջինիս և Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններում գտնվող քաղաքական միավորների փոխհարաբերությունները: Այս երկրորդ խնդիրը վաղուց ի վեր հայագետ պատմաբանների և բանասերների կողմից ուսումնասիրության առարկա է եղել և մնում է որպես այդպիսին նաև այսօր<sup>160</sup>, սակայն նոր կյուֆերի, ինչպես նաև Խաթթիի պատմության որոշ առանցքային հարցերի շուրջ նոր մտաեզմանների լույսի ներքո, այն համալիր վերանայման կարիք ունի:

## ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ Մ.Թ.Ա. XIV ԴԱՐԻ ԿԵՍԵՐՈՆ

Մ.թ.ա. XIV դ. կեսերը կարելի է բեկումնային համարել հին Առաջավոր Ասիայի ուշբրոնզեդարյան պատմության քաղաքական զարգացումներում: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ առաջավորասիական տարածաշրջանը գտնվում էր անկայուն հավասարակշռության պայմաններում: Նախորդող տասնամյակներում առաջին պլան մղված եզիպտա-միտոսանական հակամարտությունն ավարտվել էր և երկու պետությունների միջև նորմալ հարաբերություններ էին հաստատվել, որոնք պարբերաբար ամրապնդվում էին դինաստիական ամուսնություններով<sup>161</sup>:

Ինչ վերաբերում է Խեթական տերությանը, ապա այն Թուդխալիյաս II-ի արշավանքների արդյունքում մ.թ.ա. XV դ. երկրորդ կեսին տիրացավ ողջ Փոքր Ասիային<sup>162</sup>, այդ թվում՝ ռազմավարական և տնտեսական առումներով երկու կարևորագույն շրջաններին՝ Կիցցուվատնային (Կիլիկիա) և Ասսուվայի դաշնության կազմում գտնվող երկրներին (արևմտյան Փոքր Ասիա)<sup>163</sup>, ինչպես նաև Իսուվային

<sup>160</sup> Forrer 1931: 1ff.; Капанцян 1948: 27ff.; Garstang and Gurney 1959: 32ff.; Klengel 1965; 1968; 1976; Дьяконов 1968: 89ссл.; Хачатрян 1971; Նաչատրյան 1998: 46-94; Քոսյան 1997; 1999; 2000: 161-174; 2001; 2002ա; 2002բ; 2004բ և այլն; Նազարյան 2013:

<sup>161</sup> Helck 1971: 163ff.; Bryce 1998: 156ff.

<sup>162</sup> Թուդխալիյասի նվաճումներն ամփոփված են նրա "Տարեգրություններում" (CTH 142 = Carstedt 1977: 137ff.), տեքստային կյուֆերի մեկնաբանությունը տես Houwink ten Cate 1970: 57ff.; Bryce 2005: 121ff.):

<sup>163</sup> Նախքան Կիցցուվատնայի արքա Սուխասուրայի հետ պայմանագիր կնքող խեթական արքայի՝ Թուդխալիյաս II-ի հետ նույնացումը (Beal 1986: 424ff.), և, համապատասխանորեն, Կիցցուվատնայի ներառումը Խեթական տերության գերիշխանության ոլորտը, այս իրադարձությունը վերագրվում էր Սուպպիլուլիումաս I-ին:

(Մոփք): Սակայն արդեն Քուդխալիյասի հաջորդ Առնուվանդաս I-ի կառավարման ընթացքում սկսվեցին արտաքին և ներքաղաքական բարդություններ, որոնք առաջիկայում պիտի հանգեցնեին համընդհանուր ճգնաժամի: Ներքական նորաստեղծ տերության (ավելի ճշգրիտ՝ վերականգնված տերության) առջև կանգնած էին այն նույն խնդիրները, որոնցով բնորոշվում է կարճ ժամանակամիջոցում ռազմական ճանապարհով ձևավորված և քաղաքական ու տնտեսական ինտեգրման կարոտ ցանկացած պետություն<sup>164</sup>: Փաստորեն, Քուդխալիյաս II-ի ստեղծած տերությունը նույնքան արագ ընթացավ տրոհման ուղիով:

Տերությունում սկսված ներքաղաքական ճգնաժամի վառ վկայություններ կարելի է համարել խեթական երկու հայտնի տեքստեր, որտեղ ներկայացված են Տերության երկու համադիր ծայրամասերում ընթացող քաղաքական զարգացումները: Այսպես, ըստ «Մադդուվատտասի մեղանշանքը» պայմանական անվանումը կրող տեքստի<sup>165</sup>, խեթական արքայի կողմից արևմտյան Փոքր Ասիայում գտնվող Ցիպպասա-Նաքիյասի երկրի կառավարիչ նշանակված Մադդուվատտասը երբեմն ոչ միայն չէր կատարում իր վրա դրված պարտականությունները, այլև հարձակումներ էր գործում խեթահպատակ այլ երկրների վրա<sup>166</sup>: Միևնույն իրավիճակն է արձանագրում «Պախխուվացի Միտան» անվանումը կրող տեքստը<sup>167</sup>, այս անգամ տերության արևելքում գտնվող Իսուվայում և դրա շրջակայքում, այն է՝ Հայկական լեռնաշխարհի արևմուտքում: Այստեղ էլ խեթական արքայի կողմից Պախխուվայում կառավարիչ նշանակված Միտան ակնհայտ անհնազանդություն էր դրսևորում իր սյուզերենի հանդեպ<sup>168</sup>:

Ներքական տերության պատմության այս փուլի վերաբերյալ հիմնավոր տեղեկություններ են պահպանել Մուրսիլիս II-ի և Նաթթուսիլիս III-ի օրոք կազմված մի շարք տեքստեր, որոնք համակողմանիորեն լուսաբանում են Քուդխալիյաս III-ի կառավարման շրջանում տիրող իրավիճակը և քաղաքական գործընթացները:

Քուդխալիյաս III-ի կառավարման վաղ փուլում, թերևս, հենց գահակալման պահին, ըստ Նաթթուսիլիս III-ի տեքստի<sup>169</sup>, պետության տարածքի մի զգալի մասը նվաճվել էր կամ պարբերաբար ասպատակվում էր բոլոր հարևան երկրների կողմից: Այս նույն իրավիճակը արտացոլված է Մուպալիուլիումաս I-ի գործունեությանը նվիրված ընդարձակ տեքստում, կազմված որդու Մուրսիլիս II-ի կողմից<sup>170</sup>: Այստեղ իրադարձությունները շարադրվում են այն պահից, երբ խեթական արքան (տեքստում՝

<sup>164</sup> Որպես օրինակ կարելի է հին շրջանի համար իշխատակել հենց Հին Նեթական տերությունը Նաթթուսիլիս I-ից և Մուրսիլիս I-ից հետո, Աքեմենյան տերությունը, միջնադարի համար՝ Մոնղոլական տերությունը Չինգիզխանի արշավանքներից հետո և այլն:

<sup>165</sup> Չրաս.՝ Götze 1928:

<sup>166</sup> Մադդուվատտասի գործունեության մասին տես Bryce 2005: 129ff.

<sup>167</sup> Չրաս.՝ Sayce 1930: 5ff. (թարգմ.): Gurney 1948: 32ff. (թարգմ.): Hoffner 1976: 60ff. (տեքստի 168/4 ս կցարեկորը): Նաչատրյան 1998: 87-93 (հատվածական թարգմ.): Kosyan 2006a: 72ff.

(գիտական տառադարձում, թարգմ. և պատմագիտական մեկնաբանություններ):

<sup>168</sup> Միտայի և ընդհանրապես այս տարածաշրջանում տիրող իրավիճակի մասին տես Քոսյան 2000: Bryce 2005: 143f.: Kosyan 2006a: 87ff.

<sup>169</sup> KBo VI 28 ԴԿ 9ff. (տեքստի ամբողջական հրատ.՝ Գլուխ 2):

<sup>170</sup> CTH 40 (հրատ.՝ Güterbock 1956, Հայաստանի վերաբերող հատվածները՝ Գլուխ 3):

„այսպս“, անունը չի պահպանվել)<sup>171</sup> հակառակորդների դեմ ռազմական գործողություններն իրականացնում էր երկրի արևելքում գտնվող Սամուխա քաղաքից<sup>172</sup>: Տեքստում ասվում է, որ պետության բնօրրանը („Խաթթի երկիրը“) ավերված և քաղանկված էր կասկերի կողմից<sup>173</sup>:

Ավանդաբար ներառվում էր, որ Խաթթուսիլիա III-ի տեքստում նկարագրվող համընդհանուր հարձակումը Խաթթիի վրա (այսպես կոչված „շրջանաձև ներխուժում“) եղել է միաժամանակյա, նույնիսկ փոխհամաձայնեցված գործողություն, որին կարող էին անուղակիորեն մասնակցել Միտտանիև և Եզիպատուր<sup>174</sup>: Սակայն իրավացիորեն նկատվել է<sup>175</sup>, որ այդպիսի հարձակման դեպքում Խեթական պետությունը ուղղակի կտրոհվեր և Թուդիաիլիաս III-ը չէր կարող վերականգնել կորցրածը նյութական և մարդկային ռեսուրսների բացակայության պատճառով: Այն, ինչ տեքստում ներկայացվում է որպես համաժամանակյա հարձակում, պիտի մեկնաբանել որպես պետության տարբեր շրջանների վրա մի զգալի ժամանակահատվածի ընթացքում տեղի ունեցած պարբերական հարձակումներ, որոնք Խաթթուսիլիա III-ը, ելնելով ինչ-ինչ քաղաքական նկատառումներից, միավորել է նրա հակառակորդների փոխհամաձայնեցված ավերիչ հարձակման մեջ:

Հարկ է նշել, որ ճգնաժամային իրավիճակը Խեթական տերությունում սկսվել էր շատ ավելի վաղ, դեռևս Առնուվանդաս I-ի կառավարման շրջանում, ում օրոք կազմված մի շարք տեքստեր վկայում են ոչ միայն կախյալ երկրների անհնազանդության, այլև բուն խեթական տարածքի վրա կասկերի հարձակումների մասին<sup>176</sup>: Սակայն հարևան երկրների հարձակումները և կենտրոնական իշխանության

<sup>171</sup> Սուպալիուլիուսաս I-ի հոր նույնանուն համար Թուդիաիլիաս III-ի հետ տես՝ Gurney 1973: 672ff.; 1979: 213ff.: Այս տեսակետը հաստատվում է Մաշատիլոյրի՝ Nr.76/15 նամակի վրայի կնիքի արձանագրությամբ: [N<sup>o</sup>4KISIB «Šu-up-ri-lu-!]-i-u-ma LUGAL[GAL <sup>200</sup>Ha-at-ti DUMU «Du-ut-ha-li-y)» LUGAL.GAL U[R.SAG] [Կնիքը Սուպալիուլիուսասի, [Խաթթիի մեծ արքայի- [Թուդիաիլի]ասի [որդու], մեծ արքայի, հ[երոսի]» (Alp 1980: 57 և Abb.3 + Taf.4), որը հենվում է նաև այլ փաստարկների վրա (Dinçol et al. 1993: 100f.):

<sup>172</sup> Սամուխայի ավանդական տեղագրումը Վերին Եփրատի ավազանում, ոչ այնքան համոզիչ փաստարկների հիման վրա (Garstang and Gurney 1959: 32ff. ) վիճարկվում է Մասնագետների մի զգալի խումբ այն տեղադրում է Հալիսի վերին հոսանքներում (Cornelius 1958: 375; Garstang and Gurney 1959: 36[-Ջարա (Zara)]; Goetze 1960: 47; Forlanini 1979: 178ff.[= Սիվաս քաղե (Sivas kale)]): կամ Հալիսի և Եփրատի վերին հոսանքների միջև (von Schuler 1965: 35 Anm.188; Laroche 1966: 270): Տես, սակայն, Օ.Գըրնեիի հետմահու հոդվածում այս առթիվ ավել քերականագիտությունը (Gurney 2003: 122ff.):

<sup>173</sup> “Դիպված 11”, 8ff. (Güterbock 1956: 64): Իսկ KBo VI 28 ԴԿ 14f.- ում հիշատակվում է հակառակորդի կողմից Խաթթուսասի հրդեհման մասին:

<sup>174</sup> Այս տեքստի համար տես՝ Carruba 1977: 141:

<sup>175</sup> Bryce 2005: 146f.

<sup>176</sup> Մասնավորապես, հարկ է նշել՝ 1) KUB XIV 1 + KBo XIX 38 (= CTH 149, հրատ.՝ Götze 1928)- որտեղ ներկայանում է խեթական արքայի նվազագույն հեղինակությամբ բնորոշվող իրավիճակ արևմտյան Փոքր Ասիայում (Տիպապալա-Խարիյատի երկրի դրածո կառավարիչ Մադդուվաստասի գործունեությունը), 2) KUB XXIII 72+ (= CTH 146, հրատ.՝ Gurney 1948: 32ff.; Kosyan 2006a), որտեղ ակնհայտ է միևնույն վիճակը Վերին Եփրատի ավազանում (խեթահայտակ Պախիուվայի ապստամբությունը), 3) KUB XVII 21+, KUB XXXI 124+, KUB XXIII

հեղինակության անկումը չէին միայն Խեթական տերության թուլացման և մասնատման պատճառները:

Խաթթիի աստվածներին ուղղված Մուրսիլիս II-ի մի աղոթքում<sup>177</sup> հիշատակվում է մեծաքանակ բնակավայրերի ամայացումը՝ արքայի պապի (Թուդիսալիյաս III) օրոք երկրում մոլեզնդ համաճարակի և սովի պատճառով: Շուրջ 20 տարի տևած համաճարակի խոշոր վնասների մասին է տեղեկացվում նրա մյուս աղոթքում<sup>178</sup>: Մեկ այլ աղոթքում՝ ուղղված Արինեսա քաղաքի Արնի աստվածուհուն<sup>179</sup>, որը Է.Լարոշի «Կատալոգում» վերագրված է Մուրսիլիս II-ին (CTH 376C), սակայն իրականում տիպիկ «միջին խեթերեն» տեքստից վերցված ներդիր է<sup>180</sup> և պիտի թվագրվի Առնուվանդաս I-ի և նրա կառավարմանը անմիջապես հաջորդող շրջանով<sup>181</sup>, մի հատված ուղղակի հիշեցնում է «շրջանաձև ներխուժումը»:

#### KUB XXIV 4 + KUB XXIV 3

49) ki-nu-na a-ra-ah-zé-na-an-te-eš [ud-ni-an-t]e-eš

50) hu-u-ma-an-te-eš KUR <sup>182</sup>KU.BABBAR-ti [wa-al-h]u-an-né-eš-ki-u-wa-an da-a-ir

49) «Այժմ հարևան [երկր]երը

50) բոլոր Խաթթի երկրի վրա սկսեցին [հար]ձակվել»:

\*waih- «խփել, հարձակվել» բայը դրված է գործողության շարունակականություն նշող -šk- անանցով, որը վկայում է տևական հարձակումների մասին: Այստեղ է, որ KUB XXIV 4-ում (+ KUB XXX 12 կցարեկորը) անկա թշնամիների ցուցակը (տեքստում՝ «ապստամբ երկրներ») գրեթե նույնն է, ինչ KBo VI 28 Դ 4 9ff.-ում, իսկ աստվածների տաճարների ավերման մասին հիշատակությունը համահունչ է Առնուվանդաս I-ի հայտնի տեքստին<sup>182</sup>:

Այսպիսով, վերը հղված տեքստերի հիման վրա պարզվում է, որ արդեն Առնուվանդաս I-ի կառավարման վերջին շրջանից երկրում խոր ճգնաժամ էր սկսվել, որը շարունակվեց նրա հաջորդի՝ Թուդիսալիյաս III-ի օրոք: Այս ընթացքում Խեթական տերության շատ տարածքներ անցան հարևան երկրների տիրապետության տակ: Թերևս, հենց Թուդիսալիյաս III-ի օրոք արքունիքը և վարչակազմը ստիպված էին լքել

<sup>175</sup> KUB XXIII 17; KUB XXXI 117+ (= CTH 375, հրատ.՝ Schuler von 1965: 152ff.; Lebrun 1980: 132ff.), որտեղ հիշատակվում է կասկերի հարձակումների հետևանքով հյուսիսի մի շարք քաղաքների, այդ թվում՝ պաշտամունքային խոշոր կենտրոն Աերիկի տաճարների ավերումը:

<sup>177</sup> KUB XIV 13 + KUB XXIII 124 (= CTH 378.IV, հրատ.՝ Götz 1930b: 242ff.; Lebrun 1980: 220ff.; Singer 2002: 64ff. [N.14]):

<sup>178</sup> Տեքստում բառացիորեն ասվում է հետևյալը. «[Մարդիկ մահանում էին] իմ հոր ժամանակ, մահանում էին իմ եղբոր [Առնուվանդաս II-ի - Ա.Ք.] ժամանակ, նրանք շարունակում էն մահանալ [իմ ժամանակ]: ... Արդեն 20 տարի Խաթթիում [մեծ քանակությամբ] մարդիկ մահանում էն: Խաթթիին [շատ է տուժել] համաճարակից» (Singer 2002: 56 [N.10]): Լույսը կրկնվում է նաև նրա մեկ այլ աղոթքում (Singer 2002: 57 [N.11]):

<sup>179</sup> KUB XXIV 3 + KUB XXX 12 (հրատ.՝ Gurney 1940: 22ff.; Carruba 1969: 239ff., 247f., կրկնօրինակը՝

CTH 376A [հրատ Singer 2002: 53 [N.8]):

<sup>180</sup> Houwink ten Cate 1970: 5, 68ff.

<sup>181</sup> Carruba 1969: 247f., Anm.40.; Houwink ten Cate 1997: 59f.; Güterbock 1978: 136.

<sup>182</sup> CTH 375 (Carruba 1969: 243).

Խաթթուսացը և հիմնավորվել արևելյան շրջաններում՝ Վերին երկրում, ժամանակավորապես կենտրոն դարձնելով Սամուխ քաղաքը<sup>183</sup>:

Առաջիմ այնքան էլ պարզ չեն Խաթթիի թուլացման բոլոր պատճառները, սակայն հնարավոր է ենթադրել, որ դրանում էական գործոն պետք է համարել նաև տեական երաշտը, ինչի մասին ուղղակի վկայություններ են պահպանել Մաշատիոյութ հնավայրից (խեթ. Տապիզգա քաղաքը՝ ներկայիս Ջիլե քաղաքից 30 կմ. հարավ-արևմուտք) հայտնաբերված մի շարք նամակներ<sup>184</sup>: Դրանք գրված են խեթական արքայի կողմից Տապիզգայում տեղակայված վարչակազմի ներկայացուցիչներին կամ հակառակը: Մաշատիոյութի նամակներից NN. 14, 24, 29, 53 և 79-ը վկայում են երաշտի մասին<sup>185</sup>: 2.2ռֆների կարծիքով, պարզ չէ միայն, արդյոք այս բոլոր նամակները գրված են մինևույն տարում, թե խոսքը մի քանի տարվա մասին է: Նամակներից երևում է, որ արքան մեծ կարևորություն էր տալիս հացահատիկի և խաղողի այգիներից ստացվող բերքի խնդրին:

Խեթական բնօրրանում երաշտի մասին վերոհիշյալ տեղեկությունները, թերևս, հնարավոր չէ չափել Խաթթուսիլիս III-ի արդեն նշված տեքստում և Մուրսիլիս II-ի աղոթքներում և „ՍԳ“-ում նկարագրվող իրավիճակին (տես վերը): Այստեղ ներկայացված են՝

ա) Հարևան երկրների հարձակումները Խաթթիի վրա,

բ) Մայրաքաղաք Խաթթուսասի նվաճումը և ավերումը կասկերի կողմից,

գ) Բնակավայրերի ամայացումը,

դ) Երաշտը, սովը և զանգվածային մահացությունը:

ե) Բնակչության զանգվածային հեռացումը իրենց բնակավայրերից հարևան երկրներ:

Կարծում ենք, վերոհիշյալ երևույթները չէին կարող տեղ գտնել մեկ տարում մոլեզվող երաշտի հետևանքով: Երաշտի պատճառով բնակչության արտագաղթը հարևան երկրներ, այդ թվում Իսուվա և Հայասա<sup>186</sup>, անկասկած, խոշոր չափերի հասնող աղետի հետևանքը պետք է լիներ: Այս առթիվ կարելի է վկայակոչել Սուպալիուլիումաս I-ի և կախյալ Միտտանիի արքա Շուտտիվազայի միջև կնքված պայմանագրում ներկայացված շրջանների ցուցակը, որոնց բնակչությունը հեռացել էր Իսուվա<sup>187</sup>:

Ընդհանրապես, Կենտրոնական Փոքր Ասիան երկրագործական կենցաղավարման առումով հակասական պատկեր է ներկայացնում: Չնայած հողային ռեսուրսները

<sup>183</sup> Bryce 2005: 147.

<sup>184</sup> Նամակների հրատարակությունը՝ Alp 1991:

<sup>185</sup> Hoffner 2009: 65f. Սրանց պետք է հավելել Ա.Նե Մարտինոյի կողմից հղված նամակները՝ NN.24, 50, 65, 80 (De Martino 2005: 314):

<sup>186</sup> Այդ մասին տես Գլուխ 2-ում ներկայացված տեքստերը:

<sup>187</sup> Գուրտալիսա (<sup>URU</sup>Gurtališša կամ Kurtališša), Արավանես (<sup>URU</sup>Arawanna), Չազզիսա (<sup>URU</sup>Zazzisa), Կալասմա (<sup>URU</sup>Kalašma), Տիմ(ա)նա (<sup>URU</sup>Tim(a)na), Խալիվա (<sup>URUSAG</sup>Haliwa), Կարնա (<sup>URUSAG</sup>Karna), Դուրմիտտա (<sup>URU</sup>Durmitta), Ալիա (<sup>URU</sup>Alha), Խուրմա (<sup>URU</sup>Hurma), Խարանա (<sup>URUSAG</sup>Harana), Թեգարամա (<sup>URU</sup>Tegarama), Թեպուրչիյա (<sup>URU</sup>Tepurziya), Խազգա (<sup>URU</sup>Haža), Արմատանա (<sup>URU</sup>Armatana)(Weidner 1923: ԴԿ 10ff.): Հիշատակվող տեղանունների տեղադրության քննարկումը տես Cornelius 1958: 239ff.; Դուորաքսե 1961: 174սև.:



բավարար են և հիմնականում բերրի, անկայն դրա հետ մեկտեղ կլիմայական պայմանները պարբերաբար արգելակում են բնակչության կենսագործունեության համար առաջնահերթ եշանակություն ունեցող հացահատիկային կուլտուրաների մշակումը: Բնական տեղումների պակասը, ժամանակից շուտ վրա հասնող ցուրտը և այլ հանգամանքներ հաճախակի հանգեցնում են բերրի անկմանը, որի հետևանքը բնակչության խոշոր զանգվածների համար անհնար է դարձնում գոյությունը իր բնակչության վայրերում<sup>196</sup>:

Հարևան երկրների հարձակումները Ռեթական տերության բնօրրանի վրա, ամենայն հավանականությամբ, նույնպես երաշտի հետևանքը կարող էին լինել: Հատկանշական է, որ Մաշատիոյոյոսի մի ամբողջ խումբ նամակներում հիշատակվում են կասկերի հարձակումները Տապիզգայի մերձակայքի վրա<sup>197</sup>:

Ռեթական տերության ներսում տիրող ծանր իրավիճակի գործում իրենց դերը կարող էին խաղալ նաև ներդիսաստիական խնդիրները, կապված գահաժառանգման հետ հենց Թուդխալիյաս III-ի օրոք:

Բանն այն է, որ աղբյուրները որպես վերջինիս հաջորդ եշում են Թուդխալիյաս անունով արքայազնի (սահկան), ով դրանցում հայտնի է որպես «կրտսեր Թուդխալիյաս» (Tudhaliya TUR): Սակայն ինչ-որ մի պահ այս Թուդխալիյասն այլևս չի հիշատակվում աղբյուրներում, փոխարենը առաջին պլան է մղվում արքայազն Սուպալիուլիումասը: Սուպալիուլիումասին հաջողվեց կազմակերպել պալատական հեղաշրջում, որի ընթացքում Թուդխալիյասը սպանվեց<sup>198</sup>: Արդյոք հեղաշրջման կազմակերպիչը Սուպալիուլիումասն էր, թե նրա մայրը՝ Տադուխեպան կամ մեկ այլ անձ, պարզ չէ: Հայտնի է միայն այն, որ «կրտսեր» Թուդխալիյասի մայրը՝ գործող Քազուտի Սատանդուխեպան անհետանում է աղբյուրներից<sup>199</sup> և իր տեղը զիջում է նոր Քազուտուն՝ Տադուխեպային<sup>199</sup>:

Գահաժառանգման համար պայքարը, բնականաբար, չէր կարող չանդրադառնալ Տերության կայունության վրա, ինչպես մեկ անգամ չէ, որ վկայված է Խաթթիի ավելի վաղ շրջանի և մ.թ.ա. XIII դարի պատմության տարբեր ժամանակահատվածներում:

<sup>196</sup> Bryce 2002: 73.

<sup>197</sup> Դրանք են՝ NN.1, 5, 6, 19, 24, 25, 27, 31, 37, 45 (De Martino 2005: 313):

<sup>198</sup> Bryce 2005: 154f.: Հեղաշրջումը և Թուդխալիյասի սպանությունը Սուպալիուլիումասի կողմից ուղղակիորեն հիշատակվում է Մուրսիլիս II-ի օրոք կազմված մի տեքստում, որն իրենից ներկայացնում է Խաթթիի բոլոր աստվածներին ուղղված աղոթք՝ կապված Ռեթական տերությունում 20 տարի մոլեգնող համաճարակի հետ (CTH 378.I, հրատ. Götz 1930b: 164ff.: տեքստն արձագանքում էր Singer 2002: 61ff.): Այստեղ ելվում է, որ աստվածները պատժել են Սուպալիուլիումասին և բոլոր այն անձանց, ովքեր ժամանակին մասնակցել էին Թուդխալիյասի սպանությանը:

<sup>199</sup> Սատանդուխեպան հետագայի խեթական տեքստերում ընդհանրապես չի հիշատակվում: Երա անուրը պահպանվել է միայն այսպես կոչված «խաչան կնիքի» վրա (գրված է հիերոգլիֆային գրով), որը կազմված է Ռեթական տերության ավարտական փուլում՝ Սուպալիուլիումաս II-ի օրոք (կնիքի հրատարակությունը և մեկնաբանությունները տես Dincol et al. 1993: 99):

<sup>200</sup> Այս մասին տես, մասնավորապես, De Martino 2010: Ելենք նաև, որ «կրտսեր» Թուդխալիյասը կարող էր նույնիսկ որոշ ժամանակ կառավարել, նախքան Սուպալիուլիումասի կողմից գահազրկվելը, եթե իրոք նման ենթադրությունը իրավացի է (Dincol et al. 1993: 99; Miller 2004: 9):

Այդպես էր Նաթթուսիլիս I-ի մահից հետո գրեթե մեկ դար, Մուսլիմայիս II-ից հետո՝ Ռեխի-Թեշուբի և Նաթթուսիլիս III-ի կառավարման սկզբում, եան մ.թ.ա. XIII դարի երկրորդ կեսին (Թուղխալիյաս IV-ի և Թարխունտասասայի քույր-քազավորության արքա Կուրունտայի հակամարտությունը): Ասվածը թույլ է տալիս ենթադրելու, որ Տերության ներսում առկա ներքաղաքական ակալայությունն էր թերևս գլխավոր պատճառը, որ այն Թուղխալիյաս III-ի օրոք հայտնվեց ծայրաստիճան ծանր իրավիճակում: Այս համատեքստում իր ակտիվ մասնակցությունն ունեին եան Հայկական լեռնաշխարհի՝ ոչ հեռավոր անցյալում Ռեթական տերության գերիշխանության կամ ազդեցության տակ գտնվող երկու պետականությունները՝ Հայասան և Իսուվան, որոնք, օգտվելով հարմար առիթից, սկսեցին ասպատակել կամ առանձին տարածքներ եվանել Եփրատի աջափնյակում (այդ մասին տես ստորև):

Ահա այսպիսի իրավիճակում իշխանության եկավ Ռեթական տերության պատմության ամենանշանավոր արքան՝ Մուսլիմայիլուիմաս I-ը (մոտ. մ.թ.ա. 1345-1322թթ.), ում օրոք պետությունը հասավ իր եզրուրության զագաթնակետին: Մուսլիմայիլուիմասն արտակարգ եռանդուն և նպատակասուց անձնավորություն էր, ով դեռևս պատանեկան տարիներից ընդհուպ մինչև մահը անցկացրեց մշտապես ընթացող պատերազմներում: Նրա գործունեությանը, ինչպես Տերության ներքին կյանքի ամենատարբեր ոլորտներում, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ բնորոշ էր ռադիկալ, ուղղագիծ վարվելակերպը: Նա կանգ չէր առնի ոչ մի բանի առջև իր նպատակներին հասնելու համար<sup>100</sup>:

Ի տարբերություն իր նախորդների, նրա արտաքին քաղաքականությանը բնորոշ էր նորանվաճ երկրների ինտեգրումը Ռեթական տերության քաղաքական համակարգում: Հենց նրա օրոք սկսեց կիրառվել այսպես կոչված «քույր-քազավորությունների» ստեղծման պրակտիկան: Այդպիսի նպատակ էր հետապնդում նորանվաճ երկրներում կամ նախկինում խեթերի վերահսկողության տակ գտնվող շրջաններում Նաթթից կախյալ քազավորությունների կազմավորումը: Մուսլիմայիլուիմասն իր որդիներին երկուսին նշանակեց Տերության հարավային սահմանների մոտ գտնվող շրջանների ժառանգական արքաներ: Տելեպիևուսին հանձնվեց Կիցցուվատուսան (Կիլիկիա), իսկ Պիլասսիլիին՝ Կարգամիսը (Հյուսիսային Սիրիայում Միտասնիից նվաճված շրջանները): Այս էտնախորքի վրա կարող է որոշակիանալ եան Հայասայի հանդեպ տարվող քաղաքականությունը: Խուկկանային իր քույրերից մեկին կնության տալը՝ ամենայն հավանականությամբ, նպատակ ուներ խեթական արքայատոհմի իշխանությունը տարածել եան այս ավանդաբար դժվար կառավարելի երկրամասում: Ի դեպ, սովելի ուշ, արդեն մ.թ.ա. XIII դարի կեսերին այդ քաղաքականությունը հաջողությամբ կիրառեց Նաթթուսիլիս III-ը Հայասայի հարևան Իսուվայում (հետագայի հայկ. Օոփթ)<sup>101</sup>:

«Կրտսեր» Թուղխալիյասի մահից հետո Մուսլիմայիլուիմասը ձեռնարկեց Տերության տարածքային ամբողջականության վերականգնման գործը, որը սկսել էր դեռևս Թուղխալիյաս III-ը: Մուսլիմայիլուիմասը ակտիվորեն մասնակցում էր հոր

<sup>100</sup> Մուսլիմայիլուիմասի անձին բնութագրող լավագույնս ձևակերպել է Ջ.Միլլերը որպես «կոպիտանաբարամիտ և անզիջում տիրակալ» (Miller 2007: 261):

<sup>101</sup> Տես Քոսյան 1997 (համապատասխան հղումներով):

արշավանքներին դեռես արքայազնի կարգավիճակով, սակայն թուղխալիյասի՝ պարբերաբար կրկնվող հիվանդության պատճառով վերջինս հաճախ ի վիճակի չէր անձամբ գլխավորելու զորքը: Երկրի վերամիավորումը<sup>195</sup> սկսվեց Մամուխա քաղաքից, ուր, մայրաքաղաք Խաթթուսասի անկումից հետո, ժամանակավորապես տեղափոխվել էր արքայական նստավայրը, և հիմնականում ավարտվեց արդեն Սուպալիուլիումաս I-ի կառավարման օրոք: Վերանվաճելով կորցրած տարածքները, Սուպալիուլիումաս անցավ նոր նվաճումների ի հաշիվ ավանդական հակառակորդ Միտտանիի, այս անգամ արդեն Տավրոսից հարավ՝ Միրիայում, որոնք նախկինում գտնվում էին Խաթթիի տիրապետությունից դուրս:

Սուպալիուլիումաս I-ի կառավարման շրջանի ժամանակագրության խնդիրը առայժմ քննարկման առարկա է Ռեթագիտական ուսումնասիրություններում ներկայումս գոյություն չունի ինչպես մ.թ.ա. XIV դարի, այնպես էլ այլ ժամանակահատվածների քաղաքական իրադարձությունների միասնական ժամանակագրություն<sup>196</sup>: Ռեթական պատմության ժամանակագրումը գերազանցապես, եթե ոչ ամբողջությամբ, հենվում է Եզիպտոսի, Ասորեստանի և Բաբելոնիայի՝ գրավոր աղբյուրներով արձանագրված համաժամանակյա պատմության հետ ունեցած զուգահեռների վրա: Այդ է պատճառը, որ նման զուգահեռների բացակայության դեպքում մասնագետները ստիպված են բավարարվել Ռեթական տեքստերում արձանագրված իրադարձությունների փոխկապակցման հնարավորություններով: Ստորև և ընդհանրապես ներկա ուսումնասիրության մեջ օգտագործվում է այսպես կոչված «միջին ժամանակագրությունը»<sup>197</sup>:

Այսպիսով, մ.թ.ա.1340թ. մոտերքում, նվաճելով Իսուվան և Ազին<sup>198</sup>, Սուպալիուլիումասը մտավ Միտտանի (այսպես կոչված «սիրիական առաջին

<sup>195</sup> Սուպալիուլիումասի գործունեությունը նկարագրող տեքստերը չեն հիշատակում ինչպես այդ գործընթացի ավարտը, այնպես էլ արքունիքի՝ Խաթթուսաս վերադառնալու պահը: Խաթթուսիյա III-ի մի տեքստում (KUB XIX 9,9 [- CTH 83, հրատ.՝ Սոալ 1974.2: 6f.]) ասվում է, որ Սուպալիուլիումասն այն իրականացրել էր 20 տարում, սակայն նկատվել է, որ այս ժամկետը պիտի ներառեր նաև թուղխալիյաս III-ի արշավանքները, բացի այդ, այն ուղղակի կորացված է (Bryce 1989: 20), նման Kempinski 1993: 85ff. (գտնում է, որ 20 տարին իրական ժամկետն է): Սուպալիուլիումասի կողմից Ռեթական տերության վերականգնման վրա ծախված ժամանակի խնդիրը ներկայումս վիճահարույց է: Հնարավոր է, որ Խաթթուսիյացի ուղղակի կորացված ձևով ներկայացնել իր պապի գործունեության այս հատվածը, ինչպես նա խոսքոված գոյներով է ներկայացնում՝ շրջանաձև ներխուժումը՝

<sup>196</sup> Ռեթական պետության պատմության ժամանակագրության վերաբերյալ առկա հիմնական մոտեցումներն ամփոփված են հետևյալ աշխատություններում՝ Otten 1968; Wilhelm-Böse 1989: 74ff.; Astour 1989; Bryce 1989: 19ff.: Վեքսինը այս շարքում Ջ.Միլլերի վարկածն է (Miller 2007: 282ff.), ըստ որի Սուպալիուլիումաս I-ի կառավարման շրջանը պետք է մի քանի տարով ստանկ վերն (1356-1330B.C.), այս տեսակետը հենվում է KUB XIX 15 + KBo L 24 տեքստի ընձեռած հնարավորությունների վրա:

<sup>197</sup> Ռեթական տերության պատմության ժամանակագրման խնդիրների, այդ թվում՝ Միջին ժամանակագրության՝ համար տես Bryce 2005: 375ff.:

<sup>198</sup> Իսուվայի և Ազինի նվաճումը հիշատակվում է Միտտանիի արքա Եատտիվազայի հետ կնքված պայմանագրում (- CTH 51, հրատ.՝ Weidner 1923: 2ff.; Beckman 1996: 43):

պատերազմը»<sup>199</sup>։ Իսկ կյանքի վերջին շրջանում (մոտ. 1227-1228թթ.) նա վերջնականապես եվաճեց Միտոսանին և Հյուսիսային Սիրիան, այստեղ հիմնելով երկու քույր-պետություններ՝ Կարգամիսը և Հալեպը, որոնց արքաներ նշանակվեցին նրա երկու որդիները՝ Պիյասսիլին (նույնն է ինչ Շարրի-Կուշուխը) և Տեկպինուսը։

### ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԱԶՋԻՆ ԹՈՒԴՆԱԼՈՒՅԱՍ III-Ի ԵՎ ՍՈՒՊՊԻԼՈՒԼՈՒՄԱՍ I-Ի ՕՐՈՔ

#### Հայաստյի և Ազգիի տեղադրության և հարաբերակցության խնդիրը

Նախորդ բաժնում ներկայացված խեթական տեքստերը որոշակի պատկերացում են տալիս մ.թ.ա. XIV դարում Հայաստյի և Ազգիի ու խեթական տերության փոխհարաբերությունների մասին<sup>200</sup>։

Մակյան նախքան այդ հարցին անցնելը անհրաժեշտ է պարզել մի կարևոր խնդիր, այն է՝ խեթական աղբյուրներում Հայասա և Ազգի տերմիններով բնորոշվող քաղաքական միավորների հարաբերակցության հարցը։

Մասնագետների մոտ առայժմ չկա միասնական կարծիք այս խնդրի վերաբերյալ։ Առաջին ուսումնասիրողներից է.Ֆոտերը գտնում էր, որ նախապես սրանք առանձին քաղաքական կազմավորումներ էին, որոնք հետագայում միավորվել են. իսկ Սուպպիլուլիումաս I-ի և Ռուկկանայի միջև կնքված պայմանագրում Հայասան և Ազգին կիրառվել են որպես հոմանիշներ<sup>201</sup>։ Մի շարք վաղ հետազոտողներ այս երկուսը դիտում էին որպես միասնական պետականություն, ընդ որում նրանց կարծիքով Ազգին պետք է հանդիսանար Հայաստյի արևմտյան մասը<sup>202</sup>։ Այլ ճանապարհով էր գնում Գր.Նավասեցյանը, ում կարծիքով երկու տերմինները միևնույն երկրի տարբեր անվանումներն են, ընդ որում Ազգին տարածքային, իսկ Հայասան էթնիկ բովանդակություն ուներ<sup>203</sup>։ Մեծ թվով այլ հետազոտողներ առաջարկել են տարբեր տեղադրություններ Գալլ գետի հովտից և հարավներձևածովյան շրջանից մինչև Վանա լիճ և Արձնիք<sup>204</sup>։

Նկատի առնելով Հայասան և Ազգին հիշատակող խեթական աղբյուրների տեղեկությունները, մենք, հետևելով վաղուց ի վեր մի շարք մասնագետների կողմից առաջ քաշված տեսակետին<sup>205</sup>, վերջերս փորձեցինք կրկին հիմնավորել այն տար

<sup>199</sup> Սուպպիլուլիումասի սիրիական պատերազմները հանգամանորեն հետազոտված են (Klengel 1965: 31ff.; 1970: 218ff.; 1999: 155ff.; Beyce 1989: 19ff.; 2005: 155ff. [աղբյուրների և զրականության հղումներով]։ Freu 1992: 39ff.):

<sup>200</sup> Տեքստերի գիտական տառադարձումը, տեքստաբանական մեկնաբանությունները և թարգմանությունը տես վերը՝ Գլուխ 2։

<sup>201</sup> Forrer 1931: 4f.

<sup>202</sup> Göze 1930: 25; Friedrich 1930: 103f.; Garstang and Gurney 1959: 29ff.; Adontz 1946: 28,40; Մարտիրոսյան 1957: 118; Forlanini 1979: map և պլև։

<sup>203</sup> Kapanjian 1948: 37.

<sup>204</sup> Կարծիքների տեսությունը տես RGTC VI 1: 59f., 63f.; VI 2: 19, 22; Քոսյան 2004ա: 44-45.

<sup>205</sup> Mattonden 1956: 106, 126ca.; Haas 1985: 23; Մասնավորապես, Հ.Մանանդյանի կարծիքով

փաստարկներով, առաջարկելով այս երկուսի տեղադրությունը Վանա լճին հյուսիսից և արևմուտքից հարող շրջաններում<sup>206</sup>: Այդպիսի տեղադրության համար մենք եկատի ենք ունեցել խեթական տեքստերի ընձեռած հնարավորությունները: Մեր փաստարկների շարքում առանձնացնենք հետևյալները:

ա. Հայասան և Իսուվան պետք է լինեին հարևաններ կամ գրեթե հարևաններ: Մուպպիլուլիումաս I-ի գործունեությունը նկարագրող տեքստերից մեկում<sup>207</sup> խոսվում է *Խաթթիից* Հայասա փախած բնակչության մասին: Խեթական զորքը Իսուվայից մտնում է Հայասա, անցնելով Մուխխապա երկիր, հետո՝ Լախա լեռ(ներ) և մտնում է Հայասա: Չնայած Մուխխապան այլևս չի հիշատակվում, սակայն համադրությունը խեթ. Մուխմա և ասորեստանյան աղբյուրների Մուխմուի հետ<sup>208</sup> կարող է հիմնավորել վերջինիս տեղադրությունը Եփրատի և Արածանիի միջև: Այս առումով բավական գրավիչ է հեջում Վ.Խաչատրյանի համադրությունը Մուխխապայի և հայկ. աղբյուրների Օլխանիստ լեռնանվան հետ (վերջինս հանդիսանում Բյուրակեի լեռների արևելյան հատվածը)<sup>209</sup>:

բ. Հաջորդ փաստարկը Կումմախա քաղաքի հանգուցային դիրքն է խեթերի և Հայասայի շփման գոտում: Այդ մասին ակնարկում են Թուդխալիյաս III-ի և Մուպպիլուլիումասի արշավանքը Հայասայի դեմ և Կումմախայի մոտ տեղի ունեցած ճակատամարտը (տես ստորև), ինչպես նաև ավելի վաղ ապստամբ Պախխուվայի դեմ Առնուվանդաս I-ի մղած ճակատամարտը, որին մասնակցում էր նաև Արխիտա քաղաքի զորքը: Այստեղ կարևորն այն է, որ այս քաղաքի աստվածը հիշատակվում է որպես «հայասական/ազգիական աստված» Աննիյայի հետ Մուրսիլիս II-ի կնքած պայմանագրում (KUB XXVI 39)<sup>210</sup>: Վերջին փաստը կարող է վկայել, որ Կումմախայի ճակատամարտը մղվում էր հայասական տարածքի հարևանությամբ:

գ. Միևնույն Առնուվանդաս I-ի տեքստում որպես Պախխուվայի ապագա լոյալության երաշխավորներ հանդես են գալիս երկու քաղաքներ (ավելի ստույգ երեքը,

Հայասան զբաղեցնում էր Վանա լճի հյուսիսային և արևմտյան առափնյա շրջանները մինչև Կարասու-Եփրատ ընկած հատվածը, ընդ որում դրա համանուն մայրաքաղաքը նույնն է ինչ Սաբզոն II-ի մ.թ.ա. 714թ. արշավանքի ընթացքում հիշատակվող <sup>211</sup>Սաչաև քաղաքը: Այս առումով շատ ավելի ուղղակի դիրքորոշում ունի Ս.Պետրոսյանը, ով Հայասայի նման տեղադրությունը համարում է «հաստատված» (Петросян 1987: 79): Հայասայի մերձվանաճյան տեղադրությունը հնարավոր էր համարում նաև Է.Յոտերը, ում կարծիքով Հայասայի՝ «Կղզու վրա գտնվող» Արիպաս քաղաքը կարող է տեղադրվել Վանա լճի ափին ընկած որևէ թերակղզում (Forrer 1931: 16ff.), չնայած նա ընդհանուր առմամբ հակված էր Հայասան որոնել ինչ-որ տեղ Բարձր Հայքում՝ Երզնկայի դաշտից հյուսիս (վերջինս նա համարում էր Հայասայի և Խեթական տեղության շփման գոտին):

<sup>206</sup> Տես Քոսյան 2013ա: 53-63; Kosyan 2015: Հայասայի մերձվանաճյան տեղադրության հավանականության մասին վարկածն առաջ քաշվեց համեմատաբար վերջերս ականավոր ինքնազեղ Օ. Գըրնիի հոդվածում (Gurney 2003: 120f.)

<sup>207</sup> Güterbock 1956: 83f., *Fragm.*25; նաև նույն տեքստի պատճենը՝ KUB XI 8 (Klengel 1968: 66ff.).

<sup>208</sup> Առաջարկել է դեռևս Ա.Գյոթցեն (Goetze 1940: 47 n.181):

<sup>209</sup> Վաչերթոս 1971: 114, որում.266; Խաչատրյան 1998: 58.

<sup>210</sup> Այս տեքստի հրատարակությունը տես Forrer 1931: 6f.; Haas 1985: 24 (հատվածական); Քոսյան 2005 (լիակատար):

որոնցից մեկի անվանումը կորսվել է)՝ Պիտոխյարիգան և Դուզգաման: Մասնագիտական հրատարակություններում Պիտոխյարիգան, սկսած Գարստանգից և Գըրնիից, տեղադրվում է Հալիսի մերձակայքում<sup>211</sup>: Մակայն Դուզգամայի պատկանելությունը հայաստան տարածքին ստիպում է վերանայել այդ տեսակետը: Դժվար է պատկերացնել Հայաստան/Ազգիում ընկած քաղաքի և հալիսյան տարածաշրջանում գտնվող քաղաքի համատեղ մասնակցությունը խեթերին հակամարտ Պախիուվայի միջադեպը հարթելուն ուղղված երաշխավորության գործին: Հնարավոր ենք համարում ենթադրել խեթական քաղաքի անվանը համահունչ կամ շատ նման հենդո մեկ այլ, ավելի արևելյան քաղաքի առկայություն եփրատյան գոտում: Իսկ այդպիսիք բավական շատ են և դրանց մի մասի անունները այսօր էլ շարունակում են գոյատևել աղավաղված ձևով (Peceric – հայկ. Բագայառիճ, Pegerig՝ Կումմախայից հյուսիս-արևմուտք, Pertek՝ Կեբանմադենի մոտ, հայկ. աղբյուրների Բթառիճ՝ Երզնկայի դաշտում, Ժաման. Ջիմին գյուղից 4 կմ հարավ-արևելք)<sup>212</sup>:

դ. Վերջապես, կարևոր փաստարկ պետք է համարել Հայաստանի և Ազգիի տեղադրության համար առայժմ չօգտագործված խեթական մի գուշակային տեքստում<sup>213</sup> հիշատակվող տեղանունները: Տեքստը ներկայացնում է գուշակային հարցում դեպի Ազգի խեթական զորավար Տատտամարտի գլխավորությամբ կազմակերպված արշավանքի կապակցությամբ: Արշավանքի ընթացքում հիշատակվում են խեթական տեքստերից արդեն հայտնի Ուրա, Իստիտինա և Նեմնուվա, ինչպես նաև այլ տեքստերում այլևս չվկայված Ուտկունիսա և Տավատենա քաղաքները: Չխորանալով վերոհիշյալ քաղաքների տեղադրության առեչությամբ առաջարկված տեսակետների մեջ, նշենք սրանցից երկուսի՝ Ուտկունիսայի և Նեմնուվայի հիշատակության ընձեռած հնարավորությունները: Մեր առաջարկը հետևյալն է. սույն Ուտկունիսան հնարավոր է համադրել միջին ասորեստանյան արքա Սալմանասար I-ի դեպի Ուրուատրի երկիր կազմակերպած արշավանքի ընթացքում ի թիվս 8 երկրների հանդես եկող <sup>6108</sup>Uatqun, Աշշուրբեղկալայի <sup>6109</sup>Jarkun և Աշշուրնածիրպալ II-ի <sup>6108</sup>Atkun-ի հետ<sup>214</sup>: Ինչ վերաբերում է Նեմնուվային, ապա վաղուց ի վեր առաջարկվել է դրա համադրությունը Սալմանասար I-ի մինևույն տեքստում հիշատակվող <sup>6108</sup>Himme-ի հետ<sup>215</sup>:

Այսպիսով, վերոհիշյալ փաստարկները կարծես իրոք նշում են, որ Հայասան (նաև Ազգին) կարող էին գտնվել մերձեփրատյան գոտում, ավելի ստույգ՝ Եփրատից մինչև Վանա լիճ ընկած շրջանում և դրանք մասնակիորեն պետք է համընկնեն միջին ասորեստանյան տեքստերի Ուրուատրիի հետ:

<sup>211</sup> RGTC VI/1: 319f.

<sup>212</sup> Հակոբյան և մյուսներ 1986: 682-683: Միջնադարյան հայկական աղբյուրներից վերցված բնակավայրերի հետ համադրության համար տես Քոսյան 2004ա: 81-82:

<sup>213</sup> KUB XLIX 11, հատվածական հրատ.՝ Kosyan 2011 (այնտեղ էլ այդ տեղանունների հնարավոր տեղորոշման մասին):

<sup>214</sup> Kosyan 2011: 91; Քոսյան 2013ա: 58. Ուտկունիսայի և դրա՝ ասորեստանյան տեքստերում վկայված համարների հնարավորության մասին առաջինը կարծիք է հայտնել Ե.Գրեկյանը (Գրեկյան 2005: 272):

<sup>215</sup> Sommer 1947: 5ff.; Дьяконов 1951: N.10,39.

Ոչ վերաբերում է Հայասանի և Ազգիի նույնությանը, այս այստեղ իրոք խնդիր կա և առաջին հերթին դա վերաբերում է ղեպի արևելք ուղղված Մուրսիլիս II-ի արշավանքները նկարագրող տեքստերին: Ինչպես վաղուց ի վեր նկատվել է Ջ.Գարսթանգի և Օ.Գըրնիի կողմից<sup>236</sup>, ովքեր այս երկու տեքստերի առնչությամբ նշում են, որ դրանք «աներևակայելիորեն խառնված են» աղբյուրներում, հատկապես Մուրսիլիսի տարեգրություններում: Իրոք, այստեղ իրական խառնաշփոթ է տիրում, երբ թե Հայասան, թե Ազգիի մեկընդմեջ հիշատակվում են որպես խթանական արքայի հակառակորդներ, այսպիսի տպավորություն ստեղծելով, որ դրանք նույնական են: Թողնելով այս խնդիրը հետագա ուսումնասիրությունների համար, չնայած բավական տարօրինակ է ենթադրյալ երկու տեղանուններով միևնույն երկիրը նշելու փաստը, արձանագրենք միայն, որ այս առնչությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք: Դա այն է, որ Հայասանի վերջին հիշատակությունը խթանական տեքստերում թվագրվում է հենց Մուրսիլիսի արշավանքների շրջանով, որից հետո բացառապես առկա է Ազգի: Նույնիսկ KUB XVIII 2-ում, որը թվագրվում է մոտավորապես Խաթթուսիլիս III - Թուդիսալիյաս IV (մ.թ.ա. 1270-1220-ական թվականներ) շրջանով, Հայասանի կառավարիչ Խուկկանան հիշատակվում է որպես «ազգեցի» (տես ստորև): Եվ այն, որ Խաթթուսիլիս III-ի հայտնի տեքստում («շրջանաձև ներխուժում», տես վերը, Գլուխ 2) խոսվում է Ազգիի կողմից Վերին երկրի գրավման մասին ընդհուպ մինչև Սամուխա, չի կարելի ընդունել որպես հիմք դրանց նույնականության համար:

Մեր խնդրի պարզաբանման համար առայժմ գլխավոր կովաններից մեկը Վերին երկրի տեղադրությունն է, որը Ջ.Գարսթանգի և Օ.Գըրնիի աշխատության հրատարակությունից հետո սովորաբար տեղադրում են Եփրատի մեծ կենտանից մինչև Հալիսի վերին հոսանքների շրջանում<sup>237</sup>: Սակայն պարզ չեն այդ տարածքի իրական չափերը: Այն կարող էր տարածվել նաև շատ ավելի արևելք: Այս առումով արժանի է հիշատակման վաղ միջնադարյան Հայաստանի նահանգներից մեկի անվանումը՝ Բարձր Հայք, որն ընդգրկում էր մի նշանակալից տարածք: Ըստ պահպանված տեղեկությունների, նրա սահմաններն էին՝ հյուսիսում Անտիպոնտական լեռները, արևելքում Կարգապազարի, Դներոյնի և Կարագոյլի լեռները, հարավում Բյուրակնի լեռնաշղթայի հարավային ստորոտները, իսկ արևմուտքում Գալլ և Արևմտյան Եփրատ գետերի ջրբաժան բարձրությունները<sup>238</sup>: Այսինքն, այն համապատասխանում է ներկայիս Էրզրումի վիլայեթին: Թ.Հակոբյանը նշում է, որ Անանիա Շիրակացին Բարձր Հայքը համարում էր հենց Կարինի երկիրը, մի տեքստի, որն ավելի գործածական էր միջնադարյան Հայաստանում, քան Բարձր Հայքը:

Իհարկե, ասվածը չի կարելի հիմք ընդունել համադրելու Վերին երկիրը Բարձր Հայքի հետ, սակայն թույլ կտա ձևակերպելու աշխատանքային վարկած՝ ճշգրտելու համար խթանական աղբյուրների Վերին երկրի տեղադրությունը: Ամեն դեպքում Վերին երկրի տարածումը ներկայումս ընդունված տեղադրությունից շատ ավելի արևելք կարող է լավ հեռանկարներ բացել քննարկվող ժամանակաշրջանի պատմական

<sup>236</sup> Garstang and Gurney 1959: 36.

<sup>237</sup> RGTC VI/1: 293f.

<sup>238</sup> Հակոբյան 1968: 219:

աշխարհագրության ուսումնասիրության համար:

Կարծում ենք, որ Հայասա և Ազգի տերմինների հաճախակի փոխնիփոխ կիրառությունը կարելի է հեշտությամբ բացատրել հետևյալ կերպ, եթե դրանք դիտարկենք որպես միմյանց հետ որոշակի դաշնակցային կապերով կապված երկու ցեղային կառույցներ: Հայասայի և Ազգիի հարաբերակցության բնույթը ժամանակին լավ էր ձևակերպել հուլանդացի խեթագետ Ֆ.Հոուվինք տեև Կատեն, այն որակելով որպես «խարխուլ համադաշնություն»: Իրոք, հեարավոր չէ այլ կերպ ընկալել միևնույն տարածքի նկատմամբ երկու տարբեր տերմինների կիրառությունը: Այստի ունենալով այս հանգամանքը, մենք հակված ենք դրանք առանձնացնելու, տեղադրելով միմյանց հարևանությամբ: Ընդ որում հեարավոր է նույնիսկ ենթադրել, որ այս երկմիասնական քաղաքական միավորը կարող էր իրենից ներկայացնել երկու տոհմերից ծագող և միմյանց հետ սերտորեն, խնամիական կապերով կապված ցեղերի դաշինքի հիման վրա ստեղծված միավորում: Այսպիսի ենթադրության համար կարելի է վկայակոչել Մարիյա անվան հիշատակությունը մի տեքստում որպես Հայասայի կառավարիչ (Մարիյասի պայմանագիրը), իսկ ավելի ուշ տեքստում (պայմանագիր Մուրախիյա II-ի և Ազգիի արքա Աննիյայի պայմանագիրը) որպես Աննիյայի նախորդ (պապ կամ հայր-տես ստորև):

Հայասայի և Ազգիի մերձվանալճյան տեղադրության մասին վարկածը մեծ հեարավորություններ կարող է ընձեռել նաև հեագույն Հայաստանի պատմության առավել վիճահարույց խնդիրներից մեկի պարզաբանման ուղղությամբ: Խոսքը Ուրարտու-Հայաստան հարաբերակցության խնդիրն է, որը տարեցտարի ահագնացող հետաքրքրություն է առաջ բերում գիտական և մերձգիտական շրջանակներում, իբ նշանակությամբ գրեթե հավասարվելով «հայկական հարցին»:

Ուրարտական պետության կազմավորման կոնկրետ արեալը այսօր պարզ չէ: Մասնագետները գրեթե համակարծիք են այն հարցում, որ Տուշպա մայրաքաղաքը (ներկայիս Վան քաղաքը) վերածվում է պետության կենտրոնի միայն դրա գոյության ինչ-որ փուլում<sup>277</sup>: Ընդ որում որպես ապագա պետության կազմավորման նախնական կենտրոններ են ենթադրվում երկու տարածքներ՝ ա) Վանա լճի հյուսիսային և արևմտյան մերձափնյա շրջանը և բ) Վանից շատ հարավ ընկած Մուժամիրը: Ուրարտական քաղաքակրթության բնորոշ առանձնահատկությունների մի մասի (միջազգետրյան սեպագրի փոխառումը, բարձրարևոտակը, որմնակաքրը) աղբյուր է համարվում հենց այս երկրորդի մասնակցությունը<sup>278</sup>:

Ինչ վերաբերում է առաջին կենտրոնին, ապա դրա վկայություններից մեկն է առընտեսանյան արքա Մալմանասար III-ի մ.թ.ա. 856թ. արշավանքի ընթացքում Արձաշբու քաղաքի հիշատակությունը որպես Ուրարտուի արքա Արամուի քաղաք: Այս քաղաքի անունը վաղուց ի վեր համադրվել է Վանա լճի հյուսիսային ափին գտնվող

<sup>277</sup> Տեւ, մասնավորապես, Арутюнян 1970: 119սւ.:

<sup>278</sup> Akurgal 1968: 63; Van Loon 1966: 173; Kessler 1986: 66 և այլ: Կարծիք կա այն մասին, որ առընտեսանյան ազդեցություն պետք է համարել Վանի թագավորության վարչաքաղաքական կառուցվածքը, ուրարտական արքաների տիրադոսաշարը (Kalaç 1994: 18): Ուրարտական պետության վրա հարավային՝ միջազգետրյան զգալի ազդեցության մասին տես նաև Քոսյան 2013գ:



Արծկէ (Ժաման. Աղիջնազ) կամ Արճէշ (Ժաման. Էրջիշ) քաղաքների անվան հետ<sup>221</sup>: Լշենք նաև այս նույն շրջանում ուրարտական արքա Մենուայի՝ Մուշից հայտնաբերված արձանագրության մեջ հիշատակվող Արխի երկրանունը (13<sup>th</sup> Arhi)<sup>222</sup>: Վերջինս Գ.Ջանուկյանը համադրել էր խեթական աղբյուրների Արխիտայի, իսկ Գ.Մարգարյանը՝ այս նույն տարածաշրջանում վաղ միջնադարյան հայկական աղբյուրներում հիշատակվող Հարք գավառի (Պլինիոս Ավագի հիշատակած Archene-ն Արածանիի ավերին) անվան հետ<sup>223</sup>: Այս երկուսը (հայկական և ուրարտական տեղանունները) արտաբուստ շատ նման են խեթական KUB XXIII 72+ տեքստում որպես ապստամբ Պախխուվայի դաշնակից հիշատակվող <sup>108</sup>Arhita տեղանվանը (տես վերը): Վերջինիս աստծո հիշատակությունը խեթա-հայաստական դաշնագրում (Մուրսիլիս II – Հայաստայի արքա Անեիյա) որպես հայաստական աստված կարող է օգտակար լինել ինչպես Հայաստայի տեղադրության, այնպես էլ Հայաստայի և հետագայում հանդես եկող Ուրարտուի միջև առնվազն տարածքային ընդհանրության մասին տեսակետի հիմնավորման հարցում:

Իսկ այժմ ներկայացնենք նախորդ գլխում տեղ գտած խեթական տեքստերի համառոտ բովանդակությունը և դրանց մեկնաբանությունը<sup>224</sup>:

#### **ՌԵԹԱԿԱՆ ԱՐՄՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Սույն աշխատության շրջանակներում քննարկվող Ռեթական տեքստի և Հայաստայի փոխհարաբերությունները, որոնք կազմում են «Թուդխալիյաս III – Մարիյաս» և «Մուսպիլուլիումաս I – Խուկկանա» պայմանագրերի պատմական ետնախորքը, ընդգրկում են բավական տեսական ժամանակահատված, մոտավորապես մ.թ.ա. XV դարի վերջերից մինչև XIV դարի 30-ական թվականները: Հենց այս շրջանի խեթական տեքստերում են անվանապես հիշատակվում Հայաստայի՝ աղբյուրներում վկայված չորս արքաները՝ Կարանին, Մարիյան, Խուկկանան և Անեիյան:

#### **«Պայմանագիր Առուվանդաս I-ի և վերինեփրատյան երկրների միջև» (KUB XXIII 72+)**

Այս պայմանագրում, որի էտնախորքում ընկած էր Պախխուվայի ապստամբությունը և Առուվանդաս I-ի շարունակական ջանքերը՝ վերահաստատելու իր սասանված ազդեցությունը արևելքում, Հայաստ կամ Ազգի տերմինները վկայված չեն: Սակայն Պախխուվայի միջադեպի առնչությամբ հիշատակվում են երեք քաղաքներ, որոնցից երկուսը արդեն Թուդխալիյաս III-ի օրոք, ենթադրաբար, պիտի գտնվեին Հայաստայի կազմում: Դրանք են՝ Դուկկաման (որի կառավարիչ Աիսսին ապագայում Պախխուվայի լոբալության երաշխավորներից էր) և Արխիտան՝

<sup>221</sup> Аргутинен 1985: 34с. (նախորդ ուսումնասիրությունների հղումներով):

<sup>222</sup> Аргутинен 1985: 43.

<sup>223</sup> Jahukyan 1961: 359; Մարգարյան 1988: 93:

<sup>224</sup> Վերոհիշյալ տեքստերից համ.2-7-ը տես Գլուխ 2:

Պախխուվայի դաշնակիցը)<sup>225</sup>:

Պախխուվայի և վերինեփրատյան երկրների հետ Առնուվանդաս I-ի կնքած պայմանագրում Դուկլամայի կառավարչի վրա դրված պարտավորությունը կարող է վկայել այն մասին, որ Հայաստանի տարածքը կամ առնվազն որոշ մասը նախորդող շրջանում արդեն պիտի կապված լիներ Խաթթիի հետ, թերևս, Թուրխալիյաս II-ի արևելյան արշավանքների արդյունքում: Թուրխալիյասի արևելյան արշավանքները նկարագրող տեքստում<sup>226</sup>, որի ընթացքում նվաճվեց Իսուվան, թեև Հայասան անվանապես չի հիշատակվում (թերևս, պատճառը նրա „Տարեգրությունների“ պակասավոր բնույթն է), սակայն դա ենթադրելի է: Բանն այն է, որ նրա կառավարման շրջանով թվագրվող երկու տեքստերում կան հստակ ակնարկներ այն մասին, որ Հայաստանի առնվազն որոշ շրջաններ պետք է գտնվեին Խեթական տերության ազդեցության ներքո:

Դրանցից առաջինը իրենից ներկայացնում է Խեթական տերության քաղաքական ազդեցության հյուսիս-արևելյան գոտում գտնվող շրջանների բնակավայրերի հետ զինծառայության մասին կազմված մի փաստաթուղթ-ցուցակ (ավելի ճշգրիտ՝ բնակավայրերի ցուցակ)<sup>227</sup>: Արտոն ծառայության վերցված զինվորները թվարկված են անվանապես և ըստ համապատասխան բնակավայրերի: Վերջիններիս շարքում առնվազն մեկը՝ Էրիսիտան (<sup>URU</sup>Erhita) նույնական է KUB XXIII 72+-ում որպես արևելյում Խաթթիի հանդեպ թշնամական դիրքորոշում ունեցող և Պախխուվայի դաշնակից Արիսիտային (բառասկզբի է-ն կարող է գրչի կողմից օտար անվան թյուրընկալման արդյունքը լինել)<sup>228</sup>: Հաջորդը Տեմիյան է (<sup>URU</sup>Temiya), որը նույնական է մինևույն KUB XXIII 72+-ում որպես պախխուվացիների կողմից ասպատակվող Տիմիյա քաղաքին: Վերջինս իրավացիորեն համարվել է Երզնկայի դաշտում գտնվող Ջիմին բնակավայրի հետ (բյուզանդական աղբյուրների Տիմենոս)<sup>229</sup>: Տիմիյա/Տեմիյան պետք է գտնվեր թե՛ ոչ Հայաստանի կազմում, ապա առնվազն նրա հետ սահմանակցող գոտում:

Այս նույն տեքստում հիշատակվող մեկ այլ բնակավայր նույնպես կարող է վկայել գորահավաքի ընդգրկած տարածքի ձգվածության մասին դեպի արևելք, այն է՝ Եփրատի և Վանա լճի միջև ընկած շրջանը: Խոսքը Մալա (<sup>URU</sup>Sala) անվանումը կրող տեղանվան մասին է, որը խեթական տեքստերում վկայված է, բացի այս տեքստից, ընդամենը մեկ անգամ՝ խեթական օրենքների հ.54 հոդվածում ի թիվս մի շարք նմանատիպ հեռավոր շրջանների, որոնց բնակչությունը ազատված էր հարկերից և

<sup>225</sup> Պախխուվայի ասպտամբությանն առնվող իրադարձությունների և դրա հետ կապված՝ վերահիշյալ քաղաքների մասին տես Քոսյան 2000: 165-174; Kosyan 2006a: 87ff.; Քոսյան 2013ա: 55-56:

<sup>226</sup> Carruba 1977: 137ff.

<sup>227</sup> Տեքստի լիակատար հրատ. տես Schuler von 1965: 142ff.; նաև Քոսյան 2004գ: 472-484 (մեր խնդրին վերաբերող հատվածի գիտական տառադարձումը և մեկնաբանությունները):

<sup>228</sup> Արիսիտա/Էրիսիտայի հայաստական պատկանելությունը կասկած չի հարուցում, քանի որ այլ քաղաքի Ամպրուպի աստվածը հիշատակվում է խեթա-հայաստական մի պայմանագրում՝ հայաստական կողմի աստվածների ցանկում (KUB XXVI 39 24 IV 32, հրատ.՝ Քոսյան 2005):

<sup>229</sup> Хачатурян 1971: 86с.л.; Խաչատրյան 1998: 54; Forlanini, Marazzi 1986: Tav.XVI; Քոսյան 2004ա: 97:

հարկադիր աշխատանքներից<sup>220</sup>: Ժամանակին Գր.Նափանցյանը Սալան համադրել էր հայկական Սլկոնի նախարարական տոմսանվան հետ և, ելնելով դրանից, առաջարկել այն տեղադրել Արածանիի ավերին՝ Մամիկոնյանների Ողական ամրոցի շրջանում<sup>221</sup>: Որ վերոհիշյալ Սալան իսկապես կարող էր գտնվել հետագայի հայկական Տուրուբերան նահանգում կամ դրա անմիջական մերձավորությամբ, կարելի է վկայակոչել մ.թ.ա. XIII դարի ասորեստանյան արքա Մալանեսսար I-ի՝ դեպի «Ուրուատրի երկրներ» կազմակերպած արշավանքը, որի ընթացքում վերջինիս անվանապես հիշատակվող երկրների շարքում հանդես է գալիս <sup>222</sup>Salua-ն (KUR sa-lu-a)<sup>222</sup>:

KUB XXIII 72+-ի ենթատեստում վերոհիշյալ քաղաքների դերը՝ Հայասա կամ Ազզի տերմինների բացակայության պայմաններում, լուրջ հիմք են տալիս ենթադրելու, որ այս ժամանակաշրջանում սույն քաղաքական միավորը դեռևս ձևավորված չէր որպես այդպիսին (կամ, առնվազն, դեռևս այդ անունով չէր ընկալվում խեթերի կողմից): Մրանից կարելի է ենթադրել, որ KUB XXIII 72+-ը հնարավոր է համարել terminus ante quem Հայասայի կազմավորման համար<sup>223</sup>: Այս ենթադրությունը, սակայն, առայժմ այլ փաստարկներով հնարավոր չէ հիմնավորել<sup>224</sup>:

### Տապիզգա քաղաք առաքված՝ խեթական արքայի նամակը (Մաշատիոյուք 96)

Այս նամակն առաքված է Տապիզգա քաղաքում<sup>225</sup> գտնվող ինչ-որ բարձրաստիճան

<sup>220</sup> Սալայի հիշատակությունների և մասնագիտական զբաղանքության մեջ առկա տեսակետների մասին տես RGTC VI/1: 331 և Քոսյան 2004ա: 84: Այս քաղաքների հնարավոր տեղադրության և կարգավիճակի մասին տես Collins 1987: 136ff.: Դատելով այս երկրորդ հիշատակությունից, Սալան կարող էր լինել ոչ թե մի կոնկրետ բնակավայր, այլ ուղղակի մի որոշակի ցեղ, քանի որ գրված է այսպես՝ ERIN<sup>965</sup> Sala "Սալայի ցեղ/տեղավոր/զորք":

<sup>221</sup> Kanawatu 1940: 378ca.; 1948: 135ca.

<sup>222</sup> Ն.Հարությունյանը ասորեստանյան տեքստի այս տեղանունը համադրում էր ժամանակակից Սուլի բնակավայրի հետ և առաջարկում տեղադրել Տիգրիսի վերին ավազանում (Արչուսուտ 1985: 164ca.): Հնարավոր է, այս տեղանուն/ցեղանունը պահպանված լինի նաև միջնադարյան հայկ. աղբյուրների Սալանոթ տեղանվան (Աղձնիքում), ինչպես նաև Մալա լեռինը լեռնանվան մեջ (վերջինից է սկիզբ անում Բաթման գետը): Հայկական աղբյուրների այս երկու տեղանունների լեզվական քննությունը տես Martirosyan 2010: 682:

<sup>223</sup> Դախխուվայի և Արխխուսայի ապստամբությունը, կրանց կողմից դեպի Կումմախա և Բուռվա ուղղված ասպատակիչ արշավանքները, միաժամանակ Դուկկամայի լույսալույսները խաթթիի հանդեպ կարող են վկայել, որ՝ 1) Հայասայի տարածքում առկա էին մի քանի մանր քաղաքական միավորներ, 2) կրանց միջև ակնհայտորեն կային հակամարտության դրսևորումներ, 3) Առևուժանդա ի-ի շրջանում այստեղ ընթացող գործընթացները ի վերջո պիտի հանգեցնեին Հայասա և Ազզի քաղաքական միավորների կազմավորմանը (Քոսյան 2001: 240-242):

<sup>224</sup> Դրա դեմ, թերևս, կարող է վկայել առայժմ հստակորեն չթվագրված և անհայտ բովանդակության մի տեքստի բեկոր (KBo XVI 45), որտեղ անվանապես հիշատակվում է Հայասա: Չուտ հնագրական տեսանկյունից այն մոտավորապես թվագրվում է Քուդխուսիյաս II-ի կառավարումից ավելի վաղ շրջանով (CTH 832 – Koňak 2005.II: 166), այն որակված է որպես "հին խեթական", այն է՝ Հին թագավորության շրջանի տեքստ է համարվում (մ.թ.ա. XVI-XV դդ.):

<sup>225</sup> Տես վերը՝ Գլուխ 2:

պաշտոնայի, որտեղ խեթական արքան հանձնարարում է վերջինիս գորաջոկատներ հավաքագրել Վերին երկրում (թերևս, նաև այլ շրջաններում)<sup>236</sup>, որից հետո նա պիտի գնար Հայասա: Տեքստի շարադրանքից կարելի է ենթադրել, որ խոսքը Հայասայի դեմ կազմակերպվելիք արշավանքի մասին է<sup>237</sup>:

Արտատվոր լայն է գորահավարի աշխարհագրությունը: Այն ընդգրկում է արևելյան Փոքր Ասիայի ընդարձակ շրջաններ.

ա. Բսիտուպիտտա. Վկայված է բազմաթիվ անգամներ որպես քաղաք, որտեղից խեթերը մշտապես զինվորներ էին հավաքագրում<sup>238</sup>: Տեղադրվում է մոտավորապես Խաթթուսասից հյուսիս-արևելք՝ ժամանակակից Ամասիայի և Թուրխալի շրջանում. Տապիզգայից ոչ հեռու (դեպի հյուսիս)<sup>239</sup>:

բ. Բսուվա

գ. Լա(խու)վացանտիյա. Լեոնային Կիլիկիայի կարևոր պաշտամունքային և տնտեսական կենտրոններից մեկը դեռ Աշշուրի անտրոպական գաղութների շրջանից: Առաջարկվել են տարբեր, իրարամերժ տեղադրություններ<sup>240</sup>:

դ. Սակադդունուվա լեռ. Սակավաթիվ վկայությունները հուշում են, որ պիտի գտնվեր Տապիզգայից ոչ շատ հեռու, համենայնդեպս, կասկական գոտում<sup>241</sup>:

ե. Սանախուխտտա. ընկած էր Ամասիայի և Մեքաստիայի միջև, ավելի ճշգրիտ տեղադրությունը հնարավոր չէ<sup>242</sup>:

զ. Տուպացցիյա. Բացի Մաշատիյոյոյի նամակից, վկայված է երեք անգամ, որոնցից մեկում հիշատակվում է Տուվանուվա քաղաքի և Ամմուա լեռան մերձակայքում<sup>243</sup>: Ընդամին, տեղադրությունը Հալիսից հարավ՝ ժաման. Բոր քաղաքի շրջանում, տրամաբանական է:

է. Վերին երկիր. Խաթթիի հյուսիս-արևելքում: Մահմանակից էր Հայասային: Ենթադրաբար, ընդգրկում էր Հալիսի վերին հոսանքներից մինչև Վերին Եփրատի մեծ ոլորանը ընկած շրջանը, իսկ հյուսիսում հասնում էր Գայլ գետի (Լյուկոս) ավազան<sup>244</sup>:

Նամակի մոտավոր թվագրումը Թուրխալիյաս III-ի կառավարման սկզբնական շրջանով, մինչև «շրջանաձև երիխուժում»-ում հիշատակվող՝ Բսուվայի կողմից Եփրատի աջափնյակի նվաճումը, կարելի է հիմնավորել: Նամակում Բսուվան նույնպես հիշատակվում է որպես երկիր, որտեղից նախատեսվում էր զորք հավաքել: Բսուվայի հարձակումից հետո այդպիսի հանձնարարությունը անխմաստ կլիներ: Հարկ

<sup>236</sup> Տեքստում, որոշ վնասվածքների հետևանքով, դժվար է ճշգրտել գորահավարի ճշգրիտ աշխարհագրությունը, այդ մասին տես Քոսյան 2001: 238-239:

<sup>237</sup> Այդպես են ենթադրում որոշ մասնագետներ՝ օրինակ, Houwink ten Cate 1998: 52:

<sup>238</sup> Այդպես է մեկնարանվել նամակի համապատասխան հատվածը (Beal 1992: 88; Houwink ten Cate 1998: 52):

<sup>239</sup> Այս հարցի շուրջ գրավոր վկայությունների համար տես Beal 1992: 80ff.; ըստ նույն աղբյուրների, Բսիտուպիտտայի զինվորների մի խումբ մշտապես տեղակայված էր Տապիզգայում:

<sup>240</sup> RGTC VI/1: 146f.

<sup>241</sup> Օրինակ, Մալաթիայից արևմուտք՝ ժաման. Էլբիստոս քաղաքի մոտ (Lewy 1962: 52; Garelli 1963: 106, 111f.), Մաշատիյոյոյ-Կայսերի ճանապարհի վրա (Goetze 1960: 51f.) և այլն:

<sup>242</sup> Վկայված է նաև Sakdunawa և Sakudunawa ձևերով (KUB II 2 III 1; KUB XXXVIII 12 I 24):

<sup>243</sup> RGTC VI/1: 342.

<sup>244</sup> KUB XIX 18 I 11', 14'. տես Cornelius 1973: 142; Alp 1991: 45.

է նշել, որ Իսուական կրկին անցնում է խեթերի տիրապետության տակ միայն Սուպպիլուլիումաս I-ի կառավարման կեսերին՝ սիրիական առաջին պատերազմի նախօրէին<sup>26</sup>:

Նամակում Հայասայի հիշատակությունը, վերը բերված փաստարկների ճնշման տակ, վկայում է հոգուտ դրա թվագրման KUB XXIII 72+-ից հետո ընկած ժամանակաշրջանով: Այն կարող էր կազմվել Առնուխանդաս I-ի կառավարման վերջին շրջանում կամ Թուլխալիյաս III-ի օրոք: Եթէ նկատի ունենանք, որ, ըստ KBo VI 28+ KUB XXVI 48-ի, Թուլխալիյաս III-ի կառավարման վերջին շրջանում Իսուական ակնհայտորեն Խաթթիի հակառակորդներից էր (Իսուական կողմից Եփրատից արևմուտք Թեզարամայի մի մասի նվաճումը), ապա նամակի առաքման ժամանակը կարող է ավելի սեղմվել:

Եթէ նամակի էտնախորրը իսկապես Հայասայի դեմ կազմակերպվելիք արշավանքն է, ապա, հաշվի առնելով զորահավաքին մասնակցող երկրների և քաղաքների լայն աշխարհագրությունը, կարելի է ենթադրել, որ այն արդեն դրա նախօրէին ձևավորված և զգալի ուժ ներկայացնող քաղաքական միավոր էր, որի դեմ արշավանքը նշանակալից զինուժ էր ակնկալում:

#### «Շրջանաձև ներխուժում» (KUB VI 28 + KUB XXVI 48)

Այս հանրահայտ տեքստը, ըստ համընդհանուր տեսակետի, վերաբերում է Թուլխալիյաս III-ի կառավարման սկզբնական շրջանին<sup>26</sup>: Ըստ դրա, Խաթթիի վրա հարձակվողների թվում էր նաև Ազզին, որը նվաճել էր Վերին երկիրը և սահման դարձրել Սամուխա քաղաքը: Անկասկած, այս տեքստի և Մաշատիյուրի նամակի իրադարձությունները կարող են տեղավորվել միևնույն ռազմաքաղաքական գործընթացում, այն է՝ Խեթական տերության գերիշխանության անկումը Փոքր Ասիայի արևելքում և նորակազմ Հայասայի (= Ազզի, տես ստորև տեքստում) ռազմական ակտիվությունը տարածաշրջանում:

Հայասայի հարձակումը և Սամուխա քաղաքը սահման դարձնելը, թերևս, դժվար է մեկնաբանել բառացիորեն: Մուրսիլիս II-ի՝ Սուպպիլուլիումաս I-ի գործունեության մասին պատմող տեքստում առկա է մի մանրամասն, որ կարող է որոշակիորեն պարզել Հայասայի հարձակման դրդապատճառները (տես հաջորդ տեքստը):

#### «Դիպված 10»

Այստեղ նկարագրվում է խեթական զորքի արշավանքը հայասացիների դեմ, որ զլխավորում էր արքայազն Սուպպիլուլիումասը՝ հիվանդ հոր փոխարեն: Խեթերը արշավանքի ընթացքում երկու անգամ փորձել են հանդիպել հայասացիներին, սակայն ապարդյուն. փոխարենը նրանք բախվել են կասկական ցեղերի միացյալ զորքին:

Տեքստում կորսված է այն երկրի անվանումը, որտեղ ընթանում էին ռազմական

<sup>26</sup> Տես ստորև՝ «Դիպված 25»:

<sup>26</sup> Այդ տեսակետն առաջարկել է Ա.Գյոթցեն (Goetze 1940: 24), որն ընդունվում է բոլոր մասնագետների կողմից:

գործողությունները: Մակայն մինևույն տարածքում կասկերի խոշոր գորամիավորման առկայությունը ստիպում է ենթադրել, որ դա չէր կարող Հայասան լինել, այլ հենց Վերին երկիրը, որը ենթարկվել էր հայասացիների և կասկերի ասպատակությանը: Հայասայի (նաև նրանց հարևան կասկերի) համար Վերին երկիրը կարող էր ծառայել որպես ավարառուական արշավանքների օջեկտ, այլ ոչ տարածքային զավթման առարկա:

Այս տեքստը նախորդ երկուսի հետ նույնպես պիտի կցվի մինևույն իրադարձությունների շղթային, սակայն ժամանակագրորեն ավելի մոտ Մուպպիլուլիումասի կողմից խեթական տարածքների վերանվաճման ժամանակներին:

### “Դիպված 13”

Այստեղ նկարագրվում է Թուլիսայիյաս III-ի և Մուպպիլուլիումասի համատեղ արշավանքը դեպի Հայասա, որը տեղի էր ունեցել Կատիարիյա և Գազգապա քաղաքների կասկական բնակչության նկատմամբ տարած հաղթանակից հետո: Դժբախտաբար, արշավանքի նկարագրությունն ընդհատվում է այն պահին, երբ Հայասայի արքա Կարաննին<sup>207</sup> (LUGAL KUR <sup>100</sup>Hayaša) դուրս է գալիս ճակատամարտի Կումմախա քաղաքի մոտ:

Սա Թուլիսայիյասի կառավարման շրջանում Հայասայի դեմ մղված պատերազմների ընթացքում միակ դեպքն է, երբ խեթերը ռազմական գործողությունները վարում էին հակառակորդի տարածքում: Հավանաբար, հենց այս արշավանքի արդյունքում Հայասան պետք է ընկնէր Խաթթիի գերիշխանության տակ<sup>208</sup>:

Այս արշավանքը պիտք է թվագրվի Թուլիսայիյասի վերջին տարիներով, քանի որ վերոհիշյալ տեքստից հետո նա հիշատակվում է միայն KBo XIV 3-ում<sup>209</sup>, և ենթադրվում է, որ շուտով մահացած պիտի լինէր<sup>210</sup>:

Այս “Դիպվածի” թվագրումը Թուլիսայիյաս III-ի կառավարման վերջին շրջանով որոշակի բարդություններ է առաջ բերում Հայասայի կառավարիչների ժամանակագրության ճշգրտման հարցում: Խնդիրն այն է, որ Խուկկանայի պայմանագրում հիշատակվող Հայասայի կառավարիչ Մարիյան սպանվել էր Խաթթուսասում Թուլիսայիյասի հրամանով (տես Գլուխ 1 և ստորև այս գլխում): Եթե այս Մարիյան և “Թուլիսայիյաս III – Մարիյա+ Հայասայի ժողովուրդ” պայմանագրի

<sup>207</sup> Դեռևս հստակ չէ Հայասայի արքայի անվան ընթերցման հարցը (“Kar-an-ni-ia թե “La-a-an-ni-ia): Այս անվան գրության առաջին նշանի միայն դժվարընթեռնելի հետքերն են առկա: Անվան սկզբում kar սեպանշանի առակայությունը ենթադրում էր Է.Յոսերը: Դրա փոխարեն la-a նշանախմբի ընթերցման հնարավորությունը արձանագրում էր Է.Գ.Գյուտերբոկը (Güterbock 1956: 66 n.37): Հայագիտության մեջ Կարաննին ընթերցումը ընդունելություն է գտել շնորհիվ այդ անվան ստուգաբանական հիմնավորման (Дзягачев 1964: 41с.а.; 1987: 325-326):

<sup>208</sup> Bryce 2005: 149f.

<sup>209</sup> “Դիպված 14” (= Güterbock 1956: 67f.):

<sup>210</sup> Հայասական արշավանքից հետո Թուլիսայիյասը կրկին հիվանդացել էր (“Դիպված 14”, 87). սակայն շուտով՝ ասպրինով (Idem, 22’):

Մարիյան ևույն անձն են, ապա սա կարող է նշանակել, որ հենց Կումսախայի ճակատամարտից մինչև Թուղխալիյասի մահը ընկած ժամանակահատվածի ընթացքում պետք է տեղի ունենային մի շարք իրադարձություններ, այն է՝ ա) Մարիյայի գահակալումը Կարաննիից հետո, բ) Մարիյայի հետ պայմանագրի կնքումը, գ) Մարիյայի կողմից պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների խախտումը կամ պալատական արարողակարգի խախտումը Խաթրուսատում (ըստ Խուկկանայի պայմանագրի՝ նրա մահապատժի պատճառը), դ) Խուկկանայի գահակալումը և նրա հետ պայմանագրի կնքումը (այս վերջին իրադարձությունը, սակայն, կարող էր տեղ գտնել նաև Թուղխալիյասի մահվանից հետո):

Վերոհիշյալի լույսի տակ Մարիյայի կառավարումը Հայաստյում, ամենայն հավանականությամբ, չէր կարող տևական լինել:

#### „Դիպված 40“

Այս խիստ վնասված բեկորը, ըստ Հ.Գ.Գյուտերբոկի, կարող է առնչվել ևույն իրադարձությանը, ինչը հիշատակվում է նախորդ տեքստում („Դիպված 13“)<sup>251</sup>: Շերեռնելի հատվածները („Հայասայի [քշևամուն] ևս հաղթեց“, „ևս [քշևամին - Ա.Ք.] բազմությամբ [մահացավ]“, „Հայասա երկիրը“, „ղեպի Վերին երկիր“) վկայում են, թերևս, մինչև Կումսախայի ճակատամարտն ընկած շրջանի մասին:

#### „Դիպված 25“

Ազարագրվում է Բուսվա փախած խեթական բնակչության վերադարձները իրենց բնակավայրերը: Այնուհետև հիշատակվում է Օուխասպա քաղաքի դեմ արշավանքը, որի ընթացքում վերջինս ավերվում և հրդեհվում է: Այստեղ հիշատակվում է փախստականների գնալը Հայասա և արշավանքը դեպի այդ երկիր. նշվում է, որ այն տեղի է ունեցել ձմռանը: Արշավանքն ավարտվում է փախստականների և նրանց գույքի վերադարձնելով:

Այս իրադարձությունը, հաշվի առնելով բեկորի դիրքը „ՍԳ“-ում, տեղի է ունեցել Սուպպիլուլիումասի սիրիական պատերազմից քիչ առաջ<sup>252</sup>: Տեքստից դժվար է միանշանակ որոշել ինչպես Օուխասպայի տեղադրությունը (Բուսվայում թե Հայասայում)<sup>253</sup>, այնպես էլ Հայասա փախածների և Բուսվայում հաստատված խեթական բնակչության նույնությունը: Այստեղ կարևորն այն է, որ տվյալ պահին Հայասան մի երկիր էր, որտեղ կարող էր ապաստանել Խաթթիի բնակչությունը:

Այս իրադարձությունը, թերևս, կարող է զուգահեռվել Խուկկանայի պայմանագրի

<sup>251</sup> Güterbock 1956: 49.

<sup>252</sup> Güterbock, 1956: 46. Նրա կարծիքով, այս տեքստն առնչվում է այն ևույն իրադարձությանը, որ հիշատակվում է Սուպպիլուլիումասա I-ի՝ Միտտանիի արքա Շաուտիվազայի հետ կնքված պայմանագրում (այն է՝ արքայի հոր օրոք Բուսվա փախած խեթական բնակչության վերադարձը, տես Գյուլսի 2 և 3):

<sup>253</sup> Այս տեքստը <sup>ORU</sup>Zuhhapa և <sup>ORR,SAC</sup>Laha տեղանունների միակ վկայությունն է խեթական տեքստերում (վերջինս, թերևս, պետք է գտնվեր Հայասայում կամ դրա սահմանամերձ գոտում):

վերջին տողերին (III 81<sup>a</sup>-86<sup>a</sup>) և պայմանականորեն դրվել նրա կառավարման ավարտական փուլում: Ամենայն հավանականությամբ, Խուկկանայի կառավարումը Հայաստում պետք է ավարտվեր հենց „Ղիպված 25“-ում նկարագրվող իրադարձությունների շրջանում (այդ մասին տես ստորև „Պայմանագրերի բնույթը և պատմական էտնախորքը“ բաժնում)<sup>254</sup>:

### 8. „Ղիպված 39“

Այս տեքստի տեղը Սուպպիլիուլիումաս I-ի գործունեության ընթացքում, հետևաբար, նաև ժամանակագրությունը, դեռևս հստակ չէ: Լ.Գ.Գյուտերբոկն առաջարկում էր այն թվագրել արքայի կառավարման ուշ շրջանով: Տեքստի նախորդ՝ երկրորդ սյունակում նկարագրվում է Սուպպիլիուլիումասի արշավանքը Միտտանիի դեմ<sup>255</sup>, իսկ երրորդում՝ Հայաստանի դեմ պատերազմը: Բնական է ենթադրել, որ վերջինս պիտի ընկնի մինևույն ժամանակահատվածի մեջ (սիրիական առաջին պատերազմի կամ եույնիսկ երկրորդի շրջանը)<sup>256</sup>:

Այստեղ, վնասված ենթատեքստում, հիշատակվում են „[...]ակուլլա քաղաքը“, „արքայի որդին“, „Հայասա երկիրը“ և, ըստ երևույթին, Հայասայից բերված ռազմավարը:

Տեքստի թվագրման, նաև Հայասայի և Խեթական տերության փոխհարաբերությունների մեկնաբանման առումով կարևոր տեղեկություն է պահպանել Սուպպիլիուլիումասի նամակը եգիպտական փարավոն Էյեին (Թուրանխամոնիև հաջորդած փարավոնը)<sup>257</sup>, որը թվագրվում է արքայի կառավարման վերջին տարիներով՝ մոտ. մ.թ.ա.1324թ.<sup>258</sup>: Այն արքայի պատասխանն է Էյեի նամակին, որտեղ վերջինս փորձում է Սուպպիլիուլիումասին համոզել դեսյի Եգիպտոս ուղևորվող խեթական արքայազն Ցանենացայի սպանությանը իր անմասնակից լինելու մեջ: Այստեղ Սուպպիլիուլիումասը թվարկում է իր նվաճումները Փոքր Ասիայում, Հայասայում, Ազիում և Սիրիայում (Միտտանի, Կարգամիս):

Հայասայի հիշատակումը արքայի մահվանից մեկ-երկու տարի առաջ լրացուցիչ հիմք է տալիս ենթադրելու, որ նրա արշավանքը Հայասա (տես վերը՝ „Ղիպված 25“) պիտի հաջողությամբ ավարտվեր:

### Եզրակացություններ

Ստորև ներկայացվող եզրակացությունները հենվում են վերոհիշյալ յոթ տեքստերի վրա և, նկատի ունենալով դրանց պահպանած տվյալների սակավությունը, կոր

<sup>254</sup> Հայասայում Խուկկանայի կառավարման հանգամանքների մասին տես Kosyan 2013-2014:

<sup>255</sup> „Ղիպված 38“ (= Güterbock 1956: 112f.):

<sup>256</sup> Հրատարակիչը „Ղիպված 39“-ը և „Ղիպված 38“-ը նմանեցնում է „Ղիպված 41“-ին (Güterbock 1956: 49), առաջին երկուսը գրված են մինևույն բեկորի վրա:

<sup>257</sup> KUB XIX 20 (հրատ.՝ Forrer 1926: 28ff.; Hagenbochner 1989: Nr.208, 304ff.; տեքստի վերջին հրատարակությունը կցաբեկոր KBo XII 23-ի հետ միասին տես՝ Van den Hout 1994: 60ff.

<sup>258</sup> Van den Hout 1994: 85ff.



նյութերի ի հայտ գալու դեպքում, կարող են որոշակիորեն ճշգրտվել:

1) Առնուվանդաս I-ի օրոք Հայաստյի տարածքում քաղաքական միավորման գործընթացը հիմնականում ավարտվել էր. այն արդեն առկա է Թուղխալիյաս III-ի շրջանում:

Այս եզրակացությունը թեականության որոշակի տոկոս է պարունակում՝ կապված Հայասա և Ազգի տերմինների հարաբերակցության խնդրի հետ: Եթե ավելի ուշ՝ Մուրսիլիս II-ի օրոք դրանք կիրառվում են միևնույն քաղաքական միավորը նշելու համար<sup>299</sup>, ապա դժվար է եույնը պեղել Մուպպիլուլիումաս I-ի շրջանի համար<sup>300</sup>:

2) Թուղխալիյաս III-ի օրոք Խաթթիի և Հայասայի փոխհարաբերությունները կարելի է բաժանել երկու փուլի.

ա) Համընդհանուր հարձակումների, համաճարակի և սուլի հետևանքով համեմատաբար փոքր տարածքում պարփակված Խաթթիի հյուսիս-արևելյան շրջանները (Վերին երկիր) պարբերաբար ենթարկվում էին հայասացիների և կասկերի ասպատակություններին: Ժամանակ առ ժամանակ խեթերը պատժիչ արշավանքներ էին կազմակերպում:

բ) Փոքր Ասիայում կորցրած տարածքների վերանվաճումից հետո կամ այդ ընթացքում Խաթթիի անցնում է ավելի հիմնավոր գործողությունների, մուտք գործելով Հայասայի տարածք: Սա կարող է համարվել Հայասայի՝ Խաթթիի գերիշխանության տակ ընկնելու ժամանակաշրջանը:

3) Մուպպիլուլիումաս I-ի օրոք Հայասան միառժամանակ պիտի գտնվեր Խաթթիի գերիշխանության տակ, բացառությամբ արքայի կատավարման վերջին տարիներին դեպի Հայասա ուղղված արշավանքին նախորդող մի ինչ-որ ժամանակահատվածի: Այս վիճակը պիտի շարունակվեր ընդհուպ մինչև Մուպպիլուլիումասի մահը, երբ Հայասան Աննիյասի օրոք կրկին դուրս է գալիս Խեթական տերության ազդեցության տակից և, ինչպես «շրջանաձև ներխուժման» փուլում, սկսում է ասպատակել խեթահպատակ շրջանները<sup>301</sup>:

### **ԽԵԹԱ-ՀԱՅԱՍՏԱԿԱՆ ԳԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԲՆՈՒՑԹՇ ԵՎ ԳԱՏՄԱԿԱՆ ԵՏԱՍՈՐԹՇ**

<sup>299</sup> Այդ մասին տես՝ Garstang and Gurney 1959: 36f.:

<sup>300</sup> Այնուամենայնիվ, որոշ հիմքեր կան ենթադրելու, որ արդեն Թուղխալիյաս III-ի շրջանում «Հայասան» և «Ազգին» նույնացվում էին: Այսպես, խեթա-հայասական փոխհարաբերություններն արտացոլող տեքստերը (տես վերը՝ Գլուխ 2) հիշատակում են միայն «Հայասան», իսկ «շրջանաձև ներխուժման» մասին տեքստը՝ «Ազգին»: Սակայն դրանք նույնացման մասին ենթադրությունը, թերևս, վաղ է, քանի որ վերջին տեքստը գալիս է շատ ուշ շրջանից՝ Խաթթուսիլիս III-ից, երբ «Հայասա» տերմինը այլևս չէր կիրառվում: Խաթթուսիլիս III-ի և Թուղխալիյաս IV-ի տեքստերը հիշատակում են միայն «Ազգին» (IBoT I 32; KUB XXXVIII 6; KUB XXVI 12; KUB XLII 69 [Siegelova 1986: 455ff.]; Kuzaklı, Nr.14 [Wilhelm 1995: 25ff.] և այլն):

<sup>301</sup> Այս ժամանակահատվածում Հայասայի անկախ կարգավիճակի մասին հետևությանը կարելի է հանգել Մուրսիլիս II-ի «Տարեգրությունների» յոթերորդ տարվա իրադարձությունների հիման վրա (Götze 1933: 95f.):

Նեթական տերության և Հայասայի միջև կնքված երկու պայմանագրերն էլ պատկանում են դիվանագիտական դաշտում՝ պետությունների փոխհարաբերությունները կարգավորող պայմանագրերի ոչ-պարիտետային տիպին<sup>262</sup>: Այդպիսի պայմանագրերը կոչվում են խեթ. *iñial* («պայմանագիր») կամ *le/ingaiš* («երդում», տեքստում գրված է գաղափարով եղանակով՝ *NI-İS DINGIR*<sup>263</sup> «աստվածային երդում»)(արանց արքայերեն համարժեքն է *rikiltu/rikistu/rikisu* և *māmītu*):

Միայն մեկ բացառությամբ<sup>264</sup>, ներկայումս պահպանված պայմանագրերի տեքստերն իրենցից ներկայացնում են բնօրինակների «աշխատանքային օրինակները», գրված կավե սալիկների վրա. բնօրինակները գրվում էին մետաղյա տախտակների վրա (արծաթե կամ բրոնզե): Դրանք կազմվում էին խեթական արքունիքում և առաքվում կախյալ երկիր ի գիտություն վերջինիս կառավարչի կամ արքայի: Պայմանագրի կետերից որևէ մեկի խախտումը դիտվում էր որպես թշնամական գործողություն խեթական արքայի հանդեպ:

Պայմանագրերի կառուցվածքն այսպիսին է.

ա) Ներածական/առաջարան (պրեամբուլա), որտեղ նշվում է խեթական արքայի անունը և նրա տիտղոսները: Սովորաբար կախյալ արքան/կառավարիչը անվանապես չի հիշատակվում: Հայասական երկու պայմանագրերը այս առումով տարբերվում են մյուս նմանօրինակ պայմանագրերից:

բ) Պատմական ներածական, որտեղ ներկայացվում է նախնինում Խաթթիի հետ տվյալ երկրի ունեցած փոխհարաբերությունների պատմությունը, վերջինիս կառավարչի նախնիների և հենց իր նկատմամբ խեթական արքայի կամ նրա նախնիների հարաբերությունները: Հատուկ ընդգծվում է կախյալ կառավարչի կամ նրա նախնիների նկատմամբ խեթական արքայի բարի վերաբերմունքը և կախյալ կարգավիճակից ակնկալվող օգուտները:

գ) Կախյալ կարգավիճակից բխող պարտավորությունների թվարկումը:

դ) Պայմանագրի տեքստի պահպանման և օգտագործման կարգը: Պայմանագրերում բազմիցս նշվում է, որ այն պետք է պահպանության հանձնվի կախյալ երկրի գլխավոր աստծո տաճարում և պարբերաբար ընթերցվի նրա կառավարչի համար, որպեսզի նա չմոռանա իր պարտավորությունները<sup>264</sup>:

ե) Պայմանագրի կնքմանը վկա աստվածների ցանկը, որտեղ ներկայացված են երկու կողմերի աստվածները:

զ) Անեծքի բանաձևը, որտեղ կողմերը (բնականաբար, առաջին հերթին կախյալ

<sup>262</sup> Հայագիտական հրատարակություններում այս փաստն արձանագրված է Գր.Ղափանցյանի մոտ (*Katantsev* 1948: 115с.л.): խեթական տերության և կախյալ երկրների միջև կնքված ոչ-պարիտետային պայմանագրերի մասին տես, մասնավորապես, *Korosec* 1931: 65ff.; *Beckman* 2006: 282ff.:

<sup>263</sup> Պահպանվել է բնագրի տեսքով միայն մեկ պայմանագիր՝ կնքված մ.թ.ա. XIII դարի երկրորդ կեսին խեթական արքա Թուդիալիյաս IV-ի և Թարխտուսասասայի քույր-թագավորության արքա Կուրուստայի միջև (նրառ.՝ *Otzen* 1988):

<sup>264</sup> Օրինակ, Վիլուսայի արքա Ալաբաստուսի համար ստեղծված պայմանագրում նշվում է, որ տարեկան երեք անգամ նրա առջև պետք է այն ընթերցեն, որպեսզի նա չմոռանա իր պարտավորությունները (*Beckman* 1996: § 13):

կառավարիչը) երզվում են հավատարիմ մնալ վերջված պարտավորություններին:

Պայմանագրերում Հայասան հանդես է գալիս որպես ոչ իրավահավասար կողմ: Այս հանգամանքը հստակ արտացոլված է երկու պայմանագրերի գրեթե բոլոր հատվածներում, որտեղ ակնառու է հայասական կողմի վերջրած (ավելի ճշգրիտ՝ պարտադրված) պարտականությունների բացահայտ գերակշռությունը խեթականի հանդեպ: Ըստ էության, խեթական արքայի պարտավորությունները հանգում են միայն Նուկկանայի անձի և ընտանիքի անդամների պաշտպանությանը (§§ 5-6): Բացի այս հատվածից, տեքստերում ուղղակի բացակայում է փոխադարձության սկզբունքը:

Նեթական կողմի պայմանները, որոնք առկա են երկու պայմանագրերում, լավ զուգահեռվում են Նաթթիի և կախյալ պետությունների միջև կնքված մյուս պայմանագրերին (տես վերը)<sup>265</sup>: Դրանք հիմնականում հանգում են հետևյալ կետերին, որոնք ամենուրեք կրկնվում են՝

1) հավատարմություն արքայի անձի, արքայական ընտանիքի անդամների, նրա սերնդի և Նաթթիի հանդեպ<sup>266</sup>:

2) պատերազմի դեպքում ռազմական աջակցություն. գորք տրամադրելուց բացի, Նուկկանան պարտավոր էր նաև պատերազմի ժամանակ հանդես գալ որպես ստաջապահ ուժ (§ 12):

3) երրորդ կողմի հետ ինքնուրույն հարաբերություններ չունենալ: Այս կետը հատուկ շեշտվում է բոլոր ոչ-պարիտետային պայմանագրերում<sup>267</sup>:

Քննարկվող պայմանագրերն ունեն մեկ տարբերիչ առանձնահատկություն: Նուկկանայի պայմանագիրը կնքված է իր պետությունը լիարժեք ներկայացնող իրավական անձի (Նուկկանա), երկրորդը՝ հավաքական կողմի (Մարիյա և «Հայասայի ժողովուրդ») հետ: Վերջինս իր բնույթով ստորադասվում է Նուկկանայի պայմանագրի և զուգահեռ է այս տարածաշրջանի երկրների հետ կնքված պայմանագրերին՝ KUB XXIII 72+, KUB XXVI 29+KUB XXXI 55<sup>268</sup>, Առնուվանդաս I-ի կապական պայմանագրերը<sup>269</sup>: Այստեղ խեթական արքայի հետ պայմանագիր կերտները տոհմային ավագանու ներկայացուցիչներն են (LÜ<sup>265</sup> «մարդիկ/ժողովուրդ», LÜ<sup>265</sup> ŠU.GI «ավագներ») <sup>270</sup>:

<sup>265</sup> Պայմանագրերի հրատարակությունները տես՝ Weidner 1923; Friedrich 1926-1930; Beckman 1996; Wilhelm 2005; Klinger 2005a:

<sup>266</sup> Երբևէ այս կետը, ուղղակի ձևակերպումից բացի, լրացվում է արքայի անձի մասին գանձազան քշնամական խոսքեր չսելու, այդ մասին նրան տեղեկացնելու պահանջով (տես §§ 15,18):

<sup>267</sup> Այս կետը հատկապես շեշտվում է բոլոր պայմանագրերում:

<sup>268</sup> CTH 144 ((հրատարակվել է հատվածաբար՝ Klengel 1965: 226ff. [հատված.]; Otten 1967; De Martino 1996: 73ff.)): Լշեք, սակայն, որ այս պայմանագրի տեղայնացման հարցում չկա միասնական կարծիք: Բանն այն է, որ պայմանագիրը կնքված է Ուրա քաղաքի հետ, սակայն խեթական տեքստերը այս անվանումով երկու տարբեր քաղաքներ են տարբերակում: Առաջինը հայասական Ուրան է, մյուսը գտնվում էր Դաշտային Կիլիկիայում (տեքստային վկայությունների և պայմանագրի տեղայնացման համար տես RGTC VI/1: 457f.; RGTC VI/2: 178; Քոսյան 2004ա: 100-101, 116-117):

<sup>269</sup> KBo VIII 35 (= CTH 139 [հրատ.՝ Schuler von 1965: 109ff.]); KUB XXVI 19, KUB XXVI 20 + KBo XXII 132 (= CTH 140 [հրատ.՝ idem: 130ff.]) և այլն:

<sup>270</sup> Նեթական տեքստն հետ ելանված երկրների փոխադարձություններում տոհմային

Խուկկանայի պայմանագիրը, սակայն, մի շարք կետերով էականորեն տարբերվում է հետագայի և հատկապես մ.թ.ա. XIII դարում խեթական արքաների կերպով կախյալ պայմանագրերից: Այդ է պատճառը, որ, մասնագետների կարծիքով, Խուկկանայի պայմանագիրը Նեթական տերության դիվանագիտական պրակտիկայում անցումային փուլ է ներկայացնում. միայն քիչ ավելի ուշ. Սուպպիլուլիումասի սիրիական արշավներից հետո է ձևավորվում պայմանագրերի դասական տիպը<sup>271</sup>:

Տարբերությունները մյուս պայմանագրերից հանգում են հետևյալին.

ա) Պայմանագրի ներածականում ուղղակի եզվում է խեթական արքայի կողմից Խուկկանային Հայաստան կառավարիչ եղանակելու մասին:

բ) Բացակայում է նաև այսպես կոչված «Պատմական ներածականը»:

գ) Պայմանագրին վկա աստվածների ցուցակը դրված է մի շարք պարտավորություններից հետո, ինչը հատուկ չէ մյուս պայմանագրերին:

դ) Բացի այդ, աստվածների թվարկումից հետո կրկին շարադրված են այլ պարտավորություններ, իսկ այնուհետև հիշատակվում է Խուկկանայի նախորդի՝ Մարիայի միջադեպը, որն ըստ էության պատմական ներածականի դեր է կատարում<sup>272</sup>: Փաստացի, պայմանագրի տեքստում Նեթական տերության և Հայաստանի միջև նախկինում գոյություն ունեցած փոխհարաբերությունների վերաբերյալ որևէ այլ տեղեկություն չկա:

ե) Իսկ ինչ վերաբերում է արքայատոհմի իգական սեռի ներկայացուցիչների հետ սեռական փոխհարաբերությունների խնդրին, ապա այս պահը խեթական որևէ պայմանագրում չի հանդիպում:

զ) Էլ ավելի տարօրինակ է Խուկկանայի պայմանագրի ավարտական հատվածը. որտեղ Սուպպիլուլիումասը պահանջում է Խուկկանայից վերադարձնել խեթական երկրի բնակիչներին, ովքեր այդ պահին գտնվում էին Հայաստանում:

է) Պայմանագրում բացակայում է դրա տեքստի պահպանության մասին հատվածը. իսկ անեծքի բանաձևը դրված է աստվածների ցանկից անմիջապես հետո, ընդ որում աստվածների զայրույթը և պատիժը հիշատակվում է մի քանի անգամ՝ Խուկկանայի առջև դրված տարբեր պարտավորություններից հետո: Գրեթե կասկած չկա, որ դրանցից առաջինը տեքստում չի էլ եղել, քանի որ պայմանագրի վերջին մասը, որտեղ այն ակնկալվում է, լուրջ վնասվածքների չուկի:

Վերահիշյալ առանձնահատկությունները թույլ են տալիս ենթադրելու, որ, բացի կախյալ պայմանագրերի պրակտիկայում նախադեպերի բացակայությունից (խոսքը

ավագանու դերի մասին տես՝ Klengel 1965:

<sup>271</sup> Դեռ Է.Ֆորերն էր նկատել, որ, ի տարբերություն մյուս բոլոր պայմանագրերի, այստեղ վկա-աստվածների ցուցակը ոչ թե եզրափակում է պայմանագիրը, այլ դրված է առաջին մասում (Forrer 1931: 9): Դա վերաբերում է առաջին հերթին Սուպպիլուլիումասի՝ ավելի ուշ շրջանի (սիրիական պատերազմներից հետո) կերպով պայմանագրերին (CTH 51 – «Միտտանիի արքա Շատտիվագա», CTH 53 – «Նուխաշշիի արքա Տևտոն», CTH 49 – «Ամուրրուի արքա Ազիբու»):

<sup>272</sup> Մարիայի մահապատժի պատճառի կասկածիցույժման մասնագիտական հրատարակություններում շրջանառվում է «պալատական անեկզոտ» տերմինը, քանի որ Հայաստանի արքայի սպանության նման հիմնավորումը լուրջ չի ընդունվում (Dardano 2007: 8f. [այլ հեղինակներին հղումներով]):

նման պայմանագրերի ստեղծման հաստատված, նորմավորված սկզբունքների մասին է), մեր պարագայում կարող էին տեղ գտնել ինչ-ինչ սուբյեկտիվ գործոններ, ինչի մասին տես ստորև:

Ավարտելով „Սուպախլուլիումաս – Նուկեանա“ պայմանագրի բնույթի խնդիրը, նշենք հայազիտության մեջ վաղուց ի վեր տեղ գտած մի տեսակետ<sup>273</sup>, որը ոչ-պարիտետային պայմանագրերի վերաբերյալ վերոհիշյալի լույսի ներքո որևէ կերպ հնարավոր չէ հիմնավորել: Ըստ Լ.Ադոնցի, սա պայմանագիր է դաշնակցի, այլ ոչ ավատատուի հետ<sup>274</sup>: Այս տեսակետը հետագայում կասկածի տակ առնվեց<sup>275</sup>:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ պետք է տարբերակել կոնկրետ քաղաքական իրավիճակը պայմանագրի բնույթից: Եթե Հայասան ժամանակ առ ժամանակ կարող էր դուրս գալ Նեբական տերության վերահսկողության տակից և գործել ինքնուրույն, ապա մեթոդաբանորեն սխալ է այդ փաստից ելնելով վիճարկել Պայմանագրի պարիտետային բնույթը, ինչը ակնհայտ է:

### ՀԱՅԱՍՏԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՂՆԵՐԸ

Քննարկվող պայմանագրերում և խեթական այլ տեքստերում Հայասայի և Ազգիի կառավարիչների փոխհարաբերակցության խնդիրը ներկայումս, կապված աղբյուրների բնույթի և Հայասայի ու Ազգիի հարաբերակցության հարցում առկա տարամետ մոտեցումների հետ, բավարար չափով ուսումնասիրված չէ: Հարցին առնչվող հետազոտություններում առաջարկվել են երկու մոտեցումներ, որոնք հիմնականում հենվում են այն կանխավարկածի վրա, որ Հայասան և Ազգին ըստ էության միևնույն քաղաքական միավորի տարբեր անվանումներն են եղել<sup>276</sup>: Այստեղից բխում է, որ այն բոլոր անձանց, ովքեր խեթական աղբյուրներում հիշատակվում են որպես այդ երկրների կառավարիչներ, անհրաժեշտ է տեղավորել մեկ ուղղահայաց սանդղակի մեջ: Իրականում, չկա որևէ հիմնավոր կողմ, որը թույլ կտա վստահաբար ենթադրելու այս կամ այն կառավարչի կոնկրետ պատկանելությունը Հայասային կամ Ազգիին:

Որ այս երկու անվանումները չէին կարող նշանակել միևնույն տարածքը և, համապատասխանաբար, միևնույն քաղաքական միավորը, ակնհայտ է Ասվածից

<sup>273</sup> Ադոնց 1972: 38:

<sup>274</sup> “Հակառակ Սուպախլուլիումայի վերամարտ տոնին և մի քիչ պաշտոնական շեշտին, իրականում նա Հուկկանայի հետ վարվում է ինչպես հավատարր հավատարի հետ: Պայմանագրում չկա ոչինչ, որ խոսեր խեթական քաղաքացիների գերադասության օգտին: Ոչ մի կետ նրան չի վերապահում որևէ նախապատվություն կամ առավելություն, ամեն ինչ փոխադարձ է՝ Բարեկամություն, ռազմական աջակցություն, քչեամանքից հրաժարում, երզման հավատարմություն, պայմանագրին հավատարմություն” Ադոնց 1972: 38):

<sup>275</sup> Մակայն իսկ հեղինակը իր ավելի վաղ աշխատության մեջ իրավացիորեն նշում էր, որ “... դաշնագիրը կրում է միակողմանի բնույթ: Փաստորեն այն հաղթանակած և պարտված պետությունների միջև կնքված մի փաստաթուղթ է՝ Ղա վավերագիր է Հայասայի կախյալ վիճակի մասին” (Պալատյան 1998: 68):

<sup>276</sup> Հայասայի և Ազգիի հարաբերակցության մասին տես վերը՝ “Հայասան և Ազգին Քուդյախլիաս III-ի և Սուպախլուլիումաս I-ի օրոք” բաժնում:

պետք է ենթադրել, որ աղբյուրներից անվանապես մեզ հայտնի Հայաստայի և Ազգիի կառավարիչները կարող էին ներկայացնել ոչ միևնույն միավորը (կամ Հայաստան կամ Ազգին): Բանն այն է, որ ընդհուպ մինչև Սուպպիլուլիումաս I-ի ժամանակները խեթական տեքստերին հայտնի չէր Ազգի աշխարհագրական անվանումը. կիրառվում էր միայն Հայաստան: Մկսած Մուրսիլիս II-ից հայտնվում է Ազգին, սակայն Հայաստան դեռևս շարունակում է կիրառվել Ազգիի հետ զուգահեռ, իսկ հետագայում սրանցից առաջինը ընդհանրապես դուրս է մղվում. այսուհետև կիրառվում է միայն Ազգին:

Հայաստայի և Ազգիի կառավարիչների անունները պահպանվել են հետևյալ խեթական տեքստերում.

Սուպպիլուլիումասի գործունեությունը – „Դիպված 13“ (D IV 43)

„Թուդխալիյաս III – Մարիյա + Հայաստայի ժողովուրդ“ պայմանագիրը

„Սուպպիլուլիումաս – Խուկկանա“ պայմանագիրը

Մուրսիլիս II-ի տարեգրությունները

HT 85

KBo L 49

KUB XVIII 2

Այս ոչ մեծ խմբում ներկայացված են ընդամենը չորս անուններ՝ Կարաննի (կամ Լաննի), Մարիյա, Խուկկանա և Աննիյա:

Մրանցից միայն Կարաննիի կառավարման ժամանակն է հստակ, այն է՝ Թուդխալիյաս III-ի կառավարման վերջին շրջանը, երբ արքան գահակից Սուպպիլուլիումասի հետ միասին ճակատամարտ է տալիս Կումմախայի մոտ (տես ստորև): Ինչ վերաբերում է Մարիյային, ապա նա հանդես է գալիս որպես խեթական անանուն արքայի հետ կնքված պայմանագրի մի կողմը, և ում անձը, հաշվի առնելով Սուպպիլուլիումասի և Խուկկանայի պայմանագրում հիշատակվող և Սուպպիլուլիումասի հոր (այն է Թուդխալիյաս III-ը) կողմից Խաթթուսասում մահապատժի ենթարկված Մարիյա անունը կրող անձի հետ համադրումը, պետք է նույնական լինեին: Մրանից կարծես բխում է, որ Մարիյան Թուդխալիյասի ժամանակակիցն է եղել, ում կյանքն ավարտվել է դեռևս նրա կենդանության օրոք՝ այսինքն Կումմախայի ճակատամարտից քիչ առաջ կամ հետո:

Սակայն այնուհետև ծագում են լուրջ խնդիրներ կապված արևելքում Սուպպիլուլիումասի ռազմաքաղաքական ձեռնարկումների ժամանակագրության հետորոնք պահպանվել են „ՍԳ“-ի մասը կազմող տեքստերում: Բացառությամբ առաջին երկու աղյուսակների, մյուսների տեղը Սուպպիլուլիումասի կառավարման ժամանակագրության մեջ շատ դեպքերում պայմանական է և հստակ չէ:

Առաջին հերթին դա վերաբերում է „Դիպված 13“-ից հետո մինչև „Դիպված 25“-ն ընկած ժամանակահատվածին, այն է Կումմախայի ճակատամարտից մինչև Սուպպիլուլիումասի կողմից ղեպի Իսուվա և այնտեղից էլ Հայաստա արշավանքը, որի նպատակը այստեղ փախած Խաթթիի բնակչության վերադարձնելն էր: Հենց այս ժամանակահատվածում, ըստ գաղափարի, պետք է տեղադրել 1. Մարիյայի կառավարումը, 2. նրա մահապատժը Խաթթուսասում և, ամենայն հավանականությամբ, 3. Խուկկանայի պայմանագիրը: Ստորև կտեսնենք նաև, որ հավանաբար, վերոհիշյալ իրադարձություններին կարելի է հավելել նաև Խուկկանայի

կատավարման ավարտը:

Առաջին ժամանակահատվածի սկիզբը, անկասկած, պետք է թվագրվի Թուղխալիյաս III-ի կատավարման վերջին տարիներով, այն է 1350-1345թթ. միջև: Ինչ վերաբերում է դրա ավարտին, ապա այն, ամենայն հավանականությամբ, պետք է տեղի ունենար ինչ-որ մի պահ ղեպի Իսուվա Սուպալիուլիումասի կազմակերպած արշավանքից առաջ կամ ընթացքում, նախորդելով Սուպալիուլիումասի սիրիական առաջին արշավանքին<sup>277</sup>: Այսպիսով, Խուկկանայի կատավարումը կարող էր համեմատաբար կարճատև լինել, սկսվելով Թուղխալիյաս III-ի վերջին շրջանում և ավարտվելով սիրիական արշավանքի նախօրեին, այն է Սուպալիուլիումասի գործունեության այն ժամանակահատվածով, որն ընկնում է „Դիպված 25“-ի շրջանում: Այսպիսի առաջարկը թեև առայժմ ամուր հիմքեր չունի, սակայն այդ մասին կարելի է վկայակոչել Խուկկանայի պայմանագրի վերջում առկա խնթական արքայի պահանջը Խաթթիի փախստականների վերադարձնելու մասին<sup>278</sup>:

Վերոհիշյալ „Դիպված 25“-ում հիշատակվում է ղեպի Իսուվա կազմակերպված արշավանքը, որի նպատակն էր ղեպի այստեղ փախած Խաթթիի բնակչության վերադարձը<sup>279</sup>: Հատկանշական է, որ տեքստում նշվում է Իսուվայից Հայասա ուղղված հավելյալ արշավանքը և այնտեղից խնթական փախստական բնակչության վերադարձնելը: Ամենայն հավանականությամբ, Խուկկանան կամ չէր կատարել խնթական արքայի պահանջը կամ այդ պահին նա արդեն զրկվել էր իր իշխանությունից:

Հաջորդ խնդիրը առայժմ չթվագրված „Դիպված 39“-ը և „Դիպված 40“-ն են, որոնց խիստ վնասված տողերում շարադրվում են Հայասայի դեմ իրականացված արշավանքի որոշ մանրամասեր: ՀԳյուտերբոկը „Դիպված 39“-ը պայմանականորեն տեղադրում էր Սուպալիուլիումասի սիրիական երկրորդ պատերազմի շրջանով, ինչ վերաբերում է „40“-ին, ապա նա առաջարկում էր այն կցել կամ „Դիպված 39“-ին կամ „Դիպված 13“-ին<sup>280</sup>:

Առայժմ այս հարցում որևէ նոր առաջարկ կատարելը հնարավոր չէ երկու բեկորների վատ պահպանվածության պատճառով, թեև խիստ նախնական ենթադրություն կարելի է կատարել, դրանք տեղադրելով մինևույն „Դիպված 25“-ի շրջանով: Նմանապես առայժմ պետք է ձեռնպահ մնալ նաև Սուպալիուլիումասի հայասական արշավանքների համատեքստում „Մաշատիյոյուք 96“ նամակի ժամանակագրման հարցում: Դատելով այս նամակում հիշատակվող իրադարձությունների տրամաբանությունից (Խաթթիի հյուսիսային, արևելյան և հարավ-արևելյան շրջաններից, այդ թվում նաև Իսուվայում օգնական զորքերի հավաքագրման ղեկարգությունները, ղեպի Հայասա կազմակերպվելիք արշավանքը, թերևս, այդ զորքերի օգնությամբ), նամակը կարող է թվագրվել Առուվանդաս I-ի

<sup>277</sup> Դեպի Իսուվա արշավանքի համար տես, օրինակ, Bryce 2005: 156, նաև Գլուխ 2:

<sup>278</sup> 24 II 84') [k]u-šš ŠA KUR 1305<sup>1306</sup>Ha-at-ti NAM.RA<sup>1307A</sup> pa-ra-a Ú-Ul pa-[a-i na-at A-NA ZAG<sup>1308A</sup>], 85') [š]-an-na-a-i na-an zi-ik \*Hu-ug-qa-na-a-aš e-[ep nam-ma(?) hal-lu-u-wa-i] (տուլյը B տարբերակում):

<sup>279</sup> ՀԳյուտերբոկի կողմից հրատարակված համապատասխան տեքստի KUB XL 8 կրկնօրինակը և Լզրակացությունները տես Klengel 1968: 66ff.

<sup>280</sup> Güterbock 1956: 49.

կառավարման վերջին շրջանից<sup>281</sup> մինչև Թուղայիյաս III-ի կառավարման ավարտական շրջանը<sup>282</sup>: Այս ընդարձակ ժամանակահատվածում մեզ հետաքրքրող իրադարձության թվագրման հարցում թերևս մի փոքր կտվան կարելի է առանձնացնել: Իսուվայի հայտնվելը գորահավաքի աշխարհագրության մեջ կարող է վկայել վերջինիս նկատմամբ այդ պահին թեկուզ խեթական տերության սահմանափակ ազդեցության առկայության օգտին, ինչը, թվում է, հնարավոր չէր մինչև „Դիպված 25“-ի ժամանակահատվածը: Այսպիսով, կամ իրոք Մաշատիյուրի նամակը կարելի է տանել դեպի Առնուվանդասի ժամանակները կամ „Դիպված 25“-ի շրջանը:

### Կարաննի

Հայասայի արքա Կարաննիի (հնարավոր է նաև՝ Լաննի ընթերցումը), հիշատակվում է միայն մեկ անգամ՝ Մուրսիլիս II-ի կողմից կազմված Մուպպիլուլիումաս I-ի գործունեությունը ներկայացնող տեքստերում<sup>283</sup>: Այստեղ հիշատակվում է Թուղայիյաս III-ի և թագաժառանգ Մուպպիլուլիումասի գլխավորած արշավանքը դեպի Հայասա և Կումմախայի (հայկ. Կամախ-Անի քաղաքը) մոտ տեղի ունեցած ճակատամարտը, դժբախտաբար, տեքստն այստեղ ընդհատվում է: Կարաննիի մասին այլևս որևէ այլ աղբյուրում տեղեկություն չի պահպանվել: Կարելի է միայն վստահաբար ասել, որ Կումմախայի ճակատամարտից ոչ շատ ժամանակ անց Թուղայիյաս III-ը մահացել էր և իշխանության էր եկել Մուպպիլուլիումասը: Մասնագետների միահամուտ կարծիքով, Կումմախայում խեթերը հաղթել էին և իրենց գերիշխանությունը հաստատել Հայասայի նկատմամբ<sup>284</sup>:

Մեր նախորդ ուսումնասիրություններից մեկում առաջարկել էինք խեթահայասական փոխհարաբերությունների, Կարաննիի և Մարիյայի կառավարման հետ կապված մի վարկած<sup>285</sup>, որը ներկայումս հակված ենք վերանայելու: Ըստ դրա, Մարիյայի սպանությունը Խաթթուսատում նախորդել էր Կարաննիի կառավարմանը: Իրենց արքայի սպանությունն ընդվզում էր առաջ բերել Հայասայում: Վերջինիս բնակչությունը ռազմական գործողություններ էր սկսել Խաթթի դեմ, զորդելով Թուղայիյասին արշավելու Հայասա: Ենթադրում էինք նաև, որ հենց այդ պատճառով Կարաննիի կառավարումը Հայասայում պետք է կարճատև լիներ:

### Խուկկանա

Խուկկանայի անվան գրելաձևերը այսպիսի պատկեր են ներկայացնում:

\*Hu-uq-qa-na-a-aš (ուղդ.հոլ.)

I 8.10.31, II 10, III 85; KUB XVIII 2 III 10.

<sup>281</sup> Մաշատիյուրի նամակների այս փաղ թվագրումը առաջարկել է Զ.Թլինգերը (Klinger 1995: 74ff.):

<sup>282</sup> Alp 1980: 58; Houwink ten Cate 1998: 52.

<sup>283</sup> Güterbock 1956: "Դիպված 13" (A IV 42-45). Նկատի առնելով այս անվան ընթերցման հարցում առկա կասկածները, մենք ձեռնպահ կմնանք դրա որևէ ստուգաբանություն բնաթղկելուց:

<sup>284</sup> Stü, օրինակ, Bryce 2005: 149f.:

<sup>285</sup> Քոսյան 2008: 275-276:



«Hu-սզ-ռա-ա-աճ (ուղղ.)	-	I 17.
[«Hu]-սզ-գա-ռա-ա (տր.?)	-	II 20.
«Hu-սզ-գա-ռա-ա-առ (հայց.)	-	I 2.
«Hu-սզ-գա-[ռա-ա]-առ (հայց.)	-	I 16.

Դժվար է ասել, թե ինչով է պայմանավորված միեռնային տեքստում հայաստանյան անվան գրության մեջ առկա եական տարբերությունը (Huզգռա և Huզռա): Հնարավոր է, սա գրչի վրիպումն է, ով պայմանագրի տեքստն արտագրելիս բաց է թողել գա սեպանշանը: Այս առնչությամբ նշենք, որ մեր տեքստում Ազգի երկրանվան միակ գրությունը նույնպես տարբերվում է դրա մյուս բոլոր վկայություններից (գրված է <sup>K18</sup>Az – 24 III 77)<sup>286</sup>:

Պայմանագիրը սուղ տեղեկություններ է պահպանել Խուկկանայի անձի, մինչև Հայաստանի արքա նշանակվելը նրա ունեցած կարգավիճակի մասին: Վաղ շրջանի ուսումնասիրողների կարծիքով, որը հենվում էր տեքստի Ներածականում Խուկկանայի նկատմամբ կիրառված *appe/izzi UR.GE*: արտահայտության մեկնաբանության վրա (այն, սկսած է Ֆոռեից, ընթերցում էին *appe/izzi UR.SAG* „շարքային/երկրորդական հերոս“), ես եղել է ոչ շատ բարձր ծագման մարդ<sup>287</sup>, որին Սուպպիլուլիումասը բարձրացրել էր, դարձնելով Հայաստանի կառավարիչ: Թերևս, այս երթարությունը անհիմն է, քանի որ, առաջին հերթին, վերոհիշյալ տեղմինն այլևս շրջանառությունից դուրս է եկել, բացի այդ, ինչպես ցույց կտրվի ստորև, Խուկկանայի նկատմամբ կիրառվող այս արհամարհական դիմելանքը քաղաքական երանգավորում ունի և որն է կերպ չի կարող նշել նրա կարգավիճակը նախքան Հայաստանի կառավարիչ դառնալը: Ի վերջո, զուտ տրամաբանորեն նման ցածր կարգավիճակ ունեցող անձը խեղճական արքայից այդպիսի շնորհի չէր արժանանա:

Հայաստանում Խուկկանայի իշխանության գալու մասին պայմանագրում ուղղակի ասվում է հետևյալը.

#### ԴԿ I

§ 1 1) Այսպես (ասում է) Արևս՝ Սուպպիլուլիումասը, Խաթթիի արքան:

2) „Տես, թե՞ Խուկկանայիդ, ետին շանը

3) ես բարձրացրեցի և թեզ լավ վերաբերվեցի,

4) Խաթթուսասում թեզ հայասացիների շարքում բարի կամքով

5) ընտրեցի և քրոջս թեզ կամովին կնության տվեցի“:

Եթե իրոք պայմանագրի ներածականում խեղճական արքան այդպիսի մակդիր է կիրառել Հայաստանի կառավարչի նկատմամբ, ում հենց ինքն էր նշանակել և ով ամուսնացած էր իր իսկ քրոջ հետ, ապա ծագում է դրանից ամանցված մի կարևոր խնդիր՝ ինչով էր պայմանավորված նման դիմելառոճը: Արդյոք այս արտահայտությունը պայմանագրի A տարբերակում, որը ներկայացնում է ավելի ուշ շրջանի պատճեն (թերևս, հենց Սուպպիլուլիումասի օրոք կազմված), հետագայի խմբագրում չէ, որը հետևանք է ինչ-ինչ քաղաքական նկատառումների (ասենք, Խուկկանայի լոյալության ավարտ): Այլ բացատրություն կարծես հնարավոր չէ առաջարկել<sup>288</sup>, եթե ընդունենք, որ

<sup>286</sup> Երկրանվան գրությունները տես RGTC VI/1: 59f.; RGTC VI/2: 19; Քոստյան 2004ա: 43:

<sup>287</sup> Այս հարցի քննարկումը տես Գլուխ 1:

<sup>288</sup> Քիչ ավելի հավանական է UR.GE- ի մեկ այլ մեկնաբանություն, այն է դրա կապը խեղճական

տեքստում իրոք առկա է GE: գաղափարագիրը, ինչում մասնագետները կապված չունեն: Մուպպիլուլիումասի գործունեությունը եկարագրող „Ղիպված 25“-ում հիշատակված արշավանքը դեպի Հայասա<sup>299</sup>, հնարավոր է, ինչ-որ կերպ կարող էր կապված լինել քենարկման առարկա խնդրի հետ:

Այն որ Խուկկանայի փոխհարաբերությունները խեթական արքայի հետ կարող էին և բացասական ընթացք ունենալ, կարծես կարելի է ենթադրել հետևյալի հիման վրա: Վաղուց հրատարակված մի գուշակային տեքստում (KUB XVIII 2 - CTH 569), որ կազմված է մ.թ.ա.XIIIդ. կեսերին<sup>299</sup>, հիշատակվում է „ազգեցի Խուկկանան: Այստեղ ներկայացված է գուշակային հարցում երկու խնդիրների վերաբերյալ՝ 1) արդյոք Խուկկանան հավատարիմ կմնա արքային, 2) եթե Ազգին այժմ արքայի դաշնակիցն է, ապա արդյոք ապագայում էլ կդաշնակցի արքայի սերունդների հետ:

Վերոհիշյալ տեքստը իր տեսակի մեջ եզակի չէ: Այն պատկանում է մ.թ.ա.XIIIդ. կազմված զգալի քանակությամբ նման տեքստերի թվին (գերագանցապես Թուդխալիյաս IV-ի շրջանը), որոնց նպատակն էր նպաստել արքայական իշխանության անարատությանը և սրբագործմանը<sup>299</sup>: Դրանցում ներկայացված են բացառապես մ.թ.ա.XIV-XIIIդդ. ապրած հայտնի քաղաքական գործիչները (հիմնականում՝ արքայատոհմի անդամներ)<sup>299</sup>, որոնք ժամանակին ներգրավված են եղել զանազան դավադրություններում: Գուշակային հարցման նպատակը հետևյալն էր՝ արքայատոհմի ներսում ընթացած պայքարին զոհ գնացածների հոգիներին խաղաղություն պարզել և հակադիր խմբավորումներին հաշտեցնել:

KUB XVIII 2-ում „ազգեցի Խուկկանայի“ հիշատակվելը որպես գուշակային հարցման օրյնկտ ինքնին արդեն կարող է կասկածի տեղիք տալ՝ կապված նրա քաղաքական կարյերայի հետ: Նեղիրն այն է, որ CTH 569-ում հիշատակվող բոլոր անձինք կամ զոհ են գնացել դավադրության կամ դրա մասնակիցներն են եղել: Բանի որ այս մասին որևէ տեղեկություն չունենք, ապա բավարարվենք միայն Խուկկանայի՝ Ազգիից ծագելու փաստով<sup>299</sup>, չեայած այստեղ կա մի խնդիր: Բանն այն է, որ վերոհիշյալ գուշակային տեքստը կազմված է Խուկկանայից առնվազն հարյուր տարի հետո, այն ժամանակ, երբ Հայասա տերմինը վաղուց արդեն դուրս էր եկել շրջանառությունից: Վերջին անգամ Հայասան խեթական տեքստերում հիշատակվում է Մուրսիլիս II-ի „Տարեգրություններում“, որից հետո այս տարածաշրջանում բացառապես առկա է

տեքստերում հիշատակվող մի բառի հետ, որը գրվում է <sup>14</sup>UR.GE: և նշանակում է “շնապահ: որսորդ” (սրանցից առաջին խմաստը վերաբերում է ծիսական արարողություններին - Rüster-Neu 1989: 116):

<sup>299</sup> Տես Գլուխ 2 տեքստի համար և ստորև՝ մեկնաբանությունը:

<sup>299</sup> Klinger 1998: 107, Anm. 10 (այսպիսի թվագրման համար հեղինակը հղում է Schul 1994: 100): Տեքստի՝ Խուկկանային վերաբերող մասը տես Գլուխ 2:

<sup>299</sup> CTH 569 (հրատարակությունը և ուսումնասիրությունը՝ Van den Hout 1998).

<sup>299</sup> Դրանք են՝ Մուպպիլուլիումասի վերջին կինը՝ բաբելոնյան արքայադուստր “տավանանան” (Ամիննայա(?)) - den Hout 1998: 44), Մուրսիլիս II-ի վերջին կինը՝ Դանուխան, արքա Ուրսիլ-Թեշուրը, Հալեպի արքա Խալպազնոին, Մուպպիլուլիումասի եղբոր որդին՝ Արմա-Քարխունտաը և այլք:

<sup>299</sup> Այս տեքստում “Ազգի” տերմինի մասին տես սույն Գլխի վերջը: Խուկկանայի ազգեցի լինելու մասին՝ Carruba 1988: 69; Klengel 1999: 154f.

միայն Ազգին:

Խուկկանայի պայմանագրի և խեթա-հայաստանյան հարաբերությունների առաջին ուսումնասիրող է Ֆոտերը հետևյալ կերպ էր ներկայացնում Խուկկանայի խնդիրը<sup>294</sup>:

1) Երիտասարդ տարիքում Խուկկանան եղել է Միտտանիից կախյալ կառավարիչ, այնուհետև փախել և ապաստան է գտել Թաթթիում՝ Սուլայիլուլիումասի կառավարման սկզբում կամ ավելի վաղ:

2) «Կրտսեր՝ Մարիյայի դիպվածը (Խուկկանայի փեսան) վկայում է այն մասին, որ պայմանագրի կնքման պահին Խուկկանան արդեն հասուն դուստր ուներ Սուլայիլուլիումասի քրոջից, այսինքն Թաթթի գեալուց մինչև պայմանագրի կնքումը պիտի առնվազն 20 տարի անցներ:

Այս մեկնաբանությունը չնայած կարող է որոշակիորեն *a priori* ընդունվել, սակայն դրա համար պայմանագիրը որևէ հիմք չի տալիս: Միտտանիից կախյալ Խուկկանայի փախուստը Թաթթի բացառապես հենվում է *appe/zizzi* UR.SAG տեքստի յուրովի մեկնաբանության վրա<sup>295</sup> և չի հիմնավորվում այլ աղբյուրներով: Խուկկանայի օրոք խեթա-հայաստանյան փոխհարաբերությունների մասին տես ստորև:

Ինչ վերաբերում է Խուկկանայի անվան մեկնաբանությանը, ապա առայժմ առաջարկվել են երկու հնարավոր տարբերակներ:

Դեռևս ժամանակին Գր.Ղափանցյանը առաջարկում էր այն մասնատել *hugg/ak-* հիմքի և *-ana* վերջածանցի և գտնում էր, որ այս անձնանունն ունի անատոլիական-խուրրիական ծագում (տեքստից Ղափանցյանիին է) «հմայել» իմաստով: Այդպիսով, Խուկկանայի անունը կարող էր նշանակել «հմայիչ»<sup>296</sup>:

Խուկկանայի անվան երկրորդ մեկնաբանությունը պատկանում է Գ.Ջահուկյանին, ով, հենվելով հայտնի ֆրանսիացի խեթագետ Է.Լարոշի կարծիքի վրա (անվան հիմքը = խեթ. *huh(h)a-* «պապ»)<sup>297</sup>, հակված էր այդ անվան հիմքը բխեցնելու հնդեվր. «(H)au(H)»- «պապ» (հայ. *hau*) բառահիմքից<sup>298</sup>:

<sup>294</sup> Forrer 1931: 3ff.

<sup>295</sup> Ըստ Է.Ֆոտերի, էթե այս տեքստից նշանակում է կախյալ անձ, ապա Խուկկանան պիտի կախված լիներ մեկ այլ պետությունից, քանի որ փախել էր Թաթթի: Սակայն տեքստի մեկնաբանությունը որևէ հիմք չի տալիս նրան փախուստական համարելու: Դեռ ժամանակին Գր.Ղափանցյանը իրավացիորեն *appezzi* UR.SAG-ը մեկնաբանում էր որպես «երկրորդ, հաջորդ» և գտնում, որ այս տեքստից նշել է Խուկկանայի ստորադաս կարգումիճակը խեթական արքայի հանդեպ (Kamranian, 1948: 19): Նույնը խեթերի մոտ Խուկկանայի ապրելու ժամկետի մասին, որը է.Ֆոտերը բխեցնում էր նրա դստեր՝ ամուսնացած լինելու փաստից: Այս փաստարկը համոզիչ չէ, քանի որ Խուկկանայի հասուն դուստրը, թերևս, պիտի ծնված լիներ նրա առաջին կնոջից, որը հիշատակվում է պայմանագրում (24 III 80'-81') և որին Սուլայիլուլիումասը պահանջում է հարձ դարձնել: Ի վերջո, խեթերի և մյուս բոլոր ժողովուրդների մոտ կանանց ամուսնության տարիքը 12-15-ն էր (Houwink ten Cate 1996: 55), որոշ դեպքերում՝ 10-ը (Hagenbuchner 1992: 116 Ann.24 [վերջինս ըստ միջին ասորեստանյան օրենքների՝ § 43 II 25,29,31]):

<sup>296</sup> Kamranian 1948: 69ca.: Նրա կարծիքով, այս անունը հնարավոր է համեմատել հայ. *խուկ-ալ* «խոսում եմ, կարդում եմ» բայի հետ:

<sup>297</sup> Laroche 1952: 111f.

<sup>298</sup> Ջահուկյան 1987: 325: Հեղինակը գտնում էր, որ հայասերեն անձնանվան գրության ձևը խեթա-լուվիական լեզուների շարքում ավելի մոտ է լիդիերեն ձևին՝ *xuga*: Ավելի վաղ նա որպես

## Մարիյա

Պայմանագրերում Մարիյա անունը հիշատակվում է երեք ենթատեքստերում:

Անվան գրեկաձևը.

ՊՄա-րի-յա-աճ (ուղղ.)	-	III 68', IV 51'.
ՊՄա-րի-յա (տր./հայց.7)	-	III 80', IV 56'; HT 85 3'.
ՊՄա-րի-յա-առ (հայց.)	-	IV 42'; KBo L 49 4.

Լկատի առնելով համապատասխան անձանց նույնացման հարցում առկա որոշ բարդությունները, մասնագիտական հրատարակություններում սովորաբար տարբերակվում են „ավագ“ և „կրտսեր“ Մարիյաներ: Այսպես.

1) Որպես անցյալում խեթական արքունիքում սեռական հարաբերությունների հողի վրա պայտատական արարողակարգը խախտելու պատճառով Թուդխալիյաս III-ի կողմից մահվան դատապարտված անձ (ՀԿ III 68-73) – „ավագ“ Մարիյա:

2) Ոմն անձ, որը Խուկկանայի պայմանագրի կնքման պահին Հայաստանի արքայի փեսան էր (դատեր ամուսինը)(ՀԿ III 80) – „կրտսեր“ Մարիյա:

3) Հայաստանի կառավարիչ (ՀԿ IV 42, 58), հավանաբար, նույնը, ինչ „ավագ Մարիյան“:

Պայմանագրերի՝ գիտական հանրությանը հայտնի դառնալու շրջանից ի վեր մասնագետների գերակշիռ մասը գտնում էր, որ այս անունը կրել են հայաստանական երկու տարբեր կառավարիչներ (պայմանականորեն նրանք տարբերակվում էին որպես „ավագ“ և „կրտսեր“ Մարիյաներ)<sup>299</sup>. ներկայումս էլ այս տեսակետը դեռնա շարունակում է գոյատևել, չնայած դրա համար որևէ հիմք չկա: Այս առթիվ համառոտակի իր կարծիքն էր արտահայտել նաև Յ.Ֆրիդրիխը, ով գտնում էր, որ երկու պայմանագրերում հիշատակվող Մարիյա անունը կրող անձանավորությունը Խուկկանայի ժամանակակիցն էր և նրա հետ միասին Հայաստանում մեծ հեղինակություն ունեցող ազնվական<sup>300</sup>. Երա կարծիքով հենց այդ էր պատճառը, որ Մարիյան երկուսում էլ հիշատակվում է<sup>301</sup>:

Է.Ֆոերերի կարծիքով, „ավագ“ Մարիյան Հայաստանի արքա Կարաննիսի հաջորդն էր, ով սպանվել էր Թուդխալիյաս III-ի օրոք, իսկ „կրտսերը“ „ավագի“ ազգականն էր (հավանաբար, թոռը)<sup>302</sup>:

Խուկկանայի անվան լիդիական համարժեք էր դիտում, հետևելով գերմանացի հայտնի խեթագետ Ա.Հոյբեքին (Heubeck 1959: 62), Լիդիայի արքա Գիզեսի անունը, (Δακαονο 1964: 44α.; Ջանուկյան 1970: 43, 73-81):

<sup>299</sup> Հայագիտության մեջ այս տեսակետը առաջին անգամ սկսել է շրջանառվել Ն.Մարտիրոսյանի կողմից (Մարտիրոսյան 1957: 148-149):

<sup>300</sup> Friedrich 1930: 160f.

<sup>301</sup> Յ.Ֆրիդրիխը մեր ուսումնասիրության առարկա պայմանագրերը որոշակիորեն համարում էր մեկ պայմանագրի երկու մասերը, գտնելով, որ խեթական արքան միևնույն պայմանագրի շրջանակներում հարաբերվում էր ոչ միայն Խուկկանայի, այլև Մարիյայի և “Հայաստանի ժողովրդի” հետ: Այս սխալ մտացումը ներկայումս շրջանառվում է նաև այլ մասնագետների կողմից: Մասնավորապես, ենթադրվում է, որ Մարիյան Խուկկանայի տիտղոսն էր (Թալատյան 1998: 47-48):

<sup>302</sup> Forrer 1931: 3: Ի.Մ.Մյակոնովի կարծիքով (Δακαονο 1968: 91α.), այս երկրորդ Մարիյան կարող

Ի տարբերություն Է.Ֆոտերի, Է.Կավենյակի կարծիքով<sup>303</sup>, „ավագ“ Մարիյան Թուդիսալիյաս III-ի կողմից Կուսմախայի ճակատամարտից հետո նշանակվել էր Հայաստայի կառավարիչ: Պայմանագրի չորրորդ սյունակը ներկայացնում է նրա հետ կնքված պայմանագիրը:

Է.Ֆոտերի տեսակետն ընդունվում է մասնագետների կողմից<sup>304</sup>: Ընդ որում ենթադրվում է, որ երկու Մարիյաները չէին պատկանել երկու հաջորդական սերունդների (օր., հայր-որդի, հորեղբայր/քեռի-եղբորդի/քրոջ որդի և այլն), քանի որ, ըստ ուսումնասիրվող ժամանակաշրջանում գործող պապականիմայի օրենքի, անունը փոխանցվում էր քոտանը, այլ ոչ որդուն<sup>305</sup>:

Վերոհիշյալ, մեր կարծիքով թույլ հիմնավորված տեսակետը ենթադրում է պայմանագրերում որպես Հայաստայի կառավարիչ/արքա հիշատակվող անձանց հետևյալ հաջորդականությունը.

Թուդիսալիյաս III	-	Կարանկի
	-	„ավագ“ Մարիյա
Սուպպիլուլիումաս I	-	„կրտսեր“ Մարիյա - Խուկկանա

Խուկկանայի պայմանագրում որպես նրա փեսա հիշատակվող Մարիյային և մյուս պայմանագրում որպես խեթական արքայի հետ պայմանագիր կնքած Մարիյայի նույնականությունը ժխտելու միակ կոման է համարվում այն մտայնությունը, որ սրանցից առաջինը դիտվում է որպես կենդանի անձ, ի տարբերություն այն Մարիյայի, ով սպանվել էր Խաթթուսասում: Սակայն Խուկկանայի պայմանագրում ոչինչ չի ասվում այն մասին, որ դրա կնքման պահին նրա փեսան կենդանի էր: Խոսքը այստեղ Մարիյայի տանից դստերը ետ վերադարձնելու մասին է:

Եզրափակելով Մարիյայի մասին իստովածը, նշենք այդ անվան մեկնաբանությունները, որոնք առաջարկվել են մասնագետների կողմից:

Հայ ականավոր լեզվաբան Գ.Ջահուկյանը իր վաղ ուսումնասիրություններից մեկում ենթադրում էր, որ Մարիյայիի անունը կարող էր ծագել հեղեվրոպական մի արմատից, որը լատիներենում վկայված է *maro* „ղեկավար, առաջնորդ“ ձևով<sup>306</sup>: Հետագայում նա թեականորեն առաջարկում էր հետևյալ բացատրությունը<sup>307</sup>: Ըստ նրա,

էր Խուկկանայի գահակիցը լինել, մի բան, որն իրոք նրան կարող էր Խուկկանայի ժառանգորդը դարձնել՝ որդու բացակայության դեպքում:

<sup>303</sup> Cavagnac 1931: 16f., ըստ նրա, „կրտսեր“ Մարիյայի պարագայում (III 80) խոսքը սպանված „ավագ“ Մարիյայի հարեմից դստերը ետ վերադարձնելու մասին է, այսինքն երկրորդ Մարիյա չի եղել: Այս կարծիքին էր, անկախ Է.Կավենյակից, նաև Գր.Նափանցյանը (Kanawak 1948: 19ca.):

<sup>304</sup> Carruba 1988: 67f.; Beckman 1996: 27.

<sup>305</sup> Güterbock 1940: 35f.; Carruba 1988: 68. Մարիյա անունը կրող երկու ենթադրյալ անձանց ինդոի մի մեկնաբանություն էլ նշենք (Խաչատրյան 1998: 47-49), ըստ որի Թուդիսալիյաս III-ի օրոք ապրած Մարիյայի անունը հետագայում վերածվել է հայաստական (հեղինակի մոտ՝ “Հայրի”) արքաների տիտղոսի:

<sup>306</sup> Дзяккан 1964: 37.

<sup>307</sup> Ջահուկյան 1987: 326-327:

այս անձնանվան հիմքում կարող էր ընկած լինել խեթա-լուվիական *mer-*, *meri-* արմատը (անհայտ իմաստով), որը վկայված է մի շարք անձնանուններում (խեթ. *Marakkui-*, *Maraššali-*, *Maraššaliya-*, լիդ. *Marinda* [վերջինս դիցանուն է]): Սակայն քիչ ավելի ուշ ես կասկածի տակ առավ իր տեսակետը, գտնելով, որ սույն բաղադրիչի իմաստը խեթա-լուվիական լեզուներում բացահայտված չէ և չի կարելի նման համեմատություն առաջարկել<sup>308</sup>:

Երկրորդ հեռավոր մեկնաբանության համաձայն, այն համեմատելի է խուրր. *mariyanne* (միջագետքյան, ուգարիտյան և խեթական տեքստերում՝ *mariyannu*), ուրարտ. *mari*-<sup>309</sup> բառերի հետ, որոնք առաջարկվել է բխեցնել հին հնդկ. *mārya-* «երիտասարդ, պատանի» բառից<sup>310</sup>: Այս տեղմինը հին առաջավորասիական տարածաշրջանում հիշատակվում է սոցիալական աստիճանակարգում բարձր դիրք զբաղող ռազմական ազնվականության անդուրյամբ (արքայական ծառայության մեջ գտնվող կառավար մարտիկներ)<sup>311</sup>: Լշենք նաև, որ ի տարբերություն հայաստական մյուս անձնանունների, Մարիյա անունը սահմանափակված չէ միայն Հայաստանի և Ազգի անվանաբանության: Այն վկայված է հյուսիսային Փոքր Ասիայի խեթական հնավայրերից մեկից (Մաշատիյուր = խեթ. *Sauihqaqa* քաղաքը) հայտնաբերված և մուսավորապես թուղիսալիյաս III-ի (Սուպալիուլիումաս I-ի հոր) ժամանակներով քվագրվող մի նամակում (*\*Ma-ri-i-ya*)<sup>312</sup>:

Եվ, վերջապես, կա Մարիյա անվան ևս երկու ստուգաբանություն: Լ.Գինդինի կարծիքով, այս անունը համադրելի է խեթական աղբյուրներում վկայված <sup>65</sup>*mari-* «նիզակ» բառի հետ<sup>313</sup>: Իսկ Վ.Խաչատրյանը փորձում է այն համադրել հայերենում առկա հնդեվր. *\*mar-* «տեր» արմատի հետ (*ձայ-* և հայերենի վերջածանց է)<sup>314</sup>:

Ավարտելով Մարիյա անվան ստուգաբանության մասին կարծիքները, նշեք Գ.Ջահուկյանի ևս մեկ մոտեցում խնդրին<sup>315</sup>: Հաս նրա, Մարիյայի անունը կազմված է ընդհանուր հնդեվրոպական մի հիմքից, որից ծագում են ինչպես սեպագրական *mariyannu*, ուրարտ. *mari-* բառերը, այնպես էլ հայերենում պահպանված *mari* բառը

<sup>308</sup> *Джаукян* 1988: 65. Այստեղ ես հակված եմ ընդունելու այլ մասնագետների կողմից առաջարկվող համադրությունը սեպագրական աղբյուրներում հանդիպող *mariyannu*, ուրարտ. *mari-* բառի հետ (տես ստորև տեքստում), ինչի մասին ես գրել եմ դեռևս 1964թ. (*Джаукян* 1964: 37):

<sup>309</sup> Այս բառը պարունակող ուրարտական տեքստում գրված է <sup>10</sup>*ma-re-GI*, որը հրատարակիչն ընթերցում է *ma-re-ji* և մեկնաբանում որպես «ազնվական» և համեմատում խուրրիերեն *mariyanne-* ի հետ (*Джаконов* 1963: 39):

<sup>310</sup> Վ.Իվանովն առաջարկում է այս ուրարտերեն բառը մեկնաբանել որպես «ազնվածի ներտասարդ» (*Иванов* 1979: 102) և համեմատել Հայաստանի արքայի անվան հետ:

<sup>311</sup> Այդ մասին տես, մասնավորապես, *Albright* 1930-1931: 217; *Kammenhuber* 1961: 16; *Иванов* 1979: 107 ՏԱԱ.:

<sup>312</sup> *Alp* 1991: N.48, ԴԿ 2. նամակը, գրված է այդ Մարիյայի և մեկ այլ անձի կողմից, որոնք հանդիսանում էին խեթական արքայի նախնակները (ամենայն հավանականությամբ, գտնվում էին արքայական ծառայության մեջ):

<sup>313</sup> *Гиндин* 1967: 116.

<sup>314</sup> *Խաչատրյան* 1998: 45, 49:

<sup>315</sup> *Джаукян* 1988: 65 ՏԱ.

(վերջինս նշանակում է «էզ թոչուն»), նշելով, որ հայասական փուլում այն կարող էր տրվել տղամարդուն, եթե ընդունենք, որ Հայասայում պետք է ուժեղ լինեին մայրիշխանական ավանդույթները<sup>316</sup>:

### Աննիյա

Աննիյան Հայասայի՝ անվանապես հիշատակվող վերջին կառավարիչն էր: Նրանից հետո խեթական տեքստերը Հայասայի (տեքստերում այսուհետև միայն Ազզի) հետ փոխհարաբերություններում ուղղակի նշում են «ազզեցի»:

Անվան գրությունը.

*An-ni-ya-aš (ուղղ.)	-	KUB XXVI 79 I 8; KBo L 49 2'
[*An]-ni-ya-aš	-	KBo L 49 2', 6'
*An-ni-ya	-	KBo III 4 III 93
*An-n[i-ya]	-	KUB XIV 29 I 5
*An-ni-ya(-)[...]	-	HT 85, 1'
*An-ni-ya[...]	-	KBo L 49, 8'

Հայասայի արքա Աննիյան<sup>317</sup> հիշատակվում է Մուպպիլուլիումաս I-ի որդի և հաջորդ Մուրսիլիս II-ի տարեգրություններում («Տասնամյա» և «Ընդարձակ»), վերջինիս կառավարման 7-11-րդ տարիների ընթացքում Հայասայի դեմ մղված պատերազմների համատեքստում: Պարզ չեն ինչպես Աննիյայի՝ Հայասայում իշխանության գալու հանգամանքները և ժամանակը, այնպես էլ նրա հետագա ճակատագիրը: Տարեգրություններում վերջին՝ 10-րդ տարվա հայասական իրադարձությունների կապակցությամբ Աննիյան անվանապես չի հիշատակվում: Այստեղ ուղղակի նշվում է այն մասին, որ Խալիմանա քաղաքից ոմն Մուտտիս ներկայանում է Մուրսիլիսին և հայտնում իրենց հնազանդության մասին<sup>318</sup>: Համենայնդեպս, եթե Աննիյան նախորդ տարվա արշավների ընթացքում գահազրկված լիներ կամ մահացած, ապա Մուրսիլիսն այդ մասին անպայման կհիշատակեր:

Հատկանշական է, որ նախորդ՝ 10-րդ տարում հայասական արշավանքն անավարտ էր մնացել<sup>319</sup>, որի պատճառը խեթական արքայի երկու տարբեր տեքստերում տարբեր պատճառաբանություններով է ներկայացվում: Ընդարձակ տարեգրություններում որպես պատճառ նշվում է ձմռան վրա հասնելը, այնինչ մեկ այլ տեքստում խոսվում է Արևի խավարման և այդ առիթից օգտվելով թագուհու կողմից արքային գահազրկելու մտադրության մասին<sup>320</sup>: Թերևս, երկու տարբերակներն էլ կարող էին

<sup>316</sup> Այս մտեցումը Մարիյա անվանը (նաև Աննիյայի), կարծում ենք, ոչ մի կերպ չի կարելի հիմնավորել: Մա ուղղակի նկատարություն է, որը ականակոր հաջադետ-լեզվաբանն առաջարկել է այս անունների թվացրալ իրավացի ստուգաբանության տպավորության տակ:

<sup>317</sup> Մուրսիլիս II-ի «Տարեգրություններում» (= CTH 61 [իրատ., Götz 1933: 96f.]) Աննիյան հիշատակվում է որպես «Ազզիի արքա»:

<sup>318</sup> Götz 1933: 140.

<sup>319</sup> Հենց այս արշավանքի ընթացքում էին գրավվել հայասական երկու քաղաքները՝ ծովի մեջ գտնվող՝ Արիպաս և Դուզգամանա:

<sup>320</sup> KUB XIV 4 24-32 (De Martino 1998: 19ff.; նաև Թոյսյան 2004բ: 199-200):

համապատասխանել իրականությանը: Խեթական թագուհին (տեքստում՝ տավանանա) ոչ թե Մուրսիլիսի կինն էր, այլ, թերևս, նրա հոր՝ Մուպիլիուլումաս I-ի վերջին կինը՝ բաբելոնյան արքայադուստրը, ում հետ Մուրսիլիսի հարաբերություններն ի սկզբանե լարված էին, ինչի մասին վկայում է մեկ այլ տեքստ ևս<sup>321</sup>:

Չենվելով Մուրսիլիսի «Տարեգրությունների» և «տավանանայի» դավադրության մասին պատմող տեքստի ընձևոած հնարավորությունների վրա, ինչպես նաև հաշվի առնելով Աննիայի հետ Մուրսիլիսի կերած պայմանագրի առկայությունը (տես վերը)<sup>322</sup>, Հայաստանի հնագանդեցումը հազիվ թե տեղի ունենար այս երկրի ամբողջական նվաճման արդյունքում: Ամենայն հավանականությամբ, խեթա-հայաստանյան տևական հակամարտությունն ավարտվել էր ոչ-պարհիտեոային պայմանագրի կնքմամբ և Աննիայան շարունակել էր կառավարել իր պետությունում:

Մույն աշխատության առարկա երկու պայմանագրերի, Մարիյա - Խուկկանա հաջորդականության և այս ժամանակահատվածում խեթա-հայաստանյան փոխհարաբերությունների պարզաբանման տեսանկյունից արտակարգ կարևոր խնդիր է Կարաննիից հետո իշխած արքաների հաջորդականության, մասնավորապես, Խուկկանայից հետո, արդեն Մուրսիլիս II-ի «Տարեգրություններում» հիշատակվող Հայաստանի արքա Աննիայի առնչակցությունը իր նախորդներին: Այս խնդիրը կարող է որոշակիորեն պարզվել Մուրսիլիս II-ի և Հայաստանի արքա Աննիայի<sup>323</sup> միջև կնքված պայմանագրի պահպանած մի կարևոր տեղեկությամբ: Պայմանագրի երկու բնկորներում, որոնք պատմական ներածականի մասն են կազմում<sup>324</sup>, Աննիայի անվան հետ փոխկապակցված հիշատակվում է Մարիյա անունը: Դատելով տեքստի պահպանված հատվածներից, այստեղ պետք է տեղ գտնեին Մարիյայի օրոք տեղի ունեցած իրադարձությունները (դժբախտաբար, այլ տեղեկատվություն, բացի վերոհիշյալ անուններից, չի պահպանվել):

Ահա այդ բնկորները.

#### HT 85<sup>325</sup>

#### ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՉՈՒՄ

- 1) [.....]x \*An-ni-ya(-)[.....  
 2) [.....]x A-BI A-BI-Y[A .....  
 3) [.....]x-KA-ya \*Ma-ri-ya(-) ....

<sup>321</sup> KUB XIV 8 + Izmir 1277 (իբրատ.՝ Bin-Nun 1975: 177ff.; Hoffner 1983: 187ff.; Den Hout 1998: 42f.; De Martino 1998: 19ff.), հավանաբար, թագուհու անունն էր Ամմիննայա (Den Hout 1998: 44):

<sup>322</sup> Հավանաբար, միևնույն պայմանագրի մասն է կազմում վաղուց հայտնի KUB XXVI 39 տեքստը (այդ մասին տես Carruba 1988: 69ff.): Տես նաև Քոսյան 2005 (տեքստի գիտական հրատարակությունը և մեկնաբանությունները):

<sup>323</sup> Մուրսիլիս II-ի «Տարեգրություններում» (= CTH 61 [իբրատ.՝ Götze, 1933: 96]) Աննիայան հիշատակվում է որպես «Ազգի արքա»:

<sup>324</sup> Հրատ. Carruba 1988: 71f. (HT 85 և KBo L 49):

<sup>325</sup> Idem: 71.



- 4') [..... S]IGs-in iš-tén? x-?{.....  
 5') [.....]x<sup>MS3</sup>-ŠU-NU SIGs-i{a .....  
 6') [.....]x-x-[.....

**ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ**

- 1') ..... Աննիյա [.....  
 2') ..... պապի{u .....  
 3') ..... և քո [...] Մարի{յա}(և) ....  
 4') ..... լավ .....  
 5') ..... նրանց լավ [.....  
 6') .....

**KB0 L 49**

**ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱՂԱՐՉՈՒՄ**

- 2) [.....] nu zi-ik \*An-ni-ya-aš  
 3) [.....-š/t]a-ni  
 4) [.....] \*Ma-ri-ya-an

**ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ**

- 2) ..... Եվ դու՝ Աննիյա  
 3) .....  
 4) ..... Մարիյային (եզ.հայց.)

Օ.Կարրուբայի կարծիքով, HT 85-ում «պապ» բառի առկայությունը կարող է հիմք տալ ենթադրելու, որ այստեղ Մուրսիլիսը նկատի ունի իր պապի՝ Թուդիալիյաս III-ի օրոք ապրած Մարիյային: Նույն բեկորի հաջորդ տողի կորսված հատվածի վերջում սկսվող բառը, այդ դեպքում, թերևս, պիտի լինի [..... A-B/ A-B]/-KA-ya «և [պապ]իդ»<sup>326</sup>:

Այստեղ, սակայն, ծագում է մի կարևոր խնդիր: Արդյոք սույն բեկորի երրորդ տողի վնասված մասում առկա բառը պետք է վերականգնել որպես [A-B/ A-B]/- «պապ»: Որ վնասվածքի վերջում առկա մասնակիորեն պահպանված նշանը իրոք B/- ն է, վկայում է տողավերնի փոքր եռանկյունին, սակայն ինչու չենթադրել, որ այնտեղ կարող էր գրված լինել ուղղակի «հայր» բառը [..... A-B]/-KA], այլ ոչ «պապ»: Մեր առաջարկած տարրերակը կարող է էականորեն փոխել հայաստանյան արքայատոհմի՝ մասնագետների կողմից ընդունված հաջորդականությունը և հնարավորություն ընձեռել ենթադրելու, որ HT 85 բեկորում Մարիյան ներկայանում է ոչ թե որպես

<sup>326</sup> Carruba 1988: 71f. Մյս կարծիքին էր նաև Ի.Մ.Դյակոնովը (Ճափոն 1968: 92 որսւ.43), ով հենվում էր վերը հղված HT 85-ի վրա:

Աննիայի պապ, այլ հայր, ինչը և թույլ կտա Աննիային համարելու Թուկկանայի թող-  
ձնված նրա դստեր և Մարիայի ամուսնությունից, ինչի մասին Թուկկանայի  
պայմանագրում խոսվում է:

Վերոհիշյալ բեկորներում Մարիյա անվան հիշատակումը Հայաստանի արքա  
Աննիայի հետ միասին կարող է վկայել Հայաստանում «ավագ» Մարիայի տոհմի  
իշխանության շարունակականության մասին: Այսինքն, Աննիան ժառանգել է իր հոր  
իշխանությունը՝ պապի (Թուկկանայի) կառավարումից հետո: Ոչ վերաբերում է  
Թուկկանային, ապա, սույն ուսումնասիրության առարկա պայմանագրերի լույսի տակ,  
նրա կառավարումը Հայաստանում կարելի է մեկնաբանել որպես Մարիայի տոհմի  
իշխանության ժամանակավոր ընդհատում:

Վերը բերված բեկորում «հայր» բառի վերականգնման և դրանից բխող  
համապատասխան մեկնաբանության հիման վրա կարող ենք առաջարկել հետևյալ  
վարկածը: Մարիյան ամուսնացած էր հայաստանյան ազնվականներից մեկի՝  
Թուկկանայի դստեր հետ: Ոչ-ինչ պատճառներով Մարիյան դրժում է իր  
պարտավորությունները, որի հետևանքով սպանվում է Խաթրուսատում<sup>327</sup>: Նրա  
սպանությունից հետո Հայաստանում որոշ ժամանակ կառավարում է Թուկկանան՝  
Մարիյայի աները: Թուկկանայից հետո Հայաստանում իշխանությունն անցնում է  
վերջինիս թոռանը, ով նրա դստեր և Մարիյայի որդին էր:

Աննիյա անունը հայագիտության մեջ տարբեր մեկնաբանություններ է ստացել:

Գ.Ջահուկյանը այս անվան սկզբի առ- հիմքը, հետևելով հայտնի խեթագետ  
Է.Լարոշին<sup>328</sup>, բխցնում էր հնդեվր. \*(H)an- «արական կամ իզական սեռի նախնի»  
արմատից, որից խեթա-լուվիական լեզուներում վկայված են մի շարք արական և  
իզական սեռի անձնանուններ (Anna, Annaniya, Annanza, Annitta և այլն)<sup>329</sup>: Հետագայում  
ևս հավկած էր Աննիայի անունը անվերապահորեն բացատրելու հայերենով<sup>330</sup> և այդ  
անվան առկայությանը հայաստանյան հասարակությունում տեսնելու մարիիշխանական  
ավանդույթների գոյությունը: Հայաստանում վերոհիշյալ արմատի առկայության  
մասին, ըստ նրա, կարող է վկայել հայերենում հանի «տառ» բառի գոյությունը, որտեղ  
բառասկզբի հ-ն կարող էր երկրորդային բնույթ ունենալ<sup>331</sup>:

Գ.Ջահուկյանը չէր բացառում նաև Աննիայի անվան ստուգաբանության մեկ այլ  
հետաքննություն, այն է՝ հայաստանյան Անի քաղաքի անունից: Այս մեկնաբանությունը

<sup>327</sup> Պայմանագրի այդ հատվածում որպես Մարիայի սպանության պատճառ ներկայացված  
արքունի կնոջ վրա նայելը մասնագետները կողմից լուրջ չի ընդունվում, այն համարելով  
«սպառտական անեկդոտ»: Այս առնչությամբ եղենք Պայմանագրի առաջին հրատարակիչ  
Յ.Ֆրիդրիխի մեկնաբանությունը, ով փորձել էր այդ երևույթի գուցահեռները հայտնաբերել  
ազգագրական կյոթերի հիման վրա (Friedrich 1930: 159f.տես Գլուխ 1):

<sup>328</sup> Laroche 1952: 111f. Նեթերենում այս արմատից է կազմված *anna-*, իսկ լուվիերենում՝ *annu(ya)-*  
«մայր» բառերը:

<sup>329</sup> Ջահուկյան 1987: 324-325:

<sup>330</sup> Джайхан 1988: 63-65.

<sup>331</sup> Գ.Ջահուկյանը հղում է Հր.Աճառյանին, ըստ որի վրացերենում հայերենից փոխառյալ հանի  
բառը նշանակում է «նախնի» (Աճառյան 1977: 33): Հնդեվրով այս մեկնաբանության վրա, նա  
ենթադրում էր, որ հայերեն բառը կարող էր պահպանել հնդեվրոպական միաստության շրջանի  
նախնական իմաստը:

ընդունելի չէ, քանի որ հենվում է դեռևս ժամանակին Գր.Նափանցյանի մի կամայական ենթադրության վրա, ըստ որի Հայաստյի արքա Աննիյան իր անունով էր իբրև թե վերանվանել հայաստական Ուրա քաղաքը<sup>302</sup>:

Աննիյա անվան մեկ այլ մեկնաբանության համաձայն, այն կարելի է համադրել հայ-անիացեալ խնամյալ՝ քայի հետ, առանձնացնելով անի- հիմքը և -եայ վերջածանցը<sup>303</sup>:

### ԵՁԴԱԿԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պայմանագրերն ընդգրկող ժամանակահատվածի վերաբերյալ հիմնական եզրակացությունները կարելի է ներկայացնել այսպես.

1) Թուղխալիյաս III-ի կառավարման ավարտին, Կունմախայի ճակատամարտից հետո Հայաստան ընկավ Խեթական տերության գերիշխանության տակ: Հայաստյի հաջորդ կառավարիչը Մարիյան էր, ում հետ կնքվել էր պայմանագիր: Առայժմ անհայտ հանգամանքների բերումով Մարիյան խախտել էր իր վրա դրված պարտավորությունները, որի համար մահապատժի ենթարկվեց Խաթթուսատում, մինևույն Թուղխալիյաս III-ի օրոք:

2) Մարիյայի փոխարեն Հայաստյի կառավարիչ նշանակվեց հայասացի ազնվական Խուկկանան, ով Մարիյայի դստեր հայրն էր: Մուսպիլուլիումասի և Խուկկանայի միջև կնքվեց պայմանագիր: Կախյալ պետությունների հետ կնքված պայմանագրերին հաստով պարտավորություններից զատ Խուկկանան պարտավորվում էր վերադարձնել ժամանակին Հայաստյում ազատտան գտած Խաթթիի բնակչությանը, ինչպես նաև դստերը վերադարձնել Մարիյայի տանից: Խուկկանայի վրա, բնականաբար, պետք է դրվեր Հայաստյի հավատարմությունն ապահովելու առաքելություն:

3) Անկախ այն հանգամանքից, որ Խուկկանան Հայաստյի կառավարիչ<sup>304</sup> Մարիյայի կնոջ հայրն էր, նրա նշանակումը Հայաստյում Խուկկանային պիտի դներ դրածոյի վիճակում: Հատկապես էթե նկատի ունենանք, որ Մուսպիլուլիումասի «հանձնարարությունը»՝ զստերը Մարիյայից ետ վերցնելու մասին արդեն իսկ պիտի նշանակեր ակնհայտ բախում երկրի ազնվականության հետ, որը տվյալ պահին հակախեթական դիրքորոշում կարող էր ունենալ: Մուսպիլուլիումասի քաղաքականության նպատակը Խուկկանային Հայաստյի կառավարիչ նշանակելու հարցում դժվար չէ բացահայտել: Խաթթիից նոր կախման տակ ընկած Հայաստյի նկատմամբ գերիշխանությունը նկարավոր էր միայն տեղական ազնվականության շարքերում կայուն հենարան ստեղծելով: Միայն դրանով պիտի բացատրել Խուկկանայի վրա թափված շնորհները: Հարևան կախյալ երկրների նկատմամբ գերիշխանության ամրապնդմանն ուղղված դինաստիական ամուսնություններին

<sup>302</sup> Кананян 1948: 52. Որևէ հիմք չկա ենթադրելու, որ վերոհիշյալ Ուրան ևույնական է հետագայի հայկական առյուրների Անի-Կունմախ քաղաքին: Գ.Ջահուկյանն ինքն էլ էր իրավացիորեն նշում, որ Աննիյայի և Աննիի համադրությունը կարող է ուղղակի պատահական նմանության հետևանք լինել:

<sup>303</sup> Хачатурян 1980: 110; Խաչատրյան 1998: 46:

<sup>304</sup> Խուկկանայի փեսայի կարգավիճակը հայտնի չէ: Նրա հիշատակությունը պայմանագրում դրդում է ենթադրելու, որ նա պիտի լիներ Հայաստյի արքան՝ Խուկկանայից առաջ:

պրակտիկան, ըստ առ այսօր հայտնի խեթական տեքստերի, սկիզբ է առնում հենց Ռուկկանայից<sup>305</sup>։ Այս քաղաքակաևությունը սկսում է ծավալվել Մուրսիլիս II-ի<sup>306</sup> և լայն քափ առնել Խաթթուսիլիս III-ի օրոք<sup>307</sup>։

Ռուկկանային տրված հաջորդ հրահանգը՝ կին չվերցնել Ազգիից, ինչպես և դստերը վերադարձնել Մարիյայից, հնարավոր է բացատրել այսպես։ Սուպպիլուլիումասը փորձում էր Հայասայում ապահովել խեթական արքայատոհմի գահաժառանգման իրավունքը<sup>308</sup>, քանի որ Ռուկկանայի որդին ազգեցի կնոջից, ինչպես նաև կրա դստեր և Մարիյայի ժառանգը կարող էին ապագայում իշխանության հավակնել<sup>309</sup>։ Այսինքն, Սուպպիլուլիումասը ձգտում էր Հայասայի գահին ապահովել այլ օրինական քենեանուի գոյությունը։

Այս առնչությամբ պիտի նկատի ունենալ, որ իր տերության ընդարձակմանը զուգընթաց, Սուպպիլուլիումասը կիրառում էր քույր-թագավորությունների ստեղծման քաղաքակաևություն։ Մասնավորապես, հիշատակելի են Կարգամիսը և Հալեպը Հյուսիսային Միդիայում, որտեղ գահաժառանգման իրավունքով արքաներ նշանակվեցին կրա որդիները՝ Պիյասսիլին և Տելեպիևուսը<sup>310</sup>։

4) Պայմանագրի կնքումից որոշ ժամանակ անց Ռուկկանան խախտում է իր պարտավորությունները։ Աղբյուրները որևէ տեղեկություն չեն պարունակում Հայասա վերադառնալուց հետո Ռուկկանայի կողմից իր պարտավորությունների խախտման մասին։ Բացառությամբ, թերևս, այն քանի, որ Հայասայում ապաստանած խեթահպատակ բնակչությունը դեռևս այնտեղ էր գտնվում։ Չեարավոր է նաև, որ Ռուկկանան ետ չէր վերադարձրել Մարիյայի տանը գտնվող իր դստերը<sup>311</sup>։ Այս առթիվ

<sup>305</sup> Սուպպիլուլիումասի այս քաղաքակաևությունը ունի ես մեկ օրինակ՝ արևմտյան Փոքր Ասիայի Միդա պետության արքա Մասիտիլուվայի և Սուպպիլուլիումասի դստեր՝ Մուվատտիի ամուսնությունը, որը հիշատակվում է Մուրսիլիս II-ի և Մասիտիլուվայի որդի Կուպանտա-Կուրունտայի միջև կնքված պայմանագրում (= CTH 68 [հրատ.՝ Friedrich 1926: 106 § 2, 6]:

<sup>306</sup> Մուվատտայիս II-ի քույրը՝ Մասանուցցին, ամուսնացած էր Սելխայի արքա Մաստուրիսի հետ (KUB XXIII 1 ԴԿ II 16-18 = CTH 105 = "Պայմանագիր Թուդխալիյաս IV-ի և Ամուրրուի արքա Մասուզամուվայի միջև" [հրատ.՝ Kühne und Otten 1971: 10f.]):

<sup>307</sup> Խաթթուսիլիս III-ի օրոք դինաստիական ամուսնությունների մասին որպես կախյալ երկրների, Եգիպտոսի և Բաբելոնիայի հետ Խաթթիի արտաքին քաղաքակաևության կարևոր քաղաղրիչի տես Houwink ten Cate 1996: 40ff.:

<sup>308</sup> Այդ մասին տես, մասնավորապես, Բարսեղյան 1963p: 102:

<sup>309</sup> Ըստ խեթական տերությունում գահաժառանգման վերաբերյալ գործող Տելեպիևուսի օրենքի (= CTH 19 [հրատ.՝ Hoffmann 1984]), արական սեռի ժառանգի բացակայության պարագայում, արքա կարող էր դառնալ արքայի ավագ դստեր ամուսինը (հետևաբար, նաև՝ որդին)։

ԴԿ II  
38) ... ma-a-an DUMU.LUGAL-ma IBILA NU.GÁL nu ku-iz DUMU.MUNUS ha-an-te-er-zi-iz  
39) nu-uz-iz-iz-iz-an<sup>10</sup>an-ti-ya-an-ta-an ap-pa-a-an-du nu LUGAL-uz a-pa-a-az ki-iz[a-ra]  
<sup>310</sup> Պիյասսիլիի նշանակման մասին տես՝ "Պիպված 28" (Güterbock 1956: 94ff.); նաև Hawkins 1976-1980: 429f.:

<sup>311</sup> Չնայած մենք որևէ տեղեկություն չունենք Հայասայում գործող օրենքների (թերևս, ավանդության/ավորության) մասին, սակայն հին Առաջավոր Ասիայի այլ տարածաշրջաններից մեզ հասած՝ ամուսնական հարաբերությունները կարգավորող օրենքների լուսի ներքո կարելի է ենթադրել, որ այստեղ էլ ամուսնու տուն գնացած կինը համարվում էր դրա

որոշակի պարզություն կարող է մտցնել խեթական օրենքների մի հոդված, որը վերաբերում է ամուսնու տուն զննացած կնոջ խնդրին<sup>302</sup>: Այն բառացիորեն ասում է հետևյալը. «Եթե մարդը վերցնում է կնոջը և (երան) տանում իր տուն, ապա նա վերցնում է նրա օժիտը: Եթե կինը [մահանում է] այն [տեղ], նրանք (ամուսնու տան անդամները - Ա.Ք.) պետք է այրեն նրա (ամուսնու - Ա.Ք.) անձնական ունեցվածքը և մարդը պետք է վերցնի նրա օժիտը: Եթե նա (կինը - Ա.Ք.) մահանում է իր հոր տանը և նա երեխաներ [ունի], մարդը չի կարող [վերցնել] օժիտը»:

Անկախ այս հոդվածում հիշատակվող՝ ամուսնու անձնական ունեցվածքի այրելու պարտավորության դժվար բացատրելի պահից, հայրական տանը երեխաներ ունեցող կնոջ մահանալուց հետո օրենքով նրա օժիտը ամուսնուն չհանձնելու պահանջը կարող է հիմք տալ հետևյալ ենթադրության համար: Ինչ-ինչ պատճառներով հայրական տուն վերադարձած կնոջ երեխաների նկատմամբ ամուսինը այլևս չէր կարող որևէ իրավունք ունենալ: Սա նշանակում է, որ Խուկկանայի դատեր վերադարձի պարագայում նրա և Մարիյայի երեխան այլևս չէր կարող դիտվել որպես Մարիյայի տոհմի ժառանգը և հավակնել Հայասայի կառավարչի կարգավիճակին, քանի որ նա այսուհետև արդեն հանդիսանում էր Խուկկանայի տոհմի ներկայացուցիչը:

Քե որքանով է մեթոդաբանորեն կիրառելի վերոհիշյալ խեթական օրենքը Հայասայի պարագայում, դժվար է ասել: Սակայն, նկատի առնելով այն հանգամանքը, որ Պարսևանգրում Մուպպիլուլիումասը բազմիցս ընդգծում է այն իրողությունը, որ Խուկկանան պարտավոր է իր գործունեության ընթացքում հետևել Խաթթիում ընդունված սովորույթներին (օրինակ, չհարաբերվել իր քույրերի, եղբայրների կանանց հետ), կարելի է ենթադրել, որ այստեղ էլ նա ակնարկում էր Խաթթիում գործող օրենքի կիրառումը Հայասայում, համենայնդեպս տվյալ հարցում:

Սակայն, այնուամենայնիվ, որպես աշխատանքային վարկած հնարավոր է առաջարկել իրադարձությունների հետևյալ վերականգնումը:

Որպես Հայասայի կառավարչի աներ և, բնականաբար, աչքի ընկնող ազնվական, Խուկկանան պետք է ուղեկցեր նրան խեթական մայրաքաղաք Նաթթուսա: Այստեղ Մարիյայի սպանությունից հետո խեթական արքան Խուկկանային նշանակում է Հայասայի կառավարիչ, նրան կնության տալիս իր քույրերից մեկին, դրանով իսկ նրան կախման մեջ դնելով իրենից: Վերադարձից որոշ ժամանակ անց Խուկկանան, ամենայն հավանականությամբ, չի կատարում իր վրա դրված պարտավորությունները, ինչը դրդում է Մուպպիլուլիումաս I-ին դիմելու ռազմական միջամտության: Խեթական զորքը մտնում է Հայասայի հարևան Իսուվա (հետագայի Մոփ), այնուհետև արշավում է Հայասա և վերադարձնում խեթական բնակչությանը:

5) Խուկկանայի կառավարման մասին տեքստերը որևէ տեղեկություն չեն պահպանել: Առայժմ առկա է մնում մեկ հարց: Արդյոք դեպի Հայասա խեթական արշավանքի պահին Խուկկանան դեռևս կառավարում էր այնտեղ, և էթե այո, ապա ինչպիսի ավարտ կարող էր ունենալ խեթական արշավանքը: Իսկ հայասական արշավանքից հետո Մուպպիլուլիումասը ուղղակի ի վիճակի չէր լրջորեն զբաղվելու

սեփականությունը նույնիսկ ամուսնու մահվանից հետո:

<sup>302</sup> Hoffner 1997: 36f. (հոդված h.27):

Հայաստով, քանի որ մեծ պատերազմ էր սպասվում Միտասնիի հետ: Մուրսիլիս II-ի և Հայասայի արքա Աննիայի միջև կնքված պայմանագիրը որոշ հիմք է տալիս ենթադրելու, որ նրա գործունեությունը երկար շարունակվել չէր կարող: Եթե իրոք Մուրսիլիս II-ի ժամանակակից Աննիան Մարիյայի որդին էր, ապա, հավանաբար, Խուկկանայի կառավարումը պիտի ավարտվեր Մարիյայի տոհմի իշխանության վերականգնումով: Իսկ իրադարձությունների նման ընթացքը ենթադրելի է:

Իրավիճակը Սուպլիլուլիումասի մահվանը հաջորդած առաջին տարիներին կարելի է բնորոշել որպես ծայրահեղ բարդ, որ հիմնականում հետևանք էր համաճարակի<sup>343</sup>: Հավանաբար, Սուպլիլուլիումասն ինքը և նրան կարճ ժամանակով հաջորդած ավագ որդին Առուվանդաս II-ը<sup>344</sup> զոհ գնացին համաճարակին<sup>345</sup>: Մուրսիլիս II-ի «Տարեգրությունները» հաղորդում են, որ Առուվանդասի մահվանից հետո բոլոր կախյալ երկրները ապստամբեցին և սկսեցին հարձակվել Խաթթիի վրա<sup>346</sup>: Իսկ դա կարող է անուղղակիորեն վկայել այն մասին, որ ավանդաբար ոչ լոյալ Հայասան չէր կարող չօգտվել հարմար առիթից թոթափելու իր կախյալ կարգավիճակը:

6) Նախորդ կետերում ամփոփված եզրակացությունների հիման վրա, նաև հիմք ընդունելով Խեթական տեղության պատմության՝ այսօր ընդունված ժամանակագրությունը<sup>347</sup>, Թուդխալիյաս III-ի և Սուպլիլուլիումաս I-ի՝ Հայասայի հետ փոխհարաբերությունները կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ.

- |           |   |   |
|-----------|---|---|
| 1350-1345 | - | Թուդխալիյաս III-ի արշավանքը Հայասա <sup>348</sup> , Կումմախայի ճակատամարտը, պայմանագիր Մարիյայի հետ, Մարիյայի մահապատիժը, Խուկկանայի եշանակումը Հայասայի կառավարիչ: |
| 1345-7    | - | Հայասայի նոր արքայի կառավարումը:  |
| ?-1322(?) | - | Խուկկանան Հայասայում:   |
| 1322/1-?  | - | Աննիայի կառավարումը Հայասայում:   |

Խուկկանայի կառավարման սկիզբը և ավարտը տրամաբանորեն պիտի տեղադրել խեթա-հայասական փոխհարաբերությունների ծայրահեղ սրման երկու փուլերի միջև: Եթե ավարտի էլակետ կարելի է մոտավորապես դիտել Սուպլիլուլիումասի մահը և

<sup>343</sup> Համաճարակի մասին տես վերը՝ "Խեթական տեղությունը մ.թ.ա.XIV դարի կեսերին" բաժնում: Սուպլիլուլիումասն ինքը և նրան կարճ ժամանակով հաջորդած ավագ որդին՝ Առուվանդաս II-ը զոհ գնացին համաճարակին: Մուրսիլիսի "Տարեգրություններում" հիշատակվում է միայն Առուվանդաս II-ի հիվանդության մասին (Götze 1933: 14f.): Մուրսիլիս II-ի "Տարեգրությունները" հաղորդում են, որ Առուվանդասի մահվանից հետո բոլոր կախյալ երկրները ապստամբեցին և սկսեցին հարձակվել Խաթթիի վրա (Götze 1933: 14f.):

<sup>344</sup> Առուվանդաս II-ը պիտի կառավարեր առավելագույնը մեկ տարի (Bryce 1989: 29f.):

<sup>345</sup> Մուրսիլիսի "Տարեգրություններում" հիշատակվում է միայն Առուվանդաս II-ի հիվանդության մասին (Götze, 1933: 14f.), սակայն ենթադրվում է, որ այստեղ խոսքը Սուպլիլուլիումաս I-ի մահվան պատճառ հանդիսացած համաճարակի մասին պիտի լինի:

<sup>346</sup> Götze 1933: 14f.

<sup>347</sup> Otten 1968; Wilhelm - Böse 1989: 74ff.; Astour 1989; Wilhelm 1991: 469ff.; Bryce 1989: 30.

<sup>348</sup> Այս արշավանքը 5-6 տարվա հատվածում տեղադրելը պայմանական է, քանի որ առ այսօր չկա որևէ կոլան Թուդխալիյաս III-ի կառավարման շրջանի իրադարձությունների թվագրման համար: Հայասական արշավանքը պիտի տեղի ունենար նրա կառավարման վերջերին:

հաջորդած խառնակ իրավիճակը Խաթթիում, ապա կառավարման սկիզբը դժվար է որոշել: Կումմախայի ճակատամարտից հետո խեթերի՝ Հայասայի դեմ արշավանքները (տես վերը՝ „Դիպված 25“ և „Դիպված 39“) պիտի թվագրվեն Մուպպիլուլիումասի սիրիական պատերազմների ժամանակաշրջանով: Վերջիններս երկուսն են՝ 1) „առաջին“ պատերազմ (մոտ. 1340), 2) „երկրորդ“ պատերազմ (մոտ. 1327-1322):

Վերոհիշյալ արշավանքներից դեպի Հայասս որն է նախորդել Խուկկանայի գահակալմանը, կամ թե դրանցից որն է կապված վերջինիս կառավարման ավարտի հետ, պարզ չէ: Համենայնդեպս, եթե արշավանքը տեղադրվի „երկրորդ“ պատերազմի շրջանում, որ ավելի հավանական է<sup>349</sup>, ապա հնարավոր կլինի այն դիտել որպես հետևանք Հայասայում հակախեթական ապստամբության, որի ընթացքում Խուկկանան կարող էր զրկվել իշխանությունից:

